

2004

2004

25

Printed in Turkey

6003


Հ-84 Ա/1191 1109-ԱՀ

# ՅԱԿԱՐԵՎԻՆ

ՊԵՏԱՐԱՒԹԵՒՄ:

3258-57 1/31

ՏՂԱՐՈՑ ու պատանիներուն համար  
շինված :



Դ. ԶԱՐԵՎԻՆ

Դ ՏՂԱՐՈՑ կ կուլ է լուս կուլ փիլու :

1847 :

## ՅԵՒԿ

- Գ.Լ. Ա. : Տղայոց ու պարտանինելուան հա-  
մար ծառնօթաւէկան : 1:
- Գ.Լ. Բ. : Ծանչեածին ապաւուանութիւննը :
- Յունին Արքադիւտին եւլուը : և այլն : 7:
- Գ.Լ. Գ. : Ծանչեածին Անուբան Հասանիւը :
- Քենանին սպասարկութիւննը : և այլն : 16:
- Գ.Լ. Դ. : Ծանչեածին երանուը : Եղբայրնե-  
ւուն Ուժակ եւլունը : և այլն : 24:
- Գ.Լ. Ե. : Ծանչեածին եր Եղբայրնեւուն Խո-  
տենունը : և այլն : 31:
- Գ.Լ. Զ. : Ծանչեածին իշխացը Համար Ուս-  
տինին ապաւուանը : և այլն : 40:
- Գ.Լ. Է. : Ուստինին գրասանութիւննը՝ Ծանչե-  
ածին ծանիւնք գործառուն Համար : և այլն : 48:
- Գ.Լ. Ը. : Ծանչեածին ծանիւնքնը : և այլն : 55:
- Գ.Լ. Խ. : Ծանչեածին վլուանունը ու լուսը  
Պետականին դառնը ջրայ . և այլն : 62:
- Գ.Լ. Ժ. : Աստիճայ վլունը : և այլն : 73:
- Գ.Լ. Ժ.Ա. : Աստիճայարին երանուը ու ա-  
նոր մէինութիւննը : և այլն : 80:
- Գ.Լ. Ժ.Բ. : Փարստանին երանուները : և այ-  
լն : 86:
- Գ.Լ. Ժ.Գ. : Ծանչեածին Փարստանին երանու-  
ները մէինունը : և այլն : 94:
- Գ.Լ. Ժ.Դ. : Աստիճայ համաստեսանութիւ-  
նը : և այլն : 101:

- Գ.Լ. : Եթե առաջ կատար քուն է Յուլիս  
իրենց մուսական արևո պատրաստելու : Խայլ : 110:
- Գ.Լ. : Քուն է ինձն Եղբայրն էր ան էլլ  
առջն երիբորութիւններ : Խայլ : 118:
- Գ.Լ. : Քուն է ինձն Եղբայրն էր  
ըստ յանացած մասնութեան : Խայլ : 126:
- Գ.Լ. : Քուն է ինձն Եղբայրն էր մասն  
առաջ ամսնեն մարդու ելլուր : Խայլ : 134:
- Գ.Լ. : Մասն է ամսնեն երիբորութիւնը համար  
Յանացած համար ամսնեն : Խայլ : 142:
- Գ.Լ. : Ամսն է ամսնեն բարեր բերվել-  
լու : Խայլ : 151:
- Գ.Լ. : Քուն է ինձն Եղբայրն էր իրին  
գայլուր բարեր ամսնեն : Խայլ : 159:
- Գ.Լ. : Քուն է պատրաստելու իր Եղբայրն է-  
լու երիբորութիւններ մեջ : Խայլ : 165:
- Գ.Լ. : Քուն է ինձն պատրաստելու իր Եղբայրն է-  
լու ամսնեն ամսնեն : Խայլ : 174:
- Գ.Լ. : Պատրաստեն առ անոր ընդունեն-  
քին ամսնեն ամսնեն : Խայլ : 184:
- Գ.Լ. : Քայլ է ամսն պատրաստելու համ-  
ամսնեն : Խայլ : 190:
- Գ.Լ. : Քուն է իր հայրը Գ.Լ. մարդ մեջ  
բարեր ամսնեն : Խայլ : 198:
- Գ.Լ. : Քայլ է ամսն առ իր ընդունենին  
կամաց մեջ բարեր ամսնեն : Խայլ : 210:

- ¶ 
- ¶ . ¶ : Արդիութացինելուած էլլենց ար-  
քառանելու իշխանութեան համար : Խայըն : 217:
- ¶ . ¶ : Ծամին իր իշխանութեան վահաճա-  
նին հօգիտական : Խայըն : 224:
- ¶ . ¶ : Ծամւեկին իր հօրը երթաւլ թո-  
նելու ժամանակը : Խայըն : 228:
- ¶ . ¶ : Ծամին իր օրհնութեանը Ծամւ-  
եկին արաց վրայութեանը : Խայըն : 238:
- ¶ . ¶ : Ծամւեկին արաց օրհնութեանը իր  
հօրը մետանելու վրայ : Խայըն : 247:
- ¶ . ¶ : Ծամւեկին եղբայրական ան-  
դաշտ նանքին : Խայըն : 254:
- ¶ . ¶ : Ծամւեկին հահստան հօգիտական :  
Խայըն : 263:
- ¶ . ¶ : Ծամւեկին վարու : Աստծածա-  
կայ անեցած իր պատու հաստարու : Խա-  
յըն : 272:
- ¶ . ¶ : Ծամւեկին հօրը շարապա-  
տեր անհապանութեանը : Խայըն : 281:
- ¶ . ¶ : Ծամւեկին Հաստապահութեանը  
իր պատու իստորութեան թշբ : Խայըն : 291:
- ¶ . ¶ : Ծամւեկին փողյութեան գի-  
տելու արևութեանը : Խայըն : 298:
- ¶ . ¶ : Ծամւեկին իստարհութեանը :  
Խայըն : 306:
- ¶ . ¶ : Ծամւեկին սեպահանու բարե-  
ակ բահանութեան իւ անենաւլ : Խա-  
յըն : 315

Printed in Turkey  
ՅԱՎԱԿԻՒՆ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ :

ԳԼՈՒԽՈՒՄ :

Աստուածաշունչին մէջի առաւել օդ  
տակար ու պիտանի պատմութիւնն  
նելուն մէկն ալ հովակինն է, որն  
որ պարտին տղաքները միշտ փափա  
քանօք կարդալ : Հիմայ ես ալ անանկ  
կերպով մը պիտի սկսիմ աս պատմու  
թիւնը լնել անոնց, որ անոնք օգուտ  
քաղեն անկեց :

Դուք շատ զիրքեր կըկարդաք՝ իմ  
իմ սիրելի տղաքներս, միայն ձեր զքօ  
սանացը համար . ու ան զիրքերը ա  
ռաւել կըսիրէք կարդալ՝ որոնք որ

պատմութիւն են : Աակայն անոնցմէ,  
'ի զատ կըթութեան գիրքեր ալ  
սէտք է որ կարդաք . ինչու որ , պար-  
տիք գիտնալ՝ թէ որ բանը օգտակար  
է , ու ի՞նչ բան պարտիք սորվիլ , որ  
երբոր մեծնալու ըլլաք՝ աշխարհիս  
մէջ աղէկութիւն ընէք , ու արքայու-  
թեան մէջը յաւիտեան սուրբ ու եր-  
ջանիկ ըլլաք :

Երբեմն դուք կըխաղաք ու շատ կու-  
րախանաք , ու ես ալ կուզեմ ատ  
բանը . ինչու որ ձեզի օգուտ կընէ-  
ան , ու նաև ուրախ ու երջանիկ .  
Վերջապէս անանկ օգտակար վարժու-  
թիւն մըն է՝ որ պատճառ կըլլայ ձեզ  
քաջ ու աշխոյժ ընելու :

Աակայն ամեն առեն խաղի պարտ-  
ոլիլ ըլլար , ուրիշ դորձեր ալ պար-  
տիք ընել . պատրաստը վեցէք աղէկ  
բաներ ալ սորվիլ , որ մեծցած ժա-  
մանակնիդ օգտակար մարդեր ու կը-  
եիլներ ըլլաք :

Վն տղաքները ու աղջիկները որ

ամէն ժամանակ կըխաղան ինքըլինք  
 նին զուարձացունելու համար՝ և ուրիշ  
 բան չեն ըներ, երբոր մեծնալու  
 ըլլան՝ ամէն տեսակ զործը կատեն,  
 ծոյլ ու անօգուտ մարդիկ կըլլան. ոչ  
 իրենց օգուտ կընան ընել, ու ոչ ու  
 ըիշին :

**Ե**սանկ ալ թէ որ միայն պատմու  
 թիւններ կարդալու ըլլաք ձեր զուար-  
 ձութեանը համար, ետքը ան տե-  
 սակ գիրքերը առաւել պիտի սիրէք  
 կարդալու, ու մէկալ բոլոր օգտա-  
 կարները պիտի ատէք ծանը զործքի  
 մը պէս :

**Ա** երջը ան օգտակար գիրքերը կար-  
 դալը շատ զժուարութիւն պիտի ըլ-  
 լոյ ձեզի, ինչպէս ան տղան՝ որ ըոլոր  
 ժամանակը կըխաղայ, ու զործին ատե-  
 նը դժկամակութիւն ցոյց կուայ :  
 Ոիտքերնիդ պիտի տկարանայ, ու ան-  
 կէ ետեւ հաղիւ կարող պիտի ըլլաք  
 շահաւոր բանի մը վրայ խորհիլ . ու  
 ամէնէն զէշը որ պիտի ըլլայ՝ աս է, որ

Վատուածաշունչը՝ որ ամեն զիրքերուն  
ընտիրն է, անշուշտ անօգուտ զիրքի մը  
պէս պիտի երևայ ձեզի : Ես չեմ ու-  
ղեր ըսել՝ թէ դուք ամեւին մի կար-  
դաք զուարձացուցիչ պատմութիւն-  
ներ, ու թէ անոնք անօգուտ են . հա-  
պա կուզեմ ըսել՝ թէ պարտիք առա-  
ւել խրատական զիրքեր ալ կար-  
դալ, որոնք որ պատճառ կըլան  
ձեզի խելացի ընելու, ու անոնցմե, օ-  
գուտ քաղելու : Մանաւանդ ան տե-  
սակ զիրքերը շատ սիրտի բաղձաք  
կարդալու, որոնք որ առաջնորդ կըլ-  
լան ձեզի ձեր հոգիին վրայ աղեկ խոր-  
հել տալու, ու թէ ի՞նչ պարտիք ը-  
նել փրկըլելու համար :

Կարելի է որ հիմայ սիրելի տղաքներս  
պիտի ըսեն՝ թէ ի՞նչ երկան սկզբնա-  
ւորութիւն մը եղաւ աս, ու շատ շու-  
տով ուզեն որ հոգսէփին պատմու-  
թիւնը սկսեմ : Ես անհամբերութիւնը  
կըցուցունէ՝ որ դուք մինչեւ հիմայ մի-  
այն զուարձացուցիչ զիրքեր կարդա-

յեր էք . անսանկ որ չէք ուղեր չորս  
կամհինդ լուղեի շափ պիտանի ու օդ-  
տակար զիրքեր կարդալ :

**Եթէ** աս ստոյդ է նէ , շուտով ջա-  
նացէք ան տեսակ զիրքերը կարդալ  
որոնք որ պատճառ կըլլան մոխի ընել  
տալու , ու խորունկ և ծանր մոմուցը-  
նելու :

Թէ որ ձեզմէ մէկը չուղեր ասանկ  
ընել , կարելի է շատ աղէկ պիտի  
ըլլայ որ աս զիրքը գոցէ ու ամենեին  
ձեռքը չառնէ :

**Յովսէփին** պատմութեանը մէջ  
շատ օդտակար ու պիտանի բաներ  
կան , որոնք մէկ զուարժալի կերպով  
մը պիտի աշխատիմ ձեղի զուրցելու :

**Երբեմն** ասկէ 'ի զատ ուրիշ բանի  
վրայ ալ պիտի զուրցեմ . այսինքն՝ ձեր  
յայտնի մեղաւոր ըլլալուն՝ ու ձեր  
յանցանքին ու վտանգներուն վրայօք ,  
ու ձեր ապաշխարութեան կարօտ ըլ-  
լալուն վրայօք , ու Հիսուսի Քրիստո-  
սի վրայ հաւատք ունենալու և ձեր

սիրտերը Հոգւոյն սրբոյ շնորհքովը  
փոխվելուն վրայօք, և ուրիշ ասոնց  
նման բաներու վրայօք, որ շատ հար-  
կաւոր է ձեզի զիտնալ, հաւատոալ,  
ու իմանալ :

Եթէ զիտնայի նէ իմսիրելի տղաք-  
նելս, որ բոլորդ ալ կուղէք աս տե-  
սակ բաներուն մտազրութեամբ ա-  
կանջ դնել՝ քանի որ չովսէփին  
պատմութիւնը կարդալու ըլլաք, որ  
չափ ուրախութեամբ պիտի նատէի ու  
ջանայի օր ըստ օրէ անիկա զրելու :  
Վղօթք ըրէք որ ամենքդ ալ ասանկ-  
ները ուղէք կարդալու, ու նաև ես ալ  
պիտի աղօթք ընեմձեզի համար :

Աստուած ինձի իր կարողութիւնը  
տայ՝ որ աս զիրքը զրեմ, ու նաև ձեզի  
ալ իր զօրութիւնը տայ՝ որ զուք ալ  
կարող ըլլաք անիկա կարդալու, ու  
իր Հոգիներուն օգուտ ընէ :

Գ. Ե. Ա. Խ. Խ. Յ. Բ. :

Հայութին ապահովագութեանը : Հայութին  
Որդութեամբն էլուզ : Ուստեւն մշանելը :  
Ունիամինն ծնունդը : Տշուները ինչուեւ  
պարուն էրեաց ծնուռոց հետ ձևով կարմը :

**Յ**ովսէփ Հակոբին որդին էր, Խառ  
հակ Յովսէփին հօրը հայրն էր, ու  
Վրբահամ ալ Խառհակին հայրն էր :  
•Քիչ շնորհք չէր Յովսէփին որ ասանկ  
նախնիք ուներ, ինչու որ՝ անոնք Վատ  
ուածապաշտ մարդիկ էին, ու բոլոր  
իրենց ընտանեացը մէջ անանկ սովու  
րութիւն եղած էր, թէ ինչ պետք են  
ընել որ Վատուծոյ հետ բարեկամու  
թիւն ստանան ու անկէ օրհնըլին :  
Յովսէփ Ոիջազետին մէջը ծնած էր  
իրեք հաղար հինգ հարիւր տարիէն ա  
ռաջ . իր հայրը ան երկրին մէջը  
տասնըչորս տարիի չափ նստած էր  
Լաբան անունով մէկ հարուստ երկրա  
գործի մը հետ, ու Յակոբ օդնութիւն

կընէր անոր՝ արջառներուն ոչխարներուն ու այծերուն վրայ պահպանութիւն ընելով :

Վարանը Յակոբին մօրեղբայրն էր՝ Յակոբին մօրը Աւբեկային եղաբայրը ըլլալով . Վարան մէկ պտղատու երկիրի մը մէջ կրքնակէր, երկու գեղեցիկ գետերու այսինքն՝ Տիդրիս ու Խփրատ գետերուն մէջը . շատ երկիրներու ու այծերու ու ոչխարներու տէր էր, ու շատ ալ ծառաներունէր, որոնք որ իրեն համար կաշխատէին :

Յակոբ Վարանին երկու աղջիկանը՝ այսինքն Խիային ու Աւաբելին հետ կարգըված էր, որոնց ետկինը Յովեկին մայրն էր . ասոնցմէ՛ի գատ՝ Յակոբ երկու կնիկ ալ ունէր Բալլայ ու Օէլփայ անունով : Եստուած ան ժամանակը մարդկանց թոյլտուութիւնը բրած էր որ մէկ կնիկէն էվել ունենան . թէպէտ ասանկ հրաման տալուն ալ պատճառը կար . բայց հիմայ արգելեալ է, ու մեծ մեղք է ան :

Յակոբ մէկ մեծ ընտանիք մը եղած  
էր լաբանին հետ թնակած ատենը .  
կարծեմ թէ աղէկ է որ դուք անոր  
տղոցը անունները սորվիք , ինչու ոք  
անոնք ետևէ ետև տղոց հայրեր եղան .  
ու անոնց տղաքն ալ ուրիշ տղաքներ  
ունեցան . ու ասանկ քոլորը մէկ տեղ  
մէկ մեծ ժողովուրդ մը եղան , ու Խո-  
րայէլացիք կանըրվեցան . ու վերջը  
Քանանու երկրին մէջը մէկ զօրաւոր  
աղդ մը եղան :

Ասոնց Խրայէլացի կանըրվելուն  
պատճառը աս է՝ որ անոնք չակորեն  
ծնած էին , որուն անունը Խրայէլ էր .  
ու անոր տասներկու տղաքներն ալ  
տասներկու նահապետներ ըսվեցան :  
Հակոբին տղոցը անունները իրենց  
հասակներուն կարգովը ասոնք են :  
Առողեն , Շմաւօն , Դեկի , Հուղայ ,  
Դան , Վեփթաղիմ , Գագ , Մսեր , Խ-  
տաքար , Օձբուղօն , (Դինա աղջիկ  
մը , ) Հովսէփ , ու Շենիամին :

Ռաքէլ Հովսէփին ու Շենիամինին

մայրն էր . անոնք բոլորը Ա՚իջազետին  
մէջն էին ծնել , բաց ՚ի բանիամի-  
նէն , որուն վրայօք մասնաւորաբար  
քիչ մը բան պիտի խօսիմ :

Երբոր Հովհեփ վեց տարուի չափ  
էր՝ ու Առուբէն ամենէն մեծ տղան  
տանըլինը տարուի չափ , իրենց հայ-  
րը խորհեցաւ որ Ա՚իջազետէն ելլէ ու  
իր ընտանիքովը կրկին . քանան երթայ՝  
իր հայրենիքը , ուր որ իր ծերունի հայ-  
րը Խաչակ տակաւին ողջ էր : Քա-  
նան մէկ պտղաբեր ու զուարձալի եր-  
կիր մըն էր : Հակոր խորհեցաւ որ  
իրեն ու իր ընտանիքին շատ աղէկ պի-  
տի ըլլար , թէ որ եղած տեղեր-  
նուն ելլան , ու քանան երթան : Վա-  
կից ՚ի զատ՝ Վատուած Հակորին ըսեր  
էր իր երազին մէջը , որ ասանկ ընէ .  
ու ինքն աւ գիտէր որ Վատուածոյ հը-  
նազանդելով՝ ինքը իր կնիկները ու  
տղաքը իրենց պարտքերնին կատարած  
պիտի ըլլային , ու Վամենակարողին  
պաշտպանութեանը տակը պիտի ըլ-  
լային :

Ա՞ի ջադետէն մինչեւ Վանան շատ  
երկար ու դժուար ճանապարհ մըն էր .  
շատ քաջասրտութիւն ու ջանք կու-  
զէր , ինչու որ հյակոր հիմայ շատ հա-  
րուստ մարդ մը ըլլալով՝ շատ տեսակ  
կարասիքներ , ուղտերու՝ էշերու  
անթիւ արջառներու՝ ոչխարներու  
ու այծերու հօտեր ունէր :

Ասոնք բոլորը՝ այսինքն իր կնիկ-  
ները , տղաքները , ծառաները ու  
աղախինները Ա՞ի ջադետէն հանել ու  
Վանան տանելը արդարեւ շատ դժուար  
էր . բայց Վատուած անանել հրաման  
ըրեր էր . ու թէ որ դուք ալ անոր  
պատուիրանքներուն հնաղանդելու ըլ-  
լոք՝ յիշեցէք իմ սիրելի տղաքներա ,  
որ որչափ մեծ վտանգներու ու նեղու-  
թիւններու մէջ ալ ըլլաք , անոնցմէ,  
մէկն ալ ձեր մտացը հաստատութիւ-  
նը չի կրնար տկարացունել , կամ ձեզ  
վախցունել :

Արդեօք նվ պիտի վախնայ՝ երբոք  
ինքը իր պարտականութեան ճամբուն

մէջն է , ու երբոր ամենակարող Վաս-  
տած իր առջևեն կերթայ , ու իր  
ճամապարհը կուղղէ . չի պիտի աշխա-  
տիմհիմայ հակոբին ճամբայ ելլալուն  
վրայօքը բան մը խօսիլ , ու ոչ անոնց  
· քանեան համելէն առաջ ճամբուն  
մէջը պատահածներուն վրայօք . ին-  
չու որ՝ անոնց բոլորը Վասուածաշուն-  
ցն մէջը կրնաք կարդալ :

Բայց մէկ բան մը կայ հօվսէփին  
վրայօքը որ առանց անիկա պատմելու  
շեմ կընար անցնիլ . ինչու որ թէպէտ  
ինքը պատանի մըն էր , սակայն իր սիր-  
որ խորին տրտմութեամբ լեցված էր :  
· քանզի Աթջագետը ձգելէն ու ճամբայ  
ելլալէն հինգ տարի ետև , քիչ մը  
ժամանակ մէկ տեղ մը մնալով ու քիչ  
մը ժամանակ ուրիշ տեղ մը , ասան-  
կով և փրատին սկսեցին մօտենալ . ու  
· քանանառ մէջ ան ժամանակը Ատքէ ,  
իսկոյն հիվընդցաւ , ու մեռաւ . ոք զրե-  
թէ իր մեռնելէն քիչ ժամանակ ա-  
ռաջ բենիամին ծնած էր :

Աս ժամանակը Յովսէփ տանը ըմբեկ  
տարուի չափ էր . Առքէ և Եփրատ  
երթալու ճամբուն մէջը թաղվեցաւ ,  
որ ետքը յաեթղէհէմկոչվեցաւ . ու ա  
նոր էրիկը գերեզմանին վրայ մէկ  
քարէ յիշատակաբան մը շինեց :

Հիմոյ Յովսէփին կատարեալ ժա  
մանակն էր , որ իր մօրը կորատեանը  
վրայօք շատ տրտմութիւն կիմանար .  
ու անշուշտ քանի որ ինքը ասանկ դա  
ռըն նեղութեան մէջ էր՝ իր մօրը հա  
մար սուզի մէջ մտած կուլար . ու բո  
լոր անոր բրած մայրական խնամքները  
կըցիշէր , ու կըտրտմէր թէ ինչպէս  
պիտի ըլլայ որ մէյմալ իր մօրը էրէ  
ոը չի պիտի տեսնայ , ու անոր մաքղա  
սիրութեան ձայնը չի պիտի լսէ :

Յովսէփ իր պկտիկ եղբայրը Յա  
նիամին շատ կըսիրէր՝ որ ասանկ մէկ  
տրտմալի վիճակի մը մէջ ծնած էր .  
ու անոր վրայ ունեցած սէրը ետքը  
պիտի տեսնաք :

Իմ սիրէլի տղաքներս , մէկ բարի

ու որդեսէք մօք մը յալ զը զիտէ՞ք  
մի . մէկ տղի մը ասանկ մայր ունենա-  
լը հազար հազարոց ոսկիէն ու արծա-  
թէն էվելի կամէ :

**Մէկ Ըստուածապաշտ** մօք մը յար-  
գը զիտէ՞ք մի , որ իր տղին համար՝ իր  
տղին հետը աղօթք կընէ , ու կը ջանայ  
որ անոր հոգին երկինքը առաջնորդէ .  
առաւել աղէկ է մէկ տղի մը ասանկ  
մայր մը ունենալը , քան թէ բոլոր  
աշխարհը ու անոր մէջիննէլը :

**Ասանկ** մայր մը ունի՞ք մի . թէ որ  
ունիք նէ՝ սիրեցէ՞ք անիկա , հնազանդ  
եղիք անոր , ձեզի տուած խրատներուն  
միտք դրէք , յիշեցէք բոլոր անոր  
տուած բարի կը թութիւննէրը , ջա-  
նացէ՞ք որչափ որ կընաք նէ երջանիկ  
ընել անիկա :

**Ասանկ** մէկ մայր մը ունէի՞ք մի .  
թէ որ ունէիք նէ՝ յիշեցէ՞ք անիկա  
խանդակաթ սիրով . բոլոր անոր ձե-  
զի համար բառած բաներուն յիշատակը  
ձեր սրտին մէջը պահեցէք . ու

բոլոր անոր աղօթքները՝ խրատները՝  
զգուշութիւնները ու յանդիմանու-  
թիւնները միտքերնիդ բերէք։ Կ'նոտը  
պէտք է ձեզի վարվել ասանկ մէկ մօր  
մը հետ թէ որ ողջ է նէ, կամ անոր  
յիշատակը ընել թէ որ մեռած է նէ։  
կրնայ մի ըլլալ, որ մէկ անհնաղանդ,  
ապերախտ, ու չար տղայ մը աս ե-  
րեմները կարթայ, ու կայնի մէկ ըոսկէ-  
մը հնովսէփին հետք Առքէլին զե-  
րեղմանին վրայ՝ ու չի մումտայ, ու  
սուդ չընէ իր սրտին չարութեանը վր-  
այ, որն որ կրնայ պատճառ ըլլար մէկ  
տղի կամ աղջիկան մը սիրելի ու Ետո-  
ուածապաշտ մօրը աղօթքները ու ա-  
ղաչանքները ու արցունքները մոռցը-  
նել տալու։

Թէ որ ան մայրը ողջ է նէ՝ ի՞նչալէս  
տրտմութեամբ կրվշտացընէ իր մօրը  
հողին, երբոր աս տեսակը վարք ունե-  
նայ։ Թէ որ մեռած է նէ՝ ի՞նչալէս կըր-  
նայ համբերել որ երբ անոր դէմքը,  
սիրոյ ձայնը, քաղցրութիւնը ու

զթութիւնը միտքը բերելու ըլլայ ,  
չերթայ ու չի լայ Աստուծոյ առջին ,  
ու չապաշխարէ :

Պ. Լ. Ա. Խ. Խ.

Քարենքին Ուահնքե հասնէլը : Վահնքոնին  
առարկան է լինելը : Քաղաքին վարը : Քարե-  
նքին առանեցած ու ըստ Յաղաքին վարյ : Խաղաց-  
նելուն նախանյութինը : Ունչը լեռ ու շա-  
պաշտարձն շատուկ իւշտինայ :

**Յ**ակոր ասկէ քիչ ժամանակ ետև  
Անամբը հասաւ , ու իր ծեր հայ-  
րը Իսահակ զեւ ողջ զտաւ հոն , թէ  
պէտ ինքը հարիւր վաթսուն տարուէն  
էզէլ էր . շատ երջանիկ եղան մէկ  
զմիկ ողջ զտնալնուն : Ես կըհամար-  
ձակիմ ըսէլ՝ թէ չօվակէփ շատ ուրա-  
խացաւ իր հօրը հայրը տեսնալու , ու  
ըստն համար շատ բան լսած էր . ու  
նաև նոյն զուարձալի տեղը՝ որուն մէ-  
ջը ինքը կըբնակէր : Աս տեղը Երու-

սաղէմէն քսանը եօթը մղոնի չափ էր  
 դէպի հարաւ , ու ետքը ՚Ք.եքրոն ըս-  
 վեցաւ . անոր մօտ մէկ քարանձաւ մը  
 կար՝ որն որ Շ.քրահամ աս բանին հա-  
 մար ծախու առեր էր որ ինքը ու իր  
 կնիկը Սարրա անոր մէջը թաղվին ,  
 ինչպէս որ թաղվեցան . ու խահակ  
 ալ երբոր հարիւր ութսուն տարու էր ,  
 ու մեռաւ , նոյն քարանձաւին մէջը իր  
 հօրը ու մօրը քով թաղեցին :

Ճանապարհորդները՝ որոնք քիչ  
 ժամանակ առաջ գացին պաղեստինու  
 ան կողմերը պըտըտեցան , կըսեն թէ՝  
 ՚Ք.եքրոն լեռան մը տակ շինված է ար-  
 գասաւոր ձորի մը մէջ , ու իր չորս  
 կողմի բլուրներն ալ իրաղնիի ծառե-  
 րով՝ մաթուղենիով՝ եղեիններով ու  
 զանազան զեղեցիկ ծառերով ծած-  
 կըված էն :

Աս քաղաքը ունի մէկ զօրաւոր  
 բերդ մը , շատ հանդերձանք , շատ  
 խանութներ ու զեղեցկաշէն տու-  
 ներ , ու չորս հարիւր տնվորի չափ Շ.

ռապ բնակիչներ՝ բաց ՚ի հարիւր Հը-  
րէի տուներէն : Վնշուշտ ասիկա Խա-  
հակին ու Հակոբին ժամանակը շատ  
ծաղկեալ ու արդիւնաւոր երկիր մըն  
է եղեր . որ եթէ անանկ չըլլար՝ անոնք  
չի պիտի նատէին հոն իրենց ունեցած  
մեծ ընտանիքովը , անթիւ ոչխարներո-  
վը ու այծերովը : Հակոբին զլխաւոր  
գործը արջառ , ոչխար , այծ , ու ա-  
սոր պէս բաներ պահել էր . իր տը-  
զաքն ալ իրեն օդնութիւն կընէին . ու  
առաջին բանը՝ որ մենք Վատուածա-  
շունչին մէջը կըկարդանք Հովսէփին  
ինչ գործի մէջ ըլլալուն վրայօք , գի-  
տենք որ Վալլային ու Զելֆային տը-  
ղոցը հետ ոչխար կարածէր :

Ան ժամանակը Հովսէփ տանը եօ-  
թը տարու էր , ու իր հայրը միւս տը-  
զաքներէն էվել Հովսէփը կըսիրէր .  
ինչու որ Հակոբ երբոր իննսուն առ-  
բեկան էր՝ ան ժամանակը Հովսէփը  
ստացաւ : Կարելի է թէ Հովսէփ կըր-  
թեալ աղայ մը ըլլալով ու իմաստու-

թեան աստիճաններ ցուցունելով , որ  
իր հասակին նոյելով շատ մեծ բան  
էին , անոր համար իր հայրը անիկա  
շատ կրտիրէր :

Իր եղբայրները՝ բաց ՚ի Ռենիամին  
նէն որ ան ատենը պղտիկ տղայ մըն  
էր , կերեայ թէ Յովսէփին չափ  
կրթեալ չէին . Բառլսոյին ու Զէլ-  
փային աղաքները որոնց հետ Յով-  
սէփ ոչիս սր կարածէր , անգամ մը  
գեշ բան մը ըսին , ու Յովսէփ անի-  
կա իր պարտքը սեպէլով զնաց իր  
հօրը զըսւցեց :

Յովսէփ ասանկ մէկ տղայ մը ըլ-  
լալուն զարմանալու չէ , որ Յակոբ տ-  
նիկա միւս տղաքներէն էվէլ կրտի-  
սէր . ու կարելի է որ Յակոբ իր տղոցը  
առջին Յովսէփին վրայօք բան կըխօ-  
սէր՝ որ անիկա անոնց մէկ օրինակ մը  
ընէ , որ ամէնքն ալ անոր վարքին հե-  
տեին : Յովսէփ նաև գեղեցիկ ու պատ-  
ուական հանդերձներ կըհազնէր զա-  
նազան զոյներով , որ իր հայրը տու-

եր էր իրեն՝ իբրև մէկ յառուկ նշանը  
 իր սիրոյն, կամ անիկա միւս եղբայր  
 ներէն որոշելու համար, և կամ նաև  
 անիկա իրենցմէ առաւել պատռաւոր  
 ըլլալը ցուցունելու համար. ինչու որ  
 Վատուածաշունչին մէջը ասկէ ետե  
 չենք տեսնար Հովսէփին ոչխար արա  
 ծելը. ու կրկարծը թէ տունը հօրը  
 քով կրնառէր, ու իր հօրը օդնութիւն  
 կրնէր անոր ընտանեացը և ուրիշ գոր  
 ծերուն մէջ հոգ տանելով: Բոլոր առ  
 բաները Հովսէփին եղբայրներուն շատ  
 առելութիւն ու նախանձութիւն պատ  
 ճառեցին. ու անոր պատուհած ժամա  
 նակնին խաղաղութեամբ չէին կրնար  
 խօսիլ անոր հետ. ու շատ անզամ ալ  
 երբոր քովէն կանցնէին ամենելին բա  
 րե չէին տար անոր. երբեմն ալ դառն  
 ու զէշ խօսքեր կըզըուցէին անոր զէմ,  
 ու կարելի է ալ թէ՝ երբոր մինակ  
 ինքիրեննին ըլլային, իրենց ծեր հօրը  
 համար ալ նախառական խօսքեր կը  
 զըուցէին, ու իրենց եղբօրը համար

ալ տըտունջ կընէին որ անոր այնքան  
սէր տուած էր . ու նաև հովսէփին  
համար ամբատանութիւն կընէին որ  
իրենց դործին մէջը կըմտնար ու ը-  
րածներնին կամ ըսածներնին հակո-  
րին կըզըռուցէր :

**Հիմայ՝** սիրելի՝ տղաքներս , արդեօք  
գուք ալ ձեր եղբայրներուն կամ քու-  
րերուն կամ դպրատան ընկերներուն  
կընախանձի՞ք մի՝ անոնց վարքը ձե-  
րինէն աղէկ ըլլալուն համար , ու անոնց  
ծնողքները կամ վարժապետները անոնց  
վրայ ձեզմէ առաւել սէր ունենալուն  
համար , կամ թէ անոնցոյս ինչ բան մը  
շնորհէլնուն համար՝ որ դուք չէք ու-  
նեցած . թէ որ նախանձիք նէ , դիտէ՞ք  
թէ նախանձութիւնը ինչ բան է . ու  
նաև պարտիք գիտնալ՝ թէ ուրիշն  
վրայ նախանձութիւն ընելը ինչ գէշ ու  
մեղք բան է . թէ որ անոնք բարի ու եր-  
ջանիկ են՝ ու կըսիրվին և կըպատվին ,  
ու անանել պարզեներ կունենան՝ որոնց-  
մէ դուք չունիք , պէտքը չէ՞ մի որ ու-

բախանաք նախանձելու տեղը . ու ա-  
 նոնց տրված պարզեները ետ առնը-  
 վել ուղելուն տեղը՝ աղէկ չըլար մի՞  
 որ դուք աշխատիք անօնցմէ օրինակ  
 առնել , ու անոնց նմանիլ , ու անոնց  
 երջանկութեանը մասնակից ըլլալ .  
 ինչու որ ծնողքները ու վարժապետները  
 բաւական պատիւ՝ սէր՝ և ուրիշ շատ  
 բաներ ունին , որ կրնան բոլոր տղոցը  
 տալ , որոնց վարքերը համեստ ու  
 բարի են ու այնպէս պարզեի ու պատ-  
 ւոյ արժանաւոր : Հովսէփին պատ-  
 մութեանը մէջ պիտի տեսնաք՝ թէ  
 անոր եղբայրներուն ըրած նախանձու-  
 թեան պտուղները ետքը ուր հասան .  
 ո՞չ , չէ՞ք դիտեր՝ թէ արդեօք եղբօք  
 ու քրոջ նախանձելուն վերջը ուր  
 կերթայ . ամեն տեսակ մեղքը թէպէտ  
 առջի անդամին պղտիկ կերեայ , բայց  
 հոգը շուտով կածի , ու վերջը շատ  
 վնասակար կըլլայ :

**Արդեօք կըխորհի՞ք մի՞ որ բարկու-**  
**թեան մէջ մէկը մէկալին մէյմը զար-**

նելու ըլլայ ու ետքը չապաշխարէ նէ՝  
վերջը ի՞նչ կըլլայ . թէ որ չապաշ-  
խարէք ու չաղօթէք Աստուծոյ որ աս-  
բնութիւնը ձեզմէ հանէ , ետքը երբոր  
բարկանալու ըլլաք , առաւել սաստիկ  
պիտի զարնէք . գիտէք մի արդեօք  
ասոնց բոլորին վերջը նւր կերթայ .  
երբոր ըսեմ՝ թէ վերջը սպաննութիւն  
կըծնանի , արդեօք պիտի զարմանաք  
մի . շատերը ըլլած են ան , ու կրնայ  
ըլլաւ որ դուք ալ ընէք : Կախանձու-  
թիւնը մարդս մարդասպան կրնէ . ա-  
սանկ ալ թէ որ նախանձուս սիրտ ու  
նեցողները չի զի ջան ու չապաշխարեն ,  
կրնան Հովհանքին եղբայրներուն պէս  
պէշ բաներ ընել . ինչպէս որ պիտի  
տեսնաք անոր պատմութեանը մլջ :

Հիմայ՝ ուղիղ սրտով ապաշխարե-  
ցէք , որ աս տեսակ կիրքեր չունե-  
նաք . ու աղաչեցէք Աստուծոյ՝ որ իր  
սուրբ Հոգին տայ ձեզի , որ դուք ա-  
նոնց բոլորին յաղթէք . ու թէ որ տա-  
կաւին չէք ապաշխարած ձեր ըրած

Նախանձութեանը վրայ, կաղաքեմ ձեզի՞ որ աս ձեր երևելի պարտքը առանց  
ձանձրանալու կատարեք :

Գ. Լ. ՈՒ Խ. Դ.

Ճաշկերեն երանը : Եղբայրներուն Ուժեւէ  
երեսուց, Այս ունեցն այսուհերութիւննը : Ճաշ-  
կերեն իր Եղբայրներուն երան հոգունեւ-  
ս դեմքունը :

**Պ**անի որ չովսէփի իր Եղբայրներէն  
այս չափ կանարգը վէր, Աստուած  
անոր մէկ երազ մը տեսնալ տուաւ իր  
քունին մէջը, որ իբեն ապառնի վի-  
ճակին փոփոխութիւնը ու անիկա ա-  
նոնց վրայ իշխան կարգը վելը կըցու-  
ցունէր : Իր երազին մէջը տեսաւ որ  
բալոն ալ մէկ դաշտի մը մէջ էին .  
ու ամենքն ալ ցոլենի փունջեր կր-  
կապէին որոնք որ առաջմանեւ հնձած  
էին . մէկէն 'ի մէկ չովսէփին կապած  
փունջը ինքնիրենը ելաւ կանգնեցաւ ,



Հովսէփին՝ ցորենի փռւնջերուն վրայ իր  
տեսած երազը պատմելը :



ու իրեն եղբայրներուն կապածները  
չորս կողմը պլորվեցան, ու անոր եր-  
կրպաղութիւն ըրին :

Յովսէփ իր երազը եղբայրներուն  
պատմեց . բայց անոնք առաւել սկր-  
սեցին Նախանձիւ անիկա լսելովնին .  
իրեն Նախառական կերպով մը հար-  
ցուցին, թէ ի՞նչ ըսել ուզեկ աս ե-  
րազը իրենց պատմելովը . ըսին անոր՝  
թէ իրաւցընէ դուն մեր վրայ պիտի  
իշխե՞ս մի . մենք քեզի երկրպագու-  
թիւն մի՞ պիտի ընենք, ու հնազան-  
դի՞նք պիտի իբր մեր իշխանին կամ  
թագաւորին պէս . ի՞նչ մեծ յիմարու-  
թիւն ու հօգարտութիւն է որ քեզի պէս  
մէկ պատանի մը՝ մանաւանդ մեր փոքր  
եղբայրը ասանկ երազ մը տեսնայ, ու  
յոյս ալ ունենայ որ կառարսի, ըսին  
իբ եղբայրները :

Ասկէ քիչ ժամանակէ ետև Յով-  
սէփ ուրիշ երազ մըն ալ տեսաւ, որ  
առաւել դարմանալի էր միւսէն :

Երազին մէջը տեսաւ՝ որ արեգակը  
4 թ

լուսինը ու տասնըմէկ աստղ իր չորս  
կտղմը շարված էին , ու իրեն առջին  
երկրագութիւն կընեին :

Յովսէփ աս երազը իր հօրը ու եղ-  
բայրներուն պատմեց , ու անոնք կը-  
կարծէին թէ մարդարէութիւն կընե-  
կոր՝ որ չէ թէ միայն իր եղբայրները՝  
որ տասնըմէկ աստղերը կըցուցունէ-  
էին , հապա իր հայրն ալ մայրն ալ՝  
որ արևը ու լուսինը կըցուցունէին ,  
անոր երկրագութիւն պիտի ընեն , ու  
իրենց իշխանին ու թագաւորին պէս  
անոր պիտի հնաղանդին :

Յակոբ կարծէլով՝ թէ չովսէփ ա-  
սանկ երազներ տեսնալովը պիտի հը-  
պարտանայ ու գուղանայ , կամ թէ  
Ճշմարիտ չի հաւտալով որ չովսէփին  
ըրած մարդարէութիւնը պիտի ստոյգ  
կատարվի , յանդիմանեց անիւկա . ը-  
սելով թէ , Վա ի՞նչ երազ է՝ որ  
պուն տիսար . ես ու քու մայրդ ու քու  
եղբայրներդ իրաւ քեզի երկրագու-  
թիւն մի պիտի ընենք :

Ասկայն աս ելուղը Հակոբին զարմանալի երազ մը կերեար, մանաւանդոր տուջի տեսածին ալ շատ մօտ էր . ու Հակոբ ասիկա չի մոռցաւ : Հովուժին ետքի տեսած երազը կրկին բարկացուց իր եղբայրները առջինին ովէս . անոնք հս տռառել սկսեցին նախանձիլ ու առել անիկա . անշառ անոնք մեկ պատեհութիւն մը կրփնուռեին , որ անոր մեկ մեծ վնաս մը ընեն . ինչու որ նախանձութիւնը ու առելութիւնը անզործ չեն կրնար միտւ :

Ըստի կը նախանին անոնք որ քիչ մը ժամանակ պահված կը մնայ , ետքը կը կին սասակութեամբ կը փռնիլի . մենք ալ սիստի տեսնանք որ Հովսեփին եղբայրներուն կիշուերն ալ ոտոր ովէս իրենց ներսիդինին փռնկած էր :

Ասկէ քիչ մը ժամանակ ետև հայրերնին անոնք Ալւքէմիսկեց իր ոչ խարները ու այծերը արածելու : Աստեղս Քերբրոնէն դէսկի հիւսիս վաթ-

սուն կամ եօթանասուն միշն է . որ շատ  
չեռու տեղ մըն էր ասկէց մինչեւ հօն  
իրենց հօրը ոչխարնելը ու այծերը  
տանելու համար . բայց ի՞նչ օգուտ ,  
պիտի տանեին մէկ տեղէն մէկալ տե-  
ղը մինչեւ որ բաւական կերակուր  
զանային անոնց :

Աիւքէմին ձորին մէջը շատ առատ  
մնունդ կըզտնային , պատճառը որ  
Վատուած ան դաշտը օրհներ էր :  
Եյժմեան ճանապարհորդները որ Պա-  
զեստինու ան կողմերը կերթան , կըսին  
թէ շատ զուարժալի ու սլողատու մէկ  
երկիր մըն է : Հիմայ ան քաղաքը որ  
Կապլուդ կըսվի , երբոր անոր քովի  
մօտ բլուրներէն նոյելու րլլըվի՝ կե-  
րեայ թէ դեղեցիկ ու անուշահոտ հո-  
գանոցներով , ու տուներուն կէսը հա-  
րուստ պարտեզներով ու բարձր ծա-  
ռերու անտառներով ծածկըված էն :

Աջ կողմը ու ձախ կողմը Կարիգի-  
նին ու Գերաղին լեռներն են , որոնց  
երկայն ժայռապատ ու անբերը

բարձրութիւնները առջն կողմէն տար-  
բեր են վարի հարուստ ձորեն , ու ան-  
ընդարձակ ձիթենեաց երկրեն :

Աս տեղին մօտ՝ որ Վ.քիատոսի ժա-  
մանակը Սեքար կովեր , Հակոբ նա-  
հազետին հորը կար , ուր տեղ որ  
Վ.քիատոս Սամորացի կնկանը հետ  
խոսեցաւ . ու Հովսէփի ինքն ալ հոս-  
թաղվեցաւ , ինչպէս որ պիտի տես-  
նանք իր զարմանալի պատմութեանը  
վերջին մասին մեջը :

Աս զուարձալի տեղը խրկեր էր  
Հակոբ իր տղաքները , որ իր անթիւ  
ոչխարները արածեն . աս տեղը իրենց  
տունեն հեռու ըլլալուն պատճառաւը  
հայրելինին քիչ ժամանակէ եռև բա-  
կրսեց հոգ ընել անոնց համար . ու  
Հովսէփը խրկեց՝ որ երթայ անոնք ու  
ոչխարները նայի , ու ինչպէս ըլլալին  
իրեն գոյ զրուցէ : Ծատ երկար մէկ  
Ճանապարհ մըն էր ասանել մէկ պա-  
տանիի մը՝ քալելով մինակ այսքան  
տեղը երթալը . ասկէ ՚ի զատ Հովսէփի

ալ պէտք էր որ վախնար իր եղբայր ներէն . ինչու որ՝ եղբայրները անոր շատ ներհակ ու թշնամի էին . բայց անոր հայրը բառ որ երթայ . ու մեկ հնագանդ տղի մը այսչափ խօսքը բաւական է : Հովսէփ ուրախութեամբ հնագանդեցաւ , ու իր տունը ձգեց որ ան քերը ոնին զեղեցիկ ձորին մեջն էր : ու ճամբայ ելաւ Ոիւքէմ երթալու իր եղբայրներուն համար , որ անոնք դունայ ու անոնց վեճակը խմանոյ : Հովսէփ շատ քիչ զիտեր իրեն ինչ պիտի պատահէր , ու իր զլխուն ինչ պիտի գար . ու ինչպէս Վասուած հիմայ անիկա ան ճամբուն մեջը կառաջնորդէր որուն վերջը մեծութեան պիտի հասցընէր , ու իր երազները կառարել տար :

Կաև Հովսէփին ծեր հայրն ալ ամենեն չէր զիտէր իր հրաժարական ողջոյնը տուած ժամանակը , թէ իր զլխուն ինչ պիտի գար . ու շատ առ ըիներ պիտի անցնէր իր հնագանդ ու

սիրելի տղան կրկին տեսնալու : Ե՞նոնք  
մէկզմէկու ուրախութեամբ մնաս բա-  
րովը ըսին . ու չէին զիտեր թէ մինչև  
իրար կրկին տեսնալու ըլլաին նէ ,  
արդեօք ի՞նչ փորձանքներ պիտի զան  
դլիւընուն :

Դ. Ա. ՈՒ Խ Խ Խ :

Ըստեհին ի՞ր եղբայրներուն յօդենալը :  
Եղբայրներուն շուրջ-նիւնը՝ որ իսպանին իրենց  
եղբայրը մուցածնելը : Ո՞ւշը լուսաւու-  
րեան գործունէ : Վեհան շուրջ-նիւներուն  
գունինէ . նե որ շորտչորդէ նէ՝ վերք շու-  
գել իւսոյ :

**Յ**ովսէփ վերջապէս Ախւքէմ հասաւ :  
Երբոր դաշտին մէջը կրպաըտէր իր  
եղբայրները զտնալու , մէկ օտարսական  
մը պատահեցաւ անոր ու հարցուց ,  
թէ՝ ի՞նչ կրփնտուես հոս : Յովսէփ  
պատասխան տուաւ , թէ՝ Եղբայրներա  
կրփնտուեմ . կաղաչեմ ձեզի , ուր

տեղ անոնք իրենց ոչխարները կարս-  
ծենկոր նէ ըսէք ինձի :

**Վարդն** աւ ըսաւ . Ենոնք առկէ  
դացին , ու ես լսեցի՞ որ կըսէին թէ ,  
Վալէցէք Դովթայիմ երթանք :

**Դովթայիմ** առաւել հեռու էր զէպ  
'ի հիւսիս . ու քսան մղնեն առաւել  
հեռու է Ախւբէմէն . Հովսէփ շուտով  
հռն տեղը գնաց , ու իր եղբայրները  
պատ :

**Վարդարե** Հովսէփի իր ճամբռդու-  
թիւնը լըմընցունելուն համար շատ ու-  
րախացաւ , ու կըյուսաբ՞ որ շուտով  
կըկին իր սիրելի հօրը սկսոի դառ-  
նար , ու բոլոր իր եղբայրներուն աղէ-  
կութիւնները անոր զրուցէր :

**Երբոր** Հովսէփին զալը տեսան իր  
եղբայրները , ու ստոյգ գիտցան իրենց  
եղբայրը բլուլը նէ , արդեօք զիտէք  
մի անոր վրայօքը ինչ բաներ մտմտա-  
ցին :

**Վարդեօք** ուրախացա՞ն մի որ անիկա  
տեսնալովնին իրենց տանը ընտանեա-

շը ու իրենց սիրելի հօրը ինտոր ըլլաւ լը պիտի իմանային :

Արդարեւ եթէ դուք անոնց տեղը ըլլոյիք, ասանկ պիտի ուրախանայիր . բայց, ա՛չ, դուք շատ քիչ զիտէք մարդուն սրտին նենգութիւնը ու շարութիւնը :

Ես ձեզի ըսի՞ որ եթէ նախանձութիւնը ու ատելութիւնը բոլորովին սրտէ չի հանվի նէ, վերջը ուր կերծայ . հիմայ դուք պիտի տեսնաք իմ խօսքիս ճշմարիտ ըլլալը :

Վէ անոնց տուներուն հեռու ըլլալը, ու ո՛չ ալ ան զուարձալի ու անմեղ արհեստին մէջը ըլլանին կարող եղան անոնց սիրուերը կակողցունելու, ու նաև իրենց կարծիքնին ալ մոռցընելու, որ կըսեպէին՝ թէ չովսէփ ու իրենց հայրը իրենց շատ անիքաւութիւն ըրած են :

Անոնք Ախւքէմին զուարձալի ձորին մէջը կըստըսէին, ու ան զեղեցիկ օղը կըշնջէին, ու ան զուարձալի տես 5 թ

սարանները կըտեսնէին , ու կանանչ  
խոտերուն վրայ իրենց ոչխարները  
կարածէին , ու երկար ժամանակ ան  
զովագին վտակներուն ու ծառերուն  
տակը կըհանգչէին :

Սակայն աս աղէկութիւններուն մէ<sub>շ</sub>  
կըն ալ ամենեին անոնց սրտին մէկ  
աղջւութիւն մը չե տուաւ , որ իրենց  
եղթօրը համար ունեցած ոխերնին  
սրտերնուն հանեն :

Ի՞նչպէս հանգիստ արհեստ մը ունէ<sub>ին</sub>  
ին , ու որչափ Վատուած անոնց աղէկու<sub>թիւն</sub>  
կընէր , ու իր քաղցը զթութիւնները  
անոնց կըցուցընէր բոլոր իր մա<sub>տերուն</sub> գործքերովը , ուսոնք որ իրենց  
չորս կողմը կըտեսնէին . ու որչափ աս  
բանները պէտք էր անոնց սիրտերը շը<sub>նորհակալութեամբ</sub> լեցունել դէպի  
իրենց երկնաւոր Հօրը , ու նաև բա<sub>րի</sub> սիրտ ունենալ տար իրենց ընկերուն  
ներուն վրայ . սակայն անոնց սիրտերը  
շատ տարբեր էին :

Երբոր հօվակփին գալը հեռուէն

տեսան , որ կարելի է թէ մէկ բլուրէ  
մը վար կիջնարկոր ան , ու տակաւին  
իր հօրը տուած հանդերձները հագած  
էր , իսկոյն իրենց ներսիդին չար կիր-  
քերը շարժեցան :

Անոր երազը միտքերնին ինկառ ,  
որ ամենէն էվել աս բանին համար ա-  
նիկա այնչափ կատեին , ու մէկզմէկու-  
րանին . Ահա երազատեսը կուգակոր ,  
ուրեմն եկէք անիկա մեռցունենք , ու  
փոսի մը մէջ նետենք . ու կըսենք թէ՝  
Պատառող դադան մը անիկա փառա-  
տեց . ու տեսնանք թէ անոր երազը  
ինչ պիտի ըլլայ :

Անոնց ամբարտաւանութիւնը՝ նա-  
խանձութիւնը՝ ու ատելութիւնն էր որ  
իրենց հարազատ եղբայրը մեռցունել  
տալու կաշխատցընէր . ինչու որ՝ եթէ  
չովսէփին երազը կատարվելու ըլլար ,  
ան ժամանակը անիկա իրրե իրենց  
իշխանը ու թագաւորը պիտի սեպէին :

Ի՞նչպէս կընային անոնք իրենց փո-  
քըր եղբօրը հնազանդիլ՝ ու անոր

երկրագութիւն ընմել , երբոր միտ  
քերնին կըքէրէին իրենց հօրը հովսէ-  
փին այնքան ցուցուցած սէրը , ու ա-  
նոր տուած գեղեցիկ հանդերձները ,  
ուսնք իր սիրոյն՝ ու նաև անիկա իր  
եղայլներէն պատվաւոր ընելուն մէկ  
յատուկ նշանն էր . ուստի առաւել ի-  
րենց նախանձութիւնը կըշտանար .  
զիտէին որ անիկա առ պատոյն ար-  
ժանի էր . ինչու որ անոր վարքը ու-  
թնութիւնը իրենցմէն շատ աղէկ էր :

Անոնք շատ կուգէին որ հովսէփը  
ինչ որ ունէր ու կըգայլէր նէ՝ անոնց  
մէ զրկվագէր . որով իբր թէ իրենց եր-  
ջանկութիւնը պիտի էվելնար :

Անոնց առելութիւնը խիստ շտա-  
ցաւ . շատ կուգէին որ հովսէփին մէկ  
մեծ չարութիւն մը ընեն . պատրաստ  
էին անիկա մեռցունելու :

Կուգէմ որ առ տեղը քիչ մը կե-  
նամ , որպէս զի ձեղի հասկըցունեմ  
մեղքին ինչ ըլլուլը : Դուք կըտեսնար  
հովսէփին եղայլներուն չար խոր-

Հուրդներուն ու զգացումներուն ի՞նչ  
պէս սոսկալի ըլլալը :

Արդեօք զուք ալ կը մտմտա՞ք մի  
ձեր չար խորհուրդներուն ու զգա-  
ցումներուն վրայ՝ որոնք որ ներսիդի-  
նիդ կը պահէք, ու ելքեմն ալ ձեր  
խօսակցութեանը ու վարքելնուղ մէջը  
կը ցուցընէք :

Արդեօք զիտէ՞ք մի ի՞նչպէս կերե-  
ան անոնք Վատուծոյ առջին, որն որ  
բոլորը զիտէ ու կը տեսնայ : Անէ  
որ մեղքերնիդ բոլորով սրտիւ չէք ա-  
պաշխարած, ու Քրիստոսի միջնոր-  
դութեամբը ձեր մեղքերուն համար  
Վատուծմէ թողութիւն չէք խընդ-  
րած ն՛, ու Հոգւոյն սրբոյ համար ալ  
աղօթք չէք ըրած նէ որ իր դօրութիւ-  
նը ձեղի տայ՝ մեղքէն ետ կենալու,  
զուք ալ Հօվանէփին եղբայրներուն  
պէս նոյն աղէտալի վիճակին մէջն էք .  
մեղքը ինտոր որ անոնց վարպեան էր,  
անսանկ ալ ձերը պիտի ըլլայ :

Վառվ ըսել կուղեմ՝ թէ քանի որ

Հապաշխարէք՝ եւոքը զէշ բաղձանք  
ներու ու կիրքերու պիտի ծառայէք :  
Վս զէշ սովորութիւնները ձեր վրայ  
պիտի տիրեն ու միշտ զէշ խօսքեր ու  
բաներ պիտի ընել տան ձեզի , մինչեւ  
որ չե պիտի դիանաք թէ ձեր չարու-  
թեան վերջը ուր պիտի երթայ : Հի-  
մայ կըկարծէք որ ձեր մեղքերը շտո  
ոլգտիկ են . սակայն ան մեծ բարի ու  
ճշմարիտ Վստուծոյ պատուէրները  
աւրելը պղտիկ բան չէ :

Վն ձեր բարեկամն է . մեկ բարե-  
սիրտ մարդ մը պարտի բոլոր անոր  
մարդասիրութիւնները յիշել , անիկա  
սիրել ու անոր հնագանդ ըլլալ : Վն  
ձեզ ստեղծեց , ու դուք անոր ստաց-  
ուածքներն էք . պէտք է որ դուք տ-  
նիկա սիրէք , ու անոր հնագան լիք .  
Ե անոր ուզածն ալ ձեր սէրը ու հը-  
նագանդութիւնն է , որ դուք ձեզ եր-  
ջանիկ ընելէն 'ի դատ , ուրիշներն ալ  
ելջանիկ ընէք . ինչու որ տղոցը սէ-  
րը ու հնագանդութիւնն է որ զիլինք

ու իրենց ընտանիքը երջանիկ կընէ ,  
ինչպէս որ յայտնի է : Ենանիկ ալ  
Վստուած սիրելը ու անոր հնազանդի-  
լը իր մեծ ընտանիքին մէջի բոլոր ա-  
րարածները երջանիկ կընէ : Ուեղքը  
բոլոր արարածներուն մէջը թշուառու-  
թեան պատճառ է . ինչպէս դուք զի-  
տէք որ ծնողաց անհնազանդութիւն  
ընելը ու դէշ վարք ունենալը՝ ընտա-  
նեաց մէջ մեծ թշուառութեան պատ-  
ճառ կըլլայ :

Ուստի պէտքը չէ որ մէկ մեղքի մը  
պզտիկ է, բավի . վասն զի թէ, որ ձեր  
մեղքերուն վրայ չապաշխարէք ,  
ու չիտուսի ՚Վրիտառուի չապաւինիք  
անով ձեր մեղքերէն փրկըլվելու հա-  
մար , ետքը ձեր չար խորհուրդները  
ու զգացումները պիտի շատնան ու  
գօրանան քանի որ մեծնաք :

Արդեօք մեղք գործելուն վերջը  
ուր պիտի երթայ . ու աս կեանքին մէ-  
ջը ի՞նչ բաներ չի պիտի ընել տայ ,  
ու նաև գալու աշխարհին մէջը ուր  
պիտի առաջնորդէ :

Արեգին վարձքը մահ է . անանի  
մուշ մըն է հողւոյն որ երկնային ուրա-  
խութենէն յաւիտեանս կրպրկէ , ու ան-  
աղէտալի՝ չար՝ ու ամենաթշուառ ու-  
ղը կրտանի , ուրտեղի որդը քնաւ-  
մեռնելիք չունի , ու կրակն աւ մարե-  
լիք :

### Գ. Լ. Ա. Խ. Խ. Օ.

{ } աշխատի իշխան իշխանութեանու առա-  
շանութ : { } աշխատի իշխան ներածութ : Եր եղ-  
բայրներուն իսրայելացիութեանու : { } աշխատի իշխա-  
ն իշխան համար { } առաջարկի առաջարկնու : { } աշխ-  
ատի իշխան իշխայիւսուցիութեանու , անսուց անհիմ-  
լու առաջարկ առաջարկնու : ու վարաւծոյ նուիսակնու :

**Յ**ովսէփին եղբայրները հիմայ զինքը  
մեռցունելու վրայ են . մէկէն 'ի  
զատ բոլորն աւ իրենց սրտին մլջը  
ունին աս չար զործը լնելը . բոլորն  
աւ կրմտմտան թէ , ինչ եղանակաւ ու  
ինչ կերպով լնեն որ չի յայտնըվի ,

ու իրենց հօրը հաւոտցընեն թէ մէկ  
վայր՝ դաղան մը փառատեց անիկա :  
Հիմայ անիկա մեռցունելու համար կը-  
խոսին , ու կըսէն թէ Ակէ՛ք մեռցու-  
նենք անիկա , ու անանկ փոսի մը մէջ  
նետէնք որ մարդ մը կարող չըլայ ա-  
նիկա տէսնալու . ու ասանկ հիմայ բո-  
լորն ալ կըպտորասորվին՝ իրենց ամ-  
բարտաւանութեան նախանձութեան  
ու ատելութեան չար կիրքերը հաճե-  
ցունելու :

**Բ**այց Վոտուած թող չի տար որ  
իրենց ուզածը ընեն . տակաւին Վոտ-  
ուած շատ բաներ ունի Հովսէփին ը-  
նելու ու կեանքն ալ ողջ պահելու իր  
մէկ եղբօրը միջնորդութեամբը , որն  
որ մէկաներուն չափ դէշ չէր :

**Ո**ւորէնը ամենէն մէծն էր . Վոտ-  
ուած անոր խղճմտանքը արթընցուց  
որ իրենց ընելու չարութիւնները  
տէսնայ . ու անոր սիրտը կակղացուց  
որ իր եղբօրը ու հօրը ողորմի :

**Ո**ւորէն իր եղբայրներուն աղացեց ,  
6 թ

որ Հովհանքի չի մեռցունեն . ու խրա-  
տեց անոնք՝ որ իրենց մօռը մէկ խո-  
րունկ փոս մը կար հոն նետեն :

**Ո**ռուբէն կըխորհէր թէ անոնք Հովհ-  
անքին անանկ բարկացէր էին՝ որ ա-  
մնեին անիկա թող չի պիտի տային .  
ու կըյուսար թէ ետքը պատեհութիւն  
մը կընայ դոժնալ անիկա տղատելու ու  
անկէ իր հօրը՝ Յակոբին դարձունելու :


**Մ**իւս եղբայրները Ոռուբէնին խը-  
րատին հնազանդեցան . կարելի է  
խորհեցան՝ թէ իրենց եղբայրը իրաւ-  
ցընէ մեռցունելու ըլլան նէ , Ոռուբէն  
ան մասին անոնց հետ մասնակից չի  
պիտի ըլլայ , ու բոլոր ըրածնին ալ  
իրենց հօրը պիտի երթայ զուրցէ :

**Բ**այց հիմայ Հովհանքի իր եղբայրնե-  
րուն քովը կըմօտենարկոր՝ որ իրենց  
հօրը աղէկութիւնը անոնց զուրցէ , ու  
նաև իրենց ինչպէս ըլլալը իմանայ :

**Յ**ովհանքի ինչպէս լացաւ ու պօռաց  
երբոր զինքը բունեցին , ու զանազան  
զոյներով հաղած զեղեցիկ հանդերձ-



Հասկեփին՝ Եղբայրներուն զինքը բռնել-  
նին, և իր գեղեցիկ պատմուճանը վրայէն  
Հանելնին, ու զինքը հորի մեջ ձգելնին :



ները հանեցին , ու մէկ խորունկ փոսի  
մը մէջ նետեցին . ու հովսէփ ինքը  
հոն ձգված ատենը կրղարմանար ու  
կրղողար , չի դիանալով թէ տակաւին  
ինչ պիտի ընեն իրեն :

Հովսէփ կըկարծէր՝ թէ կրկին պի-  
տի դան ու զինքը մեռցունեն . կամ թէ՝  
պիտի ձգեն հոն , որ անօթութենէ,  
երթայ մեռնի :

Հայց հիմայ եղբայլները ի՞նչ ը-  
բին . կանանչ խոտին վրայ նատեցան  
իրենց կերակուրը ուտելու , իբր թէ  
ամենենին բան մը չէին ըրած :

Ո՞վ կըխորհի՝ թէ անոնք առ անո-  
դորմութիւնը իրենց եղբօրը ընելնուն  
ետեւ նատին լոփի , և ուրախութեամբ  
իրենց հացը ուտեն . բայց մեղքը մար-  
դուն սիրար կըկարծրացունէ . ատե-  
լութենէն անողոքմութիւն առաջ կու-  
գայ . անանկ գէշ բան մըն է՝ որ մէկ  
հօր աղարբ՝ եղբօր իրարու նախանձե-  
լու ըլլան , վայրենի ու պատառող  
գաղաններուն պէտ մէկզմէկու կրվնա-  
սեն :

Ո՞վ էին ան մարդիկը որ հեռուէն կուգախնկոր ուղտերուն վրայ հեծած հովսէփին եղքայրներուն մօտ , ուր տեղ որ տակաւին եատած հաց կուտէին : Անոնք խումբ մը խամայելոցի ու Վաղիանացիներ էին որոնք որ Դուլ թայիսմին արեւելւան կողմը Գառլասով ըսված երկիրը գացեր էին անուեղէն շատ համեմներ , անուշահու իւղեր , ու առաջին ծախու առնելու համար , ու Աղիպառս կըսանէինկոր հոն ծախելու , որոնք որ ան տեղի մարդիկները շատ կըսիրէին գործածել :

Խառնց բոլորն ալ Վատուծմէ էր . Վատուած ինքը ասանկ կարդաղրեր էր , որ աս վաճառականները աս ժամանակը աս ճամբարյէն անցնին , որ հովսէփին կեանքը ազատելու սլատճառ ըլլան , ու անոր երաղին ճշմարիտ ըլլալը հաստատիլի :

Հիմայ հուղա ալ սկսեց հովսէփը մեղքընալ , ու անոնց ըսաւ . Վ՞նչ օգուտ կոյ մեղի մեր եղբայրը մեռցու





Վասնց Հովհաննիք Խամայէլացիներուն քսան  
կտոր արծաթի ծախելնին :

Նելէն : Վլրդարեւ անսանեկ կերպով մը  
կընանք ընել՝ որ ամեննե ին չի պիտի ի-  
մացվի . ինչու անիկա պիտի մեռցա-  
նենք . ան ալ մեր եղբայրն է , ու մեր  
հօրը զաւակը : Ա, կէք անիկա վաճա-  
ռականներուն ծախենք , որ հիմայ հոս  
պիտի գան . անոնք հեռու տեղվանք  
կրտանին անիկա , ու մենք ալ կազա-  
տինք անոր արտառոյ երաղներէն :

Յուղա միւսները յորդորեց . ու  
ամենքը մէկ տեղ զային հօվակփը  
փուէն դուրս հանեցին : Հօվակփ անօ-  
թի դողալով ու վախն սլով կրմոմտար  
թէ անոնք արդեօք ալ առաւել ի՞նչ  
գէշ քաներ պիտի ընեն իրեն : Ա եր-  
ջապէս խամայելացիները մօտեցան ,  
ու իրքեւ ոչխար մը կամ այծ մը ծա-  
խէլու նման հօվակփին գինը կտրե-  
ցին . ու անոր արցունքներուն ու աղա-  
ցանքներուն ներհակ՝ աս օտարական-  
ներուն քսան կտոր արծաթի ծախէ-  
ցին , ու անոնք ալ Ազիովտու տարին  
անիկա : Աս տեղս էր ուր որ Աստուած

կուզէր թէ չովսէփը երթայ . սակայն  
իր չար եղբայրները աս բանա շիյտէ-  
ին . անոնք ամենելին միտք չունելին որ  
իրենց եղբօրը ասանկ ընելովնեին վեր-  
ջը իրենց միտքելոնո՞ն մեջը ունեցած  
չար խորհուրդները պիտի կործանի ,  
ու նաև աս կերպովը իրենց եղբօրը  
առջին խոնարհելու և ամչնալու ձամ-  
բայ կրբանանկոր իրենց :

**Ա**ստուած անոնց չար խորհուրդները  
յաղթեց , որ իրեն ընելու աղեկ բա-  
ները կատարէ . անոր ասանկ ընելուն ,  
ու բոլոր պատահէլու բաները առաջ-  
մանէ գուշակելուն , ու ասոնց ասանկ  
տնօրինելուն ու կարդագրելուն , ու  
նաև բոլոր մարդկանց և ուրիշ արա-  
րածներուն համար մարդասիրաբար  
ու արդարութեամբ ընելուն , կըսհեք  
Դախախնամութիւն Աստուածոյ :

**Ա**ստուածոյ նախախնամութիւնն է  
որ ձեզ կըհոգայ՝ խմսիրելի՛ զաւկընե-  
րը . ու պատահէլու բաները ինքը  
կըտնօրինէ ու կըկարդագրէ , ու ինքն

Է բոլոր ձեր միսիթարութիւններուն  
ու երջանկութիւններուն պատճառք :

Աստուծոյ նոյն նախախնամութիւնն  
էր, որ խեղճ հօվսէփը պաշտպանեց -  
դուք հիմայ իմացոք որ Աստուծ  
իր նախախնամութիւնը ի՞նչ դարձաւ  
նալի կերպով հօվսէփին վրայօք կար-  
գաղրեր էր, որ իր իմաստուն խոր-  
հուրդները գործքի դնե :

Եաւ պիտի տեսնաք, որ Աստու-  
ծոյ նոյն նախախնամութիւնն էր ոք տ-  
ռաւել դարձանալի կերպով հօվսէփը  
իննամեց Ազիակտոսին մէջը, ուր տեղ  
ու ան դացեր էր իր սիրելի հօրմէն  
դառված, ու իրին գերի մը օտար  
երկիր ծախված :

Գ. Ա. Ա. Խ. Խ. . Ե. :

Ուստի այս պատճենութեանը՝ չուշեւիլ ծախ.  
Զո՞ւ գումառը և համար : Չուշեւիլ է զբարքական  
բառ էրենց հայրը հաստացնելուն , ու ունի ա  
մեռութեան : Վահանց հեծ յանացանը : Ու եղաւ իս-  
բեռնեն ու պատճեն առաջ կը բարեւ :

**Ա**ռուբեն որ իր եղբայրները ասանկ  
խրատել եր թէ չօվակփը փոսը  
նետեն , որ աս կերպով կարող ըլլայ  
անոր կեանքը աղատելու ու կրկին իր  
հօրը դարձունելու , չօվակփին խամայ-  
ելոց ծախված ժամանակը՝ ինքը  
հոն չէր . ետքը շուտով եկաւ , ու փո-  
սին քովը գնաց , բայց անիկա հոն չի  
գտաւ : Վա բանիս վրայ Առուբեն շատ  
տրտմեցաւ ու յուսահատեցաւ , ու իր  
հանդերձները պատռեց : Վն ժամա-  
նակը մարդկանց սովորութիւն եղած  
էր ան երկրին մեջը աս բանը ընելը ,  
ու իրքե մեկ խորին տրտմութեան նը-  
շոն մըն էր . ու կարելի է Առուբեն  
զիտնալով ըրաւ աս բանը որ անոնց

Հասկրցունէ , թէ ինչալէս սաստիկ  
 տրտմեր է եղբայրը կորմնցունելնուն  
 համար : Առուբէն իր եղբայրներուն  
 քովք եկաւ , ու սրտառուչ աղաղակաւ  
 կանչեց . Տղան չի կայ , ու ես ուր պի-  
 տի երթամ : Առուբէնին եղբայրները  
 Յովսէփին ինչ որ ըսեր էին նէ խակոյն  
 անոր պատմեցին , ու ան ալ նայեցաւ  
 որ եթէ անոր աղատութեանը համար  
 ջանք ալ ընելու ըլլար նէ՝ ոչինչ բան  
 էր . ինչու որ թէ որ Խմայելացւոց  
 երթալու ըլլար , անհնարին էր որ  
 Յովսէփը անոր տային , թէ և ստակն  
 ալ կրկին իրենց տրվեր . ու նաև  
 Առուբէն ինքը բաւական ստակ չունէր  
 իր եղբայրը աղատելու . ու անկարե-  
 լի էր որ ան քսան կտոր արծաթը եղ-  
 բայրները Առուբէնին տային որ երթար  
 կրկին Յովսէփը ծախու առնէր , ին-  
 չու որ՝ թէ որ ասանկ ընէին , ան ժա-  
 մանակը ոխերնին առած չի պիտի ըլ-  
 լային :

**Հիմայ իրենց յանցանքը ծածկելու**  
 7 թ

Համար հնարքներ սկսեցին խորհիլ ,  
որ հովսէփին ինչ ըլլալը իրենց հօրը  
ու ընտանեացը չիմացունեն :

Մէկ մեղքը միւս մեղքին պատճա-  
ռն է . աս մեծ չարութիւնը իրենց  
անմեղ եղբօրը ըրին , ու իրենց ծե-  
րունի ծնողքը խարելու համար՝ ստու-  
թիւններ հնարեցին :

Սակայն անսատոյդ է , թէ արդեօք  
իռուբէն նոյն խարեւութեան մէջը ա-  
նոնց հետ միացեալ էր թէ չէ . բայց  
ինչեւիցէ մէկու մը բան մը չի յոյտ-  
նեց . ու աս կերպով անոնց չարութեա-  
նը հաղորդ եղաւ . ու անանկ յայտնի ե-  
րեցուց որ ինքը կըլախնար իր պարտ-  
քը կատարելու : Իրենց հօրը զուրցած  
սուտելինին աս էր . անոնք մէկ ուշ մը  
մորթեցին , ու հովսէփին գեղեցիկ  
հանդերձը անոր արիւնին մէջը թաթ-  
խեցին , իրենց հօրը բելին ու ցուցու-  
ցին անիկա բոլորովին արտնոտ , և ը-  
սին . Վսիկա մենք զտանք . թէպէտ  
չենք դիտեր թէ քու աղինդ է թէ չէ :

Յակոբ իսկոյն ճանչցաւ որ իր տը-  
ղին հանդերձն էր, ու ըստ ։ Չար զա-  
զան մը անիկա փառատած է . անշուշտ  
հօվսէփը կտոր կտոր եղած է :

Խ'նչ մեծ տրտմութիւն եկաւ Հա-  
կոբին գլխուն . առանկ մէկ սաստիկ ցաւ  
մը չէր կընար ըլլար որ անոր եղաւ .  
Ասքէլը՝ որն որ այնչափ կըսիրէր ,  
մեռեր ու Խփրատ թաղված էր . և հի-  
մայ իբ երկրորդ սիրէլին հօվսէփ , որ  
կըյուսար թէ իր ծերութեանը մէջ  
օգնութիւն մը ու միսիթարութիւն մը  
պիտի ըլլար , ան ալ գնաց . սակայն  
առաւել մեծ միսիթարութիւն մը  
պիտի ըլլար Հակոբին , թէ որ իր զա-  
ւակը ծեռքովը դերէ զմանը դնելու ըլ-  
լար . բայց ան ալ չեղաւ :

Հակոբ իր վիշտերուն դառնութեան  
մէջը իր հանդերձները պատուց ու  
հաստը կտաւ հազաւ , ու շատ օր ա-  
նոր համար սուդը մտաւ ու լացաւ :

Բոլոր իր տղաքները ու աղջիկները  
եկան անիկա միսիթարելու . բայց չու-

զեց մխիթարվել . ինչու որ Ես իմ  
տղիս սուզովը գերեզմանը պիտի եր-  
թամ ըստ Յակոբ , ու անանկ անոր  
համար կուլար :

Յակոբին տղաքները իրենց հայրը  
կըմխիթարէին Հովհեփին կորստեա-  
նը համար , որն որ իրենք ծառայու-  
թեան ծախեր էին , ու հեռու երկիր  
մը խրկեր էին իր սիրական հօրմեն  
զատելով :

Անոնք կեղծաւորաբար իրենց տրո-  
մութիւնը հօրերնուն տրտմութեանը  
հետ կըխառնէին , բայց գաղտնաբար  
կուրսխանային ասանկ ըլլալուն վր-  
բայ . կըջանային անոր վիշտը բարե-  
խառնելու , որ նոյն իրենց դորձած  
խաբէութիւնն էր որ անոր վիշտը այն-  
չափ շատցունելու պատճառ կըլլար :

Անոնք կերթային իրենց հօրը ար-  
ցունքները սրբելու , որ նոյն ժամա-  
նակը իրենց ձեռքն էր , միայն Հով-  
հեփը ողջ է ըսելով անոր՝ անիկա մը  
խիթարելը , ու անոր տրտմութեան

արցունքները ուրախութեան դար-  
յուննելը :

Ի՞նչպէս ապերախտ խաբերայ ու  
կեղծաւոր զաւկըներ էին . անոնք որ-  
չափ որ իրենց յանցանքը կըշատցու-  
նէին , այնչափ ալ Աստուծոյ բար-  
կութիւնը անոնց վրայ կաճէր :

Բոլոր աս բաներուն մէջը դուք ձեր  
վտանգը կընաք տեսնալ , թէ որ չար  
խորհուրդներ ու զգացումներ ունենաք  
ու զէշ դործքեր ընելու ըլլաք :

Կեցէք ու խորհեցէք աս վր-  
տանգին վրայօք . մանաւանդ ան մէկ  
բանին վրայ մտմտացէք , որ Հովսէ-  
փին եղբայրները ան մեղքին մէջը ձը-  
զեց . այսինքն՝ անոնց բաած սուտին ու  
ըրած խաբէութիւններնուն վրայօք :

Յիշեցէք որ ան յանցաւոր ու զէշ  
վարք ուեւցող մարդիկները միշտ  
կուղին ու կըջանան իրենց յանցանքը  
ծածկելու . դուք միշտ ասանկ չէք մի  
խմանար , երբոր զիտնալով զէշ բան  
մը ըսելու կամ ընելու ըլլաք : Բայց

անոնք որ կուղեն իրենց գէշ վարքեւ  
ըլ ծածկել , շատ կըջանան մէկ  
հնարքով մը կամթէ համարձակ սու-  
տով մը անիկա ընել :

Ինչպէս որ գիտէք , հասարակա-  
բար կըսվի՞ թէ անոնք որ գողութիւն  
կընեն , սուտ ալ կըխօսին . Ճշմարիտ  
է աս . ինչու որ գէշութիւն ընողները  
ինչ տեսակ որ ըլլայ՝ խարեւութիւն  
կըզործածեն , ու անիկա չի յայտնելու  
համար սուտ կըխօսին :

Ի՞նչպէս անարդ վախկոտ ու յան-  
ցաւոր են սուախօսները . սուտ զուր-  
ցող շրթուկքները Տէրոջը առջին  
պիղծ են . բայց անոնք որ Ճշմարիտ  
կըխօսին , անոր ընդունելի են : Ատա-  
խօսները իրենց բաժիներ ան լիճին մէ-  
ջը պիտի ունենան , որ կըակով ու  
ծծումքով կըվառի :

Ուրիմն վախցէք մեղք զործելէն ,  
բոլոր չար խորհուրդներէն , զդացում-  
ներէն , ու վարքելէն . ինչու որ աս  
բաները մարդա խարեւութեան ու որ-  
տութեան կառաջնորդէն :

Վա վտանգներուն դէմամենսին ա-  
պահովութիւն չի կայ . բայց Աստու-  
ած սիրելուն ու անոր հնապանդելուն  
մէջը շատ կայ : Վրդեօք Աստուած  
սիրելու ու անոր հնապանդելու սիրու-  
ունիք մի . թէ որ չունիք նէ , չովակ-  
փին եղբայրներուն վրայ խորհեցէք .  
մտմտացէք անոնց չոր կիրքերուն վր-  
այ՝ որ իրենց եղբօրը ու հօրը ցուցու-  
ցին , ու ասոնց բոլորն ալ անոնց  
արտին գէշութենէն առաջ եկաւ :

### Գ. Ե. Ա. Խ. Խ. Ը. Ը.

Քանդակին ծախսէլը՝ Պիտուական ներքինին .  
Անոն ուստանաւունենու մշու արձուն և՝ Աստու-  
ածոյ նուխանանունունենու մշու ցաւցունունուն .  
Խոր : Պիտուական սանեցուն աւրու Քանդակին  
ճշոյ : Խելչունուն սանեցուն պարտերնուն  
պարտին Աստուածոյ վախունը խորորել :

Շատ երկար ճանապարհ էր՝ մէկ  
քանի հարիւր մղոն հեռաւորու-  
թեամբ՝ Պովթայիմէն՝ որ տեղ որ

Հովսէփի ծախսվեցաւ Խամայէլացիններուն, Եղիպտոս Երթալը՝ ուր որ  
անիկա տարին :

Աղէկ կըլլայ որ մէկը ցուցունէ  
ձեզի աս տեղմանքը աշխարհացոյցին  
վրայ, ու նաև Վիջագետը ուրկից  
Հակոբ իր ընտանիքովը եկաւ, ու  
Քեքրօն ուրտեղ որ Հակոբ իր Խաշ-  
հակ հայրը դտաւ, ու նաև Վիւքէմ  
ու Վեքար ուրտեղ որ Հովսէփին եղ-  
բայրները իրենց հօրը ոչխարները ու  
այծերը կըպահէին . ու հոս տեղ  
Հովսէփի խրկըվեր էր իր եղբայրնե-  
րուն ինտոր ըլլալը նայելու :

Եղիպտոս մէկ մեծ Երկիր մըն է  
Վիրիկէին մէջը Կարմիր Շօռվուն  
արևմբտեան կողմը . շատ բազմամարդ  
Երկիր մըն էր, ու անոր տիրողները  
Փարաւոն կըկոչվէին, որ Թագաւոր  
ըսել է :

Աս Թագաւորները շատ զօրաւոր  
էին, իրենց տակը շատ զօրքեր ու-  
նէին . որոնց ինչ որ ուղէին կըհը-

բամայէին . ու աս պատճառաւ մարդիկ շատ կը վախնային անոնցմէ , ու անոնց կը հնազանդէին :

Օօրքերէն ոմանք միշտ իրենց քոյլ ու իրենց տանը մօտ կը պահէին , ու բոնք թագաւորին պահապանները կը վէին . ու անոնք թագաւորին վրայ պահպանութիւն կը նէին , որ չըլայ թէ մէկը անիկա մեռցունէ կամ վնաս մը տայ անոր . ու նաև ասոնք թագաւորին զահիձներն էին՝ որ երբոր թագաւորը մէկ յանցանքի մը համար մէկը մեռցունէ լ ուղէր , անոնք կը մեռցունէին . թաղաւորին պահապանները մէկ հրամանատար մը ունէին որ իրենց կը հրամայէր . ինչպէս որ տեսած էք զօրաց մէջ , որ ամեն խումբ մէյլ մէկ գլուխ ունին . ու ան ժամանակը որ Հովհանէփ Ազիալոս տարվեցաւ , նոյն զօրացը հրամանատարին անունը Պիտափրէս էր : Շատ հարուստ ու զօրաւոր մարդ մըն էր . բոլոր երկրին մէջը ամենէն մեծը , ու թաղաւորին

երկրորդն էր, շատ մեծ տուն մը ու  
նէր ու շատ երկիրներ ու մարդիկներ  
ունէր իրեն տակը եր պաշտօնը կա-  
տարելու համար :

Խամայէլացիները Եղիպտոս հասած  
նուն պէս՝ Հովսէփը աս Պետափրէսին  
ծախեցին. և թէպէտ չենք գիտեր ա-  
նոր քանիի ծախվելը, բայց անտարա-  
կոյս տուած քսան կտոր արծաթներ-  
նուն էվել ծախված պիտի ըլլան .  
ինչու որ անիկա ծախու առին ստակ  
վաստրկելու համար, ինչպէս որ մար-  
դիկները ապրանք կտոնեն ու կըծո-  
խեն վաստակի համար :

Ասանկ՝ ողորմելի Հովսէփը երկու  
անգամ գերիի պէս ծախվեցաւ. և  
հիմայ մէկ օտար մարդու մը ձեռքը  
ինկաւ՝ օտար երկրի մէջ՝ իր տունեն,  
իր հօրմէն, իր ընտանիքէն ու իր բա-  
րեկամներէն հարիւրաւոր մղոն հեռա-  
ւորութեամբ : Բայց իրաւոնք ունինք  
հաւտալու, որ Հովսէփ իր յոյսը Վա-  
տուծոյ վրայ դրած էր, ու անոր կա-

զաշէր ու միշտ անոր կընայէր իր  
պաշտպանութեանը ու առաջնորդու-  
թեանը համար . ու Վատուած պաշտ-  
պանեց , առաջնորդեց , ու օրհնեց  
Հովսէփը , ինչպէս որ պիտի տեսնաք :

Նաև պիտի տեսնաք Վատուածոյ նա-  
խախնամութիւնը՝ թէ ինչպէս կրկին  
տնօրինեց , որ Հովսէփ թագաւորին  
պահապաններուն հրամանաւարին  
ծախվի , որ իր կամքը ու Հովսէփին  
երազը կատարվի :

Խմ սիրելի՛ տղաքներս , կուզեմոք  
միշտ միտքերնիդ պահէք աս Վատուածոյ  
անխմանալի նախախնամութիւնը , քա-  
նի որ յառաջանաք Հովսէփին սկատ-  
մութեան մէջը . ինտոք որ հարկաւոք  
պատմութիւններուն մէկն է ան , որ  
Վատուած մեզի տուաւ Վատուածաշուն-  
չին մէջը :

Երբոք Հակոբին դաւկըներուն ու  
Խմրայէլացոց վրայօքը կարդալու ըլ-  
լաք՝ պիտի գտնաք թէ ինչպէս մեծ ու  
զօրաւոք ազգ մը եղան , ու ինչպէս

ՀՅԱՊՈՒԱ · Յ. ՔԻՄԱՊՈՍ աշխարհիս Փրկիչը  
աս մարդոցը ցեղէն ծնաւ , ու նաև  
ուրիշ շատ զարմանալի ու սքանչելի  
բաններ պիտի գտնաք , որ միայն ՀՅԱ-  
ՍԵՒԻԲԻՆ ծախսվելէն ու Աղիպտոս Երթա-  
լէն առաջ եկաւ :

Պիտի տեսնաք՝ որ Աստուած ամեն  
բան իր նախախնամութեամբը , իր  
կարգադրութեամբը , ու իր տնօրինու-  
թեամբը առաջ կըտանի . ու Ճշմարիտ  
Աստուածը իր խորհուրդներուն մեջը  
բարձր է , ու իր գործքերուն մեջը  
դօրսաւոր է . ու դուք ալ ԱՌՈՎՄԵՍԻՆ  
պէս պարտիք ըսել , թէ ԱՎՎ կայ քե-  
զի պէս՞ ով Տէր , ով կայ քեզի պէս  
սրբութեան մեջ փառաւոր , գովու-  
թիւններուն մեջ ահաւոր , ու հրաշք-  
ներ ընող :

ՅՈՎՄԵՎ քիչ մը ժամանակ հոն կե-  
նալէն ետեւ , ՊԵՏԱՎԻՐԷՍ տեսաւ որ ան  
աշխատասէր ու հաւատարիմ ծառայ  
մըն էր , ու բոլոր իր վարքին մեջը  
բարի էր : Անոր պաշտօնը իր տէրոջը

տանը մէջն էր , ու Գետափրէս հասկրցաւ որ իր գործքը շատ աղէկ կընէր , ու ընտանիքին մէջը ի՞նչ պատոն որ յանձնրվեր էր նէ ճարտարութեամբ ու իմաստութեամբ առաջկրտանէր : Վ.ստուածաշունչը երբոր աս բանին վրայօքը խօսելու ըլլայ , ասանկ կրսէ . Վ.նոր տէրը տեսաւ՝ որ Վ.ստուած անոր հետ էր , ու բոլոր ի՞նչ որ ըներ նէ Վ.ստուած անոր ձեռքովը կրյաջողէր :

Մէկ քանի բան կար Հովսէփին խօսակցութեանը ու վարքին մէջը , որ կրցուցունէր թէ ինքը Ճշմարիտ Վ.ստուածին կրվախնար , ու աս բանը երբոր Գետրափրէս տեսաւ սկսեց պատիւ տալ Հովսէփին :

Իմսիրելի՛ զաւկընելու , աղօթք ըթէք Վ.ստուածոյ՝ որ իր Առւըբ Նոգին ձեզի տայ , որ զուք ալ կարող ըլւաք Հովսէփին օրինակին նմանելու :

Դուք ալ պարտիք ձեր ճնողացը կտամ թէ ուրիշ ձեր վրայ իշխանու-

Թիւն ունեցող մարդոցը հրամանները  
խոնարհութեամբ կատարել :

Ի՞նչ բան որ ընելու ըլլաք, Աստու-  
ծոյ վախովը ըրէք, ինչու որ ինքը  
կըհրամայէ ձեզի ձեր պարտքը ընե-  
լու . ու թէ որ ասանկ անիկա սիրելու  
ըլլաք ու անոր ծառայելու ըլլաք,  
ան միշտ ձեր պաշտպանը ու բարեկա-  
մը պիտի ըլլայ, ինչպէս որ Հովսէփին  
եղաւ :

### Գ Ե Ա Խ Խ Խ Ո Յ :

Հօվսէփին մէրաբուժութեանը ըլլաք Պէտու-  
թէն առաջը գոյա : Պէտութէն ինունը շարու-  
թէն առաջը գոյա : Իր առելու Աստու-  
ծոյ գէտ մէջ գործելու : Անոր առաջ առելու  
ամբուժութէն ու բանորը գրիլլաք : Բան, ին  
մէջը իր առաջութ բարի վարքը : Բարք բան-  
ուն վըսյ առաջ առաջութ ինունը : Աստութէն  
մէջ հերու առաջնութեան մէջ էրջանիւթեանը :

Հօվսէփին վարքը իրեն յանձնըլած  
պաշտօններուն մէջը անանկ աղեկ  
էր՝ որ Պէտափիրէս շատ ուրիշ

գործքեր ալ զբաւ անոր իշխանութեանը տակը . ու վերջապէս հովսէփին վրայ ունեցած հաւատարմութիւնը այնչափ շատցաւ , որ իր տանը վրայ վերակացու ըրաւ , ու ինչ որ ունէր անոր ձեռքը յանձնեց :

Հովսէփ հիմայ Պէտափրէսին ամեն գործին գլուխը եղաւ . Պէտափրէսին տանը մէջի ու արտին մէջի մարդոցը բոլորին ալ հովսէփ կը հրամայէր , ու իր ուղածին պէս կը տնօրինութիւնը ու հոգը հովսէփը կը նէր . ինչպէս որ Վասուածաշունչը մեղի կը զուրցէ , թէ Պէտափրէս իր ինչ տեսակ ստացուածք ունենալը անդամ չէր զիտէր , բայ ՚ի սեղանին վրայի կը բակուրներէն , որ իր առջին կուզար : Վմէն բան հովսէփ իր ճարտարութեամբը ու արտեստովը կը պատրաստէր , իր տէրոջը ու անոր ընտանիքին համար՝ առանց իր տէրոջը խառնրվելուն : Հովսէփ իր այսչափ յաջողութեանը մէջ չի

մոռցաւ իր մարդասէլ Աստուծոյն նու  
խախնամութիւնը ու անոր ունեցած  
պարտականութիւնը , այլ մանաւանդ  
շատացուց Աստուծմէ վախնալը , ու ա  
նոր հնազանդիլը . ու աս զիպուածէն  
յայտնի է անոր ասանկ ըլլալը . ինչու  
որ՝ ասկէ քիչ ժամանակէ ետև ինքը  
փորձը վեցաւ մէկ դէշ զործք մը ընե  
լու . սակայն ինքը դէմ կեցաւ ան փոր  
ձութեանը , ու յայտնի երեցուց որ  
ամէն բանէն էվելի Աստուծոյ դէմ  
մեղք զործելէն կըվախնայ : Պետափ  
րէսին կնիկն էր որ ան մեղքը գործե  
լու հրաւիրեց զինքը . ան շատ դէշ կր  
նիկ մըն էր , ու սկսեց Հովհանքը իր  
էրկանը պէս սիրել :

**Ի**նիկա արդէն մէկ էրիկ մը ունէր .  
ու աղէկ զիտէր որ շտա մեղք բան  
էր Հովհանքին աւ իր էրիկը ընելը , ու  
անիկա համոզելը որ ան զինքը իր  
կնկանը պէս սիրէ :

**Ի**նչու որ՝ թէ որ մէկ կարգը վաճ  
րիկ մարդ մը կամ կնիկ մարդ մը ա

սանկ բան մը ընելու ըլլայ ուրիշ իրեն  
հետ չի կարգըված մէկի մը հետ, անիւ  
կա Աստուծոյ եօթնելրորդ պատուի  
ըանը կոտրած կըլլայ, որ կըսէ թէ՝  
“Ո՞ի շնար” :

Աս կընշանակէ թէ մէկ կարգըված  
էրիկ մարդ մը ուրիշ կնիկ մը չի պիտի  
ունենայ բաց ’ի անկից՝ որուն հետ որ  
կարգըված է, ու մէկ կարգըված կնիկ  
մըն աւ ուրիշ էրիկ մը չի պիտի ու  
նենայ բաց ’ի անկից՝ որուն հետը որ  
կարգըված է :

Ո՛վ որ աս բանը ընելու ըլլայ՝  
կամ թէ միտքէն անցունելու ըլլայ,  
շնութիւն ըրած կըլլայ, ինչպէս որ  
մեր Տէրը մեզի սորմեցուց . ու շատ  
մեծ մեղաւոր եղած կըլլայ Աստուծոյ  
տուջին :

Վետափրէսին կնիկը ջանաց որ  
Յովսէփը համոզէ Աստուծոյ դէմ ան  
մեզքը դորձեւ տալու, ու անոր հրա-  
մանը աւրելով աս սոսկալի գէշու-  
թիւնը ընեւ տալու :

Բայց անոր ջանքերը ոչինչ եղաւ .  
ինչու որ՝ Հովսէփ հաստատուն էր իր  
Վստուծոյ հնազանդութեանը մէջ : Աս  
մէջ շարութիւնը ի՞նչպէս կրնամ ը-  
նել՝ ըստ Հովսէփ , ու Վստուծոյ  
դէմ մեղք գործել :

Հիմայ Գետափրէսին կնկանը սէրը  
առելութեան դարձաւ , ու սկսեց անի-  
բաւութիւն ընել որչափ որ կընար  
նէ . ինքը շատ դէշ սուտ մը ըստ իր  
էրկանը Հովսէփին համար . դրաբար  
տութիւն մը ըրաւ անոր՝ որ Հովսէփ  
կուզէ անիկա իր կնիկը ընել , ու Գե-  
տափրէս ալ հաւատաց անոր :

Աս խօսքին վրայ Գետափրէս շատ  
բարկացաւ ու միտքը դրաւ որ անիկա  
ալ իր տունը չի պահէ , ու վճռեց որ  
բանտը դրվի :

Նոյն բանտին մէջն էին ան մար-  
դիկնելն ալ որոնք որ թագուորը բար-  
կացուցեր էին , կամ անոր օրէնքները  
չեին պահած . կըկարդանք Վստուծ-  
ծաշունչին մէջը՝ թէ անոնք կատ-

ված էին . ասանկ՝ կարելի է թէ  
Յովսէփին ալ կապված էր իր ձեռ  
քերէն ու ոտքերէն , ու անանկ մուլթ  
սենեակի մը մէջ էր զբված :

Հիմայ ինչպէս փոփոխութիւն մը  
եղաւ աս խեղճ երիտասարդին , որ իր  
յաջողութեան աստիճանէն վար ինկաւ  
մէկ սուսով մը՝ ու մէկ չար կնկան մը  
զբարտութիւնով , ու ասանկ անմեղ  
երիտասարդը Պետափրէսին ացքէն  
իշնալով բանով զրվեցաւ առանց մէկ  
պաշտպան մը ու բարեկամ մը ունենալու :

Սակայն թէ որ ինքը մարդոցմէ բա-  
րեկամ մը չունէր նէ , վերը մէկ Վամեն-  
նակարող մը ունէր՝ որ իրեն պահա-  
պանն էր ու իրեն աղէկութիւն կընէր :

Արդարեւ Վստուած ինքն էր՝ որ ա-  
սանկ տնօրինեց իր իմաստուն նախախ-  
նամութեամբը , որ Պետափրէսին կը-  
նիկը զբարտութիւն ընէ Յովսէփին  
վրայ իր չարութեան խորհուրդներո-  
վը , ու Յովսէփ Պետափրէսին ձեռքու-

վը բանտը զբվի , որ իր գալու յաջուղութեանը ու մեծութեանը պատճառը ըլլայ , ու անոր երաղին Ճշմարիս ըլլալը յայտնըլի :

**Ը**ատ մարդիկներ՝ թէ որ Յօվսէփին տեղը ըլլային անանել իր եղբայրներէն ծախված օտարականի մը հեռու երկիրի մէջ , ու սուտ տեղը ամբաստանված յանցանքի մը համար , ու բանտը զբված ու կասղված , շատ տրատնջ ու գանգատ պիտի ընեին . ու պիտի խորհէին՝ թէ Աստուած անպորմ ու անարդար է որ մեղ Թողուցեր է ասանել նեղութիւններ քաշելու :

**Ս**ակայն՝ Յօվսէփ անոնց պէս չէր : Յաջողութեան մէջ չի հղարտացաւ , ու նեղութեան մէջ խոնարհութեամբ համբերութիւն ըրաւ :

**Բ**անտին պահապանը տեսաւ որ Յօվսէփ ի՞նչպէս կըվարվէր ու կըդպար . ու Աստուած՝ որ ըոլոր մարդկանց սրտին վրայ կըտիրէ , պահապանին

միտքը դարձուց որ Հովսեփին շատ  
երախտիք ու մարդասիրութիւն ընէ .  
ասանել միեւև անգամ բոլոր բանտին  
կտռավարութիւնը ու տնօրէնութիւնը  
բանտարգեալը անոր ձեռքը յանձ-  
նեց :

Աս սլաշտօնը մէկ նոր ու զժուար  
սլաշտօն մըն էր Հովսեփին սլէս մէկ  
երխոսասարդի մը . աս ժամանակ Հով-  
սեփ կըկարծըվէր թէ քսանըհօթը  
տարեկան էր . բայց իր իմաստութիւնը  
բարեպաշտութիւնը ու հաստատու-  
թիւնը շատ մեծ էր իր տարիքին նայ-  
ելով :

Բանտին վերաբերեալ գործքերը  
Հովսեփի այնչափ իմաստութեամբ ա-  
ռաջ տարաւ՝ որ Վատուածաշոնչին  
մէջը կըկարդանը թէ՝ « բանտին սլա-  
հապանը չէր նայէր Հովսեփին ըրած  
բանին . ինչու որ Տէրը անոր հետ էր ,  
ու ինչ որ ընէր՝ Տէրը կըյաջողէր » :

Տէրը անոր հետ էր . ինչ երջան-  
կութիւն էր իրեն . դուք մեծ մուիթա-

բութիւն կիմանաք, երբոր ձեր հայրը  
ու ձեր մայրը հետերնիդ ըլլայ . մա-  
նաւանդ երբոր տառապանքի , տրո-  
մութեան , ու հիւանդութեան մէջ  
ըլլալու ըլլաք , որ կարօտ էք մէկի  
մը ձեզի խրատ տալու ու ձեր վրայ  
հոգ տանելու : Վրդեօք որչափ ժամա-  
նակ ձեր ծնողքները քովերնիդ ըլլա-  
լով վախերնիդ ու տրոմութիւններնիդ  
հանդարտեցուցած էն : Վրդեօք քանի  
անդամ ձեր տկար եղած ժամանակը ,  
ու ինչ ընելնիդ չի դիտցած ատեննիդ  
գլուխնիդ անոնց վրայ դրած օդնու-  
թիւն փնտռած էք : Վսանկ ալ մէկ  
հայր մը ունիք երկինքը՝ որ ամեն-  
իմաստ ու ամենազօր է . ան կուզէ որ  
միշտ իրեն հնազանդիք՝ ինչպէս որ  
տղաքը պարտին ասանկ մէկ մարդա-  
սէր ու զօրաւոր բարերարի մը :

Ան կուզէ որ դուք ինքը սիրէք ու  
իրեն հնազանդիք : Ինքը Վստուածա-  
շունչին մէջը կըսէ ինչ պէտք ըլլալը  
ինքը հաճեցունելու համար , ու ինչ

պէս ինքը զինքնիս և ուրիշները աղէկ  
ու երջանիկ ընելու համար :

Ամէն բանէն առաջ Վատուած  
ձեզմէ կըխնդրէ, որ դուք սրտով տրտ  
միք ձեր մեղքերուն վրայ, ու մեղքէն  
հա կենաք, ու Յիառասի Քրիստոսի  
ապաւինիք ձեղ փրկելու համար . ու  
ձեղ Հոգին Սուրբ խնդրելու համար  
աղօթք ընելու կըհրաւիրէ, որ կարող  
ըլլաք իր ուղածք կատարելու . ու թէ  
որ ասանկ աղօթք ընելու ըլլաք, ան  
ձեզի կըխոստանայ իր Սուրբ Հոգին  
տալու . հիմայ աս երկնաւոր Հօրը չի  
սլիտի<sup>3</sup> մի երթաք ձեր մեղքերուն հա-  
մար տրտմած, ու անոնց բոլորը անոր  
խոստովանիք . ու աղաչք իրեն որ  
Քրիստոսի միջնորդութեամբը ա-  
նոնց թողութիւն շնորհէ, ու իր Սուրբ  
Հոգին ձեզի տայ որ կարող ըլլաք զին-  
քը սիրելու ու իրեն հնազանդելու :

Վն ժամանակը Տէրը ձեր հետը պի-  
տի ըլլայ ինչպէս որ Յովսէփին հետն  
էր . ու ձեր վրայ հող սլիտի տանի

Ճեր հօրմեն ու մօրմեն կամ ճեր  
 երկրաւոր բարեկամներէն առաւել :  
 Խնքը ճեր հետը պիտի ըլլայ՝ ճեղ իր  
 առանձին նախախնամութեանը խնամ  
 քին տակը ունենալով , ու ճեղ պաշտ  
 պանելով , ու հետու պահելով բոլոր  
 յաջողութեան մէջ եկած փորձանքնեւ  
 լին : Ու ճախորդութեան մէջ ճեղի  
 պիտի օգնէ , ու բոլոր ճեր գործքեւ  
 լուն մէջը ճեր հետը պիտի ըլլայ ճեր  
 աղէկութեանը համար . և վերջապէս  
 ճեղ երկինքը իր քովը ու իր Որդւոյն  
 Յիսուս Քրիստոսի քովը պիտի առ  
 նէ , ուրտեղ են բոլոր հաւատացեալ  
 ները , ու յաւիտեանս մեղքէն ու նեղու  
 թենէն աղատ պահելով՝ զիտութեան ,  
 աղէկութեան , ու երջանկութեան մէջ  
 պիտի յառաջացունէ :

ՊԵՐԵՏՈՅ. ԺԱ:

Երանեածոյ վասիլ : Երանը ինչ ըլլալը , ու առ  
նոր օդու ուլ : Տակ առաջարկեցին երանը : Հայու-  
սէ ին առ երանը մէ ինս լինութիւն ուղալը :

**Վ**արելի է զարմանաք որ չօվսէփին  
պէս մէկ երիտասարդ մը ու նաև  
օտարական մը ինչպէս քիչ ժամանա-  
կի մէջ պետափրէսին ու բանտաղե-  
տին հաւատարմութիւնը բոլորովին  
ստացաւ երբոր ինքը պետափրէ-  
սին քովը ծառայ մը դացած էր , ու  
միւսին քովն աւ բանտարդեաւ մը :

Բայց աս տեղ մէկ պարզ պատ-  
ճառ մը կայ անոր տանի յառաջա-  
նալուն . այսինքն Եստուծմէ կրվախ-  
նոր : Ուր որ բլլար ու ինչ բան որ  
ընէր , կը սիշէր թէ Եստուծոյ աչքը  
միշտ իր վրայ էր , ու կը մտմտար թէ  
Եստուծոյ համար ունի տալու բոլոր իր  
վարքին համար :

**Վ**սոր երեկի մէկ օրինակը տեսած  
10 թ

էք, երբոր Պետափիրէսին կնիկը փոր  
ձեց անիկա մեղք դործելու : Ե՞նչպէս  
կրնամ աս մեծ չարութիւնը ընել՝ ը-  
սաւ օտվահէփ, ու Աստուծոյ դէմ մեղք  
դործել :

Աստուծոյ վտխէն ՚ի զատ՝ ուրիշ  
առաւել զօրաւոր բան մը չի պիտի  
կրնաք դտնալ, որ ձեզ մեղք դործե-  
լէն ետ պահէ ու ձեր պարտքը կատա-  
բելու քաջալերէ :

Ան սիրով միտցեալ մէկ վախ մըն  
է, ու ՚նոյն վախը ունեցող սիրելի  
ու հնագանդ տղայ մը՝ մէշտ կը ջա-  
նայ իր ծնողըը չի բարկացունելու :

Կարդացէք ձեր Աստուածաշոն-  
քը, ու ջանացէք՝ Աստուծոյ ո՛վ ըլլա-  
լը սորմիելու, ու որչափ կրնաք ՚նէ՝ ա-  
նոր մեծութեանը ու բարութեանը  
վրայօք սորմիցէք, որ տեսնաք թէ  
ի՞նչպէս պատճառ ունիք ասանկ մէկ  
փառաւոր ու ողորմած էակ մը սիրելու  
ու անոր հնագանդելու :

Աղօթք ըրէք որ Աստուծմէ վախ-

Նաք ,ու անիկաս սիրէք . ու ամեն ժամանակ միոքերնիք բերէք որ ան միշտ ձեր քովն է , ու բոլոր ձեր խորհածին ըստածին ու ըրածին համարը անոր պիտի տաք :

Ան ժամանակը Յովսէփին պէս միշտ Աստուծոյ պահպանութեան տակը եղած պիտի ըլլաք . գէշ մարդիկները ձեր բարեգործութեան պատճառը տեսնալովնին՝ ձեզ պիտի յարդեն , ու աղէկ մարդիկները ձեզ պիտի սիրեն . ու դուք ան հաստատուն ճամբուն մէջը հետևեցէք՝ ինչպէս որ Յովսէփը ըրաւ թէ յաջողութեան մէջ՝ և թէ ճախորդութեան մէջ , ամէնուն պատիւը ու վստահութիւնը ստանալով :

Եվէլի պիտի յայտնրվին աս Ճշմարտութիւները Յովսէփին պատմութեանը մէջ՝ ինչպէս որ պիտի տեսնանք : Յովսէփի բանտին կառավարութիւնը եր վրայ առնէլէն քիչ մը ժամանակ ետև երկու մարդ բերվեցան հոն , ու

լոնց վրայօք կուզեմ քիչ մը ճանօ՛լու  
թիւն տալ : Ա՞էկը և գիպոսի թագա-  
ւորին տակառապեան էր . աս մարդը  
թագաւորին խմած զինիին հոգը կը-  
տանէր , ու կարելի է թագաւորին զի-  
նիին բաժակը ինքը անոք կուտար .  
երբեմն ան զեղեցիկ հասուն խաղողնե-  
րը կառնէր , ու անոնց ջուրը կըքա-  
մեր բաժակին մէջը , ու թագաւորին  
կուտար խմելու : Հին ժամանակները  
Եղիպտոսին ու Հսխային մէջի բոլոր  
թագաւորները տակառապետներ ու-  
նեին . ու տակառապետութեան պաշ-  
տօնը շատ յարդի բան մըն էր սեպ-  
ված :

**Միւս մարդը** որ բանաը բերել է-  
ին , թագաւորին մատակարարն էր , որ  
թագաւորին կերած հացին և ուրիշ  
տեսակ կերակուրներուն վրայ վերա-  
կացու էր . ասոք պաշտօնն ալ միւսին  
պաշտօնին պէս շատ պատռաւոր էր :

**Արդարե իրաւոնք** ունինք բակը լու-  
թէ աս մարդոցը երկուքն ալ շատ

աստիճաննաւոր մարդիկներ էին . ինչ  
 ըստ որ Ավելիլացի հին պատմաղիր մը  
 թէ ողբրոս անունով՝ որ Ազգակառակի  
 վրայց գրած էր , կըսէ՞ թէ թագաւու-  
 րին գործակալները ( ինչպէս տակա-  
 ռապետը ու մատակարարը ) աղնիս  
 մարդիկներուն մէջէն , քահանայու-  
 թեան արժան ընտիր ընտանիքներէն  
 կընուրէին : Աերևայ թէ աս պաշտօ-  
 նատարները մէկ կերպով մը բարկա-  
 ցուցեր էին թագաւորը , ու անանկ  
 բարկացեր էր անոնց , որ Հովսէփին  
 եղած բանտին մէջը դրաւ . աս բանտը  
 թագաւորին պահապաններուն հրա-  
 մանառարին՝ Պետափրէսին տանը մէկ  
 կողմն էր , ու անոր իշխանութեան  
 տակն էր : Պետափրէս տեսաւ որ տա-  
 կառապետը ու մատակարարը բանտն  
 էին դրուած , պատուիրեց Հովսէփին  
 որ անոնց հոգ տանի , ու իրենց վիճա-  
 կին վերաբերեալ ինչ որ պէտք էր  
 նէ պատրաստեց : Վիչ մը ժամանակ  
 բանտին մէջը կենալէն ետև երկուքն

ալ մէյտեղ երադ տեսան միե նոյն  
զիշերին մէջը , որ շատ զարմացան ու  
տրտմեցան : Ետքի առտուն երբոր  
Յովհէփ զնաց անոնք տեսնալու , ինչ  
պէս որ սովորաբար կընէր՝ որ նայի  
թէ արդեօք ամէն բան կանոնաւոր է  
մի , տեսաւ որ՝ բան մը եղեր են տրտ  
մած նստեր են , հարցուց թէ պատճա  
ռը ի՞նչ է . ըսին թէ Վլկուքս ալ եւ  
բադ տեսանք , ու անոնք մեզ շատ  
տրտմեցուցին , ու նաև չի կայ մէկը որ  
կարող ըլլայ մեր երազները թարգմա  
նելու , կամ անոնց միտքը մեզի մեկնե  
լու , թէ ի՞նչ կընշանակին :

Յովհէփ անոնց ըսաւ . Վնոնց մեկ  
նութիւնները Վստուծոյ չէ՞ն մի վե  
րաբերիլ . կաղացեմ ձեզի՝ որ անոնք  
ինձի ըսէք : Վսկէ կերեւայ թէ Յով  
սէփ որ ինքն ալ մէկ քանի երեկի  
երազներ տեսած էր , ան մաղիկնե  
րուն մէկն էր , որ առջի ժամանակնե  
րը Վստուած անոնց կարողութիւն  
տրւեր էր երազներուն մէկնութիւնը

տալու , ու ետքի ըլլալու բանեցը առաջմանէ գուշակելու :

**Տ**ակառապետը իր երազը ասանել պատմեց Յովսէփին . Երազիս մէջը խաղողի որթ մը տևայ , որ իրեք ոստ ոնէր . մէկ քանի րոպէին մէջը ոստերը մեծան , ու շուտով ծաղկեցան , ու խաղողները հասան . ու թագաւորին բաժակը իմ ձեռքիս մէջնէր , որուն մէջը անոնք փրցունելէս ետե ջուրը քամեցի , ու նոյն բաժակը թագաւորին տուի :

**Յ**ովսէփ անոր երազին աս Թարդմանութիւնը տուաւ . բատ որ՝ Ե՞ն իւրեք ոստը իրեք օր կրնշանակէ . ու ան իրեք օրվան մէջը թագաւորը քեզմիտքը պիտի բերէ , ու կրկին առջետեղը պիտի դնէ . ու դարձեալ անոր տակառապետը պիտի ըլլաս , ու անոր զինի տաս խմելու :

**Տ**ակառապետը մեծապէս ուրախացաւ աս իր երազին թարդմանութեանը , որ քիչ ժամանակէն ան անհան-

Պիտու ու անարդ բանտէն պիտի ելլար,  
ու կրկին թագաւորին բարեկամու-  
թիւնը պիտի վայելէք :

Գ. Ա. Ա. Խ. Յ. Ժ. Ե. :

Մասունքարարին ելլադը առանոր հենան-նե-  
նը : Հաջուեցին հարժարեսուեանը իսպանը :  
Մարժարաւեան ձբայօք : Վաղեպահուաւեան  
մեշը :

**Ա**ստուածաշունչին մէջը չենք զտնար  
թէ արգեօք տակառապետը իր ե-  
րազին մեկնութեանը համար շնորհա-  
կալ եղաւ մի . բայց ետքը պիտի  
տեսնանք որ անանկ շնորհակալութիւն  
ընող մարդ չէ եղիր :

**Ք**անդի համակի անկե մէկ շնորհք  
մը խնդրեց . ըստու, Երբոր դուն կրկին  
քու պաշտօնիդ վրայ զրմիլու ըլլաս,  
ու կրկին թագաւորին հետ մէկտեղ  
բարեկամանալու ըլլաս, կաղաչեմ քե-  
զի որ յարմար ժամանակ մը զտնալով

մարդասիրութիւն մը ընես լինծի , իս  
փարավոնին յիշես , որ աս տունէն հա-  
նէ . ինչու որ ես Եբրայեցւոց երկրէն  
գողցըված եմ , ու նաև հոս ալ քան  
մը ըրած չեմ որ զիս աս բանտը դրին :

**Ետքը՝** մատակարարն ալ ըստ  
իր երազը , ու կըյուսար իր թշուառ  
վեճակին մէջը եղած ընկերին երազին  
մեկնութենէն՝ որ չովսէփը տուառ  
իրեն ալ անորինին պէս աղէկ պիտի  
մարդարէանար :

Ծսաւ որ երազիս մէջը իրեք ձեր-  
մակ սակաւ տեսայ իմ զլխուս վրայ .  
ու ամենէն վրայի սակառին մէջը թա-  
զաւորին համար եփած ամեն տեսակ  
կերակուրներէն կար . ու նաև տեսայ  
որ թուչունները կուզային ու ան կե-  
րակուրներէն կուտէին :

**Մատակարարը** անհամբերութեամբ  
կըսպասէլ՝ որ նայի թէ չովսէփ ինչ  
մեկնութիւն պիտի տայ իր երազին .  
Չովսէփ ըստ թէ՝ Վն իրեք սակառը  
իրեք օր կընշանակէ , ու ան իրեք օրէն

ետև՝ թագաւորը քեզ պիտի կախէ .  
ու թռչուններն ալ պիտի դան ու քու  
մարմինդ ուտեն : Վաստակարարին ե-  
րազին մեկնութիւնը շատ ցաւազին ե-  
ղաւ . թէպէտ աս խօսքին վրայ մա-  
տակարարին ի՞նչպէս զգալը չե՞նք զի-  
տեր : Յովսէփ ան հրազներուն մեկ-  
նութիւնները տալէն ետև , երբորդ օ-  
րը Փարաւոնին ծննդեան օրն էր . ու  
նոյն օրը շատ ուրախութիւն կըլլար  
թագաւորին տանը մէջը . ու բոլոր իր  
աղնուականներուն , հրամատարնե-  
րուն ու գործակալներուն մեծ հան-  
դէս կընէր . աս հանդէսին մէջը հրա-  
ման ըրաւ որ տակաւապէտը աղատվի ,  
ու կրկին առջե վեճակին մէջը զրվի .  
նոյն օրը տակաւապէտը կըկին իր աս-  
տիճանին հասաւ , ու նաև թագաւո-  
րին զինի տուաւ խմելու :

Կաև՝ նոյն օրը մատակարարն ալ  
կախվեցաւ , ու անոր մարմինը կախա-  
ղանին վրայ թողվեցաւ որ երկինքի  
թռչունները ուտեն անլիկա :

Ասանկ չովսէփ ան երաղներուն  
մեկնութիւնները տալով՝ իր ճշմարիտ  
թարգմանիչ մը ըլլալը հաստատեց .  
աս կըցուցունէ՝ որ Աստուած անոր  
սորվեցուցեր էք երաղի մեկնութիւն  
տալը :

Ինչու որ՝ միայն Աստուած է որ ա-  
պաւնի դիալուածներուն վրայօք զի-  
տութիւն ունի . կամ թէ ան մարդիկ-  
ները՝ որոնց որ Աստուած սորվրցու-  
ցեր է :

Աստուածաշունչին մէջը շատ մար-  
դարէութիւններ կան , որ առաջմաննէ  
դուշակիած էին . ետքը բոլորն ալ  
կատարվեցան : Են մարդարութիւննե-  
րուն կատարվելը կըցուցունէ թէ ա-  
նոնք Աստուծմէ, եկած են . ու նաև  
Աստուածաշունչն ալ որ մարդարու-  
թիւնները կըպարունակէ՝ Աստուծմէ  
եկած է . ու բոլորն ալ ճշմարիտ են :

Մէնք Առւրբ Գիրքէն կըսորվենք՝  
թէ տակառապետը իր աստիճանին  
համելէն ետեւ չովսէփը միտքը չի

բերաւ . անոր բանտին մէջի ըրած  
մարդասիրութիւնները՝ ու իր երազին  
մէկնութեամբը անոր տուած ազա-  
տութեան ուրախութիւնը բոլորովին  
մոռցաւ . ու նաև հօվսէփին արաշան-  
քը որ իրեն գլխունեկածները պարա-  
գաններով՝ մանաւանդ իր անմեղու-  
թիւնը թագաւորին յիշէ , անոնց բո-  
լորն ալ միտքէն ելաւ :

**Ա**ս տակառապետին զանցառութիւ-  
նը իր մեծ ապերախտութիւնը կըցու-  
ցունէ . ու նաև ուրիշներուն վրայ  
քիչ հոգ ունենալը , ու միայն ինք իր  
անձին նեղութիւններէ ու տանջանք-  
ներէ աղատիլ բաղձալը :

**Ա**ւաղ , ասանկ մարդիկներ ոքչափ  
կան աշխարհիս մէջը , որ միայն ի-  
րենց երջանկութեանը կըհետևին ,  
ու ուրիշներուն երջանկութիւնը բո-  
լորովին կըմոռնան : Կաև տղաքնե-  
րըն ալ երբեմն իրենց ծնողքը ու ա-  
նոնց ըրած բարերարութիւնները կը-  
մոռնան : Երբոր իրենց ծնողքը կըհի-

ւընդնան կամ կըծերանան , երեսէ կը-  
ձգեն . և ասիկա անոնց ապերախտ  
ու չար սիրտեր ունենալը կըցուցընէ :  
Տայց իմ սիրելի՝ զաւկըներս , ար-  
դեօք դուք ալ ասանկ սիրտ ունիք մի :  
Վրդեօք ձեր ծնողացը երախտիքը զի-  
տէք մի : Վրդեօք անոնց ձեղի ըլտած  
մարդասիրութիւնները միտքերնիդ  
կըբերէք մի : Վրդեօք անոնք կըսի-  
րէք ու անոնց կըհնազանդիք մի :  
Վրդեօք ձեր կարողութեանը չափ տ-  
նոնք երջանիկ ընելու կըջանաք մի :

Մտիկ ըրէք թէ Վատուած ի՞նչ  
կըսէ աս բանին վրայօք Վատուածա-  
շանչին մէջը . ու աս խօսքը թող ձեր  
սրտին մէջը տպաւորվի : « Վնիծեալ  
ըլլայ ան որ իր հայրը կամ իր մայրը  
կարնարգէ . ու բոլոր մարդիկ պիտի  
ըսէն , անանկ թող ըլլայ » : Ի . (ՕՌէն .  
իէ . 16 :

## ԳԵՂԱԽՈՅ. ՃԱՐ:

Փառաւունին երազները : ՀՅ-Նվեհը իւնիլ-  
լու համար հարդ երիւ մէլլ : ՀՅ-Նվեհին իւնիլ-  
լու լիւնը : Ա' Ենս ան սէրը չէ ուշով ընդու-  
նէնս՝ որն ոք ուրիշներուն արժանաւոր է :

**Տ**ակառապետը իր աստիճանին հաս-  
նելէն երկու տարիի չափ ետև որ  
տակաւին ՀՅովսէփ բանտին մէջն էր՝  
ու ինքն ալ ՀՅովսէփը բոլորովին մոռ-  
ցեր էր, Փարաւոն երկու զարմանալի  
երազներ տեսաւ մէկ գիշերովան մէջ :

Երազին մէջը տեսաւ որ՝ Կեղսոս զե-  
տին քովերը կը պտրածէրկոր . ու տե-  
սաւ որ եօթը զէր ու զեղեցկազէմ  
կովեր ելան ան զետէն, ու սկսեցին ա-  
րածվիլ զետին եզերքին մօտ եղած  
զաշտերուն մէջ . նաև՝ ուրիշ եօթը  
կովեր ելան տկարը ու տղեղ, ու ան զէ-  
րերուն քովը զացըն կայնեցան . ու մէկ  
զարմանալի կերպով մը անոնց վրայ  
յարձակեցան, ու բոլորովին անոնք  
փառատեցին . թէպէտ առաջ ի՞նչպէս

որ աղեղ ու նիշար էին , վերջն ալ  
նոյնը էին :

Թագաւորը արթընցաւ . շուտով  
կրկին քնացաւ , ու մեկ երադ մըն  
ալ տեսաւ՝ որ եօթը ցորենի հասկ  
բուսած էր մեկ ծղոտի մը վրայ , լե-  
ցուն ու շատ աղվոր . ու անոնց եռե-  
ւէն եօթը հասկ ալ ելու թումած ու  
վոխտ , ու միւս լեցունները կերան :

Փարաւոն հետեւեալ աւտուն շատ  
նեղացաւ աս երազներուն համար . ին-  
չու որ՝ խորհեցաւ թէ կարելի է անոնք  
մեկ նշանակութիւն մը ունենային , որ  
շատ հարկաւոր էր իրեն դիտնալու :  
Ետքը՝ Աղիպտոսին բոլոր մողերուն  
ու իմաստուն մարդիկներուն ետեւէն  
մարդ խրկեց ու քերել տուաւ , որ  
նայի թէ իրեն տեսած երազներուն  
ի՞նչ մեկնութիւն կուտան :

Աս մողերը ու իմաստուն մարդիկ-  
ները կը պարձենային՝ թէ երազ կը-  
մեկնեն , ու ետքի ըլլալու դիպուած-  
ները առաջուց կը զբուցեն : Յահակէտ

Նոյն ժամանակը իրենք ալ գիտէին որ  
բոլոր ըրածներնին խարէութիւն էր .  
բայց շատ անգամ ուրիշները կըխա-  
բէին , ու անոնց երազներուն սուտ  
մեկնութիւններ կուտային . սակայն  
մեկը չի համարձակեցաւ թաղաւորին  
երազներուն մեկնութիւն մը տալու :

**Ա**սանկ՝ մոզերը ըսին որ բոլորովին  
տարակուսանքի մեջ են . ու չեն գի-  
տեր թէ անոնք ի՞նչ կընշանակեն . ու  
աս բանին վրայ թաղաւորը առաջմա-  
նէ էվել նեղացաւ :

**Հ**իմայ աս առաջին անգամն էր որ  
տակառապետը Յովսէփը միտքը բե-  
րաւ , ու անոր աղաջանքը յիշեց՝ թէ  
ինքը Յովսէփին բանը թաղաւորին  
պիտի պատմէր : Կերեայ թէ՝ տակո-  
ռապետին խղճմուանքը դենքը տան-  
ցեց՝ Յովսէփին ըրած մարդասիրու-  
թեանք համար . ինչու որ՝ թաղա-  
ւորին աս հետեւեալ խօսքը ըսելէն  
էտեւ , թէ Ես իմ յանցանքս կըյիշեմ  
այսօր , սկսեց Յովսէփին բանը պատ-

մել, թէ Երբոք երկուքս ալ ես ու  
մատակարարը բանտին մէջն էինք,  
մէյմէկ երաղ տեսանք մէկ զիշերվան  
մէջ, ու նոյն տեղը մէկը կար չովսէփ  
անունով, որ անոնց մեկնութիւնները  
ստոյգ մեզի տուաւ :

Յովսէփին աս խմաստութեանը վր  
բայօք թագաւորը շատ զարմացաւ  
թէ ինչպէս անոնց երազներուն մեկւ  
նութիւնները անանկ ստոյգ տուեր է .  
և իսկոյն հրամայեց որ Յովսէփը շու  
տով իր առջին բերվի : Յովսէփին  
ինչ որ պէտք էլ նէ պատրաստեցին ,  
թագաւորին պալատը տարին , ու թա  
գաւորին առջին հանեցին :

Թագաւորը Յովսէփին պատմեց իր  
երազները . ու ըստ որ՝ Ո՛էկն ալ  
չի կրցաւ մեկնել անոնց միտքը . ու  
լսեցի՝ որ դուն երազի մեկնութիւն  
կրնաս տալ :

Թագաւորը կրկարծէր թէ Յովսէփ  
իր ճարտարւթեամբը աս բանը կա-  
րող էր ընել , ինչպէս որ մոգերը ու

իմաստուն մարդիկները շատ անգամ  
կընեին :

**Ա**ն չէր զիտէր՝ որ միայն ճշմարիտ  
Վատուածը՝ կամ թէ ան մարդիկները  
որոնք որ ինքը կըթէր էր, անոնք մի-  
այն կարող էին ապառնի բաներուն  
վրայ տեղեկութիւն ունենալ, ու պա-  
տահելու բաները առաջմանե, մագարէ-  
անալ :

**Յ**ովսէփ կընար անանկ ճամբայ մը  
բռնել որ թագաւորը իր վրայ ասանկ  
կարծիք մը ունենայ՝ թէ իր իմաստու-  
թեամբը առ բաները կըներ . ու շատ  
պատիւ ու զովութիւն ստանալ թա-  
գաւորին ու անոր գործակալներուն ու  
լզգիպատացւոց քովը :

**Բ**այց Վատուծմէ կըվախնար . ինքը  
չէր ուզէր որ ուրիշները իրեն համար  
կարծեն թէ իր իմաստութեամբը ե-  
րազներուն մեկնութիւնները կուտար .  
երբոր ինքը զիտէր՝ թէ միայն Վատու-  
ծոյ կարողութեամբն էր՝ որ անոնք կը-  
մեկներ . անոր համար բոլոր փառքը  
Վատուծոյ կըվայլէր :

Յովսէփի պատասխան տուաւ Փարաւոնին ու ըստ ։ Ես կարողութիւն չւնիմ, Աստուած Փարաւոնին խաղաղութեան պատասխան մը պիտի տայ :

Աս խօսքը՝ որ Յովսէփ Փարաւոնին ըստ, Թէկարողութիւնը կամ երազին մեկնութիւնը ինձմէ չէ, աղէկ միուքելնիդ պահեցէք :

Երբեմն կըպատահի, որ մէկը կը կարծէ, թէ դուք մէկ աղէկ գործ մը ըրած էք, երբոր նոյն գործը ուրիշ մէկը ըրած է : Կամ թէ գործի մը համար չափէն էվել գովութիւն կըստանաք, որ նոյն գործին ուրիշ մէկն աւ ձեզի օղնութիւն ըրած է . կամ թէ ուրիշ ները կըկարծին թէ դուք ըան մը գիտէք, որ ամեննելին ան ըանին վրայօք տէղեկութիւն չունիք . ու աս կերպով պատճառ կըլլաք որ ուրիշները ձեզի չափէն էվել պատիւ ընեն, որով ձեր հալարտութիւնը հաճեցունել տաք . ու ասանիով պատճառ կըլլաք ուրիշ մէկու մը պատիւք կամ գովութիւնը

իրմէն դրկելու , որուն որ ինքը ճըշ-  
մարտապէս արժանի է :

Առ բանը ես շատ անդամ ընտանի-  
քի մը տղոցը ու դպրատան աշակերտ-  
ներուն մէջը տեսած եմ, որ շատ զէշ  
բան է : Տամներորդ պատուիրանքը  
կոտրել է , որ մեզ կարգիլէ ուրիշ-  
ներուն ունեցածին աչք տնկելու :  
Կաեւ ութերորդ պատուիրանքն ալ  
աւրել է , որ կարգիլէ գողութիւն ը-  
նելու . արդարեւ աս ալ մէկ տեսակ  
գողութիւն մըն է , որ դադունի ուրիշին  
պատիւը դուք կառնեք : Երբոր դուք  
ասանկ բանի մը մէջ փորձըվելու ըլ-  
լաք , Հովսէփին օրինակը ու ըստը  
միտքերնիդ ըերէք . ի՞նչ բան է նէ ա-  
զատաբար ճշմարիտը խոստովանեցէք :

Գիտցածներնուդ կամ չի դիտցած-  
ներնուդ , ըրածներնուդ կամ ըրբած-  
ներնուդ , և ուրիշներէն գտած օդ-  
նութիւններնուդ , բոլորովին շխտակը  
դուրցեցէք : Ո՞խքերնիդ ըերէք՝ որ  
թէպէտ ասանկ ժամանակ ձեր ընկերը

կընաք խարեւ, (ինչպէս որ հովակէփ  
ուղելու ըլլար Փարաւոնին կընար ը-  
նեւ, ) բայց Վատուած չէք կընար խա-  
րեւ . ինչու որ ձեր ներախողիի գազու-  
նի խորհուրդներուն ու զգացումներուն  
բոլորն աւ ձեր խօսակցութեանը ու  
վարքին պէս ինքը գիտե :

**Չափէն էվեւ ձեր վրայ մի՛ խօր-  
հիք . խոնարհութեամբ թո՛ղ ամէն  
մարդ իրմէն էվեւ ուրիշը պատուէ :**

**Տէրը ամբարտաւոններուն դէմ  
կըկենայ , խոնարհներուն շնորհը կու-  
տայ :**

ԳԵՐԱԿՈՅ Ճ.Պ.

Յանձնելին Փարաւունին երազները մէնք-  
ւ : Փարաւունին Յանձնելիը քահանակ գլուխ  
էստանդը ունեւը : Յանձնելին նոր անունը  
Ենուն հայրանիւը : Շնորհած լուսան ուստի պատ-  
իսական լուսան նույսութեան հայրանիւն ճամփայ-  
իլն է՝ ուրիշներուն հաստութեան լուսան ուստի-  
նուլու-:

**Փ**արաւոն իր երազները Յովսէփին  
ղուրցելէն ետև Յովսէփ ասանկ  
պատասխանեց : Փարաւոնին երազնե-  
րը մէկ է . Վատուած ինչ պիտի ընե-  
նէ Փարաւոնին ցուցուց : Յովսէփ ըս-  
կըսէց յատկապէս Փարաւոնին ե-  
րազները մեկնել , ու անոնց ինչ նշա-  
նակելը իրեն ցուցուց :

Ան եօթը զեղեցիկ կովերը ու ան  
եօթը ցորենին հասկերը եօթը տարի  
կըցուցընեն , որ բոլոր Աղիսպատոսի  
մէջ շատ առատութիւն պիտի ըլլայ .  
աս եօթը տարվան միջոցին մէջը եր-  
կիրը ամեն տեսակ բանը առատաբար



ՀՅՈՒՄԵՎԻՆ՝ ՓԱՐԱԼՈՆԻՆ ԵՐԱՊԵՐԸ մեկ-  
նելլ



պիտի բուսցունէ՝ մարդոց ու անոնց  
պահած կենդանիներուն համար պէտք  
եղածէն շատ էվելի առատութեամբ :

Նաև ան եօթը տկար ու վտիտ կո-  
վերը՝ որ ան եօթը գեղեցիկ ու գերե-  
րը կերան, ու ան եօթը չորսած հառ-  
կերը՝ որ ան լեցունները կերան, եօ-  
թը տարի կըցուցընեն, որ աս եօթը  
տարվան միջոցին մէջը շատ սովլ պի-  
տի ըլլայ. ու երկիրը քիչ կամ ամե-  
նեին պտուղ չի պիտի բերէ. կերա-  
կորին կողմանէ շատ նեղութիւն պիտի  
քաշվի, ու առատութեան տարիէն  
ինչ որ պահվի նէ՝ ետքը սովլին տարի-  
ները պիտի ուտիլի :

Նաև Հովսէփ ըստա՞՝ որ աս երկու  
միօրինակ երազներուն մարդարէու-  
թիւնովը Աստուած կըցուցընէ, որ  
ինքը քիչ ժամանակի մէջ աս բոլոր  
բաները անշուշտ պիտի կատարէ :

Վ երջը Հովսէփ Փարաւոնին խրատ  
տուաւ որ բոլոր երկրին վրայ պաշ-  
տօնեաներ կարգադրէ, որ ան եօթը

առատութեան տաքվան մէջի եղած  
հունձեքըն հինգ բաժինին մէկը առ  
նեն՝ ու դանաղան քաղաքներուն մէջ  
զիղեն : Ենատենը եօթը սովոն տարի-  
ներուն մէջ մարդիկ բաւական կերա-  
կուր պիտի ունենան ու անօթութենէ,  
չի պիտի մեռնին : -

Յովսէփին աս խրառը Թագաւորին  
ու իրեն տերութեանը մէջի եղող զոր-  
ծակալներուն շատ հաճելի երեցաւ .  
ու նայեցաւ որ Յովսէփին՝ ի զատ ու-  
րիշ մարդ չէր կրնար դտնըփիլ որ բո-  
լոր աս զործը կարող ըլլար առաջ  
տանելու . որուն ներսը՝ ըստ Թաղաւո-  
րը՝ Եստուծոյ հոգին կայ :

Ան ժամանակը Փարաւոն Յովսէ-  
փին ըստ . Որովհետեւ Եստուած աս  
բոլոր բաները քեզի ցուցուց , ալ քե-  
զի պէս խելահաս ու իմաստուն մէկը  
չի կայ :

Դուն իմ տանս վրայ վերակացու  
պիտի ըլլաս . ու քու խօսքովդ բոլոր  
իմ ժողովուրդս պիտի կառավարվի . ու

միայն ես իմ աթոռովս քենէ մեծ պիտի ըլլամ։ Ու ֆարաւոն Հովսէփին ըստ։ ԵՇա՛ ես քեզ բոլոր Խղիպտոսի երկրին վրայ վեշակացու դրի։ Ես ըսելէն ետև՝ ֆարաւոն իր մատը դրած աղնիւ ու ծանրագին մատնին հանեց ու Հովսէփին մատը դրաւ։ ու դեղեցիկ հանդերձներ հաղցուց, ու անոր պարանոցը ոսկինէ մանեակ մը անցուց։

Ասոնց բոլորը Հովսէփին ունեցած գերազոյն իշխանութիւնը կըցուցընէր, որ թագաւորը անոր տըւաւ, ու նաև անոր պատիւը որով որ ինքը պիտի յարդըվէր։

Նաև Հովսէփին հրաման ըրաւ, որ իր երկրորդ կառքը նստի։ ու առջելն քարտղ կըկարդային, որ անոր խոնարհութիւն ընեն։ ու ասանկ Հովսէփ Խղիպտոսին վրայ առանձին իշխանութեամբ վերակացու կարդաղըլեցաւ ու իրը երկրորդ թագաւոր։ Եսոնցմէ ՚ի զատ՝ ֆարաւոն Հովսէփին ուրիշ նոր անուն մը տըւաւ։ ասիկա

առջի ժամանակները սովորութիւն եւ<sup>1</sup>  
դած էր արևելեան ազգերուն մէջը ,  
որ երբոր թաղաւորը մէկը ընդունե  
նելու րըւար , մանաւանդ օտարական  
մը , անունը կրփոխէր : Հովսէփին նոր  
անունը , Փառմիթոմիանէ ղրաւ :

Աս նոր անունին նշանակութեանը  
համար մարդիկ զանազան կարծիքներ  
կընեն . ոմանք կրկարծեն՝ թէ անոր  
նշանակութիւնը գարւնիքներ յայտ  
նող ըսել է . ու անիկա հովսէփին  
մեծ իմաստութեան համար տուեր էր ,  
ինքը ան երազներուն մեկնութիւն տա  
լուն , ու մարդարեական հողի ունենա  
լուն համար : Աւքիշները կրկարծեն  
թէ Եղիպատացւոց մէկ բառն էր , որ  
Փրկիչ աշխարհի կընշանակէր . աս  
մէկ փառաւոր պատուանուն մըն է , որ  
արևելեան ազգերը շատ կրգործա  
ծեն՝ Հովսէփին պէս մէկ մարդու մը  
բարերարութիւնը բոլոր ազգին ցու  
ցընելու համար :

Փարաւոն նաև հովսէփին մէկ կնիկ

մըն աւ պատրաստեց Առանելթ անունով՝ երեւելի ընտանիքէ մը, որուն  
 հայրը Արեգ քաղաքին մէջը քահանայ կամ իշխան էր: Ասիկա Եղիալտոսի  
 մէկ անուանի քաղաքն էր, ու հաւանական է որ Պետափիրէս ան քաղաքին ու  
 անոր քովի եղող երկրին վրայ իշխան էր: Հովսէփին այսչափ մեծ իշխանութեան ու  
 պատույ համելուն նայելով պէտք է մտմտանք որ Աստուծոյ Հովսէփին սրտին մէջը ըլլալով  
 Փարաւոն անիկա այնչափ սիրեց, ու  
 անոր տըւած խրատները ընտիր ու իմաստուն սեպեց: Ինչու որ Աստուծած  
 անիկա կըթեր էր: Արդարեւ Փարաւոն Ճշմարիտ Աստուծոյ վրայօք որուն  
 որ Հովսէփ կըհաւատար, բիշ կամ ամենելին չէր զիտէր: բայց Հովսէփին վարքին ու կենցաղավարութեանը  
 մէջ շատ սքանչելի մէկ բան մը տեսաւ երբոր Հովսէփին ըսածը լսեց,  
 թէ Աս իմ իմաստութիւնս չէ, հապա Աստուծած Փարաւոնին խաղա-

դութեան պատասխան մը պիտի տայ ,  
 աս բանին համար քարտառն չովսէփը  
 յարգեց , ու բոլոր իր յոյսը անոր դը-  
 րաւ : Ախտքերնիդ ըլլայ՝ որ ճշմար-  
 տութեան , ու Վատուծոյ պէտք եղած  
 պարտականութեան Ճիշտ նկատումը  
 ամէն բանէն էվէլ ուրիշներուն՝ նաև  
 դէշ մարդոցը պատիւը ու հաւատար-  
 մութիւնը անդամ կըստանայ : Ենոնք՝  
 որոնց հետ որ գործ ունիք՝ թող դիտ-  
 նան , որ դուք Վատուծմէ կըվախնաք ,  
 ու միշտ կըթութեան ու առաջնորդու-  
 թեան համար անոր կընայիք՝ բոլոր ձեր  
 պարտականութիւնները կատարելուն  
 մէջը : ‘Ձեր վարքը որչափ առաւել  
 աղէկ դիտցըվի , այնչափ առաւել  
 յարգ ու պատիւ կըստանաք : Օ անա-  
 դան պաշտօններու մէջ ուրիշները ձե-  
 զի պիտի հաւատան : Յէկապէտ կարելի  
 է որ իշխանութեամբ ու պատուով  
 չովսէփին չափ չէք կընաք մեծնալ ,  
 սակայն ձեզի շատ ընդունելի պէտք է  
 ըլլայ՝ որ ասանկ հասարակ վիճակի մը

մէջ ուրիշներուն պատիւը ու հաւա-  
տարմութիւնը կըստանաք : Կաև աս  
կերպով ըլլալը ներքին զուարձութիւն  
մըն ալ առաջ պիտի բերէ , ու ան  
պատիւը ըստանալնուդ պատճառը ի-  
մանաք , որ Աստուծոյ շնորհացը օգ-  
նութեամբը ջանացեր էք իրմէն  
վախնալու , ու իր պատուիրանքները  
պահելու :

### Դ Լ Ո Ւ Խ Ո Յ Ժ Վ :

Աստուծոյ նախանձունութիւնը : Անոր հնա-  
պահութիւն ու պահ-ինչը՝ մեր պարագանեան-ըն-  
նը ըլլուց : Ճաշեփին ցորեն ժողովեց : Ա-  
նոր երես-պահունեցը : Անոնց ան-անելուն-  
պարագանեց : Առջեն սիսեց :

**Խ**նչպէս զարմանալի եղաւ Յովսէփին  
այսչափ յառաջանալը , որ ինքը  
քանանու մէջ երկրագործի մը տղայ  
ըլլալէն՝ որ տասնիրեք տարի բան-  
ուը մնալէն ետեւ , Եղիալտոսի կառա-

վառութեան պաշտօնին բարձրընայ .  
ու ան ընդամակ երկրին մեջը իշխա-  
նութեամբ երկրորդ թագաւոր կոչվի :  
Թէ որ Հովսեփին յառաջաղիմու-  
թիւնները լաւ նկատելու ըլլանք՝ ար-  
դեօք որչափ պիտի զարմանանք ան  
Վատուծոյ նախախնամութեանը վրայ ,  
որ գէշէն աղեկութիւն առաջ բերե-  
լով , ու մարդոց չար կիրքերը յաղ-  
թելով . իր իմաստուն ու բարի խոր-  
հուրդները կատարեց :

Վատուծոյ նախախնամութիւնը այս  
չափ կը կնելնուս պատճառուը ասէ , իմ  
սիրելի տղաքներս , որ երբոր Հովսե-  
փին պատահած դիսլուածները իր  
պատճութեանը մեջ կարդալու ըլլաք ,  
իակոյն անիկա միտքերնիդ եղած ըլ-  
լայ : Ինչու որ չի կայ անանեկ մեկ ձըշ-  
մարտութիւն մը՝ որ Վատուծոյ ամենա-  
խընամ նախախնամութենէն էվել  
դգայվելու արժանի ըլլայ : Վակա  
Վատուծաշունչին ուրիշ մասերը ու  
զանազան ազգերուն ու մարդիկներուն

սլոտմութիւնները կալոդալով սորվեցէք : Զեր կեանքին ու ձեր բարեկամներուն կեանքին մէջը սորվեցէք :

Յէ՛ս որ ճշմարտապէս Եստուած սիրելու ու անոր ապաւինելու ըլլաք, Եստուծոյ նախախնամութեան զիտութիւնը ձեզի մէկ անշարժ միսիթարութեան ու օղնութեան պատճառ մը պիտի ըլլայ :

Յէ՛ս որ ասանկ զիտնալու ըլլաք ո՞ւ առանց անոր զիտութեանը ու հրամանին բան մը ըրլլար, ու անոր թագաւորութիւնը ինչպէս որ ամենամեծ բաններուն կըհասնի՝ անանկ աւամենէն փոքրիկ բաններուն, անատենը ինչպէս որ աղայ մը իր հօրը կամ մօրը ձեռքին տակը ապահով է, անանկ աւ դուք միշտ ապահովութիւն մը պիտի դպաք անոր սկաշտպանութեան տակը :

Առը Գիրքելը մեզի կըսորվեցունեն որ Եստուած զինքը սիրողներուն ամեն բանի մէջ հետելնին կըլլայ

բարիք գործելու . ինչպէս յաջողութեան կամ ձախորդութեան մէջ , առողջութեան կամ հիւանդութեան մէջ , կեանքին կամ մահուան մէջ :

Աստուած աս կերպով հօվսէփին հետ էր , ու նաև ձեր հետն ալ ոլիտի ըլլայ թէ որ դուք ալ բոլորով սրտիւ զինքը սիրեք ու ձեր յոյսը իր վրայ դնելու ըլլաք : Աս աշխարհիս մէջը նաև շատ բաներ պիտի դոնաք որ առաջին անգամէն շատ երկիւղալի պիտի երեան ու շատ վիշտ ու նեղութիւն տան : Ուակայն ետքը Աստուածոյ ամենախնամ նախախնամութեամբը , անոնք մնիթարութեան ու երջանկութեան պիտի դառնան . բայց թէ որ չի դառնան , ու զանազան տեսակ նեղութիւններ ու փորձութիւններ քաշելու ըլլաք , հնազանդութեամբ ու համբերութեամբ տարեք : Ինչու որ Աստուած կըտեսնայ որ իր տղաքը աս տեսակ պատիմնելուն կարօտ են . ինչպէս որ մէկ մարդասէր հայր մը

երբոր իր տղան հիւանդ կըտեսնայ ,  
դեղ կըպատրաստէ անիկա բռքնտ  
ցունելու համար :

Աս նեղութիւնները ու փորձու  
թիւնները ձեր հոգիններուն շատ օդուտ  
պիտի ընեն . թէ որ Վատուծոյ աղա  
չելու ըլլաք իր Ոռւրբ Հողին ձեղի  
տալու , որ ան տառապանքները խո  
հեմութեամբ առաջ տանիք :

Անոնք ձեր Վատուծոյ ունեցած սէ  
բը ու Վրիստոսի վրայ ունեցած սէբը  
պիտի էվելցունեն , ու ձեղ անոր ամեն  
օրհնեալ օրինակին պիտի նմանցու  
նեն . անոնք ձեղ խաղաղական մահ  
ուան մը ու երկինքին մէջո յաւիտէ  
նական երջանկութեան մը պատրաս  
տէլ պիտի տան :

Աւրեմն սորվեցէք Վատուծոյ նա  
խախնամութիւնը . ու ամեն օր դիտ  
ցէք , որ դուք անկէ իմաստութիւն ու  
միիթարութիւն ստանալու համար  
կառլրիք :

Յովսէփ ևս առաւել պատճառ ու  
14 թ

նէր Վատուծոյ աս նախախնամութեան  
 նը դարմանալու , ու անոր ապաւինե  
 լու : Երբոր ինքը Եղիպտոսի վրայ  
 վերակացու զրվեցաւ երառն տարուի  
 չափ էր . ու մեկենիմեկ դժուարին  
 զործքերու մէջ մտաւ . Թաղաւորը  
 ձգեց ու երկրին չորս կողմը ճամբոր  
 դութիւն ընելու զնաց : Հովհակի  
 մարդոց վեճակը տեսնալով հառ  
 կըցաւ որ ինչ բան հարկաւոր էր  
 ան զալու սովին եօթը տարիներուն  
 համար պատրաստելու : Են եօթը  
 առատութեան տարվան միջոցին մէջ  
 երկիրը ամեն տեսակ բաները առա  
 տութեամբ բերաւ . Վատուած ա  
 սանկ տնօրիներ էր ինտոր որ Հով  
 հակի Փարաւոնին բաեր էր որ պիտի  
 ըլլայ : Եր ամենողորմ նախախնա  
 մութեամբն էր , ը ամեն բան ա  
 սանկ մեկ տեղ առաջ տանել տըւաւ .  
 ինչպէս արեին ծաղիլը ու անձրեը ,  
 ամպերը հովերը ու փոթորիկները , ու  
 նաև սերմանեաց ցանկիլը ու անոնց





Վոատութեան եօթը տարիները Փարա-  
ռան թագաւորին շտեմարանները ցորենով  
լեցունելնին :

համնիլը , ու հունձերուն ժողվրվելը .  
քնակիչներուն ալ աւողջութիւնը ու  
արիութիւնը , ու անոնց աշխատելու  
համար ունեցած հաճութիւնը ու կա-  
րողութիւնը :

Ան Աստուծոյ դթած նախախնամու-  
թիւնն էր : որ աս ամեն բաները մէկ  
տեղ առաջ բերելով՝ բոլոր եւկըին  
մշջը այսչափ առատութիւն եղաւ . ին-  
տոր որ Աստրը Գիրքը մեզի կըսէ , թէ  
Հովսէփ ցորենը ծովին աւաղին պէս  
կըժողվէր . անկէ ետեւ ոկանց չափով  
համրել՝ որ նայի թէ ոքչափ եղեր է .  
սակայն այնչափ շատցեր էր որ համ-  
րելը ձգեց :

Յորենը զանաղան քաղաքներու մէջ  
շումարաններով պահեց . ու անշուշո-  
իր իշխանութեանը տակը պաշտօնեա-  
ներ կարդաղըէր էր որ անոնք աղէկ  
պահվին , ժողովուրդներուն ապառնի  
մնունդ ըլլալու համար :

Սովոր տարինները կալէն առաջ  
Հովսէփ երկու տղայ ունեցաւ , Առ-  
նասէ ու Լիրեմ :

**Մ**անասաէ, մէկ բառւ մըն է<sup>3</sup> որ մոռ  
ցընող ըսել է . Հովսէփ աս անունիք  
տրւաւ իր մեծ տղին ինչու որ<sup>4</sup> Աստ  
ւած<sup>5</sup> բառւ Հովսէփ , բոլոր իմ վիշ  
տերա ու բոլոր իմ հօրա տանը վիշուն  
ըը մոռցընել տրւաւ . այսինքն ան դա  
նազան փորձութիւնները ու չարչա  
բանքները որ ես հոս Եղիպտոսի մէջը  
քաշեցի , ու նաև անոնց բոլորը որ ես  
իմ նախանձ ու չար եղբայրներէս կը-  
րեցի երբոր իմ հօրա տունն էի :

**Մ**իւս տղին անունն ալ Եղիպէմ զր-  
լաւ . որ աս բառը աճեցուցած կը-  
նշանակէ . ինչու որ<sup>4</sup> Աստուած<sup>5</sup> բառւ  
Հովսէփ , տառապանաց երկրին մէջը  
իս աճեցուց :

**Հ**ովսէփ իր հօրմէն ու իր հօրը  
տանը զուարձութիւնէն ու իր ընկե-  
րութիւնն շատ հեռաւ դատուած ըլլա-  
լուն , անշուշտ շատ մեծ միսիթարու-  
թիւն մը եղաւ իրեն աս երկու տղոցը  
հայր<sup>4</sup> ու ինքիրէնը մէկ ընտանիքի  
մը տէլ ըլլալը :

Ա հրջապես առատութեան տարի  
ները վերջացան, ու սովերը սկսեցին:  
Ես սովոր ոչ թէ միտյն Աղիալտոսի  
մշջ եղաւ, համա ուրիշ երկիրներու  
մշջ ալ . ամեն տեղ սովոր սաստիկ  
էր . ու ժողովուրդը իրենց կեանքը  
պահելու համար բաւական կերակուր  
դանալու շատ դժուարութիւն կըքա  
շէին՝ սակայն բոլոր Աղիալտոսի երկ  
րին մշջը բաւական պահուած էր բը-  
նակիններուն ուտելու համար :

Երբոր Աղիալտացինները իրենց տա-  
նը մշջի պահաճներնին հատցունելէն  
եսև կերակուրի կարօտութիւն ու-  
նեցան, սկսեցին Փարաւոնին հացի  
համար աղաղակելու . ու Փարաւոն ալ  
բոլոր Աղիալտացիններուն ըսաւ . Յով-  
սէփին գացէք, ու ինչ որ ըսելու ըլ-  
լայ նէ ըրէք :

ԳԼՈՒԽ. Ժ.Ե.

Եւ գոյացած էնեւուն քաղաքի և կրենց Փրկի-  
չն ողեւ պատուելը : Քեսաւ Վ. բիշուուկ ա-  
ռաջակա էւ քերտոյն Փրկի ըլլուը : Եւ գոյաց-  
ած էնեւուն քաղաքի և ցողեն ծախս առանձը :  
Վ. բիշուուկ մէջէ առձը : Քահինդին իր ուղարք իւ-  
րաքանչ ծախս առանձը համար Եւ գոյա-  
չի ըլլու :

Եղիսլուացիները օսվակի հիմայ ի-  
րենց Փրկի ըլլ կը կարծէին Փարա-  
ւոնին անոր տըւած անունովը , որ նոյն  
նշանակութիւնը ուներ : Ու երբոր ա-  
նոր առջին ծունկ չոքած կերակուրի  
համար անոր կը նայէին , որուն իրենք  
ու իրենց ընտանիքը այնչափ կարօտ  
էին , ու երբոր Փարաւոնին տըւած նոր  
անունը անոր կը կանչէին , պատճառ  
ունեին անիկա իրը իրենց Փրկի ըլլ  
ալելու :

Բայց չէ թէ նոյն մտքովը ինչպէս  
որ մենք օխուաս Վ. բիշուուկ Փրկի չ-  
աշխարհի կը կոչենք , որ կարօղ է

մարդիկները իրենց մեղքերէն փրբելու, ու հոգինին յաւխտենական մաշնէն աղատելու . ու նաև Վաստուածային ճշմարտութեամբը ու Հոգւոյն Արբրոյ զօրութեամբը լեցունելու, որ աներկնային կերակուր մընէ ու հոգին կըսնուցանէ, ու պատճառ կըլայ մեկ առաւել գերազանց ու երջանիկ աշխարհի մը մեջ յաւխտեանա ընտեղեցնելու :

Բայց ոչ, կըվախնամ թէ ան ողորմելի ու ագէտ Աղիպատացիները շատքի Հոգ կըսանէին իրենց հոգիներուն վրայօք . կամ թէ ամենենին չէին ջանար անոնք ինչ կերակով փրկելու, ու ան երկնային կերակուրը իրենց սնունդին համար ստանալու :

Գրեթէ բոլորին զիտաւորութիւնն ու ան սոսկալի սովէն փրկըվելն էր . ու երբոր տեսան որ Հովսէփ կարողէր զիրենք անկէ փրկելու, անոնք անտարակոյս Հովսէփը ամենէն աղէկի իրենց բարեկամը, աղատիչը, ու փրկիչը սեպեցին :

Ապակոյն հռո մեծի հարցում մը ունիմ  
ձեզի . կը փախաքի քարդեօք ու պատ-  
րաստ էք մի չնիսուս Վրբիստոսի եր-  
թալու ու հողեռոր սովէն ու յաւիտե-  
նական հողւոյն մահէն փրկըլիլու հա-  
մար . ինչողես որ Եղիպտացիները  
Յովսէփին կերթային սովին համար  
քաշած նեղութիւններնուն՝ ու միայն  
իրենց մարմնոյ մահէն աղատելու հա-  
մար . ևս աս հարցումը հռո կը զնեմ, որ  
դուք ձեզի անոր վրայ խորհիք ու պա-  
տասխանը տաք :

Յովսէփ բոլոր ցորենին, շտեմարան-  
ները բացաւ որ զանազան քաղաքներու  
մեջ լեցած պահեր էր, ու սկսեց Ե-  
ղիպտացիներուն ծախել՝ որոնք կտ-  
րող եղան իրենց ընտանիքովը ապլի-  
լու :

Արդեօք որչափ խեղճ ու զըեթէ  
անօթութենէ մարտղ ողպտի տղաքներ  
ու աղջիկներ ուրախացան, տես-  
նալով որ իրենց հայրը ցորեն բերեր  
է տուն, ուսկից որ մայրելնին կարող  
էր անոնց հաց շնելու :

Խորհեցէք իմ սիրելի դաւկըներս  
ձեր երկնաւոր Հօրը վրայ , որ բոլոր  
ձեր պիտոյքը առատաբար կուտայ .  
ու դուք աւ ձեր երախտագիտու-  
թիւնը իրեն ցուցուցէք , իր պատուի-  
րանքներուն հնազանդ ըլլալով :

Չէ թէ միայն Եղիպտացիները կու-  
դային Յովսէփէն ցորեն ծախու առ-  
նելու , հապա ուրիշ երկրի մարդիկ-  
ներն աւ , ուր տեղ որ սովոր տիրեր  
էք . ու աս կերպով Վատուծոյ առաջ-  
նորդութեամբը՝ իր իմաստութիւնը ու  
ճարտարութիւնը պատճառ եղաւ շա-  
տերուն կեանքերը ազատելու :

Իրաւցընէ Վատուծոյ դարմանալի  
նախախնամութեամբը Յովսէփ քիչ  
ժամանակէն իր սիրելի Հօրը , ու ա-  
նոր ընտանիքին , ու նաև իր եղբայր-  
ներուն՝ որոնք որ զինքը անողորմա-  
բար չարչարեք էին , ու անոնց ընտա-  
նիքներուն կեանքերը անօթութենէ ա-  
զատելու զործիք մը պիտի ըլլար : Ին-  
չու որ սովոր մինչև Յուղայի երկիրը ,

այսինքն՝ Յակոբին եղած տեղը հասաւ, ու ան տեղի մարդիկները շատ նեղութիւն կրքաշէին սովին կողմանեւ :

**Առ** նեղութիւններուն մէջը երբոր Յակոբ լսեց՝ որ Եղիպտոսէն ցորեն ծախու կրնայ առնել, խորհեցաւ հոն մարդ խըրկել ցորենի համար . իր տղաքը մէկ տեղ կանչեց, ու հարցուց թէ ինչո՞ւ համար այսափ տրտմութեամբ ու յուսահատութեամբ մէկ զմէկու վրայ կրնային . որ իրը թէ մէկ բան մը չե կրնար բլլըլիք իրենց աղասութեանը համար :

**Յակոբ** անոնց ըստ, Կսեցի որ Եղիպտոսէն ցորեն կառնըլիկոր . ալէտք է որ հոն երթաք, ու քիչ մը բան առնեք զիս ու ձեղ փրկելու համար . չէ նէ մահը հարկաւ մեզի պիտի հանի : Կարելի է որ ան ժամանակը Յակոբ ու անոր ընտանիքը, իրեն տղաքը ու անոնց ընտանիքները՝ բոլորը իրարումօտ կրնատէին . իրը թէ մէկ մեծ ընտանիք սը եղած էին, որոնց իշխանը

կամ դլուխը հակոք էր : Ենոնց ամենուն ապրուստը մէյմըն էր , ու ամենը մէկ տեղ կերակուրի համար նեղութիւն քաշելնուն հարկաւորեցաւ որ մեծ ու զօրաւոր աշխատութիւն ընեն մէկզմէկու ազատութեան համար : Ենկէ Նզիալտոս շատ երկար ճանապարհ մըն էր հարիւրաւոր մղոն հեռաւորութեամբ , ու հակոքին տղոցը շատ անյարմար կըթուէր ասանկ հեռու տեղ մը երթալը . բայց ինչ օգուտ . ասկէ ՚ի զատ ուրիշ կերպ մը չի կար կերակուր գտնալու . ու Շենիամինէն ՚ի զատ բոլորն ալ խօսք տուին երթալու :

Շենիամին հովսէփին պղտի եղբայրն էր , ու զիտէք որ իրենց մայրը Ասքէլ մեռնելէն քիչ մը առաջ ծնած էր : Շատ պարագաներ կար ուրոնց յիշատակութիւնը Ասքէլը հակոքին սիրելի ըրաւ : Հակոք Ասքէլը բոլոր իր ունեցած կնիկներէն էվել կըսիրէր . ու անիկա այնչափ սիրե-

լուն անոր զաւկըներուն վրայ ալ շատ  
սէր ունէր . ու երբոր հաւատաց թէ  
Յովսէփը մեռեր է , չէր ուղեր որ Ռէ-  
նիամինը դոնէն դուրս հանեն , որ  
շրջայ թէ անոր դլխուն ալ փորձանիք  
Քը դայ :

Ամենեւին զարմանալու չէ որ Յա-  
կոր Ռէնիամինը այնչափ կըսիրէր ,  
ինչու որ ան հիմայ հարիւր երեսուն  
տարուի չափ ծեր մարդ մընէր : Քիչ  
տարի առաջ իր հայրը Խաչակի  
Ռամքընէին աղարակին մէջը Աքրա-  
համին ու Ապրային քովը Թաղէր էր :

Յակոր ինքն ալ օր ըստ օրէ իր  
կեանքին վախճանին կըմօտիքնարկոր ,  
ու յայտնի գիտնալով իր տկարութիւ-  
նը ու մեկի մը կարօտ ըլլալը , իր մը-  
խիթարութեանը համար՝ Ռէնիամինը  
Յովսէփին տեղը դրեր էր . ու քանի  
որ սուգ կընէր կորսրված տղին վրայ  
որն որ կըկարծէր թէ վայրենի գաղան-  
ները փարատեր էին , առաւել Ռէ-  
նիամինը կըդըկէր , ու կըզգուէր ա-

Նիկա . ու իր օր ըստ օրէ նուազող կեանքին մէջը ան իրը իր մխիթարութիւնը , ու յենարանը սեպած էր : Արդեօք կըկարծէք թէ Յովսէփին Ելքայրները Եղիպտոսի Ճամբռոն մէջը կըխորհէին թէ Յովսէփը ճախած խամայելացիները ան երկիրը դացեր էին , ու կարելի է իրենց եղքայրը հոն կըպատահի :

Արդարէւ զարմանալի բան մը չէ պիտի ըլլար , թէ որ աս տեսակ խորհուրդները անսոնց միտքէն անցնելու ըլլային . սակայն անոնք կըկարծէին ոք տակաւին ան հոն տեղ գերիի մը պէս կամ թէ շատ աղքատ վիճակի մը մէջ պիտի դտնան . ու թէ որ անանկ մէկ զօրաւոր ու պատուաւոր ու իրենց եղքարը անգամ նմանութիւն ունեցող մէկն աւ տեսնալու ըլլային . անկարելի է որ անիկա իրենց եղքայրը Յովսէփը կարծէին . ինչու ոք բոլորովին անհնարին պիտի երևար իրենց , որ ասանկ մէկ գերի մը ու նաև պատ-

դուխտ մէկը օտար երկրի մը մէջ ա-  
սանկ պատռոյ հասնեի :

Գ. Լ. Ռ. Խ. Խ. Ժ. Օ.:

Հյուծուն Եղբայրնեւուն՝ իլլուն առջին էր-  
իւրուն ու ունիւն : Անուղեաւ անոնց  
ճանապատնեւուն պատճենուը : Ինոնց բանապը  
ուրիշը : Հյուծուն անոնց պատնեւուն պարեն առանեւ-  
ը համար ըստը : Բայնիանը բերվելու հա-  
մար անոնց մէկը բանապին մէջը պահուելու :

**Լ**ըրբոր Խզիպտոս հասաւ , հարցու-  
ցին որ ինչ կերպով ցորեն կընային  
ծախու առնել . իմացան որ Փառմի-  
թոմիանէին պէտք էր երթալ . որն  
որ բոլոր երկրին կառավարն էր . ու  
ցորեն ծախելը բոլորովին անոր իշ-  
խանութեանը տակին էր : Խըրբոր Քով-  
սէփ իր պալատոր գնաց անոնք իր առ-  
ջեր տարվեցան . ու երբոր իրեն մո-  
տիկցան ծռեցան երկրապատթիւն ը-  
րին անոր . ասանկ ընելը անոր խորին

մէկ յարդութիւն մը ցուցունել էր ,  
որ մինչև հիմայ աս սովորութիւնը ա-  
րևելքան աղգերուն մէջը կայ . ու նաև  
ասանկ գիտէին ու կըխոստովանէին որ  
ան իրենցմէ շատ գերազոյն է աստի-  
ճանով ու զօրութեամբ :

Հիմայ Հովսէփին երազը լեցվե-  
ցաւ . որ իր եղքայրներուն ցորենին  
փոնջերը իրեն առջելը երկրպազու-  
թիւն ըրին , ու հիմայ անոնք ալ նոյն  
կերպով անոր առջին երկրպազութիւն  
ըրին ու բոլորն ալ իրենց յոյսը անոր  
վրայ դրեր էին որ իրենց ծեր հայրը  
ու բոլոր ընտանիքնին անօթութենէ  
աղատէ :

Ոտքի վրայ ելան ու Հովսէփին առ-  
ջին կայնեցան . ու ամենելին կարծիք  
չունէին որ իրենց եղքայրն էր , բայց  
ինքը անոնք գիտէր , ու թէ որ ուզելու  
ըլլար՝ կրնար անոնցմէ իր ոխը առնել՝  
անոնց իրեն տուած չարչարանքներ-  
նուն փոխարէն :

Բայց անոր դիտաւորութիւնը ա-

սանեկ չէր . ու դէշին փոխարէն բարի  
ընելը գիտէր , ու միտքը դրեր էր ,  
որ իր եղբայրներուն ու իր ծեր հօրը  
վերին աստիճան աղէկութիւն ընէ .  
ինչ և իցէ , աս ասանկ ընելուն համար  
խորհեցաւ որ աղէկ չէ մէկէնիմէկ ին-  
քրղինքը ճանչցունէ :

**Յովսէփ** իր երազները միտքը ըե-  
րաւ , ու անոնց մէկ մասին կատարվի-  
լը հիմայ տեսաւ , ու կըյուսար որ Աս-  
տուծոյ նախախնամութեամբը իր տե-  
սած երազներուն նայելով գործիք մը  
պիտի ըլլար առաւել զարմանալի  
դիպուածներ կատարելու :

**Կերևայ թէ** ինքը իր եղբայրները  
փորձել կուղէր , ու կարելի է թէ ա-  
նոնց առջի ըրած չարութիւններուն  
համար ճշմարիտ ապաշխարութիւն  
ընել տալու կըբաղձար :

**Նաեւ յօվսէփ** տեսաւ որ իր պղտի  
սիրելի եղբայրը Ռենիամինը անոնց  
մէջը չէր . վախցաւ որ կարելի է ա-  
նոր ալ մէկ սարատիելի ատելութիւն

մը ըրած ըլլան՝ իրենց հօրը սիրելի  
զաւակը ըլլալուն համար, ու դուցէ  
անիկա մեռուցած էին :

Յովսէփ գիտէր, թէ որ աս բանը  
ըրած աւ էին նէ շիտակը չի պիտի  
զրուցէին իրեն, երբոք Շենիստմինին  
վրայօք հարցունելու ըլլար. հապա  
մէկ սուտ մը պիտի ըսէին զինքը խա-  
րելու համար. ինչպէս որ առաջ ի-  
րենց հօրը ըրեր էին :

Աս պատճառներուն կամ թէ ու-  
ղիշ բաններու համար որ աղէկ մը  
չնք գիտեր, Յովսէփ չէ թէ միայն  
ինքը զինքը իր եղբայրներուն չի ճանչ-  
ցուց, հապա անանկ երևցուց ինքը  
զինքը որ զլեթէ ամեննեին անոնց ով-  
ըլլալը ինքը չէր գիտէր :

Ու նաև ինքը անանկ մէկ օտար ու  
այլանդակ կերպով մը հազվեցաւ, որ  
ամեննեին ինքը զինքը անոնց չի ճանչ-  
ցունէ ու միտքին զրածները կատարէ:  
Ենոնց հարցուց թէ Դուք ուսկից ե-  
կոմծ էք :

Ու երբոր անոնք ըսին որ Վանանէն  
եկած ենք կերակուր ծախու առնելու  
համար . ան ժամանակը ստիպեց անոնք  
որ Գուք լրտես էք . ու ըսաւ որ Եղիպ-  
տոսի աղքատութիւնը ու տկարութիւ-  
նը նայելու համար եկած էք , որ մէկ  
երանելի ու զօրաւոր աղգի մը խօսք  
տանիք . որ կուղէ հոս զալ ու Եղիպ-  
տացիները կողոպտել , և դուցէ  
յաղթել՝ անոնց երկրին ժառանդու-  
թիւնը ձեռք ձգելու համար :

Աս խօսքին Հակոբին տղաքները  
պատասխան տուին ու ըսին , լրտես  
ըլլալը ու ասանել միտք ունենալը ար-  
դարեւ մենէ շատ հեռու է : Արաւ լիցի  
տէր մեր՝ ըսին անոնք . քու ծառաւ-  
ներդ միայն կերակուր ծախու առնե-  
լու համար եկած են . մենք ըոլուս ալ  
մէկ մարդու զաւկըներ ենք , աս կեր-  
պով ըսել կուղէին , որ անանել զօրա-  
ւոր ցեղի մը կամ աղգի մը վերաբեր-  
եալ մարդիկներ չենք . հապա սակա-  
ւաթիւ ու առանձին ընտանիք մըն

ինք մէկ իշխանի մը տռի . մինք հաւատարիմ մարդիկներ ենք , քու ծառաներդ լրտես չենք” : Յովսէփ իր առջի ըրած ստիպումը կրկին ընկլուն , անոնք ալ կրկին պատասխան տըւին ու ըսին , “ Ո՞նք տասներկու եղբայր ենք . ու Քանանու երկրին մէջը մէկ մարդու մը զաւկըներ ենք . ո՞ս մեր ամենէն պղտիկը տունը իր հօրը քովնէ , ու միւս եղբայրնիս ալ չի կայ” :

Աս վերջին խօսքը ըսելովնին , որ չենք զիտէր՝ թէ արդեօք սուտ մը ըսել կուղէին թէ չէ , անշուշտ կըկարծէին որ աս ճամբով զրուցելնին իրենց եղբայրը մեռած է կըհասկըցվէր : Յովսէփ ինքը լինքը անոնց ըսածներուն ամեննեին չի հաւտալու մը պէս կերեցընէր , ու անոնց ըսաւ թէ ձեր ըսածներուն սուտ կամ իրաւ ըլլուր հաստատելու մէկ ճամբայ մը կայ :

Փարաւոնին կէանքին վրայ երդում մը ըրաւ , ու անոնց ըսաւ , մինչև որ ձեր պղտի եղբայրը հոս չի դայ՝ դուք

ասկէ երթալիք չունիք . ձենէ մէկը խրկեցէք , ու թող անիկա աւնէ հո բերէ , ու դուք ալ բանտին մէջը կը կենաք որ ձեր զուրցածներն ալ հաստատվի , չենէ անշուշտ լրտես էք :

Ետքը հովսէփի անոնց ամենն ալ բանտը դրաւ , ու երբորդ օրը անոնց գնաց ու ըսաւ , ես Վատուժմէ կրվախնամ . բայց թէ որ աս բանը ընէք նէ իապրիք , թէ որ դուք հաւատարիմ մարդիկներ էք նէ . թող ձենէ մէկը բանտին մէջը մնայ . ու դուք գացէք ու ձեր տանը կտոմ ընտանիքին ցորեն տարէք . բայց ձեր պղտի եղբայրը ինչ ծի պիտի բերէք որ ձեր խօսքերուն ճշմարիտ ըլլալը յայտնըվի , ու դուք ալ չի մեռնիք :

Հիմայ անոնց ըրած առջի չարութիւններնին առջևնին ելաւ : Ահապէտ իրենց եղբայրը Կամայելացւոց գերի ծախելնին քսան տարիէն էվել անցեր էր , սակայն անոնց ըրած անողորմ ու չար գործքելնուն յիշատակութիւնը

Հիմայ սկսեց անոնց խղճմանքը ար-  
թընցունել , ու իրենց սրտին մէջը  
մեծ ցաւ մը զգացցին :

**S**եսան որ՝ իրենք նեղութեան մէջ  
էին ու չիյտէին որ՝ վերջերնին ինչ  
պիտի ըլլար , ու գիտէին որ իրենք  
ինչ որ քաշէին պէտք եղածէն քիչ  
էր , ու կըվախնային որ հովսէփին ը-  
րած անօրէնութիւններուն փոխարէն ,  
Աստուած իր վրեժը իրենցմէ պիտի  
առնէր :

**Վ**սանկ սկսեցին իրենց զգացումնե-  
րը մէկզմէկու զրուցել . ըսին որ մենք  
մեծ յանցանք ըրինք ան ժամանակը  
մեր եղքօրը դէմ , որ երբոր անոր հոգ-  
ւոյն տառապանքը կըտեսնայինք մեզի  
աղաջանք ըրած առենը , ամեննելին ա-  
նոր մտիկ չէինք ընէր . անոր համար  
Հիմայ աս թշուառութիւնը մեր վրայ  
եկաւ : Ոտքէն պատասխան տըւաւ  
անոնց ու ըսաւ , թէ Ես ձեզի չէի մի  
ըսէր որ ան աղին դէմ մեղք մի գոր-  
ծէք , ու դուք չէիք մտիկ ընէր . ա-

Նոր համար , ահա անոր արիւնն ալ  
կըխնդրըվի , այսինքն , դուցէ անիկա  
անանկ ան ժամանակաւոր վտանգի մը  
մէջ ձղելնուդ համար Աստուած ձեզի  
սիստի հարցունէ , ու անանկ ընկընուդ  
համար Աստուած իր սաստիկ պատիժը  
ձեր վրայ պիստի խրկէ :

### Գ. Ա. Ո. Խ. Խ. Ժ. Ճ. :

Քովունքին եղբայրընելուան իշխանութեան  
Եկալութեան ըստ ըստ իշխան արքին ներդրեան  
է : Այսուն ըստ ըստ իշխան մշւու իշխան  
ըստ համար : Քովունքին եղբայրընելուան ցորեն  
առաջ քառական երեսունին : Այլի հարդարան  
առաջ բարդարան մշւ առեղէ պարբերութեան  
նը : Արդեօս առ կարդացուցուան ան երկիրակին որ  
պատճեն ունիուն ըստոյ : Օքան եղած դաստիանը եւ  
գործառ իտուուք :

**Յ**ովսէփ իր եղբայրներուն խօսակ  
ցութիւնը լսեց ու անոնց բոլորն  
ալ հասկըցաւ թէալէտ անոնք չէին  
կարծէր որ ան կըհասկընար , ինչու որ

Յովսէփի անոնց հետ թարգմանով կը-  
 խօսէր . ու ինքը Աղիպտացւոց լեզ-  
 ւովը ինչ որ ըսէր՝ Աբրայեցերէն ա-  
 նոնց կը թարգմանվէր որ իրենց խօսած  
 լեզուն էր : Անոնք Աբրայեցերէն ինչ  
 որ ըսէին՝ Յովսէփին Աղիպտացւոց  
 լեզով կը թարգմանվէր , իբրև Թէ  
 Աբրայեցւոց լեզուն չէր հասկընար .  
 ասիկա ասանկ ըրաւ , որ իր ով-  
 ըլլալը անոնք չի հասկընան : Աբրաոր  
 Յովսէփի իր եղբայրներուն խօսքերը  
 լսեց , սիրով ելաւ . ու երեսը անդին  
 դարձուց . որ անոնք ինքը չի տեսնան ,  
 ու սկսեց լալ : Թէ պէտ և շատ տար-  
 բերութիւն կար Յովսէփին անոնց վր-  
 րայ ունեցած սիրոյն ու անոնց առջի-  
 բրած կարծրասիրտ անողորմութեանը  
 մէջ տեղը : Ինքը զրեթէ պատրաստ  
 էր իր ովլ ըլլալը անոնց զրուցելու ,  
 ու անոնք իրենց քաշած նեղութիւն-  
 նելնուն խալբանելու . սակայն խորհե-  
 ցաւ որ աղէկ չէ , ու կուղէր որ անոնց  
 հաւատաբանութիւնը առաւել փորձէր

որ զիտհայ թէ արդեօք Ռենիամինին  
համար խօսածնին իրան է մի՛ , ու ա-  
նոնց խորին ապաշխարութեան ա-  
ռաջնորդէ ըրած յանցանքնելնուն  
համար :

Յովսէփ ասանկ թարգմանով քիչ  
մը ժամանակ անոնց հետ խօսելէն ետ-  
քը , Աիմօնը ընտրեց որ հոն մնայ մին-  
չև որ միւսները քանան երթան , ու  
Ռենիամինը բերեն և հրաման ըրաւ  
որ անոնց առջեր ան կապվի . ու ա-  
սանկ ընելովը կուգէր անոնց ցուցընել ,  
որ ան ասանկ կապված բանտին մէջ  
պիտի մնայ , մինչև որ անոնք ետ  
դառնան ու Ռենիամինը իրենց հետ  
բերեն : Ետքը Յովսէփ հրաման ըրաւ  
առանց անոնց զիտնալուն որ անոնց  
բերած ամաններուն բոլորը ցորենով  
լեցունեն , ու անոնց ամէն մէկին ար-  
ևած ստակն ալ իրենց ամաննուն մէջը  
դնեն , որ մինչև իրենց ճանապարհոր-  
դութեան վերջը բաւական կերակուր  
ունենան ուտելու : Ասանկ ցորենին ա-



Յովսէփին՝ իր շար եղբայրներուն ցորեն  
տալով օգնելը :



մանները իրենց էշերուն վրայ բեռցու-  
 յած ճամբայ ելան քանան երթալու .  
 ու իրենց եղբայրն ալ Ոիմօնը մէկ  
 գոցված տեղ մը զրվեցաւ որ հոն մնայ  
 մինչև որ անոնք ետ դառնան : Հիմայ  
 աղէկ ու գէշ մարդոց մէջ տեղի ե-  
 ղած անմեծ տարբերութիւնը՝ կարդա-  
 յած պատմութիւններնուս մէջ կը-  
 տեսնանք , ինչպէս Յովսէփին ու իր  
 եղբայրներուն մէջ տեղի եղած տար-  
 բերութիւնը , որ առջինը Աստուծմէ-  
 կրվախնար ու կրջանար իր պարտքը  
 ընելու ու վերջինները հպարտու-  
 թեամբ ատելութեամբ , վրէժինդրու-  
 թեամբ , ու չարութեամբ լեցուն էին .  
 ու կարելի է որ մինչև վերջը ալ ճըշ-  
 մարիս ապաշխարութիւն մը չէին ը-  
 լած իրենց մեղքերուն համար , ու  
 բաղձանք ալ ունէին Աստուած սիրե-  
 լու ու անոր հնաղանդելու : Հիմայ  
 արդեօք դուք ալ աս երկու տեսակ  
 մարդոցը որո՞ն պիտի նմանիք : Արդեօք  
 ձեր հանգամանքը , վարքը , զթասը-

տութիւնը , անկեղծութիւնը , հով  
 սէփին ունեցածի՞ն պէս պիտի ըլլայ  
 մի . կամ թէ անոր եղքայրներուն պէս  
 խստասիրտ ու չար մի պիտի ըլլայ .  
 արդեօք Վատուծմէ կրվախնաք ու  
 ան կըսիրէ՞ք մի . ու Վատուծոյ  
 պատուիրանքներուն հնազանդիլ ու  
 ուրիշներուն աղէկութիւն ընելը՝ ձե-  
 զի երջանկութիւն կըսէպէ՞ք մի .  
 կամ թէ բոլոր ժամանակը միայն ձեր  
 վրայօքք կրխորհիք , թէ ինչ կեր-  
 պով բան մը ընէք կամ ստանաք որով  
 անձնասէր բաղձանքները հաճեցու-  
 նէք , ու դուք ձեզ երջանիկ ընէք ու-  
 ռանց ուրիշներուն աղէկութեանը ու  
 երջանկութեանը վրայ հող տանելով :  
 Գութը շատ աղէկ զիտէք թէ ո՛ր տեսակ  
 մարզոց պարտիք դուք ձեզ նման-  
 ցունել . ձեր խղճմտանքը ձեզի կը-  
 զբարուցէ թէ որչափ տւաւել աղէկ  
 պիտի ըլլայ Հովսէփին պէս ըլլալ ,  
 քան թէ իր եղքայրներուն : թէ որ  
 տակաւին ամենելին Հովսէփին նմա-

նութիւն մը չունիք , ու Աստուծոյ վը-  
րայ ճշմարիտ սէր ու Փրկիչին վրայ  
ճշմարիտ ապաւինութիւն չունիք , ու  
չէք ալ բաղձար անոր նմանելու , ու  
Աստուծոյ կամքին հնազանդելու՝ և  
ձեր ընկերին ալ աղէկութիւն ընելու  
նէ՝ ան ժամանակը ինչ պիտի ընէք .  
անանկ պիտի մնա՞ք մի առանց ձեր  
մեղքերը ապաշխարելու , ու Քրիս-  
տոսի վրայ հաւատը ունենալու՝ առանց  
Աստուծ ձեր բարեկամը , ու իր որ-  
դին ձեր փրկիչը ընելու , առանց մահ-  
ուան պատրաստութիւն ընելու , ու  
զերեզմանէն անդին առանց յոյս ունե-  
նալու երջանկութեան :

Երբոր հովոէփին եղբայրները նե-  
ղութեան տակ մտան , իմացան որ ան  
դայրացեալ Աստուծոյ բարկութիւնը  
իրենց վրայ եկեր է՝ ըրած յանցանք  
նուն փոխարէն իրենք պատժելու ,  
խղճմտանքը՝ քսան տարիէն էվել  
անցնելէն ետքը արթընցաւ , ու անոր  
խայթերը դգացին :

Թակալէտ ձեր առջե ըրած մեղքերը  
 ձեզի հիմայ ձայն չեն՝ ի տար, ձեր  
 խղճնտանքը քնացած կը լլայ, ու ձեր  
 ըրած յանցանքները ու վտանգները  
 չեք իմանար, բայց Վստուած աս  
 կեանքին մեջը անգամ կարող է իր ի-  
 րաւունքովը յանկարծ ձեզ ըռնելու :  
 ու ձեր խղճնտանքը արթնցունելու,  
 ու ձեզ ահով ու վախով լեցընելու,  
 ու իր առջին դողացընելու : Ո՞հ . ան  
 հանդերձեալ աշխարհին մեջը խեղ-  
 ձը իր ահարկու զործքերը պիտի կտ-  
 տարէ, ու ան անզեղջ մեղաւորը, որ  
 յաւիտեանս Վստուծոյ երեսէն ու եր-  
 կինքին զուարժութենէն վունտված է,  
 ուրիշ բան չի պիտի դտնայ իր քա-  
 շածներուն վրայ նայելով . բայց մի  
 միայն տառապանք . ու ապառնի ըլ-  
 լալու բաներուն վրայ նայելով յուսա-  
 հատութենէ, ի զատ ուրիշ բան չի պի-  
 տի զանայ :

Ուրեմն թող հիմայ ձեր խիղճը իր  
 զործքը կատարէ . խորհնեցէք թէ որ-

չափ ու քանի անգամ Վստուծոյ դէմ  
 մեղք գործած էք, ճշմարիտ սրտի  
 տրտմութեամբ իրեն գացէք, ու խոս-  
 տովանեցէք անոր, աղաչեցէք Ք.ր.  
 բիստոսի ըրածներուն ու քաշածներուն  
 միջնորդութեամբը որ ձեր մեղքերուն  
 թողութիւն ընէ: Են է ձեր Փրկիչը ու  
 յոյսը, անոր միայն ապաւինեցէք:  
 Հոգւոյն Արբոյ համար աղաչեցէք որ  
 ինքը անիկա մեզի խրկելու համար մե-  
 ռաւ, ու խոստացաւ որ Վստուած  
 Ք.րիստոսի անունովը խնդրողներուն  
 ամենուն պիտի տայ: Աղօթք ըրէք ու  
 խնդրեցէք Հոգւոյն Արբոյ համար: Որ  
 ձեր սրտին մեջը դայ ու ձեզի հետ բը-  
 նակի, ու Վստուածաշունչին ճշմար-  
 տութիւններուն զիտութիւնը ձեզի  
 ճանչըընէ, ու նաև ձեզ առաջնոր-  
 դէ ան ճշմարտութիւնները սիրելու,  
 ու անոնց հնազանդելու, ու պատճառ  
 ըլլայ ձեզ մեղքէ ետ պահելու ու միշտ  
 Ք.րիստոսի նայել տալու, ու մեղքին  
 զօրութենէն փրկելու: ու քանի որ

ողջ էք նէ ձեզ հաւատարիմ ընէ Վա-  
տուծոյ ծառայելու ու ձեր ընկերացը  
աղէկութիւն ընել տալու , ու նաև եր-  
բոր մեռնելու ալ բլաք ան ժամանակն  
ալ անգամ ձեզ պատրաստէ Վատ-  
ուծ սիրելու , ու իրեն ծառայե-  
լու , ու իր Որդւոյն երախտիքները ա-  
ռաւել դերագոյն ու երջանիկ աշ-  
խարհի մը մէջ վայելելու :

### Գ. Ե. Ա. Խ. Խ. Ժ. Բ. Շ.

Ըստ էկին եղանակներուն թէին ի՞ն սպառիը  
ահանին թշնչն ելուել : Տառըն ժանիը : Ո՞ւ  
չը եկալ իւ : Ըստ էկին արարութեանը եւ  
աշոյ ըստ էկին իւ : Ուստի եկին եկանդ  
ու գեշ իօսքերը : Տնենիսինը երթուլու հա-  
նուք չստիբին հրաման չէ պարու : Աս բանին հա-  
նուլու համար չուրային զանուը :

**Յ**ովսէփին եղբայրները քիչ մը ժա-  
մանակ ճամբայ երթալնուն ետեւ ,  
ինչպէս որ կըկարդանք Վատուծա-  
շունչին մէջ , պանդոկի մը մէջ մտան

ինքը ինքնին զովացնելու , ու իրենց  
էշերնուն կերակուր տալու :

Երբոր անոնցմէ մէկը իր ամանը  
կըրանարկոր իր էշուն համար կերա-  
կուր հանելու . տեսաւ որ իր տրւած  
տոակը անոր մէջը դրած էր , ան ժա-  
մանակը շատ զարմացաւ ու շուտով  
զնաց իր եղբայրներուն ըստ . ու ա-  
նոնք բոլորն աւ շատ խռովեցան ու  
կասկածով լեցվեցան , թէ կարելի է  
Եղիպտոսի իշխանը կամ ուրիշ մէկ  
չար մարդ մը ըրած ըլլոյ . որ մեր  
կրկին ետ դարձած ժամանակնիտ ա-  
նոնք զողցեր էք ըստելով մեղի ամբաս-  
տանութիւն ընեն : Խորհեցան թէ աս  
աւ մէկ ուրիշ նշան մըն է Վատուծմէ  
եկած , որ մեր առջե ըրած չարու-  
թեանը փոխարէն մեղ պիտի նեղէ ,  
ու ան Վատուծոյ ամենախնամ նա-  
խախնամութիւն է որ աս դիսլուածնե-  
րը ասանկ տնօրինեց իր տհաճութիւնը  
մեղի յայտնելու համար . ուստի մէկ-  
զմիկու հետ խռովեցան ու ըսին աս

ինչ բան է որ Աստուած մեղի ըրաւ :  
 Այն չար խղճմուանք մը Աստուածոյ  
 նախախնամութեան վրայ խորհելով  
 ամեննեին իրեն մխիթարութիւն մը  
 չե կընար զտնալ : Աստուածոյ ամենա-  
 տես աջքը ու ամենախնամ ձեռքը մե-  
 ղաւորներուն մէկ անդադար տառա-  
 պանքի ու նեղութեան մը պատճառ է :  
 Յակոբին տղոցը համար ճամբուն մէջ  
 առաւել ուրիշ բան մը պատահելուն  
 վրայօք չենք գիտէք :

Իրենց տունը հասած ժամանակնին  
 Եղիպտոսի մէջ ինչ որ պատահերեք  
 նէ , բոլորն ալ իրենց հօրը պատմե-  
 ցին , ու երբոր ամենն ալ իրենց ա-  
 մանները կըրանային , կըտեսնային որ  
 ամենուն ստակն ալ իրենց ամանին  
 մէջն էր . ու երբոր իրենք՝ ու իրենց  
 հայրը մէկտեղ ան ստակները տեսան ,  
 բոլորն ալ վախցան : Ու Յակոբ իրենց  
 հայրը անոնց ըստ . « Խա իմ տղաք-  
 ներէս զսկեցիք . Յովսէփը չե կայ .  
 Ոիմօնը չե կայ , ու Ռենիամինն ալ

ոլիսի տանիք . ասոնց բոլորն աւ ինձի  
զեմ բաներ են” :

Արդարեւ Հակոբին աչքին երևաց  
որ բոլոր իր գալու տարիներուն ակըն-  
կալութեանցը վրայ մէկ մութ ամալ մը  
պատնց . առաջ շատ նեղութիւն քա-  
շեր էր , բայց կըկարծէր որ առա-  
մէլ ունի քոշելու : Ինքը Աստուծոյ  
նախախնամութիւնը մոռցեր էր , որ  
կարող է գեշէն աղէկ յառաջ բերե-  
լու , ու իր հօգւոյն դառնութեամբը  
աղաղակեց ըսելով , թէ բոլոր իմտր-  
ոցս վրայ պատահած բաները ինձի  
զեմեն :

Չէր գիտեր թէ աս եղած բաները  
Յովուշի կրկին իր զիրկը ձգելուն , ու  
իրեն ու իր ընտանիքին մխիթարու-  
թեան պատճառները պիտի ըլլային :

Որուբէն իր հօրը թշուառութիւնը  
տեսնալով , Շենիամինին Եղիպտոս  
երթալուն վրայ , ու ինքը անոր սիրտը  
առնելու համար իրեն ըսաւ . իմերկու  
աղաքս մեռցուր . թէ որ Շենիամինը

կրկին քեղի չի ըերեմ . իմ ձեռքս  
տուր ու ես կրկին քեղի կը բերեմ :  
Աս խենդ ու զէշ խօսք մըն էր՝ որ  
Ոտոբէն ըսաւ . ինչու որ՝ ինչ արդա-  
րութիւն ունէր Ոտոբէն իր տղաքը  
մեռցունելու համար հրաման տալու .  
ու թէ որ Շենիամինը կորանցունելու  
ըլլար , ինչ օգուտ պիտի ըլլար Հա-  
կոբին՝ ան երկու մեծ ու անմեղ տղաքը  
մեռցնելէն՝ անոնց հայրը պատժելու  
համար :

Ոտոբէնին զուրցած աս զօրաւոր  
խօսքը Հակոբին մէկ օգուտ մը չըրաւ .  
Երբոր Շենիամինին դատվիլը միտքը  
կը բերէր՝ չէր կընար համբերէլ . ու  
ըսաւ Հակոբ . «Իմ տղաքս ձեղի հետ  
չի պիտի գայ . ինչու որ իր եղբայրը  
մեռած է . ու ինքն ալ մէկ հատիկ մը  
մնացած է՝ ու թէ որ ձեր գացած ճամ-  
բուն մէջը անոր փորձանք մը պատա-  
հելու ըլլայ , ան ժամանակը իմ ծե-  
րութիւնս տրտմութեամք գերեզմանը  
պիտի իջեցունէք” :

Առվը Վանանու երկրին մէջը ա-  
 ռաւել սաստկացաւ, ու վերջապէս  
 Յակոբ ու իր տղաքը ու անոնց ընտա-  
 նիքը Եղիպտոսէն ծախու առած ցո-  
 րենը կերան հատցուցին, և ուրիշ  
 հնարք մը չի կար ցորեն ստանալու  
 բաց՝ ի կրկին Եղիպտոս երթալէն :  
 Ուստի հակոբ հրամայեց որ կրկին հոն  
 երթան . թէ ալէտ իրենք աղէկ դիտէին  
 որ միայն մէկ ճամբայ մը կար, այսին-  
 քըն թէ որ Շենիամինը հետերնին տա-  
 նելու ըլլային, կըսուսային որ Եղիպ-  
 տոսի կառավարը անոնց կերակուր  
 պիտի տար : Հուդա աս բանին համար  
 իր հօրը ըստաւ . թէ ան մարդը (այսին-  
 քըն հովսէփ) մեզի յայտնի զուրցեց  
 որ, թէ որ ձեր եղբայրը հետերնիդ  
 ըրլայ, դուք իմ երեսս չի պիտի տես-  
 նաք : թէ որ մեր եղբայրը մեզի հետ  
 կըխրկեսնէ . մենք ալ կերակուր առ-  
 նելու կերթանք . թէ որ չես խրկեր նէ  
 մենք ալ չենք երթար . ինչու որ ան  
 մարդը մեզի ըստաւ որ, իմ երեսս չի

պիտի տեսնաք , թէ որ ձեր եղբայրը  
հետեւնիդ չըլլայ :

Հիմայ ան յարդի նահապետը ինչ  
անհամարին փորձութեան մէջ մտաւ ,  
ինքը իր տղաքները , ու անոնց ընտաւ  
նիքը անօթութենէն մեռնելու վտանքին մէջն է, ին . թէ որ կերակուր չառնը վեր  
անոնց կեանքը զոհ պիտի ըլլար : Բենիամինը իր կեանքին ոլես  
իրեն շատ սիրելի էր , ու ինչպէս կըրեար ասանկ մէկ սիրելի տղին զատվիլ : Եր հոգւոյն տառապանքէն իր  
տղաքը նախատեց անոնց անխոհեմութեանը համար :

ԱՅակոր ըստաւ ինչու համար ան մարդուն ըսիք որ տակաւին ուրիշ եղբայր  
մալ ունինք որ ինծի ասանկ չարաչար նեղութեան մէջ ձգեցիք :

Անոնք ալ պատասխան տրւին ու  
ըսին . թէ ինչպէս կընայինը ընել ,  
երբոր ինքը յատուկ հարցումներ կընէր հոս մեր տանը վիճակին վրայօք :  
Հարցուց մեղի թէ , «Զեր հայրը տա-

կառին ողջ է՝ ու աշունքօք ուրիշ եղաբայր ալ : Անիք մի՞ ” . ու մենք ալ սրաբտաւորեցանք բոլը անոր հարցում ներւն ովատագիտանքը տալ :

Առաջուց կը սյինք մի՞ դիտնալ որ ան մեղի պիտի ըսէ , թէ Շահնիամինը հետեւնիդ մեկ տեղ Եղիպատոս պիտի բերէք : Տակաւին Շակոք երկբայութեան մեջ էր , ու անիկա խրկելու համար մտքին մեջի խոռովութիւնը չէր անցեր . և իր տղաքը նայեցան որ առաւել անոր աղուչել ու ինքը համոզել պիտք էր , որ իր տղին հրաման տայ հետեւնին տանելու :

Յուղա աս բանը համարձակութեամբ Շակոքին ըստաւ , խրկէ աղանինծի հետ , որ ելլանք երթանք , ու մենք ու դուն ու մեր զաւկընելն ալ ողջ մնան չի մեռնին :

Ան ժամանակը Յուղա իր հօրը ըստաւ , որ ինքը Շահնիամինին վրայ հոգաբարձու պիտի ըլլայ կրկին անիկա ողջ իրեն զառձունելու , ու ըստաւ որ

թէ որ տղան կրկին քեզի չի բերեմ ու  
առջեղ չի դնեմ ան ժամանակը թող  
բոլոր նախատինքը ես կրած ըլլամ .  
ինքն ալ նայեցաւ որ անոնք շատ ժա-  
մանակ կրկորարնցունենկոր ասանկ  
նատելով , ու թէ որ ժամանակին ելած  
ըլլային կարելի է հիմայ Աղիպառա-  
գացած ու կրկին տուն դարձած էին :

### Դ Ե Ռ Ե Խ Ա Յ Ա Ջ Ա Բ Ա

Ի շնորհին երեսուն համար չունենա-  
հաւելիուն պայլ : Արդիուրուի վաստակին  
համար պատրաստութիւն ընծ ընծանելու : չունենա-  
պայլ ճամբայ ելուսու : չունենահաւելու ել-  
ուսուին : Այսուց իշխու յանցանանին վախ պատ-  
բերելու : Յաւեկին բարուիսրարին անոնց հո-  
կու բարեկամունելու :

**Ա** երջապէս չակորին տղոցը աղա-  
շանքը կատարվեցաւ , թէպէտ  
չակոր ինքը յուսահատութեամբ հա-  
ճութիւն տուաւ Տենիամինին երթա-

լուն : Խնքը ըստու , թէ որ հիմայ աւտանկ պէտք է ընել նէ ըրէք , թէ որ իրաւցունէ , ասանկ կըհարկաւորի նէ . որ՝ կամ ձեր ամենքդ անօթութենէ մեռած սիխոի տեսնամ , կամ չենէ իմ ամենէն պղտիկ սիրելի տղէս բաէնիամինէն պիտի զատուիմ որ ձերն ալ եղաբայրն է : Ենիկա կուտամ . զացէք զաւկըներս . բայց կուգեմ որ ամեն ձեր կարողութեանը մէջի եղած աղէկութիւնը ընէք՝ և զիալտոսի կառավարին հաճութիւնը ստանալու համար :

Կարելի է ինքը կրկարծէ , որ անամաններնուդ մէջի դուած ստակնիդ դուք զողցերէք , ու դուք ալ ձեր չի զողնալը պարտիք հաստատել : Ո՞ւրերկրին արդիւնքներէն քիչ մը անոր ընտիր բաներ տաքէք . քիչ մը բալասան , մեղք , համեմ , տաշխն , ընկոյդ , նուշ , ու անոր ընծայ տըլէք , ու առջի տարած ստակներնուդ երկուքին չափ հետեւնիդ առէք , ու ան ետ

բերածնիդ ալ հոն տարէք որ կարելի  
է սխալմամբ անոնք ամաննելնուդ մէ<sup>շ</sup>  
ջը դրված ըլլան . ու անկէ վնաս մը  
չի զայ ձեղի :

**Չեր եղբայրն ալ հետերնիդ տ-**  
**ռէք , ու ելէք զացէք կըկլին ան մար-**  
**դուն , ու ան ամենակարող Արտօնածը**  
**ձեզի ողորմի ան մարդուն առջին . որ**  
**ձեր միւս եղբայրը ու Շենիամին՝ նաև**  
**հետերնիդ խրկէ . թէ որ ես խմաղա-**  
**ներէս զրկըւիմ նէ թող զրկըւիմ :**

**Յակորին տղաքները շուտով ճամ-**  
**բու համար ոլէտք եղած հարկաւոր**  
**պատրաստութիւնները ըրին . ինչպէս**  
**որ հայրերնին ըսեր էր , ու հուզա Շե-**  
**նիամինը իր յատուկ պաշտպանու-**  
**թեանը տակը առնելով , կրկին ճամ-**  
**բայ ելան Վզիսկոս երթալու :**

**Անտարակոյս անսնց մէկզմէկէ զատ-**  
**ուելը շատ սրտառուչ ու աղէտալի**  
**զգացում մը տրւաւ իրենց ծեր հօրք :**  
**Անսնց ամենուն պատուիրելէն ետեւ ,**  
**մանաւանեղ հուզային՝ որ նայի թէ Շե-**

Նիամինին վնաս մը չե պատահի , ու  
ամենակարող Շատուծոյ առաջնոր-  
դութիւնը ու պաշտպանութիւնը անոնց  
համար խնդրելով իր բաժնը վելու օրհ-  
նութիւնը տրւաւ անոնց :

Անոնց կնիկները ու զաւկըները ի-  
ւենց չորս կողմը կայներ էին սէրերնին  
ընդունելու ու նաև մնաս բարով ըսե-  
լու . անոնք մինչեւ որ ան հեռակայ  
բլուրը դարձան՝ լուիկ կայնած ետե-  
նուն կընայէին , ու մինչեւ որ իրենց  
աչվըներնուն բոլորովին չաներեւու-  
թացան նէ՝ ոչ իրարմէ զատվեցան ,  
և ոչ ալ իրենց սեպհական վրաննին  
դարձան : Իր սրտին տրտմութեան  
ամէն մէկ պատճառուր կըհաւտանք ,  
որ չակոր մինակ գնաց իր զգացում-  
ները Շատուծոյ առջին թափեց . ու  
իր զաւկըները անոր նախախնա-  
մութեանը ու օրհնութեանը յանձ-  
նեց , որ ինքը կարող է փրկելու . ու  
աղօթք ըրաւ որ ինքը կարող ըլլայ  
աս փորձութեան ժամին համբերելու ,

ու Աստուծոյ կամքին հնաղանդ ըլլա-  
լու : Ո՞չ վշտացեալ ծեր մարդ . Աստ-  
ուած քեզի համբերութեան ու իր  
կամքին հնաղանդութեան դաստիր-  
ւութիւն մը կուտայ որ դուն սորվիս ,  
թէ ինչպէս պէտք է ամէն բան անոր  
ձեռքը յանձնել : Քիչ ժամանակ  
մնաց որ ան մուլթ ամպերը , որոնք  
կերևան թէ քու աչքիդ առջին տա-  
րածուած են , շուտով ցիրուցան պի-  
տի բլան , ու անոնցմէ ետեւ մէկ  
պայծառ ու վայլուն օր մը պիտի ծա-  
զի քու ճամբուդ մէջը , որ դուն խա-  
ղաղութեամբ գերեզման իջնաս :

Ա երջապէս Հովսէփին եղբայրնե-  
րը Եղիպտոս հասան ու կրկին անոր  
առջեր ելան : Արդեօք Հովսէփ ի՞նչ  
եղաւ . երբոր Շանիամինին երեսը տե-  
սաւ . իր Ուտքէլ մօրը զաւակը . ո-  
րուն հետ մանկութեան ատեննին շատ  
երջանիկ որեր անցուցեր էին , ու որն  
որ քսան տարիէն էվել էր չէր տե-  
սած :

Աս իր սկզբելի եղքօրը դէմքը անց  
եալ ժամանակներուն եղած դաշած  
բաները յիշեցընել տրւաւ հովսէ-  
փին . ու շատ դժուարութեամբ կարող  
էր իր դպացումները զսպելու , որ ին-  
քրգինքը եղքայրներուն չի ճանչըրնէ :

Թակէտ որչափ որ դորովագութ էր  
նէ , այնչափ ալ հաստատուն էր . և  
իր հաստատութիւնը առաւել շատ-  
ցուց . անեանկ ճամբաներ բունեց որ  
զրեթէ անոնց ով ըլլալը ինքը ամենե-  
ին չէր զիտէր :

Աս տեսութիւնը հովսէփ իր եղ-  
քայրներուն հետ ուր տեղ ընելը չենք  
զիտէր . բայց ինչեւիցէ զիտէնք որ իր  
սեպհական տանը մէջ չըրաւ . ինչու  
որ՝ Կատուածաշունչէն կիմանանք թէ  
ան ժամանակը հովսէփ իր մատակա-  
րարին հրամայեց որ իր եղքայրները  
իր սեպհական տունը տանի , ու ամեն  
բան պատրաստէ անոնց ցորեկվան հա-  
ցին համար իր կելած սովորական ժա-  
մին , ու նաև պատուիրեց որ ան հաց-

կերոյթը շատ առատ ու հարուստ ըլ-  
լայ :

Մատակարարը Յովսէփին ըսածին  
պէս ըրաւ , ու երբոր Յակոբին տը-  
ղաքները կառավարին տունը մտան .  
բոլորն ալ վախցան ըսելով , թէ ան  
ամաներուն մէջէն գտած ստակներ-  
նուս համար հիմայ բոլորս ալ պիտի  
դատվինք , ու բոլոր մեր ունեցածնե-  
րէն պիտի զրկըվինք , ու մենք ալ կա-  
ռավարին գերի պիտի ըլլանք :

Արդարեւ թէ որ աս բանը անոնց  
պատահելու ըլլար՝ զրեթէ բոլորին  
ալ ինչ ճշմարիտ հատուցում մը եղած  
պիտի ըլլար իրենց եղբայրը զերիի  
պէս ծախելնուն , ու հօրերնուն ըրած  
անիրաւութեանը ու խարէութեանը  
փոխարէն : Անոնք զիտէին որ ասանկ  
մէկ պատիժի մը արժանի էին . ու զար-  
մանալի բան մը չէ որ անոնք ան պա-  
տիժէն կըվախնային ու կըդողային , որ  
Աստուծոյ արդար դատաստանը ան պա-  
տիժը իրենց վրայ բերէ :

Այսոքելնիդ պահեցիք իմ սիրելի  
դաւկըներս, որ չար խիղճէն՝ ի զատ  
ուրիշ բան մը չի կայ որ մալոս այս-  
չափ կըվախցընէ :

Կատուածաշունչը մեզի կըսէ թէ  
ամբարիշտը առանց մէկուն հալածէ-  
լուն կըփախչի. բայց արդարը առիւ-  
ծի պէս յանձնասլաստան է : Տակա-  
վին իրենք դռանը առջին կայնած ժա-  
մանակին մատակարարին քովը մօտե-  
ցան, ու սկսեցին ինքը ինքնին անոր  
առջել արդարացընել իրենց աման-  
ներուն մէջէն գտած ստակներուն  
համար : Ինչպէս ան ստակները գտան  
նէ սկարագաներով անոր պատմեցին .  
ու ըստին որ՝ անոնք ետ բերեր ենք կըր-  
կին կառավարին տալու : Ես ժամա-  
նակը խռատովանեցան, որ ամենեին  
կարողութիւն չունինք զրուցելու թէ  
ան ստակները մեր ամաններուն մէջը  
ով դրաւ, կամ ինչպէս հոն մտան :

Այստակարարը անոնց խռովութիւ-  
նը տեսնալով ջանաց որ անոնք խաղա-

զացընէ , ու անոնց ըստաւ որ չի վախսան , ինչու որ գէշ բան մը եղած չէ . ու իրենց ալ վնաս մը չի պիտի պատահի :

Կարելի է որ՝ աս մատակարարը Յովսէփին ընտանիքին մէջը ըլլալուն ճշմարիտ Վատուծոյ վրայօք սորված էր . ու ինքն ալ Վատուածապաշտ մարդ մը ըլլար . որևէիցէ անոր խօսած լեզուն , մէկ Վատուծմէ վախցող ու անոր հնազանդող մէկի մը լեզուէն էր : Խաղաղութիւն ըլլայ ձեզի՛ ըստաւ ինքը . մի՛ վախնաք . ձեր Վատուածը ու ձեր հօրը Վատուածը ամաննելնուկ մէջը ձեզի գանձ տուաւ , ես ձեր ստակը առած եմ : Ըսել կուզել որ ցորենի համար ձեր ստակը մէկ անդամ մը իմ ձեռքս հասած է , ու իման ստակները առնելուս խոստովանութիւնը բաւական է ձեր պարկեշտ մարդիկ ըլլալը իմացընելու : Հիմայ անոնք ինչոլէս ձեր ամաններուն մէջը մտնալուն համար պէտքը չէ որ ձեղ նեղէք ,

Ե՞նո՞ք իմ տէրոջմէս կառավարէն իբր  
ընծայի մը պէս պահեցէք կամ թէ  
սեպեցէք որ Շատուծոյ ամենախնամ  
նախախնամութիւնը , որուն որ կը-  
խոստովանիք երկրագելու , ու որուն  
որ ձեր ծեր հայրը կապաւինի իբր  
պարզեի մը պէս ձեղի խրկած է :

### Գ. Լ. ՈՒ Խ. Խ.

Այսօնին բանակն ուսուը բներդնելը : Հայ-  
ուին եղբայրներուն պարզ ընծաները ի-  
րեն պալընին : Հայուին իշ պատցութները  
դժուարս պարզնելը : Իր եղբայրները ի-  
րեն հետ հաց սպանելը : Բայց վեստներնեւն  
մը մուտքանի պատցնելը . . . առնիւս յաստաղ-  
ցունելը - պարագանելնեննիս :

**Ս**իաքերնիդ բերէք որ Այսօնը իբ-  
եղբայրները բենխամինը հետ բե-  
րէլուն համալ , բանտին մշջը պահ-  
ուած էր բայց հիմայ աղասեցաւ , ու  
մատակարարը անիկա միւսներուն քովը  
բերաւ . . . ու բոլորն ալ կառավարին

տունը մտան : Առատակարարը ան ժամանակի սովորութեանը պէս անոնց ջուր տրւաւ որ տոքերնին լրվան , ու նաև իրենց հետը բերած էշերը կերակրեց : Ես միջոցին մէջը հովաէփին եղբայրները հետերնին բերած ծանրագին բաներուն ծրարները արձրկեցին , ու ամեն բանը շտկեցին որ իրենց կողմանէ ու իրենց հօրը կողմանէ մէկ ընծայ մը ընեն անոր :

Աս ընծաները նոյն միջոցին մէջը պատրաստելնուն պատճառը աս էր , որ իրենք գիտէին , որ հովաէփ քիչ ժամանակէն ետ պիտի դառնար կերակուր ուտելու . ու նաև խմացան որ իրենք ալ նոյն տեղը հաց պիտի ուտէին : Երբոք հովաէփ եկաւ ան ժամանակը անոնք իրենց ընծաները անոր արւին . ու մինչեղ ետինը ծռեցան երկրպագութիւն ըրին . ու հիմայ իրերազը զարմանալի կերպով մը կրկին կատարվեցաւ : Են ժամանակը հովաէփ թարգմանին ձեռօքը իրենց ինչ-

պէս ըլլալը հարցուց . ու ըստ որ ան  
ձեր զուրցած ծեր մարդը ձեր հայրը  
ինչպէս է . տակաւին ողջ է՞ մի : Եւ  
նոնք ալ պատասխան տրւին , թէ քու  
ծառադ մեր հայրը լաւ առողջութեան  
մէջ է , ու տակաւին ողջ է . ու գը-  
լուխնին ծռած երկրպագութիւն ըրին  
անոր : Հիմայ հովանէփ յատկապէս իր  
խելքը առւաւել Շենիամինին վրայ  
ըլլալուն համար անոնց հարցուց , իբր  
թէ ամենելին իր ճշմարիտ եղբայրը  
չի ճանչնալու մը պէս . թէ արդեօք  
ձեր ամենէն պղտիկ եղբայրը աս է՞ մի ,  
որուն համար զըռուցէր էիր , երբոր  
առջի անդամին Եղիպատոս եկաք նէ :  
Երբոր անոնք ալ ըսին թէ իսկ նոյն  
մարդն է . Ե՞ն ժամանակը ինքը մէկ  
դորովագութ ծնողքի մը պէս անուշ ու  
համեստ կերպով մը իրեն ըստ , տղաս  
Վատուած քեզի ողորմի :

Իր Շենիամինին վրայ ունեցած սէ-  
րը անանկ շատ էր որ հաղիւ աս խօս-  
քէրը կընայ զուրցէլ՝ երբոր իր զգա-

ցումները բոլորովին ինքը յաղթեցին :  
 Եռաւել ուրիշ խօսք մը չի կընաց  
 զբուցեր էր : Երդարև իր եղբօրնեւ  
 ըուն առջել ալ չի կընաց կայներ էր .  
 ու որչափ որ հնար էր նէ , վազեց իր  
 սենեակը գնաց , ու դառնապէս լա-  
 ցաւ : Աակայն վերջը իր երեսը լըվաց  
 որ չի զիտնան թէ ինքը լացեր է , ու  
 շուտով կրկին ետ դարձաւ . ու հան-  
 դարտութեան աստիճանով մը հրա-  
 մայեց որ անոնց համար պատրաստը  
 ված կերակուրը ներս բերվէ : Յով-  
 սէփ ինքիրենը կերտու . ինչպէս որ ա-  
 սանկ սովորութիւն էր թագաւորին ,  
 կառավարին , և ուրիշ աղնուականնե-  
 րուն : Ոէկ քանի ալ եղիալտացիներ  
 կային որոնք իր ընտանիքին մէկ մասը  
 կըկազմըվէին . կամ թէ նոյն հացկե-  
 րոյթին հրաւիրուած էին . անոնք ալ  
 ինքիրեննին կերան . ու նաև իր եղ-  
 բայըներն ալ դատ ինքիրեննին :

**Աստուածաշունչը մեզի կըզբուցէ**  
**թէ աս զատ ուտելուն պատճառը աս**



Յովսէփին՝ իր զգացումներէն յաղթըլելով  
առանձին՝ իր սեննեակը դառնալը :



էր որ իրենց մէջը մէկ գարշութիւն  
մը կար . ( որ շատ ատելի ու գէշ  
բան մըն էր Ազիալտացւոց կարծիքովը  
իրենց աղջերուն մէկը Աբրայեցիի մը  
հետ հաց ուտելը :

Ոմանք կըկարծին թէ աս բանը Ա-  
զիալտացիններուն եղի , ու ուրիշ կեն-  
դանիններու երկրագութիւն ընելէն  
ելաւ , որ Նըանէրը նոյն կենդանիննե-  
րը կըմորթէին ու կուտէին . ու նաև  
զոհ կընէին . ուրիշներն աւ կըկար-  
ծին որ Աբրայեցինները հովիւ ըլլալ-  
նուն համար Ազիալտացինները անսոնք  
գարշելի կըսեպէին . ու աս մարդիկ-  
ներէն շատերը Ազիալտոսի վրայ յար-  
ձըկած բնակիչներուն շատ անիրաւու-  
թիւն ըլլած էին : Խելապէտ Ճշմարիտ  
պատճառը ստուգվիլը անհնարին բան  
է . աս բանը շատ ժամանակ առաջ  
պատահէլուն անոր Ճշմարիտ պատ-  
ճառը ստուգելը դժուար բան է :

Երբոր Յովսէփին եղբայրնները հա-  
ցի նստելու վրայ էին . Յովսէփի խնդ-

բեց որ իր ուղած կարգովը նատին , ու  
նատելնուն ետև երբոր իրարու վրայ  
նայեցան ու տեսան որ Ճիշտ իրենց  
տարիքներուն կարգովը նատերէին ,  
Ուռբէնէն սկսեալ մինչև Տէնիամինը  
շատ զարմացան :

Արդարեւ աս շատ զարմանալի բան  
մը երեաց անոնց , ու բոլորն ալ աս  
բանին պատճառը չէին կրնար հաս  
կընար : Հովսէփին առջին շատ տե  
սակ կերակուրներ դրուած էր ինչպէս  
որ սովորութիւն էր . Հովսէփ անոնք  
բոլոր իր չորս կողմի մարդիկներուն  
բաժնեց : Երբոր Հակոբին տղաքնե  
րը իրենց ամեն մեկուն խրկըւած կե  
րակուրներուն շատութեանը վրայ նա  
յեցան՝ կրկին զարմացան երբոր տե  
սան , որ Տէնիամինինը հինգ անդամ  
իրենց ունեցածէն էվելի էր :

Անոնք նոյն հացկերոյթը վայելի  
ցին , ու Հովսէփին հետ զինի խմելով  
շատ ուրախացան , ինչպէս որ դրուած  
է Աստուածաշոնչին մեջք : Ուկալիտ

ասկէ, ամենեն ին կարծէլու չենք որ  
անոնք շափէ դուրս գինի կրխմեին .  
թէ որ ժամանակ ունենայի իմ սիրելի  
դաւկըներս , հոտ տեղ քիչ մը պիտի  
կայնէի , ու բարեխառնութեան վրայօք  
ձեզի քիչ մը բան ըսէի , որ ինչպէս  
պէտք է բարեխառն ըլլալ ուտելուն  
ու խմելուն մէջ : Ե՞ն ձեզի լաւ ա-  
ռողջութիւն , աղէկ բնաւորութիւն ,  
քաջ մոտաց որոշում կուտայ . ու քանի  
որ մեծնալու ըլլաք , ձեղ օգտակար  
ու երջանիկ մարդիկներ ընելու կր-  
պատրաստէ :

**Չեր օրինակը անդամմէկ երջանիկ**  
զօրութիւն մը պիտի ունենայ՝ ձեր  
եղբայրներուն , քուրերուն , ու ընկեր-  
ներուն վրայ : Ամէ որ բաւական մեծ-  
ցած էքնէ , կը ուսամ որ արդէն ջա-  
նալու սկսած էք ուրիշները բարե-  
խառնութեան առաջնորդելու . ու  
անբարեխառնութեան նեղութիւնները  
աշխարքէն վերցնելու :

**Աղէկ դիտցէք որ անբարեխառ-**

Նութիւնը մարդուն իրեն՝ իր ընտանիքին ու բոլոր աշխարքին մեկ անեծք մընէ, բայց ընդհակառակը, բարեխառնութիւնը մարդուն առողջութիւն, ոյժ, մտքին պայծառութիւն ու լուսաւորութիւն, ժրութիւն, զուարթութիւն, ու խղճմանքի խաղաղութիւն կուտայ, որոնք ձեզի առաստ մեկ հատուցում մը պիտի ըլլան՝ ձեր անձը քիչ մը անբարեխառնութենէ, ևտ պահելով :

Գ. Լ. Ա. Խ. Խ. :

{Յաշեհին Եղբայրները իրին ճամփուց եւ  
ըստին իրենց պահը Երկարը համար : Եթ  
եղածիւրագին անոնց պաջին իրրելը , ու իր  
առջևին գիշեհին ըստը հազար եւ շատը  
անոնց անբարեկանութիւն ընելը : Այս լաւագին  
ինը ըստը : Ուստի Աշեհին ամոնին մը  
իւ գործութիւնը : Այսոնց ըստը իւ դաստիւթիւնը ,  
ու {Յաշեհին պաջին եւստը իւստը : {Յաշեհին  
իւստը լաւագին իրենց յանուանելին համար :  
{Յաշեհին ինը համար պատճենի ընելը :

**Յ**ավեփին Եղբայրները միտքերնին  
զրեր էին , որ ետկի առտուն Ճամ  
բայ Ելեն տուն Երթալու . իրենց հե  
տը տանելու ցորենը պատրաստելու  
վրայ ըլլալով , որ մատակարարին  
պարտքն էր՝ {Յավեփի հրամայեց անոր  
որ անոնց ամանները տարածներնուն  
չափ լեցընէ . ու ամեն մէկուն ցորե  
նի համար վճարած առակնին ալ , ի  
րենց ամաններնուն բերանը դնէ : Ու  
մատակարարին հրամայեց որ նաև իր

արծաթէ զինիին թասը առնէ որ յա-  
տուկ իրեն համար կըզործածէր ու  
բմնիամինին ստակովը մէկ տեղ անոր  
ամանին բերանը դնէ :

Հոլոր աս բաները մատակարարը  
ըրաւ, առանց չովսէփին եղքայլնե-  
րը գիտնալով . ետկի առտուն կանուխ  
արշլուսին ժամանակը ճամբայ ելան :

•Քիչ մը ճամբայ երթալնուն ետև,  
որ տակաւին քաղաքէն շատ հեռու-  
ցած չէին, չովսէփ հրամայեց իր մա-  
տակարարին, որ անոնց ետևէն վա-  
զէ, ու առջենին կտրէ, ու անոնց  
հարցունէ . թէ ինչու համար ան չա-  
րութիւնը բրին իրեն ըրած մարդա-  
սիրութեանը փոխարէն : Ա,աե Յով-  
սէփ անոր ըստ որ՝ աս խօսքը դրու-  
ցելէն ետև անոնց ամբաստանութիւն  
մ'ալ ընէ կառավարին զինիին թա-  
սը գողցէր եք բաելով . ու նաև ա-  
պսպրեց որ ասանկ զրուցէ . աս ան թա-  
սը չէ մի, որուն մէջէն իմտէրս զի-  
նի կրիսմէր ու նաև անով կըհմայէր  
աս ըանը ընելնիդ շատ զէշ ըրիք :

Ոմանք կըխորհին թէ Ազիսլտացին  
ները՝ որոնք որ շատ աւելորդապաշտ  
մարդիկներ էին, կըկարծէին որ մեկ  
քանի մարդիկ անանկ թասեր ունեին,  
կամ թէ միայն աս կառավարին ունե-  
ցած թասը անանկ կարողութիւն մը  
կուտար որ մէջը նայադները պատա-  
հելու բաները առաջմանէ կըտիս-  
նային, կամ թէ անցած գայած բան  
մը ու մեկու մը բամձը կամ ըրածը  
կըդիտնային։ Շատերը կըխորհին թէ  
աս բառը որ մեր Վատուածաշունչին  
մէջը հմայել թարգմանված է վերի  
նշանակութիւնը ունի. բայց ուրիշնե-  
րը կըկարծէն թէ նոյն բառը մէջէ  
մէջ վնասուել ալ կընշանակէ։

Անոնք կըխորհին որ մատուկարարը  
Յովսէփէն հրամայեալ էր ան իր գե-  
ղեցիկ բաժակը դողթեր էք ըսելով՝ իր  
եղբայրները ամբաստանելու. ու ո-  
րուն համար (ինչպէս որ պիտի կար-  
ծէին) ինքը շատ զգուշութեամբ ու  
արթնութեամբ պիտի վնասուե,

Հմայէ ,ու անիկա ով զողնալը անշուշտ  
պիտի դտնայ : Ինձի կերեայ թէ , ան  
բառին կըկին նշանակութեանը՝ վեր-  
ջինը Ճշմարիտ է :

Մատակարարը հովսէփին բանձին  
պէտ ըրաւ , ու հովսէփին եղքայրնե-  
րը աս խօսքը լսածնուն պէտ՝ ինչպէս  
զարմանալնին դուք ձենէ կլնաք իմա-  
նալ :

Անոնք ալ իրենց աս բանին վրայ  
ունեցած զարմանքնին սկսեցին նկա-  
րագրել , “Ո՞մչու համար մեր տէրը աս  
խօսքերը կըզրուցէ” լսին անոնք ,  
քաւ լիցի որ քու ծառաներդ աս կերպ  
բան ընեն . ահա ան ստակը որ մենք  
մեր ամաններուն բերանը զտանք՝  
կըկին Վանանու երկիրէն ետ բե-  
րինք քեղի , ուրեմն ինչպէտ կընայ  
ըլլար որ քու տիրոջդ տունէն արծաթ  
կամուկի դողնանք . քու ծառաներուդ  
որուն քովը որ ան դտնըմելու ըլլայ ,  
ան թնդ մեռնի , ու մենք ալ մեր տի-  
րոջը գերի կըլլանք : Մատակարարը

անոնց ըստ որ ես ասանկ ձեր խօսքը  
կըքունեմ թէպէտ ինքը անոնց ըստածին  
պէս անողորմաբար չի պիտի վարվէր  
անոնց հետ, ըստ թէ՝ որուն քովը ան  
թառը որ դտնըվելու ըլլայ ան իմ ծա-  
ռաս ոլիտի ըլլայ, ու դուք անպարտ  
ոլիտի ըլլաք: Ետքը ամաններնին վար  
առին, ու բացին որ փնտուեն. Մա-  
տակարարը ամենէն մեծէն սկսեց, ու  
վերջապէս յանխամինին ամանին մե-  
ջէն թառը դտնըվեցաւ:

Ան իրենց քովին ելլելուն համար,  
իրենց դարմանքը ու տրտմութիւնը  
այնչափ շատցու, որ հաղիւ կընային  
ապրիլ. հանդերձնին սլատուտեցին,  
ինչպէս որ առջի ժամանակները արտ-  
մութեան համար սովորութիւն էր.  
ցորենին ամանները կըկին էշերնուն  
վրայ բեռցուցին ու մատակարարին  
հետ քաղաքը դարձան: Երբոր կա-  
ռավարին տունը մտան, ու անոր առ-  
ջեր ելան, ամենը մեկին զետինը ծը-  
ռեցան ու անոր երկրագութիւն ը-  
րին:

Ու երբոր ստքի վրայ ելան անոնց հարցուց , թէ ինչո՞ւ համար իմ թասս առիք տարիք . չէ՞ք կարծէր մի . որ ինձի պէս մէկ մարդ մը կայ որ ամեն տեսակ իշխանութիւնը իր ձեռքը ունի , զգուշութեամբ անիկա փնտուելու ու հմայելու , այսինքն՝ հաստատութեամբ անիկա առնողը որոշելու :

Յուղա իր եղբայրներուն տեղը աս խօսքին պատասխանեց , ի՞նչ ըստնք մեր տիրոջը , ի՞նչ խօսինք կամ ի՞նչ պէս հասկցունենք մեր յանցանք չունենալը : Վատուած քու ծառաներուդ անիրաւութիւնը յայտնեց . ահա մենք ու ան որուն քովը որ թասը գտնըվեցաւ քու ծառաներդ ենք :

Կերեւայ թէ հաղիւ Յուղա մէկ յոյս մը ունէր , որ ինքը կարող պիտի ըլլար իրենց անմեղութիւնը հատառելու . կընար կարծէր գուցէ Ինիսիամինը անիկա գողցած ըլլայ : Իայց հաւանական է որ առաջ ալ ասոր նըման ըան մը իրենց պատահելուն հա-

մար Հոռովան կարծեց թէ անոնց բոլորն կոռավարին կամ ուրիշ մարդու մը մէկ ձեն է . որ անոնք նեղութեան ու վտանգի տակ ձգեն որ սաստիկ պատժը լինի :

Ասոր համար Հոռովան յուսահատութեան կերպով մը խոստովանեցաւ , որ իրենք բոլորն ալ յանցաւոր են : Կարելի է թէ ինքը կը յուսար , որ աս կերպով բենիամինին կեանքը կը նար փրկել , որուն համար ինքը երաշ խաւոր էր եղեր իր հօրը : Ու նաև կը խորհէր որ՝ թէ որ ինքը զինին բոլորովին կառավարին զթութեանը յանձնելու ըլլան , ու խոնարհութեամբ իրենց յանցանքը խոստովանելու ըլլան , կարելի է կը համոզիլի . ու քիչ պատիճ կը նէ , ու իրենք շուտով մեռցընելու տեղը բանտին մէջը կը պահէ . ու աս ճամբով ժամանակ կունենան հնարք գտնալու իրենց անմեղութիւնը հաստատելու համար :

ԳԼՈՒԽԸ. ԵՐ:

ՀՅԱՆԴԵՔ ՊԱՏԻՄԱՀԻՆ ԵՐ ԵՎԸ ՊԵՐԱՆՆԵՐԸ ԵՐԱԲԱԿ-  
ՔԵՄՆ ԹԵՂ ՊՐՈՒԴԵԼ: ԻՐ ՌԵՆԵԿԱՆ ՋԱՐԱՀԻՆ ՀԱ-  
ՐԱԿ ԲՈՒԺԱԿԱՆ ՊՐԺԱՆԻ ԸՆՈՒՆԵՐԸ: ԻՐԵՆ՝ ՀՅԱ-  
ՆԴԵՔ ՊԱՏԻՄԱՀԻՆ ՊՐՈՒԴԵԼ: ՀՅԱՆԴԵՔ ՊԱ-  
ՏԻՄԱՀԻՆ ՊՐՈՒԴԵԼ:

**♦** ու տեղ Յովսէփ ուրիշ պատե-  
հութիւն մըն ալ ունեցաւ իր եղ-  
բայրները պատմելու, որոնք որ իր  
իշխանութեանը տակն էին:

Ալինար որ նոյն բաժակը զողնալնուն  
մասնաւոր յանցանքը թողուլ, ու ա-  
ռաւել խորին յանցանքով մը անոնք  
յանդիմանել, այսինքն՝ իրենց եղբայրը  
զողնալնուն ու գերիի մը պէս ծախել-  
նուն համար: Ու որ ասիկա ուրանա-  
լու ըլլային ու հաստատէին ինչպէս որ  
իրենց հօրը ըրին Յովսէփը մեռաւ ը-  
սիլով, ան տեղը կարող էր, իրենց  
ստութիւնը առջևնին դնելու, ու ա-  
նոնք մեծ խայտառակութեան ու եր-  
կիւղի մը մեջ ձգելու: Ու որ անոր

սրտին մէջը ասանկ մէկ բնաւորութիւն մը եղած ըլլար , ինչպէս սաստիկ ու արդար յանողիմանութեամբ կրնար անոնք նեղել ու իր ոխը անոնցմէ առնել , ու իր վրէժը կատարեալ հաճեցնել :

Սակայն իր անոնց վրայ ունեցած զգացումը շատ տարբեր էր , ու թէ որ անոնք առաւելերկրայութեան մէջ պահելու ըլլար , առաւել կրնար անոնք ապաշխարութեան տակ բերել . բայց ինքը ասանկ ըրաւ , որ իր ներող ու ազնուաբարոյ բնութեամբը տեսնան , ու անոնց ձանչը նել տայ Վատուծոյ նախախնամութիւնը որ անոր վրայ զարմանան թէ ինչպէս աներազները կատարելութեան հասցուց որոնց համար այնչափ իրենք բարկացեր էին . որ արդէն նոյն երազներէն այնչափ աղէկութիւն եկած էր իրենց ու իրենց սկասուաւոր հօրը՝ ու բոլոր անոնց ընտանեացը :

**ԱԿԵՂԾ շատ դժուար է ըստ ամե-**

Նայի զիտնալ թէ արդեօք չովսէփ  
ինչ ըրաւ իր եղբայրներուն քովը ե  
ղած ատենը : Ո՞ենք աս բաներուն  
վրայօք բոլոր պարագաներով չկյ  
տենք , անոնց շատերը Վասուածա  
շունչին մէջը դրուած չեն :

Չովսէփ ինչ որ ըրաւ նէ , խորհե  
ցաւ թէ լաւ պատճառ ունէր իր ըրա  
ծին . ու ճշմարտաբար կուզէր , որ  
իր կարողութեանը մէջ եղած աղէկու  
թիւնը իր եղբայրներուն ու հօրը ը  
նէ . ինչպէս որ առանց տարսկուսի  
մեր տեսածներէն պիտի մակարերէնք ,  
թէ որ քիչ մ'ալ առաջ երթանք իր  
պատմութեանը մէջ :

Թաէ որ խաբէութեամբ սուտ շինե  
լու համար մէկ բան մը ընէր կամը  
սէր , ( այսինքն՝ թէ որ չեղած բանի  
մը եղաւ , կամ թէ եղած բանի մըն ալ  
չեղաւ ըսէր , ) ան ժամանակը գէշ ը  
րած կըլլար . ու ինքը ինքն ալ չէր  
կընար արդարացունել : Ուրեիցէ ա  
նիկա պարզմութեամբ դատնք միտ-

քերնիս բերելով , թէ ինչպէս զէշ ու  
ասիրատ մարդիկներու հետ կեանք  
կըվարէր . ու ինչպէս կըվախնար որ  
ըլլայ թէ իր ով ըլլալը դիտնան , ու  
բոլոր իր ծեր հօրը , իր սիրելի բե-  
նիամինին , իր եղբայրներուն , ու բո-  
լոր քերբոնի մէջի իր աղջականնե-  
րուն ընտանեացը համար ունեցած ա-  
ղէկութեանը դաղափարները կոր-  
սրվին : Հիմայ պիտի տեսնանք հով-  
սէփին տըւած պատասխանը հուղայ-  
ին : Կարծեմ միտքերնիդ է որ հուղա-  
հովսէփին բաեր էր թէ մենք բոլորս  
ալ քու ծառաներդ ենք . որ հովսէփ  
կընար անոնց բոլորն ալ բանտին մէջ  
պահել . իբր մէկ պատիժ մը ըրած  
յանցանքնուն համար :

Քաւ լիցի , բառ հովսէփ որ ես ա-  
սանկ բան մը ընեմ . բայց ան բաժակը  
որուն քովը որ գտնըլեցաւ , ան իմ  
ծառաս պիտի ըլլայ , ու դուք ալ ե-  
լէք խաղաղութեամբ ծեր հօրը դա-  
ցէք :

Բայց արդարեւ աս մէկ սաստիկ  
փորձ մըն էր չօտղային՝ որ ինքը հաս-  
տատուն խօսք տրւած էր իր հօրը, որ  
ամենեւին Շահնիամինին վնաս մը չի պի-  
տի պատահի . ու ապահովութեամբ  
անիկա նորէն քերըն ոլիտի տաներ :

Հիմայ ի՞նչ ըսէ կամ ի՞նչ ընէ, ժա-  
մանակը անցած է որ իր եղբօրը անմե-  
ղութիւնը հաստատէ . ինքը խոստո-  
վաներ էր որ Շահնիամինը, միւսնե-  
րը ու ինքը ամենը մէկտեղ յանցա-  
ւոր էին :

Եզիալտոսին մէջ ամենն ալ օտա-  
րական էին, բոլորովին մէկու մը գօ-  
րութեանը տակ՝ որն որ իշխանու-  
թեամբ թագուորին երկրորդն էր .  
միջնորդ կամ բարեկամ չունէին, ու  
անանկ ծանր յանցանքով մը իրենց  
խոստովանութեամբը յանցաւոր ե-  
ղած էին :

Թէ որ աս յանցանքը միայն Շա-  
հնիամինին վրայ մնալու ըլլար, ի՞նչ-  
պէս որ հաւանական էր թէ պիտի մը-

նար, հոն գերի պիտի ընէր անիկա .  
ու ալ ամենեւին ՚Վերլոն չի պիտի  
դարձնէր . ու անանկ հակոբին ծե-  
րութիւնը տրտմութեամբ գերեղմանը  
պիտի իջեցընէր :

Երբոր աս շփոթեալ ու յուսահատ-  
եալ վիճակին մէջն էին, չուզա սըր-  
տառուչ խօսքերով ելաւ՝ ու ըստ .  
կաղաչեմքեղի ովլ իմ տէրս, թողրւ-  
թիւն ըրէ, որ քու ծառաղ մէկ խօսք  
մը ըսէ քեղի, ու քու բարկութիւնդ  
թողլ չի բորբոքի քու ծառայիդ դէմ,  
ինչու որ դուն ալ ֆարաւոնին պէս ես՝  
ու թաղաւորին հետ հաւասար իշխա-  
նութիւն ունենալուդ համար շատ կը-  
դողամես քու առջեղ :

Իմ տէրս . դուն հարցուցիր քու  
ծառաներուդ թէ հայր կամ եղբայր  
ունի՞ք մի . ու մենք ալ մեր տէրոջը  
ըսինք որ մէկ ծեր հայր մը ու մէկ ալ  
պղտիկ եղբայր մը ունինք որ իր ծե-  
րութեան դաւակն է . ու անոր եղբայրն  
ալ մեռած է, ու իր մօրմէն մէկ հա-

տիկ մը մնալուն համար՝ հայրը անիկա  
շատ կըսիրէ :

Ու դուն ալ քու ծառաներուդ ը-  
սիր, որ անիկա հետերնիդ բերէք որ  
տեսնամ. ու մենք ալ մեր տիրոջը  
ըսինք որ տղան իր հայրը չի կընար  
ձգեր. ինչու որ թէ որ ան իր հայրը  
ձգելու ըլլայ, հայրը պիտի մեռնի.  
ու դուն ալ քու ծառաներուդ ըսիր  
որ, թէ որ ձեր պզտի եղբայրը հե-  
տերնիդ չի բերէք, ալ իմերեսս չի  
պիտի տեսնաք :

Վ երջապէս երբոր քու ծառայիդ  
մեր հօրը գացինք, մեր տէրոջը զըու-  
ցածները անոր զըուցեցինք. ու մեր  
հայրն ալ ըսաւ որ կըկին գացէք,  
ու մեզի քիչ մը կերակուր ծախու ա-  
ռէք. մենք ալ ըսինք չենք կընար  
երթալ. թէ որ պզտի եղբայրնիս մեր  
հետը դալու ըլլայ, ան ժամանակը  
կերթանք. ինչու որ՝ ան մարդուն  
երեսը չի պիտի տեսնանք, թէ որ մեր  
պզտի եղբայրը հետերնիս չըլլայ : Ու

քու ծառադ մեր հայրը մեզի ըստ .  
դուք զիտէք որ իմ կինս երկու տղայ  
բերաւ մէկը ձեռքէս ելաւ ու ըսի որ՝  
անշուշտ փարատվեցաւ . ու ան ժա-  
մանակէն հետէ չի տեսայ . ու թէ որ  
աս ալ առնելու ըլլաք . ու վտանգ մըն  
ալ ասոր զլխուն գալու ըլլայ նէ , ան  
ժամանակը իմ ծերութիւնս տրտմու-  
թեամբ զերեզմանը պիտի իջեցընէք :

Անոր համար թէ որ հիմայ ես քու  
ծառայիդ հօրը առանց տղին երթալու  
ըլլամ . որուն կեանքը տղին կեանքին  
հետ կապուած է , ու տեսնայ՝ որ տղան  
մեր հետը չէ , անատենը ինքը պիտի  
մեռնի , ու քու ծառաներդ մեր հօրը  
քու ծառայիդ կեանքը տրտմութեամբ  
զերեզմանը պիտի ինչեցընենք . ինչու  
որ ծառադ երաշխաւոր եղայ անոր  
հօրը ըսելով թէ , այսէ որ տղադ կըր-  
կին քեզի չի քերեմ ան ժամանակը  
յաւիտեանս քու քովլ մեղապարա-  
ըլլամ” :

Անոր համար հիմայ կաղաչեմ՝ քեզի

որ տղին տեղը ծառադ զերի բլլայ , ու  
ամ իր եղքայրներուն հետ եթեայ . ին-  
չու որ իմ հօրս երեսը ինչպէս պի-  
տի նայիմ . գուցէ մեկ չար մը պիտի  
պատահի անոր :

### Գ. Ե. ՈՒ Խ. Խ.:

Հայութեան ինուս պէհուս իր եղքայրներուն  
ճանչցը նեւը : Անոր իր եղքայրներուն պը-  
սցծները : Անոնց յունցանուներուն լոռու-  
թիւն առըլը : Ժայռութեան պարբուժը : Արդեւ-  
իտրդացողը առ հոգին սոնի՞ մի :

**Յ**ուղային աղաչանքը ոչինչ տեղը  
չի դնաց . ինչու որ հովսէփ երբոր  
իր եղքօրը զբուցածը լոեց , մայլը՝  
տունք՝ քերքըն , Ախւքէմ , Դօ-  
թայիմ ասոնց բոլորը մեկտեղ սրտա-  
ռուչ յիշատակութեամբ շուտով  
միտքը եկաւ : Ամենելին չէր ուղեր ,  
որ իր ծեր հօրը ասանկ մեկ նեղութիւն  
մը պատճառելու բան մը ընէ , որ ա-

նոր ծերութիւնը տրտմութեամբ դե-  
րեղմաննը իջնայ : Մինչև որ Հուզա  
իր խօսքը լմնցուց , Հովսէփ անշունչ  
մտադրութեամբ մտիկ ըրաւ . անոր  
սիրտը լեցվեցաւ . ինչպէս որ դէմքէն  
ու ձայնէն կերեւար . երբոր չի կրցաւ  
առաւել իր զգացումները զսպել՝ հը-  
րամայեց որ եղբայրներէն՝ ի զատ բո-  
լորն ալ դուրս ելլէն , ու ըստծին պէս  
ըրին :

Անժամանակը Հովսէփ արցունք-  
ները վաղելով բարձր ձայնով սկսեց  
լաւ . ու անանկ ձայնով լացաւ , որ  
տանը միւս կողմէրէն անոր ձայնը լսե-  
ցին . և երբոր անոնք աս զարմանալի  
վիճակին մէջն էին իր եղբայրներուն  
բատ . Հովսէփը ես եմ . տակաւին  
հայրս ողջ է՞ մի . անոնք ալ դարմա-  
նալնուն պատասխան չի կրցին տաւ :  
Ենշուշտ Ազգիալտոսի կառավարը  
առջենին կայնած տեսնալով , շատ  
զարմացած պիտի ըլլային :

Եւ Հովսէփ իր եղբայրներուն բատ .

Կաղացեմ՝ ձեզի մօտս եկե՛ք . ու անոնք  
ալ քովը դացին , ու ինքն ալ ըստւ .  
Ես եմ ձեր եղբայրը հօվաէփիը , որ Եւ-  
զիպտոսին մէջը ծախեցիք , հիմայ  
անոր համար մի՞նեղանաք , ու ինքի-  
բեննիդ մի՞ բարկանաք՝ որ դուք ինձի  
հոս ծախեցիք . ինչու որ Վատուած  
ձեր առջեւէն ինձի հոս խրկեց , որ  
կեանք փրկեմ , ինչու որ երկու տարի  
է , որ աս երկըին մէջը սով կայ . ու  
տակաւին հինդ տարի ալ կայ . ուրուն  
մէջը սերմ ցանելով ալ հունձք չի  
պիտի ըլլայ : Ու Վատուած իս ձենէ  
առաջ խրկեց , որ ձեզ ու ձեր զաւ-  
կըները աշխարքին մէջը պահպանեմ .  
ու ձեր կեանքը աղատեմ :

Վնանկ ալ դուք չէիք , որ իս հոս  
խրկեցիք , հաղա Վատուած էր որ իս  
Փարաւոնին հայր ըլլաւ , որ ան խրա-  
տեմ , ու հայրական խնամով իր պաշ-  
տօններուն վրայ հող տանիմ , ու իր  
տանը վրայ տէր ըլլամ , ու բոլոր Եւ-  
զիպտոսի երկըին մէջն ալ կառա-

վար : Ը ուտ ըրէք իմհօրս դացեք ու  
անոր ըսէք . ասանկ կըսէ քու տղադ  
հովակէփը . Վ ստուած իս բոլոր Եղիպ-  
տոսին մէջը տէր ըրաւ , Թռղ չուշա-  
նայ ինձի գայ , ու զուն Գևսեմի երկ-  
ըին մէջ պիտի բնակլիս , ու դուն ու  
քու տղաքդ ու թոռներդ ու առջառ-  
ներդ ու ոչխարներդ ու ինչ որ ունիս  
նէ ; ինձի մօտ պիտի ըլլան :

Եւ հոն ես քեզ պիտի կերակրեմ ,  
ինչու որ տակաւին հինդ տարի սով  
պիտի ըլլայ . դուցէ դուն ու քու ըն-  
տանիքդ ու բոլոր ինչ որ ունիս նէ  
աղքատութիւն պիտի քաշեն :

Ու ահա ձեր աչքը ու իմ եղբօրս  
Տենիամինին աչքը կրտեսնայ , որ ան  
իմ բերանա է , որ ձեզի հետ կրխօսի .  
և բոլոր Եղիպտոսի մէջ ունեցած  
փառքս , ու բոլոր ինչ որ տեսաք նէ  
հօրս պատմեցէք . ու շուտ ըրէք գա-  
ցէք և իմ հայրս հոս բերէք : Եւ  
հովակէփ Տենիամինին վիզին վրայ ին-  
կաւ ու լոցաւ . ու Տենիամինն ալ ա-

նոր վրայ ինկաւ ու լացաւ . նաև բոլոր իր եղքայրները պագաւ ու անոնց վրայ լացաւ , ու անկէ ետև իր եղքայրները իրեն հետ խօսեցան :

Աս ի՞նչ օգտակար ու աղդու օրինակ մըն է , իմ սիրելի դաւկընիր . Վստուած անիկա ձեր վարժութեանը համար Վստուածաշունչին մէջը դրաւ : Վրդարե դուք անկէ շատ օգտւտ կընաք քաղել : Վղէկ միտք դրէք զովսէփին վարքին . վասն զի արժանի է , որ դուք անոր վարքին նմանիք : Իր եղքայրները իր առջին կայնեցան , որոնք որ շատ վնասներ ու դէշ բաներ ըրեր էին իրեն . վերջապէս զիտցան որ ան Նուպտոսին հզօր կաւավարը իրենց եղքայրն է եղել . որն որ այնչափ դառնաբար ու անողորմաբար ատեր էին : Վրդեօք իրենց ըրած ան մեծ յանցանքը ի՞նչպէս առջևնին եկաւ . ի՞նչպէս անտրդ ու ամօթով եղած պիտի ըլան անոր առջին , ու արդեօք ի՞նչպէս արդարութեամբ կըխողիէին

որ անոր սաստիկ յանդիմանութեանը  
արժանի էին : Կարելի է որ անոնք  
յանդիմանվելու բայց ունէին , իբր ի-  
րենց մէկ թեթև պատիժ մը թէ և ու-  
րիշ պատիժ մաւ ընելու ըրլար . ովհ  
որ արժան էր իրենց ըրած չարութեա-  
նը փոխարէն :

**Ա**րդեօք անոնց սիրուը որչափ զար-  
մանքով լեցուած պիտի ըրլար . երբոր  
կըտեսնային թէ՝ բոլոր ասոնց տեղը՝  
իրենց վնասեալ եղբայրը իրենց մար-  
դասիրութիւն ընելու կաշխատէր , ու  
ամենեին անոնք չէր մեղաղրեր . ե-  
միշտ կաշխատէր որ անոնց ըրած չո-  
րութեան խորհուրդներուն յիշատա-  
կութիւնը Վատուծոյ ամենողորմ նա-  
խախնամութեանը դարձընէ , որ նոյն  
նախախնամութեամբը Վատուած ինքը  
տիրապետէր էր Հովհակին իրենց ու  
իրենց հօրը՝ ու անոնց ընտանեացը ա-  
ղէկութեանը համար ՚

**Կ**արելի է Հովհակի աս մասին չա-  
փէն էլեւ քաղցր էր թեպետ ինքը

պիտէր , որ ուրիշ առաւել յարմար ժամանակ մը պիտի ըլլայ , որ անոնք բոլոր ըրածներնուն վրայ պիտի մը տմրտան : Ինքը կուղէր որ անոնք գիտնան , թէ ինչպէս աղատաբար ու բոլորովին անոնց յանցանքին թողութիւն ըրած է : Ու թէ որ անանկ մէկ բան մը ըլլար որ անոնք խորին ապաշխարութեան պիտի առաջնորդ էր իրենց ըրած յանցանքին համար , անշուշտ ասանկ մէկ եղբօր մը բարի ու աղնիւ վարք մը պատճառ պիտի ըլլար , որն որ այնչափ անողորմաբար վնասեր էին :

**Արդեօք ձեզ վնասողներուն վրայ ինչ զգացում ունիք ու անոնց հետ ինչպէս կրկարվիք :** Աըյուսամ թէ մէկն ալ ձեզի մէկ վնաս մը ըրած չէ , ան վնասին պէս որ չսպաէփին եղբայրները իրենց եղբօրը ըրին :

**Ինքը ամենեին վրէժխնդրութիւն ընելու միտք չունէր , ու չէր ալ ու զէր որ անոնց մէկ վնաս մը լնէ , ու**

բռնք զի՞նքը այնչափ վնասեր էին . . տ  
սոր ներհակը կուղէր որ որչափ կարօ  
դութիւն ունէր նէ անոնց աղէ կութիւն  
ընէ՝ ըրած չարութիւններնուն փոխա  
րէն : ‘Նաև նայեցէք թէ ինչ մարդա  
սէր՝ աղնիւ՝ ու բարի կերպով ան իր  
զգացումները անոնց ցուցուց : Հովսէփ  
անոնց ըրած չարութեանը ու անդը  
թութեանը վրայօք ամենելին մէկ խօսք  
մը չըրաւ , ու չուրախացաւ ալ որ ա  
նոնք իր իշխանութեանը տակը ինկան ,  
ու անոնց յանցանքին ալ թողութիւն  
տալը իրեն մէկ պարծանք մը չի սե  
պէց , ու նաև մէկ յանդիմանութիւն  
մը կամ նախատինք մը ու կամ խօսք  
մը չըրաւ որ իրենց պղտիկութիւնը  
ու անարդութիւնը իրենց հասկըցունէ :

**Արդեօք** դուք ալ ձեղ վնասողնե  
րուն վրայ ասանկ զգացում ունեցա՞ք  
մի . կամ անոր ըրածին պէս ըրի՞ք մի .  
արդեօք չի՞ք մի խորհիր՝ ու արժանի  
չէ՞ք մի սեպեր որ դուք հովսէփին ու  
նեցած վարքին նմանիք :

Իրաւցընէ արժանի է նմանելու .  
բայց թէ որ ձեզ վնասաղներուն վրայ  
հովվակին պէս չպաք ու անոր ըրա-  
ծին պէս չընէք , ան ժամանակը դուք  
անոր անխառ եղբայրներուն պէս եղած  
կըլլաք . ու նոյն վրէժիսնղրութեան  
չար կիրքը ձեր սրտին մէջը առաւել  
պիտի աճի :

Ուրեմն դուք աս բանին համար Վ.ս.  
տուծոյ առջին ճշմարիտ ապաշխու-  
թեան կարօտ էք . ու ասկէ կերևայ  
որ ձեր սիրաք չար է , ինչու որ դուք  
հովվակին ու Ք.րիստոսի հոգին չու-  
նիք :

Ք.րիստոս իր թշնամիներուն յան-  
շանքը ներեց . ան չար ու անողում  
մարդիկներուն անդամ որտնք զինքը  
խաչին վրայ զամեցին . ու ինքը իր  
մեռնելու րոպէներուն մէջ անոնց հա-  
մար աղօթք ըրաւ , որ Վ.ստուած ալ  
անոնց թողաւթիւն կուտար : Ու ինքը  
մեղե ըստ որ , թէ որ մեր թշնամինե-  
րուն ու ինչ կերպով որ ըլլայ մեղե

գէշութիւն ընողներուն թողութիւն չի  
տանք , ու նաև անոնց համար աղօթք  
ցնենք , ու չարութեան փոխարէն աւ  
դէկութիւն չընենք նէ . Աստուած ալ  
մեզի թողութիւն չի պիտի տայ . հապա  
իր ներկայութենէն յաւիտեանս մեղ  
պիտի վուընտէ :

Բոլոր աս բաներուն վրայ խորհե-  
ցէք . թէ որ ասանել է նէ մտմըտալով  
դուք ձեզի հարցուցէք թէ արդեօք  
հիմակվան եղած վեճակներնուղ չի  
պիտի՝ մի տարբերեք . ու ձեր նելախ  
հոգին չի պիտի՝ մի նորոգվի . ու Վ.Ա.  
տուծոյ հոգիովը չի պիտի՝ մի սրբըվի  
երկինքի մէջ իր ներկայութիւնը ու  
շնորհքը վայելու համար ունեցած  
յոյսերնուղ առաջ :

## ԳԼՈՒԽ ԽՎԱ:

Փառքառանին ու անոր ընդպահեցին ուրա-  
իս-լէ-նը , չուշեկին Եղբայրներուն լուսա-  
դու գույն վըսյ : Շաբառուն չուշեկին ըստ-  
ւը որ էր հայրը ու Բալը էր ընդպահեց հրա-  
ծերեւ և Սույնուս գույն : Չուշեկին էր Եղ-  
բայրները իրենց ճամբան մշջ ուշա , Եղած  
ըստներու պատրիարքուն : Չուշեկին ուղար-  
կատուը պատրիարքուն ժամբանին : Չուշեկին  
ու անոր Եղբայրներուն մշջէ Եղած իւղա-  
րկութենը :

**Հ**ատ ժամանակ անցած չէր որ Ե-  
ղիալտոսի Թագաւորը ու բոլոր ա-  
նոր ընտանիքը ան եղած զարմանալի  
բանելուն վրայօքը լսեր էին , որ ան  
ցորեն ծախու առնելու համար եկող  
մարդիկները Յովսէփին եղքայրներն  
էին . ու իր սիրելի հայրը տակաւին ողջ  
էր :

**Ա**նոնք բոլորը՝ Փարաւոն ու իր  
քովի եղած մարդիկները շատ ուրա-  
խացան աս բանը լսելովնին . ու Փա-  
րաւոն՝ Յովսէփին վրայ ունեցած իր

Հաստատուն անձնական բարեկամութիւնը , ու Հակոբին և բալոր անոր ընտանիքին վրայ զգացած խորին մարդասիրութիւնը՝ անոնց երջանկութեանը համար ցուցընել ուզելով , Հովսեփին խնդրեց որ աս բարեսէր հրաւերը իր եղբայրներուն տայ :

Փարաւոն ըստա՞ որ ըսէ քու եղբայրներուդ որ աս բանը ընեն , թողիրենց անսատունները բեռցընեն ու Քանանու երկիրը երթան , ու իրենց հայրը և իրենց ընտանիքները առնեն ու ինձի բերեն , ու Եղիպտոսի երկիրին բարիքը ես անոնց պիտի տամ . ու անոնք ալ երկրին պարարտութիւնը պիտի ուտեն :

Եղիպտոսէն կառքեր թող առնեն իրենց տղոցը ու կնիկներուն համար , և իրենց հայրը առնեն հոս բերեն . նաև իրենց բաներուն՝ այսինքն կարասիքներուն , ու զործիքներուն , և անոնց նման բոլոր ունեցածներիւն թող չենային :

Յովսէփին եղբայրները Փարաւո  
 նին մարդասիրութեանը շատ ուրա  
 խացան , ու բառձին պէս պատրաստէ  
 ցին ինչպէս որ Փարաւոն հրամեր էր  
 նէ : Հովսէփ անոնց կառքել , ու նաև  
 իրենց ճամբուն համար շատ ուտելիք  
 տրւաւ . ասոնց բոլորէն ՚ի զատ հովս  
 էփ անոնց հանդերձ ալ տրւաւ : Ան  
 ժամանակը սովորութիւն էր հարուստ  
 մարդոցը որ հանդերձ կուտային անոնց  
 որոնց որ մասնաւոր յարդութիւն մը  
 ու բարեկամութիւն մը ցուցընել կու  
 դէին : Առվորաբար անոնք դանաղան  
 տեսակ մեծութեամբ շատ հանդերձ  
 ներ կըալահէին , որ երբոր ասանկ ըն  
 ծաներ ընելու ըլլային , իսկոյն ա  
 ռանց յապաղանաց կամ դժուարու  
 թեան կուտային : Հովսէփ աս կեր  
 պով ընելուն միտքը ան էր , որ Խ  
 ղիպտացիները տէսնան թէ ինքը ինչ  
 աստիճան յարդութեամբ կուղէր իր  
 եղբայրներուն հետ վարվիլ , ու ինչ  
 գօրաւոր սէր ուներ անոնց վրայ :

Յովսէփ անոնց ամեն մէկուն շատ  
լաթեր տըւաւ , սակայն ՅԱՆԻԱՄԻՆԻՆ  
իրեք հարիւր կտոր սակէի անոնց տըվա-  
ծէն հինգ անդամ՝ ԵՎԵԼ տըւաւ : Ասե-  
իր Եղբայրներուն հետ իր ծեր հօրը  
ընծայ խրկեց . տասը էշ լեցուն Ե-  
զիպտոսի աղնիւ բաներէն , ու ուրիշ  
տասը էշ աւ լեցուն ցորեն հաց ու  
ընկուղ որ իր հայրը . Ա. անանեն Ելած  
ու Եղիոլտոս եկած առենը ճամբուն  
մէջը զործածէ : Ո երջասկա բոլոր  
պատրաստութիւնները լմնաւլէն Ետի-  
չակորին տղաքները իրենց Եղբօրը  
մնատ բարով լաին , ու ճամբայ ելան  
Ք. երբոն երթալու :

Յովսէփին տըւած խրատը աս Եր՝  
որ զատվելնուն ժամանակը անոնց տը-  
ւաւ , որ իրենց շատ հարկաւոր էր .  
նայեցէք որ ճամբուն մէջը մէկզմէկու  
հետ կրիւ չընէք :

Յովսէփի կըխորհէր որ զուցէ ա-  
սանել բան մը պիտի ընէին , կարելի  
է որ մէկզմէկու քով յանցանք պիտի

զանային, գուցէ, մէկ քանին մթւսնելուն ամբատանութիւն պիտի ընէին բաւլով թէ, առաջ զուր էիք որ առ բանը մեղի առաջադրեցիք, իր դառնացուցիչ երազներուն ոխը առնելու համար . զուցէ Առուբէն ու Հոռողա պիտի ջանային ինքըզինքնին ան յանցանքէն սրբացընելու, սաստիկ նախատինքները միւսներուն վրայ պիտի ձգէին : Կարելի է Շենիամինին պիտի նախանձէին որ Հոռվսէփ անիկա այն գերազոյն յարդութեամբ պատուեց . ու ինքը անանկ մէկ պարզե մը ստացաւ որ իրենց ամէն մէկին կամ թէ բոլորին ունեցածէն շատ աղնիւ էր : Գուցէ անոր հետ մարդասիրութեամբ վարվելու չէին . ու ասանկ իրենց հօրը նեղութիւն տալու ճամբայ պիտի պատրաստէին տուն հասած ժամանակնին :

Գուցէ միայն պատահած բանին համար չի պիտի կուվէին, հապա ետկի ըլտուր բաներուն վրայ աւ, թէ

ինչպէս իրենց ստացուածքը չշղիպտու  
պիտի տանին . ու ինչպէս ամէն մէկը  
իր ունեցածը մանրանանաբար պիտի  
դատէ :

Յովսէփ անոնց բնաւորութիւնը  
զիտէր որ անոնք ասանկ մէկ զգու-  
շութեան խօսքի մը կարօտ էին . ու  
կըխորհէր որ նոյն մասնաւոր վիճակին  
տակը դրսէլովնին հաւանական է որ  
նոյն խօսքը անոնց պիտի աղջէր , ու  
օգուտ ընէր : Մեր Փրկիչ Յիսուս  
Քրիստոսը ըստու . «Երանի խաղաղու-  
թիւն ընտներուն , ինչու որ անոնք  
Աստուծոյ զաւկըները պիտի կանչը-  
վին» :

Աւրեմն իմ սիրելի զաւկըներս Յով-  
սէփին օրինակին նմանեցէք . ամէն  
մէկդ խաղաղութիւն ընող եղիք . ամէն  
ժամանակ ձեր եղբայրներուն ու քու-  
րերուն ու ձեր ընկերներուն հետ խա-  
ղաղութեամբ վարսէցէք . որչափ որ  
կընաք նէ հակառակութիւն ու կռիւ  
ընկելէն ետ էկցիք , ամէնքդ մէկդմէկ

աիրելու , ու իրարու աղէկութիւնը  
նելու առաջնորդեցէք :

### ԳԼՈՒԽ. ԵԽ.

Յահիսին բացը յԲանան հասնելին ,  
շրենց հորը՝ Յահիսին ողջ է ըստընին . Յահի-  
սին ուղարկելին էն . Անոնց բացընին ճան-  
բայ էւստու և գիտութերն ունելու : Անոնց եր-  
ման զբուրին առ նախելին : Ո՞ւ օդուակար-  
պեղ ու ըլլուց . ու անոր պատրամուն : Արա-  
ծոյ իստութեւ Յահիսին : Անոնց և գիտու-  
թերնիւ :

**Ա**րկին Յակոբին զաւկըները ճամբաց  
ելան յԲանան երթալու : Ինչ զար-  
մանալի նոր նոր լուրեր ունեին իրենց  
հօրը ու աղդականներուն տալու . սա-  
կայն ինչ ամօթավ՝ ու ուրախութեամբ  
խառնուած զբացումներով Յավսէփին  
յաջողութեան պատմութիւնը պիտի  
ընեին . որ նոյն ժամանակը իրենց ը-  
րած անօրէնութիւնը ու ստութիւնը  
պիտի յայտնըլէր :

Ա երջապէս Ռէբըն հասան .  
բայց Յակոբին ու անոր ընտանիքին  
կողմանէ շատ կը ցանկային դիտնալու  
թէ արդեօք ետկի երթանուն վախ-  
ճանը ինչ եղաւ . ու տեսնան թէ արդ-  
եօք Ախմօնը աղասուած էր մի , ու  
Ծենիամինն աւ անվնաս ետ դարձեց  
էր մի :

Անոնք տակաւին Յովսէփին ողջ  
ըլլալը , ու իրեն բոլոր Ազիակտոսի  
վրայ կառավար ըլլալը շուտով իրենց  
հօրը խմացուցին : Ես՝ առաջին անգա-  
մին շատ անցոյս ու նաև դարմանալի  
բան մը եկաւ Յակոբին , որ անոնց խօս-  
քը Ճշմարիտ սկզբէ . չի հաւտաց կամ  
չի կը հար հաւտալ . որ իր տղան մեռ-  
նելէն ետև դառնայ . ու իր սիրոր կը-  
մարմըրէր : Բայց երբոր յատկարար  
բոլոր անոր պարագաներուն վրայ ա-  
ռաւել լսեց , ու ան խօսքը որ Յով-  
սէփ խրկեր էր , ու երբոր ան կառքե-  
րը տեսաւ . որ ինքը ու բոլոր իր ընտա-  
նիքը Ազիակտոս ալիտի տանէին , ան-

Ժամանեակը իր զգացումները փոխվեցան , տարակուսանքին ու յուսահառութեան տեղը ուրախութիւն եկաւ . ու ինքը Հակոբ Կահապետ ըստ : Ծատ է աս ինձի , որ Հովսէփի իմարդաս տակաւին ողջ է եղեք . մեռնելէս առաջ ես պիտի երթամ անիկա տեսնամ :

Ինչպէս մէկ հօր մը սիրոյն զօրութիւնը աս մէկ քանի ազդու խօսքը ըովը կիմացվի , որ ինքը ամենեին Հովսէփին զօրութեանը , ու աստիճանին ու անոր մեծ հարատութեանը և ունեցած փառքին չինայեցաւ . հապա միայն աս բանին վրայ խորհեցաւ թէ Հովսէփ տակաւին ողջ է եղեք . ու ինքը իր սիրելի Առքէլին տղան , ու իր գոլու ծերութեանը տարիներուն միսիթարութիւնը կրկին պիտի տեսնայ :

Ծուտով մէկ քանի պատրաստութիւններ ըրին . ու Հակոբ և իր մեծ ընտանիքը ճամբայ ելան Եղիպտոս

երթալու : Խրենց Ճամբուն մէջը երդա-  
ման ջրհոր ըսված տեղը եկան՝ որն որ  
բոլորովին քանանու հարաւային ա-  
րևմբտեան կողմը կիյնայ, ու քերտ-  
նէն ալ քսան մղնի չափ հեռու է :

Աս ան տեղն էր . որ Աքրահամ  
Յակոբին հօրը հայրը՝ առաջ հոս ե-  
կեր էր, ու քիչ մը ժամանակ նստեր  
էր . և հոս խումբ մը ծառեր տնկեր  
էր, որոնց ստուերին տակը իր անձը  
Աստուծոյ պաշտօնը կատարելու կու-  
տար . հոս Աքրահամիր աղօթքները  
յաւիտեան կենդանի Աստուծոյն կը-  
մատուցանէր :

Հոս տեղն էր որ Աստուած Խահա-  
կին երկցաւ, ու ըսաւ . Աս եմ քու  
հօրդ՝ Աքրահամին Աստուածը . մի  
վախնար ես քեզի հետ եմ ու քեզ  
պիտի օրհնեմ, ու քու զաւկըներդ  
պիտի շատցնեմիմ Աքրահամ ծառայ-  
իս համար : Ասկէ եաւ նոյն անցքը  
յիշելու համար՝ Խահակ մեկ սեղան

մը շինեց , ու իր ողջակէպնելը ու աշոթքը Աստուծոյ ընծայեց :

**Առ** տեղու նատած ժամանակնին էր ,  
որ Հակոբ իր մօրը Աերեկային առաջնորդութեամբը պատրողական ու  
չար կերպով մը նոյն օրհնութիւնը  
ինքը ստացաւ , որն որ Խաչակ միտք  
ոնէր Խաւաւին տալու :

**Կաև** Երգման ջրհորէն էր , որ  
Հակոբ իր հօրը հրամանաւը Ասորոց  
միջազետը զնաց , ու ան տեղ Ոսքէլին հետ կարգը վեցաւ . ուր տեղ որ  
Հովսէփ ծնաւ : Երբոր ան երեւելի  
նահապէտը աս օգտակար տեղը հա-  
սաւ , անշուշո ան բոլոր բաներուն  
յիշողութիւնը իր մտքին խորին մէկ  
աղքեցութիւն մը տըւած պիտի ըլ-  
լայ : Անտարակոյս Հակոբ ամչնալով  
ու ճշմարիս զդ ջումով ետին նայած  
պիտի ըլլայ ան չար խարէութեամբ  
համար . որ իր հօրը ըրեր էր , ու  
ջերմնուանդ շնորհակալութեամբ Աս-  
տուծոյ շնորհակալ եղած պիտի ըլ-

լայ, բոլոր իրեն եղած բարեբարու-  
 թիւններուն համար, որոնց որ ինքը  
 արժանի չէր: Հակոբ Արդման ջրհորը  
 ձգել ելլալին ետքը՝ աս բարեբարու-  
 թիւնները որչափ տարբեր կերպով  
 տեսաւ, ու հիմայ ալ հավաէփին ողջ  
 ըլլալը՝ որուն համար ինքը ճամբայ ե-  
 լած էր տեսնալու, բոլորը անցուց :  
 Վռաւել ուրիշ ի՞նչ յարմար տեղ  
 մը կրնար հակոբ ան Եստուծոյ իրեն  
 ըրած մեծամեծ մարդուսիրութիւննե-  
 րը խոստովաներ, ու բոլորով սրտիւ-  
 դոհութիւն ու շնորհակալութիւն ըներ  
 անոր: Հակոբ ասանկ ըրաւ. ինչու որ  
 Եստուածաշունչին մէջը զրված է,  
 թէ ինքը իր խահակ հօրը Եստուծոյ  
 զոհ ըրեր էր. նոյն Եստուծոյն որն որ  
 խոստացեր էր խահակը օրհնելու, ու  
 անոր անթիւ զաւկըներ տալու, ինչ-  
 պէս որ արդէն սկաված էր նոյն ընտա-  
 նիքին մէջի զաւկըները բազմանալու  
 որուն զլուխը հակոբ էր: Ես խոստու-  
 մը հիմայ Եստուած կրկին հակոբին

զըռւցելու վրայ էր : Խնչու որ Վատուած ինքը Յակոբին հետ զիշերը երաղին մէջը խօսեցաւ ու լսաւ . Յակոբ Յակոպ : Են ալ լսաւ հոս եմ . ինըն ալ լսաւ , ես եմ Վատուած . քու հօրդ Վատուածը , մի վախնար Եղիալտոս երթալու . ինչու որ ես քեզ մէկ մեծ աղջ մը պիտի ընեմ . ես քեզի հետ Եղիալտոս պիտի երթամ . ու անշուշտ քեզ ետ պիտի դարձընեմ . ու Յովսէփի իր ձեռքը քու աչվըներուդ վրայ պիտի դնէ , այսինքն քու մեռնելու ժամանակի աչվներդ պիտի գոյէ :

**Վ**ատուածոյ այս խոստումը ետքը առատաբար լեցուեցաւ . Յակոբին զաւկըները մէկ մեծ աղջ մը եղան՝ որ ետքը Վանան դարձան . ու աս մտքով կրնայ ըսվիլ որ Յակոբ ինքը կրկին իր դաւկըներովը ետ դարձաւ :

**Կ**ամեւ Յովսէփին իրեւ մէկ շնորք մը եղաւ , որ իր մեռնելու հօրը աչվըները գոյէ . որ աս բանը Յակոբ մեծ ուրախութեամբ իրը սիրոյ ու մե-

ծարանաց նշան մը զգացած պիտի  
ըլլայ :

Երդման ջրհորեն ճամբայ ելան Խ-  
ղիպտոս երթալու , ու Հակոբին տը-  
ղաքները իրենց հայրը և իրենց զաւ-  
կըները ու իրենց կնիկները Փարսւո-  
նին խրկած կառքերուն մէջ դրած ա-  
նանկ տարին , ու իրենց ոչխարները ,  
ու կարասիբները՝ որ Վանանու մէջ  
ստացել էին , առին ու Խղիպտոս տա-  
րին . Հակոբ ու բոլոր իր զաւկըները  
մէկ տեղ վաթսունը վեց հոգի էին :

ԳՏՈՒԽՈ. ԵԶ:

Յավակն իր հոյըը Գետեմի մշջ բարեւելք:  
Իր եպսայըներուն հինգը Փարսպանին առջելք  
հանելք, ու անոր՝ Գետեմի մշջ բնափելք հը-  
րանան պալք: Յավակն իր հոյըը Փարսպա-  
նին առջելք հանելք: Յավակն ինչ ըսելք:  
Աւանախն իտրճութեանը: Ունկն ինչ ըսե-  
լք: Արդիօք առ խորդացողը մառնելը պար-  
բառը առ է՞ մի:

**Յ**ովսէփ իր հօրը անանկ խօսք խըր-  
կած էր, որ երբոր ինքը իր ընտա-  
նիքովը Ազիպտոս գալու ըլլար՝ Ե-  
զիպտոսին ան մասին մէջը պիտի բը-  
նակէր, որ Գետեմ կսվէր . առ տեղու  
Ազիպտոսին արևելեան կողմը դէպ ’ի  
կարմիր ծովուն ու Քանանու սահ-  
մաններուն վրայ կիշնար :

**Յ**ակոր Յուղան խրկեց, որ իր հօ-  
րը մօտենալը Յովսէփին զուրցէ, ու  
Յովսէփ իր կառքը սլատրաստեց, ու  
Գետեմ զնաց իր հայրը բարելու, և  
ինքը անոր առջելը ելաւ, ու վիզը ին-



Յակոբ Նահապետին՝ իր երիար ատեն  
կորսրնցուցած որոին դիմաւորելու :

195.



կու՛, և քիչ մը ժամանակ վեղին վրայ լացաւ : Արդեօք անոնց ամէն մէկուն զգացումը ինչպէս եղած ալիտի ըլլայ աս վայրկեանին մէջը երբոր իրար կրկին տեսան նէ , որ շատ ժամանակ իրարմէ զատլած էին : Արչափ փորձութիւններու մէջէ անցեր էին . ինչ փոփոխութիւններ եկեր էր անոնց վրայ :

Ժամանակը իր հօրը մաղերը Ճերմը կցուցեր էր . Ճերութիւնը ու տրտմութիւնը իր երեսները փռաը ինջեցեր էին , և ուսերը տնկըլեր էր : Երբոր անոնք վերջին անդամը իրարմէ զատվեր էին նէ , չովսէփ տասներէօթը տարեկան սպատանի մըն էր՝ որ Ախոքէմին ձորը դացեր էր իր եղբայրները փնտրուելու . բայց հիմայ մարդկութեան սահմանին հասեր էր . հայրու Եղիպտոսին կառավար եղեր էր :

Յակուը չովսէփին ըստ առկէ ետեթող ես մեռնիմ , ինչու որ քու երեսդ տեսայ , որ տակաւին ողջ ես :

Ուրիշ առաւել բան չէր կրնար  
 զուրցել . իր սրտին՝ վերջին հաճու-  
 թիւնը լեցուած էր . ու ինքը պատ-  
 րաստ էր խաղաղութեամբ երկրէս  
 ելլելու , որչափ շուտով որ Վատուած  
 յարմար դատեր ինքը կանչելու : Ան  
 ժամանակը հովսէփ անոնց ըստ ևս  
 փարաւոնին պիտի երթամ . ու ձեր  
 գալը անոր իմացնեմ . ու ձեր երեսը  
 անոր գիտցնեմ , որ դուք հովիւ էք .  
 ու ձեր արջառները ու ոչխարների  
 բոլոր հետերնիդ էք բերած : Կաև  
 հովսէփ անոնց զըռուցեց , որ երբոր  
 փարաւոն անոնց հարցունելու ըլլայ  
 աս բանը ըսեն անոր , որ ինքը իրենց  
 հրաման տայ Վետեմի մէջ ընակելու .  
 վասն զի անոնք անանկ մէկ երկրի մը  
 մէջ պիտի ըլլային , ու իրքն իրենցը  
 եղած պիտի ըլլար . ու Եղիպտացի-  
 ներէն պիտի զատվէին . ու հովսէփ  
 զիտեր որ աս բանը անոնց շատ մին-  
 թարութիւն ու յաջողութիւն պիտի  
 տար :

Անոնք Եղիսլոացիներուն ատելութենէն ու նեղութիւնէն աղատ սլիտի ըլլային . որոնք որ առաջմանէ զըրուցեցինք թէ հովիւութեան գործը շատ կանարգէին : Հովսէփի անոնց զալը Փարաւոնին զըրուցելէն ետև իրեղբարներէն հինկը առաւ , ու թագաւորին առջեր հանեց :

Փարաւոն անոնց արհեստը հարցուց . ու անոնք ալ պատասխան տըւին թէ , քու ծառաներդ բոլորն ալ հովիւն , մենք ալ ու մեր հայրերն ալ :

Կաեւ Փարաւոնին ըսին , թէ մենք աս երկիրը բնակելու համար եկերենք . ինչու որ՝ քու ծառաներդ ունունդ չունինին իրենց ոչխարներուն ու այծերուն և արջառներուն համար . ու նաեւ քանանու մէջ ալ սովը սաստկացաւ . անոր համար հիմայ կադաշնք հրամանոցդ՝ որ հրաման տաս մեղի Վեսեմին մէջ բնակելու : Թագաւորը անոնց խնդրուածքը շնորհեց ,

ու ըստ ՀՅովսէփին, թէ որ իր եղբայր ներեն յարմար մարդիկներ կայ նէ Ճարտար ու հմուտ իրենց արհեստին իր արջառներուն վրայ վերակացու ընէ : Կաև ՀՅովսէփ իր հայրը ՀՅակոբ բերաւ ու Փարաւոնին առջել հանեց . ու ՀՅակոբ Փարաւոնը օրհնեց : Փարաւոն հարցուց ՀՅակոբին թէ քանի տարեկան ես . ան ալ պատասխոն տրւաւ « Խմ պանդխտութեան տարի ներուս օրերը հարիւր երեսուն տարի են , քիչ ու դժուարին եղաւ իմ կեանքիս օրերը , ու իմ հայրերու կեանքին տարիներուն օրերուն չափ չե հասաւ . անոնց պանդխտութեան օրերուն պէս ” :

Պանդուխտ ան մարդուն կսվի՞ որ մէկ յատկացեալ տուն մը չունենար , ու մէկ երկար Ճամբու մը մէջ կըլլայ տեղէ տեղ Ճամբորդութիւն ընելով , որ իր միտքը դպած տեղին շատ կըցանկայ հասնելու : Աս բոլոր Ճամբորդութեանը կըսվի պանդխտութիւն :

Խրաւունք ունէր չակոր ինքը զինքինքին  
 պանդուխտ մը ըսելու , ու իր կեանքին  
 աւ պանդխտութիւն մը : Ինքը մէկ  
 տեղէն մէկաւ տեղը կերթար զանա-  
 զան վիճակներու մէջէ անցնելով . ու  
 հիմայ իր ծերութեան հասակին մէջը  
 ուրիշ ճամբորդութիւն մաւ կընէր ,  
 ուրիշ ընակարան մը գտնալու հա-  
 մար : Օհէպէտ ինքը կըհաւատար որ  
 երկինքին մէջը ուրիշ առաւել աղէկ  
 տուն մը կար բոլոր Վատուծոյ ժողո-  
 վուրդոցը համար . ու իր աչվները  
 միշտ հոն կընայէր . ինչու որ՝ ինքը  
 ասանկ ապաւինած էր , որ բոլոր իր  
 թափառականութիւնները ու փորձու-  
 թիւնները՝ անտեղ պիտի անցնին , ու  
 հոն ինքը յաւիտեան հանգստութիւն  
 պիտի գտնայ : Ինքը չէր յուսար որ  
 իր նախնեացը ապրած տարիներուն  
 չափ պիտի ապրի , ու թէպէտ ինքը  
 հարիւր ելառն տարի ապրեր էր ,  
 բայց որչափ շուտով անցան անոնք ,  
 ու որչափ քիչ երեցան անվախճան

յաւիտենականութեան հետ բաղպատելով :

Ազէկ ըսեր էր Հակոբ, որ իր տարիները գէշ տարիներ եղան . ինչու որ Վատուած իր իմաստուն ու սուրբ նախախնամութեամբը յարմար դատեց, որ իր ծառան Հակոբը շատ տեսակ նեղութեամբ ու տրամութեամբ փորձէ :

Արդեօք դուք ալ Հակոբին պէս աշխարհքիս մէջը պանդուխտ ըլլաւնուդ վրայօք կըմոմտաք մի : Ո՞չ . չէք գիտեր թէ՝ արդեօք որ չափ փոփոխութիւններ ու փորձութիւններ ձեզն կըսպասենկոր : Կարելի է թէ ձեր սիրելի ճնողքներնուդ ու ըարեկամներնուդ պիտի զատվիք, ու ձեր աղնիւտունը պիտի թողուք, ու շատ տեսակ նեղութիւններու ու տրամութիւններու մէջէ պիտի անցնիք : Իմէ որ Հակոբին քաշած նեղութիւններէն շատ քիչ նեղութիւն քաշելու ըլլաք, ու շատ հանգստութեան և խաղաղութեան

օրեր անցունելու ըլլաք , միտքեր-  
նիդ բերէք , որ ձեր սլանդխտութիւնը  
շուտով պիտի անցնի : Ա էր ջապէս  
մահը պիտի գայ ու որչափ շուտով  
դալը չէք զիտեր :

Որչափ ձենե՛ շատ պղտիկները ար-  
դէն իրենց պանդխտութիւնը լմբնցու-  
ցած են : Գայ էք ձեր մօտերը եղած  
դերեղմանատանը մէկը . ու դերեղման-  
ներուն քարերը փորեցէք ու նայեցէք  
թէ որչափ հոդիներ թաղված են հոն .  
որոնց պանդխտութեան օրերը ձերին-  
ներէն շատ եղած են :

Բայց ինչ պիտի ըլլար՝ թէ որ շատ  
սալրելու ըլլայիք : Յակոբին պէս ան-  
ժամանակը պիտի ըսէիք . երբոր ձեր  
անցեալ կեանքին վրայ նայելու ըլլայ-  
իք . իմ պանդըխտութեան տարիներս  
քիչ եղաւ . անոնք զոլորշեի մը պէս  
անցան զային , որ քիչ մը ժամանակ  
կերևայ ու անկէ ետեւ կաներեւութա-  
նայ :

Դուք ալ Յակոբին պէս դէոլ ՚ի

յառաջ պիտի նայիք ան յաւիտենա  
 կանութեանը՝ որն որ ամենեւին վախ-  
 ճան չունի : Հակոբին պէս պատրաս-  
 տրվելու էք ան յաւիտենականութեան  
 մէջը մոռնալու . որ երբոր հովուէփ  
 տեսաւ . կըկին յայտնեց իր մեռնելու  
 պատրաստութիւնը : Վրդեօք դուք ալ  
 մեռնելու պատրաստ էք մի , մահը<sup>1</sup>  
 մեծ ու ծանր բան է . մարդուն ձեռ-  
 վըները չեն շարժեր . շրթունքները  
 չեն խօսիր . ազվները չեն տեսներ ա-  
 կանչները չեն լսեր . թոքերն ալ շըն-  
 շառութիւն չեն ըներ , ու սիրտն ալ  
 չի բաշխեր . բոլոր մարմինը կըպաղի ,  
 փատ կըկտրի , ու անշարժ կըմնայ . և  
 շուտով գերեզմանը կըդրվի՝ հոն սովա-  
 սելու , մինչեւ որ դատաստանի կանչը-  
 ված օրը մեռելներէն յարութիւն առ-  
 նէ : Ի՞այց աս մահուան մէկ սլղտի  
 մասն է . Վրիստոնեայի մը ամենեւին  
 վախ գալու չէ . մահը անոր քաղցրիկ  
 քունի մը պէս պիտի երեւայ . ու գե-  
 րեզմանը խաղաղ ու հանդարտ հան-

յառաջ պլիտի նայիք ան յաւիտենա  
 կանութեանը՝ որն որ ամենեւին վախ-  
 ճան չունի : Հակոբին պէս պատրաս-  
 տրվելու էք ան յաւիտենականութեան  
 մէջը մոտնալու . որ երբոր Հովսէփ  
 տեսաւ . կրկին յայտնեց իր մեռնելու  
 պատրաստութիւնը : Արդեօք դուք ալ  
 մեռնելու պատրաստ էք մի , մահը  
 մեծ ու ծանր բան է . մարդուն ձեռ-  
 վըները չեն շարժեր . շրթունքները  
 չեն խօսիր . աչվները չեն տեսներ ա-  
 կանչները չեն լսեր . թոքերն ալ շըն-  
 չառութիւն չեն ըներ , ու սիրտն ալ  
 չի բաշխեր . բոլոր մարմինը կրպաղի ,  
 փառ կրկտի , ու անշարժ կրմնայ . և  
 շուտով գերեզմանը կրղրվի՞ հոն սպա-  
 սելու , մինչեւ որ դատաստանի կանչը-  
 ված օրը մեռելներէն յարութիւն առ-  
 նէ : Իայց աս մահուան մէկ սպափի  
 մասն է . Քրիստոնեայի մը ամենեւին  
 վախ գալու չէ . մահը անոր քաղցրիկ  
 քունի մը պէս պլիտի երկւայ . ու գե-  
 րեզմանը խաղաղ ու հանդարտ հան-

յեկամութեանը ու շնորհքներուն վայ-  
 ելքութեամբը , մաքուր ու սուրբ հո-  
 գիներուն ընկերութեամբը . որոնք  
 բոլորը Աստուած՝ ու մեկզմէկ կըսի-  
 րեն , և բոլոր էակներուն ամենիմաստ  
 ու ամենաբարի Գոյացուցչին երկըր-  
 պազութիւն ու ծառայութիւն ընելով ,  
 ու ան անհամար կերպերով ցուցված  
 իմաստութեանը ու բարութեանը  
 զմայլելով . և ուրախ ըլլալով , ուրի-  
 շին երջանկութիւնը ու աղէկութիւնը  
 տեսնալով , և անդադար սրբութեան  
 երջանկութեան ու զիտութեան մէջ ա-  
 ռաջ երթալով : Կամ թէ ան հոն կեր-  
 թայ՝ ասոնց բոլորը կորաբնցունելու .  
 աս անխառն տեսարանէն յաւխուեանս  
 վորնտվելու , ու ան անարդ և թշուա-  
 ռական էակներուն մէջ տեղը ընակե-  
 լու . ան ամենազգուելի և մեղանցա-  
 կան բաները լսելով ու տեսնալով , և  
 ան չար ու անգոսնելի խղճմտանքին ա-  
 նը , դողը , զգալով , և սուդ ընելով  
 անդեղջ մնալուն ու մեռնելուն յիմա-

լուվեանը վրայ , ու Վրիստոսի  
 վրայ հաւատք չունենալով : Երբոր ե-  
 տեղ նայելու ըլլայ ուրիշ բան չի պի-  
 տի գտնայ , բայց միայն վշտալի յի-  
 շատակութիւններ . երբոր չորս կողմը  
 նայելու ըլլայ՝ միսիթարութեան ու  
 օգնութեան նշոյ մը չի պիտի տես-  
 նայ . երբոր առաջ նայելու ըլլայ՝ փո-  
 փոխութեան մը յոյս չի պիտի ըլլայ .  
 ու ասանկ իր ժամանակը տրտում ու  
 սուկալի յուսահատութեամբ պիտի  
 անցընէ . զիտնալով թէ՝ բոլոր աս-  
 թշուառութիւնները պիտի շարունա-  
 կեն ու էվելնան առանց թեթեւութեան  
 ու վախճանի : Արդեօք մեռնելու  
 պատրաստած էք մի : Ո՞ւ Տէրը  
 չիսուս Վրիստոսը ճշմարտապէս  
 կըսիրէքկոր մի , ու բոլորով սրտիւ  
 անոր կըհաւատաքկոր մի :

## ԳԵՂԱԽԻՉԻ

Յանձնին ու եր ընդունելուն Պահակ Աղջ  
բանակը : Աստուծոյ ըրտ մարդուն լին-  
ել անոնց : Այ խորդացով վեցայ սահեցա-  
Աստուծոյ բարերարութեանը : Արդեօս իսր-  
այացով Աստուծոյ շնորհակալ է ի :

**Յակոբ** Աստուծոյ օքհնութիւնը  
Փարաւոնին վրայ դալու համար  
կրկին աղաջեց ու ետքը իրմէն դատ-  
վեցաւ : Վսկէ ետև շուտով Յովսէփ  
ոկսեց աշխատիլ՝ որ իր հօրը, ու իր  
եղբայրներուն, ու անոնց ընտանիքնե-  
րուն՝ ան երկիրը ժառանգել տայ-  
որն օր Փարաւոն հրաման ըրեր էր ա-  
նոնց տրվելու՝ իրենք ընակելու հա-  
մար :

Կըսվէր թէ աս շատ գեղեցիկ մէկ  
երկիր մըն էր . ընտիր ու հաճելի  
տեղ մը, ուր որ Յակոբ ըոլոր իր  
պանդխտութենէն ու փորձութիւննե-  
րէն ետքը իր ծերութեան տարինե-  
րուն մէջը՝ հոն երջանկաբար նստե-

ցաւ իր զաւկըներովը , ու անոնց ընտանիքներովը : Հովսէփ ան Ճշմարիտ հնադանի տղան՝ ու սիրելի եղբայրը , ըոլոր ինչ որ պէտք էր նէ անոնց համար՝ պատրաստեց . ան սովոր տարիներուն մէջ իրենց օղնութեան ու դարմանին համար , ու անոր Նզիպսոսի վրայ կառավար ըլլալը , ու իր պատիւր որով մարդիկները անիկա բըռներ էին , բաւական մէկ առահովութիւն մըն էր իր հօրը ու իր եղբայրներուն որ իրենց հետ տեսութիւն ընողները յարդութեամբ իրենց հետ կըվարվէին :

Երբոր հակոբ ու իր շատվոր ընտանիքը աս կերպով նախախնամութեան պարգևները կըվայէլէին , ու իր առատաբուղիս ձեռքէն կըկերակըվէին , արդեօք ինչպէս յայտնի զգացած պիտի ըլլային ան Աստուծոյ իրենց կողմանէ ըրած դարմանալի միջնորդութիւնը . անանկ մէկ թշուառ սովի մը մէջէ անոնց բոլորը հանելը

ու ապահով ան երկիրը բերելը , ուր  
տեղ որ միայն մնունդ կըդտնըվէր ,  
շատ զարմանալի մէկ աղատութիւն մըն  
էր :

**Կ**աև ասկէ ՚ի զատ ան երկրին  
պաշտպանութեանը տակն էին . ու իր  
շտեմարանին կերակուրէն կըկերակ  
ըրվէին , առանց կերածներնուն ստակ  
խնդրըվելու : Հոս Շատուծոյ մարդա  
սիրութիւնը համարձակ կըյայտնըվի  
որ ան թագաւորին պաշտպանութիւ  
նը ու առատութիւնը մէկ տղի մը ու  
եղքօր մը ձեռքովը իրենց եղաւ :  
Ու նաև աս Շատուծոյ բարութիւնը  
կըցուցընէր թէ ինքը ինչպէս երկայն  
մտութեամբ ու համբերութեամբ լե  
ցուն էր անոնց , որոնց անողորմ չա  
րութիւնը ու ստութիւնը իր նախախ  
նամութեամբը յաղթելով աս տղան  
ու եղքայրը Խզիպտոս խրկեր էր , որ  
ան անոնց սաստիկ պէտք եղած ժամա  
նակը ելէ կայնի իրենց փրկիքը ու  
բարեկամը ըլլայ :

Անշուշտ, հիմայ դուք պատրաստ  
էք ըսելու թէ չակոր ու իր ընտանի-  
քը շատ երախտազիտութեան պատ-  
ճառներ ունեին Վատուծոյ, ու պար-  
տական էին աս շնորհակալութիւնը ի-  
րենց ցուցընելու՝ ինքը սիրելով, ու իր  
պատուիրանքներուն հնագանդելով :

Արդեօք Վատուած ձեղի համար  
ինչ ըրած է . արդեօք իրեն բոլոր  
լարութեանցը՝ ու ձեղի ըրած երկայն-  
մլտութեանը ու համբերութեանը  
վրայօք կըխորհիք մի՞ : Որ ինքը ձեր  
ծնելէն ՚ի վեր շատ աղէկութիւններ  
ըրած է անթիւ կերպերով, բայց  
դուք անոր դէմ շատ անգամ մեղք գոր-  
ծած էք :

Ինքը ձեղի աղէկ զգուշութիւն ըրած  
է, ու ձեր պիտոյքը հոգացած էք ձեր  
ծնողացը ու բարեկամներուն ձեռքովը  
ինչպէս որ չակորին ու իր ընտանիքին  
ուղածները չովսեփին ձեռքովը հո-  
գաց :

Դուք սով չէք տեսած որ ձեզ նե-

ղացընէ ու վշտացունէ . դուք պարտականութիւն չունիք որ ձեր տունները Թողուք , ու ուրիշ երկիր երթաք կերակուր դժնալու համար :

**Դ**ուք հազարաւոր միսիթարութիւններ , ողորմութիւններ , ու շնորհքներ ունիք . ու մինչև հիմայ առատաբար անոնք կըվայելէք : Արդեօք Աստուծոյ բոլոր ըրած բարերարութիւններուն շնորհակալ կըլլա՞ք մի . ու իր որդւոյն որ իր արունը խաչին վրայ թափեց անոնց փրկութեանը համար՝ որոնք որ իրեն կըհաւատան :

**Ա**րդեօք աս երախտազիտութիւնները Աստուծոյ կըցուցընէ՞ք կոր մի . ինքը սիրելով ու իրեն հնազանդելով , ու Յիսուս Քրիստոսի օրինակին նմանելով , ու ուրիշին աղէկութեանը ու երջանկութեանը համար ձեր կարողութեանը մէջի եղած ջանքը ընելով :

**Ա**սոնք երեւելի հարցումներ են , ու պէտք է որ դուք անոնց վրայ մտմը-

տաք , ու անոնց պատասխանը տաք :  
Ի՞նչպէս պատասխան պիտի տաք ա-  
նոնց :

Արդեօք պիտի ըսէ՞ք մի , որ մենք  
չենք գիտէք Կատուծոյ ու իր Որդւոյն  
շնորհակալ ըլլալը ինչ բան է . ու  
նաև չենք գիտեք թէ ինչպէս խնդրենք  
Կատուծոյ կամքը կատարելը . ու ու-  
րիշներուն աղէկութիւն ընելը , մանա-  
ւանդ անոնց հոգիներնուն :

Ինչպէս պատրաստ էք ըսելու թէ,  
Յակոբ ու իր ընտանիքը որչափ գէշ  
ու ապերախտ պիտի ըլլային , թէ որ  
բոլոր Կատուծոյ գթութիւններուն շր-  
նորհակալ ըլլային . ու չաշխատէին  
զինքը սիրելու ու իր պատուիրանքնե-  
րուն հնազանդելու : Տայց պիտի ը-  
սէի թէ ինչպէս ասանկ անարդ ու ա-  
նըղգայ կրնային ըլլալ դուք ձեր վր-  
րայ խորհեցէք . թէ որ Յակոբ ու իր  
ընտանիքը Կատուծոյ շնորհակալու-  
թիւն չընէին որ ձեզի շատ գէշ ու ա-  
պերախտութիւն կերևայ . դուք ան-

բանին վրայ մտմտացէք, որ Աստ-  
ռւած՝ ու իր որդին չիսուս Քրիստոս  
ձեր ղղացումներուն ու վարքերուն  
վրայ պիտի վճռեն . ան ժամանակը  
թէ որ դուք ապերախտ զտնըվելու  
ըլլաք . որչափ անարդ ու անղղայ որ-  
չափ երախտամոռաց ու զէշ պիտի  
երեաք անոր առջին :

Միայն աս պէտք է ձեզի ընել որ  
դուք ձեղ Աստուծոյ առջին խոնարհե-  
ցընեք, ու աս ապերախտութենէն ու  
բոլոր ուրիշ մեղքերէն ետ կենաք :

Պարտիք բոլոր աս ձեր մեղքերը  
Աստուծոյ խոստովանիք ու անոր աղա-  
ջէք Քրիստոսի միջնորդութեամբը՝  
որ անոնց թողութիւն տայ ու շոգին  
սուրբ խրկէ ձեր վրայ . որ մէկ զըդ-  
ջացեալ ու շնորհակալու սրտով մը  
տսկէ ետեւ զինքը բոլոր հոգիով սի-  
րէք, ու իր կամբը կատարելու ետեւէ  
իյնաք :

Թէ որ ասանկ ընելու ըլլաք՝ Աս-  
տուծոյ շնորհքը, Քրիստոսի բարե-

կամութիւնը , ու ողբոյն սրբոյ դօ-  
րութիւնները կընդունիք , ու աս  
կեանքին մէջը ու յաւիտենական  
կեանքին մէջը կօրհնըվիք :

### Տ Ե Ա Խ Խ Ը Ն Բ :

Ե շ է ր պ ա ս տ կ ա ց ա ւ ։ Ե ր ե ն ց ա ր ջ ա ս տ ա ն ե ր ը ։ Ե ր  
ո ւ ո ւ ր ի հ ա մ ա ր ։ Հ ա մ ե կ ի ն ա ս ո ւ լ ը ն ե ն ։ Ե ն ա ն ց  
ի ր ի ն ի ւ ր ո ւ ր ո ւ լ ը ն ե ն ։ ա ս ի ն ո ւ պ է ն ե ն ի ն ա ս  
ե ր ե ն ց ե ր ի ւ ր ա ս ո ւ լ ը ն ե ն ։ Հ ա մ ե կ ի ա ն ա ն ց  
ա ն ե ր մ ա ս ո ւ լ ց ա ն ե լ ը հ ա մ ա ր ։ Ո ւ ե ի հ ա մ ա զ ե ն ա ս  
ա ս ո ւ լ ո ւ ր ո ւ ր ո ւ ր ո ւ ր ո ւ ր ո ւ ր ։ Հ ի ն գ ե ր ե ր ը ը  
մ ա ս ո ւ լ ը ն ե ր ի ն ա ս ո ւ լ ը ն ։ Դ ա կ ա ս ո ւ լ է ն ա ս  
ա ր ժ ա ն ի հ ա մ ա ն ա ն ե ր ։ Հ ա մ ե կ ի ն վ լ ը ն ե ն  
վ լ ո յ օ ւ ։

**Ս ո վ ը ա ռ ա ւ ե լ ս ա ս տ կ ա ց ա ւ ։ Ե զ ի պ ա**  
տ ո ս ի ն ո ւ Վ ա ն ա ն ո ւ մ է ջ ն ա լ ։  
Ե ս տ ո ւ ա ծ ա շ ո ւ ն չ ի ն մ է ջ ը կ ը կ ա ր դ ա ն ք  
ո ր մ ա ր դ ի կ ն ե ր ը կ ը մ ա ր է ի ն կ ա մ թ է  
կ ը տ կ ա ր ա ն ա յ ի ն ո ւ ս ր տ ա թ ա փ կ ը լ ո յ  
ի ն ս ո վ ի ն պ ա տ ձ ա ռ ա ւ ը ։

Յովսէփի շարունակ Եղիպտոսի ու  
Վանանու բնակլիչներուն ցորեն կը-  
ծախէր , ու անոնց փոխարէն ստակը<sup>1</sup>  
կառնէր . մինչև որ զրեթէ բոլորը  
իրենց ստակը հատուցածի պէս էին :  
Աս ստակները Յովսէփի կառնէր ու  
փարաւոնին տունը կըպահէր . ինչու  
որ Թաղաւորին իր ստացուածքը էր :  
Երբոր զրեթէ ստակնին բոլորովին  
հատած էր , Եղիպտացիները իրենց  
նեղութեան մէջը Յովսէփին եկան ու  
լսին . «Ո՞եզի հաց տուր , ինչու հա-  
մար պիտի մեռնինք քու առջիդ ստակ  
չի մնալու համար” :

Յովսէփի մէկ քանի աղւոր պատ-  
ճառներ ունէր Եղիպտացիներուն ա-  
ռանց ստակի ցորեն չի տալուն : «Դուցէ  
կըխորհէր որ թէ որ ձրի տալու ըւ-  
լար անոնց շատերը ծոյլ պիտի մնայ-  
ին , ու ուրիշներն աւ անիկա ինքը-  
ղինքներնուն ու իրենց արջառներուն  
համար խօհեմութեամբ ու խնայու-  
թեամբ գործածելու չէին :

Յովսէփ անոնց ըստաւ որ՝ ցորենի  
 համար տալու ստակեն տեղը արջառ  
 ներնիդ ալ կառնեմ . ու աս կերպով  
 ուրիշ աղէկութիւն մ'ալ պիտի ը-  
 նէր որ ան կենդանիներուն շատերուն  
 կեանքերը անօթութենէ մեռնելեն  
 պիտի աղատէր : Ասանկ Խղիպտացի-  
 ները իրենց արջառները Յովսէփին  
 կըրերէին ու ինքը անոնց ձիերուն  
 ոչխարներուն արջառներուն ու էշե-  
 րուն տեղը իրենց հաց կուտար : Իսյց  
 շուտով բոլորը իրենց արջառները ու  
 ոչխարները աս կերպով Յովսէփին  
 տրւին , ու կերակուրի տեղ փոխե-  
 ցին . Թէպէտ նորէն կարօտ եղան կե-  
 րակուրի : Տակաւին իրենց երկիրնե-  
 րը ու ինքը զինքնին իրը և ծառայ կամ  
 գերի թաղաւորին տալու էին :

Անոնք ասանկ ըրին , ու Յովսէփ  
 ալ անոնց կերակուր տրւաւ . ու աս  
 կերպով բոլոր Խղիպտոսի երկիրը ու  
 անոր բնակիչներուն ծառայութիւննե-  
 րը իրը գարաւոնին իր սեպհական

ստացուածքին պէս ստացաւ , որ անոր օգուտին համար երթան աշխատին :

**Առ** բանը սովորն վերջին տարիին մեջը պատահեցաւ , անանկ որ մարդիկ յոյս ունեին որ ետքի տարին երկիրը նորէն պիտի սկսէ առատաբար իր պտուղը բերել , թէ որ սերմցանվելու ըլլայ :

**Անոր** համար հօվսէփին աղաջեցին որ իրենց սերմն տայ , որ նոյն ժամանակը իրենց երկիրները ու ինքը նքնին կերակուրի համար ստակի տեղ տրւեր էին . որ կարող ըլլան ետքի տարվան համար հանդերձանք պատրաստելու ու բոլոր Եզրիակոսին մեջը բաւական ցորեն դժնըլելու :

**Թէպէտ** անոնց խնդրուածքը կատարելէն առաջ բոլոր ընակիները պղտիկ զաւառներէն ու աւաններէն քաղաքը տարաւ : **Ասանկ** ընելուն պատճառը աս էր որ դուցէ շատ դիւրին պիտի ըլլար անոնց կերակուր

տալը , թէ որ շտեմարաններուն մօտ  
ըլլային որոնց մէջը ցորենը պահված  
էր . ու բոլոր ցորենին շտեմարանն  
ալ ինչպէս որ առաջ ըսինք քաղաք-  
ներուն մէջն էին : «Քուրմերը իրենց  
կերակուրը թաղաւորէն կառնէին ա-  
ռանց իրենց երկիրները տալու , եր-  
բար ուրիշ բնակիչները կուտային :

Վնոնք կարելի է հասարակութեան  
մէջը գերազոյն ու աղատ սեպված է-  
ին : Վնոնց մէջէն թաղաւորը իր ե-  
րեւելի գործակալները ու ուրիշ ատե-  
նակալները կընտրէր , իր տէրութեա-  
նը մէջը իրեն օգնելու համար , ու ա-  
նանկ զանազան պաշտօններ ունենալ-  
նուն պատճառաւը մինչև սովին վեր-  
ջը Փարաւոնին ծախքովը կերակրը-  
վեցան :

Սովին վերջի տարին անցնելէն ա-  
ռաջ Հովսէփ ժամանակին սերմ քաժ-  
նեց բնակիչներուն , ու տըւած ժամա-  
նակը ըստաւ . Վաօրվան օրս ձեզ ու  
ձեր երկիրները Փարաւոնին համար

ծախու առած եմ . ահա ձեզի սերմ  
կուտամ ցանեցէք . սակայն ժամանա  
կին երբոր աճելու ըլլան , հինգին մէկ  
մասը Փարաւոնին պիտի տաք . ու չորս  
մասը ձերը պիտի ըլլայ՝ Երկրին սեր  
մին համար , ձեր կերակուրին ձեր ըն-  
տանիքին ու ձեր տղոցը համար :

**Երկրին տարեկան արդիւնքին հինգ-**  
**երբորդ մասը թագաւորին տալը մըշ-**  
**տրնջենաւոր օրէնք մը եղաւ Եղիպտո-**  
**սի մէջ , որ բոլոր բնակիչները կու-**  
**տային . բաց ՚ի Քուրմելէն . որոնք**  
**որ աս տեսակ հարկ չէին հատուցա-**  
**նէր :** Ասկայն մենք հիմայ աղէկ բան  
մը չի պիտի համարինք , որ Յովսէ-  
փին պէս մէկը՝ անօթութենէ մեռնող-  
ներուն Երկիրները ու ինքը ինքնին  
կերակուրի համար բնութեամբ առ-  
նէ , կամ թէ ան զինէն ստակ հատու-  
ցանել տայ յօժարութեամբ ինքիրեն-  
նուն ալ տալու ըլլային : Ու պէտ բո-  
լոր աս բաները պարագաներովը չի-  
տենք . բայց թէ աս Եղիպտոսի բնա-

կիշներուն միտքերը առաւել լուսաւորեալ ըլլար , կըյուսանք թէ հովսէփ առ կերպով չի պիտի ընէր :

Վերջապէս կերևար՝ թէ ընակիչները բոլոր երկրին դործածութիւնը վրանին առած էին . ու բոլոր իրենց աշխատութիւններուն պտուղներովը կրվայելէին բաց ՚ի արդիւնքներուն հինգերորդ մասէն որ թագաւորին հարկի մը պէս կըհատուցանէին : Քանի որ Եղիալտոսի միւս կողմերը առ բաները կըլլային . հակոբ որ իր ընտանիքը խաղաղաբար ու աղատաբար զեսեմի մէջ կըբնակէին : Անոնց ընտանիքները ետևէ կըշատնային . ու մինչև սովին վերջի տարին , անոնք իրենց ստացուածքները առաւել շատցուցին , ու յաջողութիւն դրան , ու ծաղկեցան :

ԳԼՈՒԽ. ԵՒԱ:

ՀՅԱՆԻ իր իշտանքին վահաճանին մօդէնալլ :

ՀՅԱՆԻ իր հօրը ունասւելեան երթալլ : ՀՅԱ-  
ՆԻ իր հյանէ իր գործելլ որ անոր երդու-  
մանէ ուսոյ , որ երդոր ինու մասնէլու ըլլոյ  
իր հարցինը իր հայրեբառն ուժը լատու : ՀՅԱՆԻ-  
ԴԻ առ բանը ընելուն համար երդում ընկ-  
լլ : Խըդութիւն ինչ ըլլոյլլ :

**Տ**ասնթեօթը տարի ՀՅԱԿՈՔ իր ընտա-  
նիքովը Խղիպտոսի մէջ նստելէն  
ետե՞ որ ան ժամանակը հարիւր քառ-  
սունը եօթը տարեկան եղաւ , տեսաւ  
որ ինքը շատ տկարացեր էր , ու  
յայտնի իր կեանքը վերջանալու մօտ  
էր : Ենոր համար ՀՅՈՎՍԵՓԻՆ ետեէն  
մարդ խրկեց , որ ան ժամանակին կա-  
լող ըլլայ անիկա տեսնալու , ու մէկ  
աղաջանք մը ընելու՞ որուն որ ինքը  
շատ կըրադար :

**Ե**նանկ մէկ զիպուած մըն էր՞ որ  
ՀՅՈՎՍԵՓ կըրկարծէր թէ ժամանակը  
շատ հեռու չի պիտի ըլլար . թէպէտ

անանեկ մէկ բան մըն էր , որ չչովսէ  
փին սիլտու շատ ցաւցուց ու տրտմու  
թեամք ինքը գնաց իր հայրը տեսնա  
լու , որուն մեռնելու խրատները հի-  
մայ գիտեր որ պիտի լսէր :

**Մ**էկ երեւելի բան մը կար , ինչպէս  
որ վերը ըսի , **թէ** չչակոր իր սրտին  
մէջը ունէր , այսինքն ինքը կըբաղձար՝  
որ քանանու մէջ թաղվի , իր հօրը  
կըկըին մէջը , որ իր մարմինը անոնց  
մարմիններուն հետ մէկ տեղ իրենց  
դերեզմանատունը մէջը ըլլայ :

**Ա**բրահամ Խփլոնի այրը աս բա-  
նին համար ծախու առեր էր . ասու  
մէջն էր որ իր մարմինը , խահակը՝  
ու խամայէլը թաղէր էին : Հոս տեղն  
էր որ չչակոր ու իր եղլայրը Խսաւ  
իրենց հօրը խահակին մարմինը թա-  
զեր էին . Հոս տեղն էր որ Խարբա ,  
Ուերեկա , ու Խայ՝ թաղվէր էին . ու  
նոյն տեղն էր , որ հիմայ չչակոր  
կըբաղձար որ իր զաւկըները ինքը  
մեռնելէն ետև թաղեն : Ինքը սրտին

աս փափաքը լեցունելու այնչափ կը  
բաղձար որ ուրիշ բանով մը ինքը չի  
պիտի հաճէր թէ որ Հովսէփին եր-  
դում մը ընել չի տար՝ աս բանը ընե-  
լուն :

Յակոբ Հովսէփին բառ. թէ որ քու  
առջեղ շնորհք գտած եմ նէ, այսին-  
քըն, թէ որ իս ճշմարիս կըսիրես նէ,  
տղաս, ու կուզես ինծի մշկ մեծ երախ-  
տիք մը ընել, կաղաչեմ քեղի ղիր  
քու ձեռքդ իմ երանեխ տակը ու ինծի  
հետ մարդասիրաբար ու ճշմարտաբար  
վարվէ : Կաղաչեմ քեղի որ ինծի Եւ-  
զիպտոս չի թաղես, հապա կուզեմ որ  
իմ հարերուս քովը պառկիմ . իս Եւ-  
զիպտոսէն հանե, ու անսնց զերեղմա-  
նատունը տար ու իս թաղէ : Ու Հով-  
սէփ ալ ըստւ, ըստիդի պէս պիտի  
ընեմ . Հակոբն ալ ըստւ երդում մը  
ըրէ ինծի . Հովսէփ ալ ըրտւ . ու իս-  
բայէլ այսինքն, Հակոբ ինքը վլինքը  
իր գաւաղանին գլխուն վրայ կտթին-  
ցուց, ու Աստուծոյ երկրադութիւն

ըրաւ : Ի՞նքը դիմումն պատասխանին զլխուն  
 վրայ կութնցունելուն ողատճառը՝ իր  
 մարմինը տիկար ըլլալուն համար էր  
 ու աս կը ցուցըներ թէ որ չափ երեւ-  
 լի բան մըն էր չակորին որ իրենց մէ-  
 ջը ըրեր էին , ու որուն համար ինքը  
 ստանկ Վատուծոյ առ ջին երկրագու-  
 թիւն ըրեր էր իրեն օրհնութիւնը խնդ-  
 րելու համար : Վսկէ ետև չովսէփ տուն  
 դարձաւ ու զիտեր որ քիչ ժամանա-  
 կէն ինքը կը կին իր սիրելի հօրը մահ-  
 ուանը ովհատի կանցըվի : Վս չովսէփին  
 ըրած երդումը՝ մէկ խոստում մըն էր  
 որ իր հօրը ըրաւ , ու հիմակվան սովո-  
 րական կերպով եղած երդումներէն  
 ըոլորովին տարբեր էր : Վրիստոս մէ-  
 ջի պատուէր արւած է որ ամեննեին  
 երդում չընենք , ու անոնք որ հասարակ  
 խօսակցութեան մէջ ամէն ժամանակ  
 կը նեն՝ իր պատուիլանքը կաւրեն , ու  
 մէկ բարեպաշտ Վրիստոնեայ մը ամե-  
 նեին ասանկ բան չի կընար ընել :

ԳԼՈՒԽԸ. 1:

ՀՅԱՆԵՐԻՆ իր հօրը եղբայրը մշտակալու ժամանակը իր սովոր գործությունը համար ։ իր պատրի հետ առնելու ։ ՀՅԱՆԵՐԻՆ իր լաւագները իր դատիներուն ողէս ընդունելու ։ անոնք օրինելու ։  
Աս օրհնութեանը մինութիւննը :

**Ա**երջապէս ան վշտալի լուրերը  
ՀՅՈՎԱԿՎԻՆ եկաւ, որ հիմայ իր  
հայրը մահվան մօտեցերէ : ՀՅՈՎԱԿՎ  
արտորաց իր հայրը տեսնալու . որ իր  
վերջին վայրկեաններուն մեջը զինքը  
միսիթարէ, ու ամեն խնամքը ու հոգը  
տանի . որ ասանկ մեկ բարի ու մար-  
դասէր հօր մը արժանի էր :

Ինքը իր երկու տղան հետը առաւ  
Պանասէ ու Լափրեմ . որ առջինը քը-  
սանըհինդ տարուի չափ էր, ու վեր-  
ջինը մեկ տարու մը պակաս . հիմայ  
անոնց հայրը յիստունը վեց տարուի  
չափ էր :

Յակոր ան ժամանակը անանկ տկար

էր որ անկողինեն չեր կընար ելլար .  
սակայն երբոք ըաին՝ որ Յովսէփի եկեր  
է ինքը տեսնալու . այնչափ հաճելի  
եղաւ աս լուրը իրեն , ու անանկ  
զինքը կենդանացուց , որ բաւական  
զօրութիւն զտաւ անկողինին մէջը նըս-  
տելու , ու իր տղան բարևելու և ա-  
նոք հետ խօսելու :

Յակոք կուղէր որ մեռնելէն առաջ  
ամենեն հարկաւոր բաները անոր ըսէ ,  
ինքը յիշեց ան ուխտերը որ Աստ-  
ուած Վրբահամին , Խաչակին , ու ի-  
րեն ըրէր էր . ու կըբաղձար Յովսէ-  
փին խմացունելու թէ որչափ օպտա-  
կար պիտի ըլլար իրեն ու իր տղոցը :

Քանանու երկըին մէջը իրեն ե-  
րևալը ու ինքը օրչնելը . ու ան ժա-  
մանակի ըրած խոստումները անոր  
պատմեց որ իր զաւկըները սաստիկ  
պիտի բաղմանան որոնց Քանանու եր-  
կիրը պիտի տայ յաւխտեան ժառան-  
դութեան համար :

Անկէ ետև ինքը Յովսէփին ըստ

որ Աշնասէն ու Երփրեմը իր զաւկընն  
բուն տեղը զբած է, ու իր ընտանիքին  
մեկ մասը սեպած է իր զաւկըններուն  
ալէս, ու անոնք և անոնցմէ, եղողները  
իրեն ու բոլոր իր զաւկըններուն խոս-  
տացված օրհնութիւններուն ժառան-  
դակից սեպեց :

Անոր հաւատքը հաստատուն էր  
Վասուծոյ խոստումներուն վրայ . ա-  
մեննեին տարակոյս չունէր անոնց կա-  
տարվելուն, որ իր զաւկընները կրկին  
իրենց հօրերնուն երկիրը պիտի դառ-  
նային : Վասոր համար էր որ Յակոբ  
Հովսեփին երդում ընել տըւաւ . որ  
իր մարմինը քանան դարձունէ : Յա-  
կոբ կուղէր որ աս բանը ընելովը, ու  
հիմակու ըսած խօսքերովը իր տղին  
ու անոր տղոցը ու անոնց զաւկըններուն  
սրտին մեջը մեկ զօրաւոր սէր մը յա-  
ռաջ բերել տայ իրենց հայրերուն  
երկրին վրայ, որ հոն դառնալու սաս-  
տիկ բաղձաներ մը ունենան որչափ շու-  
տով որ նախախնամութիւնը ճամբայ  
բանալու բլար :

Իր ՚Քանանու վրայ ունեցած սէրը՝  
մահուան մէջը անդամ խիստ շատ էր :  
Հնքը հոն թաղվելու համար մեծ ու-  
րախութիւն մը կըզգար :

**Ա**ս տեղին անցած դաշաճ բանելը  
իր սիրտը առաւել քաղցր յիշողու-  
թիւններով լեցուցին . ու նաև չա-  
կոր իր սիրելի երկրին համար հովե-  
փին միտքին վրայ ուրիշ տպաւորու-  
թիւն մը ուներ ընելու ան անցած  
դիտուածներուն մէկը իր միտքը բե-  
րել տալով , որ մէկ դաւակ մը ա-  
ռանց խիղճը շարժելու չի կընար խոր-  
հիլ :

“Յակոր աղնիւ նահապետը բաւ ,  
երբոր ես Շառլոց միջաղետէն կու-  
գայի , Ուաքէլ ճամբան՝ ՚Քանանու-  
երկրին մէջը քովս մեռաւ երբոր  
քիչ ճամբայ մնացեր էր ՚Քաքրատ  
հասնելու , ու ինքը հոն ՚Քաքրատին  
ճամբուն մէջը թաղեցի” : Խոլոր աղ-  
պերը ան տեղը կըսիրեն , ուր տեղ որ  
իրենց նախնիքներուն ուկորները

**Թաղված են :** Ո՞՛չ . մեր հայրերուն  
դերեզմանները : Որչափ աղջու մը  
տածմունքներ յառաջ կըքերէ աս  
խօսքը : Ո՞վ կընայ առանց խորին  
զգացումով մը ան տեղին վրայօք խոր-  
հել , ուր տեղ որ մեկ ծնողը մը եղ-  
րօք կամ քլոջ մը աղքականի մը կամ  
բարեկամներու մարմինները թաղված  
են :

**Կարծեմ թէ իր հօրը գորոշաբժ**  
պատմութիւնը Ուաքէլին մահուանը  
ու թաղվելուն վրայօք Հովսէփին սիր-  
ոք սուդով լեցուց , ու իր որդիական  
երախտազիտութեանը արցունքները  
սկսեց աչվըներէն վաղել իր սիրելի  
մօրը յիշատակութիւնը միտքը գա-  
լով : Հակոբին ծերութիւնը զբէթէ  
աչքին լուսերը տարեր էր . քիչ մը  
կըտեսնար բայց շատ անորոշ . “ա-  
սոնք ով են” բաւ ինքը երբոք երկու  
երիտասարդ մարդիկ իր աղօտ տեսու-  
թեամբը տեսաւ , որոնք իր անկողինին  
քովը կայներ էին :

“ Ա Նոնք իմ զաւկընելոս են” ըստ  
Յովսէփ որոնք Աստուած ինձի հռա  
տեղ տրւաւ :

Ի՞ն ժամանակը սիրով Յակոբ ա-  
նոնց հօրը ըստ, կաղաչեմ քեղի ին-  
ձի բեր անոնք որ օրհնեմ :

Ու անոնք անոր քովը դացածնուն  
պէս զրկեց ու պաղաւ, ու Յովսէփին  
ըստ, ամենելին յոյս չունեի քեղ  
կը կին տեսնալու . բայց Աստուած ար-  
ժանի ըրաւ ոչ թէ միայն քեղ տես-  
նալու հապա քու դաւկընելող ալ :

Ետքը Յովսէփ իր զաւկընելը հօրը  
զիրկէն ետ առաւ ու իր երեսը դէպի  
զետինը խոնարհեցուց : Ասանկ ըրաւ  
որ Յակոբին ու բոլոր չորս կողմի մար-  
դիկներուն ցուցընէ թէ ինչ սէր ու  
պատիւ ունի իր սիրելի հօրը վրայ, ու  
ինչպէս ինքը գեղիալոսի հա-  
րուստ ու զօրաւոր կառավարը ըլալը  
բոլորովին մոռցեր էր, երբոր ինքը  
հասարակ զաւկի մը պէս իր հօրը

մահուանը անկողինին քովը կայնել  
էլ :

Յովսէփ ելաւ ու կրկին իր տղաքը  
իր հօրը քովը բերաւ որ անոր օրհն  
նութիւնը առնեն : Աս ընելովը հովսէփի կուղէր որ իր հայրը ինտոր որ  
սովորութիւն էր՝ օրհնած ժամանակը  
իր աջ ձեռքը մեծ տղին զլխուն ու  
ձախ ձեռքը պղտի տղին զլխուն վրայ  
զնէ :

Անոր համար հովսէփի իր աջ ձեռքովը Ափրեմը բռնեց ու դէպի հակոբին ձախ ձեռքին տարաւ . ու իր ձախ ձեռքովը Ամասէն բռնեց ու գէպ՝ ի հակոբին աջ ձեռքին տարաւ :

Սակայն շատ զարմացաւ , երբոր տեսաւ որ իր հայրը մէկէնիմէկ իր ձեռվնելը խաչածե ըրաւ , որ իր աջ ձեռքը Ափրեմին պղտիկին զլխուն վրայ , ու իր ձախ ձեռքը Ամասէին մեծին զլխուն վրայ դրաւ , ու ասանկ սկսեց Աստուծոյ օրհնութիւնը խնդրել անոնց վրայ :

և Ու Հակոբ Հավաքփը օրհնեց անոր  
դաւկըները օրհնած ժամանակը ու ը-  
ստ . Աստուած՝ որուն առջին իմ հա-  
րեխս Աքրահամ ու Խառհակ հաճելի  
եղան այսինքն զինքը սիրեցին ու իրեն  
հնազանդեցան . ան Աստուածը՝ որ  
բոլոր իմ կեանքիս մէջը մինչև աս օրս  
իս կերակրեց . ան հրեշտակը՝ որ իս  
բոլոր ան վնասներէն ազատեց . օրհ-  
նեն աս զաւկըները . ու իմ անունս ու  
իմհարերուս Աքրահամին ու Խառհա-  
կին անունները ասոնց վրայ կանչվին ,  
ու երկրիս մէջ տեղը աճին ու բազ-  
մանան :

Երկար ժամանակ կը քշէ թէ որ  
Հակոբին գործածած հրեշտակ բառին  
մեկնութիւնը տալու ըլլանք : Ըստ  
ուսումնական ու բարեպաշտ մարդիկ-  
ներ կը խորհին թէ ան Աստուծոյ որդ-  
ւոյն իրեն համար էր , որ ետքը վար  
ինջաւ աշխարհին մէջը ապրելու  
ու մեռնելու , որուն համար որ Հակոբ  
ըսեր էր : Թէ որ ասանկ է նէ Հակոբ

աղէկ զրուցեր էր անոր համար որ բռ  
լոր վնասներէն ինքը փրկեր էր , ու  
աղաջեր էր՝ որ բոլոր իր օրհնութիւն  
ները հովսէփին դաւկըներուն վրայ  
գայ . ու նաև բոլոր գէշտութիւններէն  
հեռու ողահէ :

Ինչու որ զիտէք թէ ՚Քրիստոս է,  
զերաղանց Փրկվէք . որ իրէն յուսա-  
ցողները մեղքէն ու դժողքէն փրկելու  
համար խաչին վրայ արուն թափեց ,  
ու անոնք կօրհնէ ու փորձութիւննե-  
րէն հեռու կըպահէ , և վերջապէս  
երկինքի թաղաւորութեանը մէջ յա-  
ւիտէան իր քովք կառնէ :

Յակոբին աս աղօթքը ընելուն դի-  
տաւորութիւնը որ իր անունը . ու Վ.ք.  
րահամին ու Խառհասէին անունները  
Եփումին ու Ո՞անասէին վրայ կանչը-  
վի . աս էր որ Վ.ստուծոյ կարողու-  
թեամբը անոնք ան մեծ ընտանիքին  
հետ միաւորէ որուն մէջը ինքը , ու իր  
հարը՝ ու հօրը հարը ընակէր էին . ու  
ասանկ անոնք ժառանդակից ըլլան ան-

օրհնութիւններուն՝ որ Եմասուած Աք-  
րահամին, Խսահակին, ու իրեն ու ա-  
նոնց զաւկըներուն խոստացեր էր :

Յակոբին աղօթքը որ Ափընմին ու  
Ո՞նսասէին զաւկըները աճին ու բաղ-  
մանան, վերջը յետագոյ տարիներուն  
մէջը սքանչելի կերպով մը կատարվե-  
ցաւ :

Ինչու որ՝ Յակոբին ըրած աղօթքէն  
երկու հարիւր քառսուն տարիի չափ  
անցնելէն ետև . Ո՞վլսէսի ժամանա-  
կը, անոնց դաւկըներուն թիւը՝ որոնք  
բսան տարեկան ու անկէ էվել էին,  
ու կընային ալ պատերազմի երթալ,  
ութսունըհինդ հաղար երկու հարիւր  
կըհաշուեր, որ Յակոբին միւս տղոցը  
մէջի գտնըլած զաւկըներէն շատ է-  
վելի էին :

ԳԱՅԻ ԽՈՅ. 15:

ՀՅԱԿԻՆ էր օրհնութեանը ՀՅԱՀԵՔԻՆ առջև  
վըսոյ լընդունելը : ՀՅԱՀԵՔԻՆ բաժինը : ՀՅ-  
ԱԿԻՆ հարգաբարեանեանը , ու էր զաւկեաները  
օրհնելը : Խար համը : Արդեօք առ կորդացացը  
իւղկը մ որ ՀՅԱԿԻՆ պէս մէտնէ :

Արբոր ՀՅԱՎԵՔԻ տեսաւ որ հայրը  
իր աջ ձեռքը Եփրեմին գլխուն  
վրայ դրեր էր . ինքը նեղացաւ ու իր  
հօրը ձեռքը Եփրեմին գլխուն վրայէն  
վերցուց որ Մանասէին գլխուն վրայ  
դնէ : Ու ՀՅԱՎԵՔԻ իր հօրը ըսաւ . ա-  
տանեկ չըլլար իմ հայրս . ինչու որ ա-  
սիկա է անդրանիկը . քու աջ ձեռքդ  
անոր գլխուն վրայ դիր : Բայց իր  
հայրը մերժեց ու ըսաւ ես գիտեմ .  
զաւակս , ես դիտեմ . ան ալ ազգ մը  
պիտի ըլլայ ու պիտի մեծնայ , այսին-  
քըն Ա անասէին զաւկլները պիտի  
շատնան ու զօրանան : Բայց Ճշմարիտ  
անոր պզտի եղբայրը իրմէ մեծ պիտի

ըլլայ ու անոր զաւկըները շատ աղքեր  
պիտի ըլլան :

Յակոբ՝ Յովսէփին զաւկըներուն  
վրայ իր օրհնութիւնը լմնցընելու ժա-  
մանակը ըստւ, քեզմով Խորայէլը  
(կամ իմ զաւկըներա Խորայէլացիները)  
օրհնեն ու ըսեն. Վստուած քեզի Եփ-  
րեմին ու Վանասէին պէս ընէ, ու ին-  
քը Եփրէմը Վանասէին առջեր դը-  
րաւ: Վսով Յակոբ ըսել կուզէր,  
որ Եփրէմը ու իր զաւկըները որոնց  
բոլորին մէկ տեղ Եփրէմ կուլէր շատ  
դօրաւոր ու յաջող պիտի ըլլան, ու  
նաև Վանասէն ու անոր զաւկըներն  
ալ նոյնը պիտի ըլլային. որ Խորայէ-  
լի ժողովուրդը ասիկա տեսնալով նին  
երբոր ուզէին մէկու մը համար օրհ-  
նութիւն խնդրել աղօթք ընէին որ  
Վստուած անիկա Եփրէմին ու Վանա-  
սէին յեղին մարդոցը պէս յաջող ը-  
նէ : Յակոբ աս օրհնութիւնը ինքը  
մեռնելէն առաջ իր թոռներուն ու իր  
զաւկըներուն կուտար՝ անշուշտ ինքը

Աստուծոյ մէկ յատուկ հոգւոյն զօրու  
թեանը տակը եղած պիտի ըլլար , որ  
կարող եղաւ աս կերպով առաջ նայե-  
լու ու իր դաւկըներուն պատահելու  
բաներուն վրայօք մարդարէանալու .  
որ ետքը իր մարդարէութիւնները  
շատ երևելի կերպով մը լեցուեցաւ :

**Հ**իմայ ինքը սկսեց իր մահուանը  
մօտենալուն խօսքերը զուրցել . ահա  
ես պիտի մեռնիմ . բայց Եստուած  
քեղի հետ ըլլայ (ըստ Յովսէփին) ու  
քեզ կըկին քու հարերուդ երկիրը  
տանի . այսինքն Եստուած կըկին քու  
դաւկըներդ , ու միւս տղոցս դաւկընե-  
րը և բոլոր խարայէլացւոց աղջը ե-  
զիալտուէն պիտի հանէ , ու կըկին  
քանան դարձընէ :

“**Դ**արձեալ” քու եղբայրներուդ ու  
նեցած երկրին ժառանգութենէն մէկ  
մաս մըն ալ էվել տըւի քեզի . որ իմ  
սուրովս ու աղեղովս Եմորհացւոց  
ձեռքէն առեր էի :

Կըկարձըվի թէ ան երկրին մասը

որ ասանկ չչակոր չչովսէփին ու անոր  
 դաւկընելուն ընծայ ըրաւ Ախւքէմին  
 մէջն էր, ու նոյն տեղը Խմօրին զաւ-  
 կըներէն ծախու առեր էր : Հաւանա-  
 կան է որ՝ Ամօրհացիք բոնութեամբ  
 աս տեղը չչակորին ձեռքէն առեր է-  
 ին ու ինքն ալ ետքը նոյն տեղին հա-  
 մար պատերազմ ընելով կըկին առեր  
 էր : Շոս տեղն էր որ ետքը չչովսէ-  
 փին մարմինը թաղեր էին . աս նոյն  
 տեղն է որ չչովհաննու Վւետարանին  
 ըրբորդ գլխուն մէջը զբուած է . ուր  
 տեղ մեր Փրկիչին ինոռոր Աեքար եր-  
 թալը կըզրցուվի ան երկրին մօտ որ  
 չչակոր իր տղին չչովսէփին տըւեր  
 էր : Հիմայ աս ծեր նահապետը ա-  
 ռաւել երևելի ու հարկաւոր պաշտօն  
 մը ուներ կատարելու . այսինքն իր  
 տղոցը մարգարէական նշան մը տալու  
 որ զիտնան, թէ իրենց զաւկըները  
 ինչ պիտի ըլլան բուն իրենց ընտա-  
 նիքներուն կամ ցեղերուն մէջէն, եր-

բոր ՚ Քանանու երկիրը ժառանգելու  
ըլլան :

Մէկ տեղ ժողվրսիցէք, ըստ  
Յակոբ որ վերջին օրերը ձեզի պատա-  
հելու բաները ըսեմ : Մէկ տեղ ե-  
կէք ու լսեցէք ով դուք Յակոբին զաւ-  
կըները . ականջ դրէք ձեր հօրը Խ-  
րայէլին : Հոն բոլոր տասվելիկուքն ալ  
առանց մէկին պակսընտուն իրենց սի-  
րելի հօրը մեռնելու անկողինին չորս  
կողմը կայնեցան : Ինչ երևելի տեսա-  
րան մըն էր իրեն, որ ինքը ու անոնք  
այնչափ փորձութիւններէ ու փոփո-  
խութիւններէ անցնելնուն ետքը՝ միայն  
կրկին մէկզմէկ գտնան ու վայելին :  
Աւ նաև անոնց ալ ինչ ազգու խրատ-  
ներ ու զարմանալի մարգարէութիւն-  
ներ էր . որ մէկու մը սկոկունքներէն  
լսեցին, որն որ ան անտեսանելի աշ-  
խարհը մտնալու վրայ էր ապառնի  
ըլլալու բաները իր առջին փուլած  
ունենալով :

Երկար ժամանակ պիտի քշէ թէ որ

Յակոբին աս մարգարէութեանը յատ-  
կութիւնները մասնաւորաբար պատ-  
մելու ըլլանք : Խճէպէտ ինքիրեննիդ  
կլնաբ կարդար . կամ թէ ձեր ծնողա-  
ցը ու վարժապետներնուդ կամ անոնց  
տրված զիրքերուն օգնականութեամ-  
բը կրնաբ սորպիլ : Ինչու որ՝ անոր  
մէջը շատ բաններ կը զանըվի որ դժուար  
է հասկընտլը . բայց երբոր ձեր հա-  
սակը ու ընդունակութիւնը յարմարե-  
լու ըլլայ , ան ժամանակը անոր մէջէն  
շատ բաններ պիտի դանաք որ պատ-  
ճառ պիտի ըլլան ան Վատուծոյ դար-  
մանալի նախախնամութեանը վրայ  
ձեզ զարմացընելու , ու Սուրբ գրոց  
Ճշմարտութիւնը տեսնալու աս զարմա-  
նալի մարդարէութիւնը կատարվելո-  
վը , որ այնչափ տարի առաջ դուշակ-  
վեր էր :

Աս խօսքերը դրուցելէն ու իր ամեն  
մէկ տղան օրհնելէն ետև . Յակոբ մէկ  
ծանր կերպով մը անոնց պատուիրեց ,  
որ ինքը քերը ըլլի մօտ Վամբրէի ա-

դարակին մէջ իր հարերուն քոլը  
թաղեն :

Մինչև աս ժամանակ չակոր իր  
անկողինին վրայ նստած էր՝ թէպէտ  
ինքը մարմնով տկար էր. բայց իր սի-  
րելի չովսէփը տեսնալուն, ու իր  
մոքին մէջի եղած օգտակար մտած-  
մունքներէն մէկ ժամանակաւոր զօրու.  
Թիւն մը ստացեր էր : « Եաւ մարդա-  
րէական հողին ալ՝ որ անոր վրայ ե-  
կեր էր՝ իր հոգւոյն զօրութիւնը սովո-  
րական պայծառութենէն էվել լուսա-  
ւորվեր էր . որ անոր չորս կողմի ե-  
ղողները հաղիւ կընային հաւատալ,  
որ իրենց լաւծները մահուան վերջի  
կէտին հասնող մէկու մը բերնէն կել-  
լէր :

Բայց հիմայ չակոր իր վերջին ե-  
րեկի պարտականութիւնները կատա-  
րեր էր : Իր տղոցը իր վերջին օրհ-  
նութիւնը տըւեր էր : Ու երբոր իր ը-  
րած աշխատութիւններէն հողնած տե-  
սաւ որ ալ ինքը կըմարէրկոր ու մեռ-

նելու վրայ էր, ուզեց որ ինքը պիտի  
 մէկ հանդարտ վիճակի մը մէջ դնէ .  
 ասանկ իր ոտվըները անկողինին մէջը  
 բաշելով ու մէկ կողմը կծկըտելով  
 խաղաղութեամբ իր վերջին շունչը  
 կտրեց ու իր հողին զինքը ստեղծողին  
 ձեռքը յանձնեց : Տիրոջը առջին  
 պատուական է իր սրբերուն մահը :  
 Արդարին մահուանը պէս մեռնիմ . ու  
 իմ վախճանս անոր վախճանին պէս  
 ըլլայ : Արդեօք կուզէք մի ասանկ  
 մեռնիլ . Աստուծոյ ապաւինեցէք՝  
 ինչպէս որ Յակոբ ըրաւ . Վրիստոսի  
 ապաւինեցէք որ իր միայն փրկիչ ըլ-  
 լալը ձեզի կատարեալ յայտնըված  
 է : Աիրեցէք անիկա . հնապանդ եղիք  
 անոր . ջանք ըրէք որ դուք ձեզ անոր  
 նմանցընէք : Դուք ձեզ բոլորովին ա-  
 նոր տըւէք՝ ուրիշներուն աղէկութիւն  
 ընելով որ շատ մէկ դուարձալի գործ  
 մըն է ճշմարիտ Վրիստոնէի մը :  
 Գիտցէք որ դուք Յակոբին պէս աշ-  
 խարհիս վրայ օտարական մը ու պան-

դուխտ մըն էք : Աշխարհը մի սիրէք  
ձեր յոյսը երկինքին վրայ դրէ՛ք : Յա-  
կորին պէս հաւատքով ապրեցէ՛ք :  
Խնդրեցէք որ երբոր բոլոր բաներէն  
ձեռք քաշելու ըլլաք ան երկինքի մշջի  
խոստացեալ քանանու երկիրը եր-  
թաք՝ ուր տեղ որ միայն յաւիտենա-  
կան հանգատութիւնն կընաք գտնալ :

Ան ժամանակը Յակորին պէս ա-  
ռանց ահի ու խաղաղաբար ու քաղթ-  
ընթեամբ կընաք մեռնիր . և պատ-  
րաստ ըլլալ աս հոգերով ու փորձու-  
թիւններով լեցուն աշխարհը թողե-  
լու , ու երկինքը երթալու , ու յա-  
ւիտեան Տիրոջը հետ ապրելու :

Գ. Ե. Ա. Խ. Խ. Ե. Լ. Բ. :

Յաշուկին արդարաւելի-նը էր հօրը մտա-  
հելու-ն վըսոյ : Անոնք նորմինը համեմատելով  
պատրիս-համար չափական հրամայելը : Յա-  
խինին համար եղած սոս-բը : Անոնք թաղաւորը .  
անոնք Անմըրել այսին մշջը լառումնիւք . Յաշ-  
ուկին և այլայրաներուն պատրիսը մշջը համար  
անեցած վայելունին : Արեւ շոր ենոք մը սո-  
նեցուն նեղութեանելը :

**Յ**ովսէփ շատ վիշտ զգաց իր հօրը  
մահուանը վրայ . ինքը անոր երե-  
սին վրայ ինկաւ ու լացաւ , ու պա-  
զու անիւկա : Ինչ զօրաւոր սէր մը ու-  
նեցած պիտի ըլլայ իր հօրը վրայ . ու  
ինչ խորին տրտութիւն մը զգացած  
պիտի ըլլայ անկէ զատվելուն համար :  
Արեւնելու ժամանակը անոր ազգը  
նէրը զոցեց , ու հիմայ ինքը կուզեր  
որ ամեն մէկ պատւոյ նշանը իրեն ցու-  
ցընէ . ու ինքը անանկ կերպով մը  
թաղէ , որ իր հայրը որչափ սիրելը

ու անիկա յարդելը իր եղբայրները ու  
Եղիպտացիները տեսնան :

Յովսէփի իր սեպհական բժիշկներուն հրաման ըրաւ որ ան ժամանակի սովորութեանը պէս իր հայրը համեմներով պատեն : Աս անանկ մէկ զարմանալի բան մըն էր որ չէր թողեր մէկ մեռած մարմին մը փառելու , ու ան մարմինին կերպարանքը ու պատկերը անանկ մէկ կերպով մը կըպահէր որ շատ տարիներ կըմնար :

Քառասուն օր աշխատեցան աս գործողութիւնը կառարելու . բայց առջի երսուն օրվանը մէջ պէտք եղած հարկաւոր բաները պատրաստեցին , ու բոլորը եօթանսասուն օրվան մէջ կառարեցին :

Ասիկա Հովսէփին , ու Հակոբին ընտանիքին մէկ յարմար միջոց մըն էր սուգ ընելու . որ կըսեն թէ նոյն ժամանակը , Եղիպտացիները անոնց հետ մէկտեղեցան . ու աս կերպովս յայտնեցին թէ Փարաւոն , ու իր ժողովուր-

Դը ՀՅՈՎԱԵՎԻԾ ԵՆՁԱԼԷՍ ԿՐԱՎԱՏՈՒԵՒԻՆ ,  
ու ԵՆՁԱԼԷՍ ԿՐՁԱՆԱՅԻՆ ԱՆՈՐ ՍԻՐԵԼԻ  
ՀՕՐԸ ՄԱՀՎԱՆԸ ՀԱՄԱՐ ԱՍ ՄՈՐՄՈՒ-  
ԹԵԱՆ Նշանովը ԻՐԵՆԸ յարգը ցուցը-  
ՆԵԼՈՒ :

ԵՅԹԱՆԱՍՈՒՆ օՐՎՐՆԵ ԵՄԱԿ ՀՅՈՎԱԵՎԻ  
ՀՐԱՄԱՆ ԱՊԱԽ ՓԱՐԱԼՈՒՆԻՆ ՎՐԱՆԱՆ  
ԵՐԹԱԼՈՒ , ու ՀՌՆ ԻՐ ՀԱՅՐԸ ԹԱՂԵԼՈՒ .  
ՈՐ ԵՐԳՈՒՄՈՎ ՄԸ ԽՈՎԱՏԱԳԵՐ ԷՐ ԱՍ  
ՔԱՆԸ ԸՆԵԼՈՒ :

Ը ԱՄ ՄԵԾ ՀԱՆՂԻՄԱՎՈՐ ԹԱՂՈՒՄ  
ՄԸՆ ԷՐ . ՀՅՈՎԱԵՎԻ ՈՒ ԲՈԼՈՐ ԻՐ Եղքայր-  
ՆԵՐԸ ԻՐԵՆԸ ԸՆՏՈՒՆԻՔՆՈՎ ՆԻՆ Բաց ՚ի  
ԱՂՑՈՒԻ ՄՊԼԱՔՆԵՐԵՆ , ԱՄԼՆԸ ՄԵԼ ՄԵՂ-  
ՂԱԳԻՆ , ԱՍՈՆՑՄԵ ՚ի ՊԱՄ ՆԱԿ ԲՈԼՈՐ  
ՄԵՐՈՒԹԵԱՆ ՊՈՐՃԱԿԱԼՆԵՐԸ , Ու ԻՐ  
ՄՊԱՆԸ ԱՊՆՈՒԱԿԱՆՆԵՐԸ , Ու ԼՇԳԻՎՈՒՍԻ  
ՃԵՐՈՒՆԻՆՆԵՐԸ , Ու ԱՂԱՏՈՒԱԼՈՐ ԲԱՐ-  
ՂԻԼՆԵՐԸ , Ու ԱՆՈՐ ՀԵՄ ՄԵՅՄԵՂ ԿԱՌ-  
ՔԵՐ ՈՒ ՃԻԱԼՈՐՆԵՐ ԵԼԱՆ Ու ԱՆ ՄԵԼ ՄԵԾ  
ԽՈՎՈՄԸ ՄԸ Եղաւ :

ԱՆ ՄԵՂԸ ՈՐ ԱՍ ԱՆԹԻՒ Ու ՀՈյա-  
ԿԱՎ ՀԱՆՂԷԱԸ ԱՂՑՈՒԻ ԵՐԹԱՐ ՄԵԼ ՔԱ-  
32 Ծ

Նի հարիւր մղոն հեռու էր , ու երբոք  
Վանանու մէջ հասան , ու ան տեղը  
եկան որ Վատադ կըսվէր , հոն ինչալէս  
որ սովորութիւն էր իրենց սրտին  
արտօմութիւնը շատ մեծ ու սաստիկ  
ողբումով մը յայտնեցին : Ու աս կեր-  
պով իրենց սուզը եօթը օր շարունա-  
կեցին :

Հոս տեղի մօտ բնակող Վանա-  
նացինները երբոք աս սքանչելի տեսա-  
լրանը տեսան ըսին . աս անտանելի  
մէկ սուդ մըն է Եղիպատացիններուն ,  
ու ետքը հոն տեղին սուդ Եղիպատոսի  
ըսվեցաւ :

Աս տեղէն ան հանդիսաւոր բազ-  
մութիւնը մինչև Վերբով եկան ու  
հոն Ատմբրէի այրին մէջ Աբրահա-  
մին , Խաչակին , Առուային , Ուերե-  
կային ու Լիային քով հակոբն ալ-  
թաղվեցաւ (ինչալէս որ երդումով մը  
խօսք տալ տըւեր էր իրեն տղոցը աս  
բանը ընելու : )

Աս իրենց մեռած Ճնողքին վեր-

ջին տրտմալի պաշտօնը կատարելնուն  
ետև . Հյովսէփու ու իր եղբայրները ու  
բոլոր իրենց հետ եղողները Վզիպտոս  
դարձան :

Հիմայ որ իրենց հայրը մեռած էր՝  
Հյովսէփին եղբայրները սկսեցին վախ-  
նալ որ անկէ ետև ալ մէկ պատճառ  
մը չի պիտի ունենայ իրենց հետ մար-  
դասիրութեամբ վարվելու : Անոր ըս-  
տոյդ բնաւորութիւնը՝ իր Աստուածա-  
վախ մարդ մը ըլլալը ու բարեսէր և  
ողորմած հողի մը ունենալը մինչեւ  
հիմայ չէին հասկըցեր : Անոնք կը-  
կարծէին որ տակաւին իրենց առջի ը-  
րած անողորմութիւնը ու չարութիւնը  
բարկութեան կիրքերով միտքը պա-  
հած էր . կըխորհէին որ աս զգա-  
ցումները տակաւին ծածկած պահեր  
էր , ու միայն իրենց հօրը պատւոյն  
համար իրենց հետ մարդասիրաբար  
կըվարվէր . ու նաև չէր ալ ուղեր որ  
իր տղոցը մէջ հակառակութիւն մը  
տեսնալով , իր մեռնելու օրերուն մէ-

ջը իր սիրալը վերաւորէ : Բայց հետապնդայ , ըստին , ալ Հովսէփին զգացումներուն վրայ առ արդելքը չի մնաց , անոնց պաշտպանը գնաց . ալ ուրիշ մէկը չի կայ որ իրենց ու բարկացեալ եղբօրնուն մէջ տեղը մի ջնորդ ըլլայ . ու իրենք կըդողային անոր վրէժխնդրութեանը ակնկալութիւնովը :

Հիմայ իմ սիրելի տղաքներս առ բանին մէջը դուք տուաւել զարմանալի վկայութիւն մը պիտի տեսնաք , որ մեղքին թշուառութիւնը կըցուցընէ :

Յովսէփին եղբայրները տակաւին իրենց առջի ըրած անօրէնութեանը յիշատակութիւնը իրենց մտքին մէջը աղէկ պահեր էին , որչափ ժամանակ երբոր Հովսէփը կըտեսնային , ան ձեռդայիմին մէջի եղած բաները առջենին կուգար , ու ինքը զինքնին կընախատէին ու կըդողային :

Կըտեսնային որ՝ ինքը իր պաշտօնին ազնիւ հանդերձներով հաղված էր . բայց անոնց խորհուրդը մի միայն

ան իր գեղեցիկ համզերձին վրայ էր ,  
որ արունեն մէջը թաթխեր էին . ու  
անով անանկ մէկ գէշ խարէութիւն  
մը ըրեր էին իրենց ողոքմելի հօրը :

Կըտեսնային որ ինքը իշխանութիւնով ու պատուի նստած էր կամ թէ իր փայլուն կառքը հեծած էր .  
բայց առաւել ան զարմանալի փոսին պատկերը միտքելնին կուգար . որուն մէջը իրենց եղբայրը նետեր էին . ու ան խամայէլացիները որոնց գերիի մը պէս ծախեր էին :

**Ա**սանկ է , որ անցած դացած մեղքերը վերջը մարդուն միտքը կուգայ , ու խիղճը կարթնցնէ , որ ան չար մեղաւորը մեծ տանջանքներով սաստէ :

Ու խիղճը մեղաւորին կիմացընէ թէ ,  
որչափ արդարութեամբ ինքը արժանի է պատժըվելու :

**Ա**ս նոյն բանն էր՝ որ հօվսէփին եղբայրները այնչափ վախցուց . որ ան իրենք սաստիկ պիտի պատժէ :

Իրենք զիտէին որ պատիմի արժանի էին . ու նաև թէ որ բոլոր իրենց եղած ըրածներնին զիտցըվէր : Եւ զիտացիները ու ուրիշ ամեն մարդ պիտի խորհէին թէ անհնարին է որ անոնք առանց պատիմի անցնին

---

### ԴԱՌԱԽՈՅ. 19:

Ճական եպայրներուն ներկաւ է ինձը իւնիւն : Ճական հարդարականութիւնը , ու իւնիւն չափութիւնը հանդարականութիւնը : Անոնց շնորհականութիւնները՝ Ճական , ու Արդարածոյ : Արդեօք առ իրդացողը մասնաւուն գեշտելիւն ըրած է՞ ՞ : Ալ չնշղես իւստոյ անոր վըսյօ :

**Ճ**ովսէփին բարկութիւնը իջեցընելու համար , խորհէցան որ մէկ բոլորով սրտիւ խնդրուածք մը ընեն իրեն : Անոնք ան մեծ պատիւը զիտէին , որ միշտ իր հօրը կըցուցընէր , ու ան սրտեռանդ սէրը որով անոր

յիշատակութիւնը միշտ իր միտքին  
մէջը կըպահէէր :

Անոր համար իրենք շիտակ Յովսէ-  
փին երթալու վախնալնուն իրենց  
կողմանէ մէկը խրկեցին անոր , որ  
ըլլայ թէ անոր բարկութիւնը իրենց  
դէմ շարժի : ‘Ասե կարելի է թէ ան-  
մարդը՝ որուն աղաչեր էին իրենց տե-  
ղը Յովսէփին երթալու , հարազատ  
բարեկամութիւն մը ունէր անոր հետ’  
իր վարքին աղնուռթեանը ու պատ-  
ուականութեանը համար , որ կարող-  
պիտի ըլլար բոլորովին իրենց դէշ  
վարքելնուն ներումը ընդունելու :

Բայց գլխաւորաբար իրենց յոյսը  
աս մարդուն երթալուն վրայ զբեր է-  
ին . ինչու որ ան խրկելու մարդերնին  
խրատեր էին որ Յովսէփին ըսէ՝ քու  
հայրդ պատուիրեց ինքը մեռնելէն ա-  
ռաջ ըսելով թէ՝ ասանկ պիտի ըսէք  
Յովսէփին կաղաչեմ հիմայ քեզի ,  
ներէ քու եղբայրներուդ յանցանքը ու  
անոնց մեղքը՝ որ քեզի դէմ ըրած են :

Ու հիմայ կաղաչենք քեզի թողութիւնը քու հօրդ Աստուծոյ ծառաներուն : Ենոնց ըրած աս աղաչանքը ողորմած զգացումներ ունեցող մէկ զաւկի մը ըրել էին . անանկ մէկ զաւկի մը , որ միշտ հնազանդութեամբ իր հօրը հրամանները ու խնդրուածքները կը կատարէլ . ու անոր վրայ ունեցած սէրը միօրինակ ու հաստատուն էլ :

Ենոնց ըրած աս աղաչանքը՝ Աստուծոյ մէկ բարեպաշտ բարեկամին ըրել էին , որուն նախնիքներուն , ու հօրը Աստուծոյն խոստովաններ էին իրենք հաւատալու , ու համարձակ ըսեր էին անոր ծառանները ըլլալու : Ասոնք մէկ հօր մը զաւկըներ էին . ամենը միևնոյն Աստուծոյն հաւատացող , ու չովսէփին հետ Աբրահամին , Խասհակին , ու չակորին խոստացած օրհնութիւններուն մասնակից ըլլալովնին , հիմայ անկէ ներում կը խընդըհին :

Յովսէփ շատ զթած ու բարերար

զգացումներ ունէր . ու անանկ ազնիւ  
բնութիւն մը որ ամենելին անոնց ա-  
սանկ անարդութիւն մը ու վրէժխնդ-  
րութիւն մը ընել՝ կարելի է որ միտ-  
քէն անդամ չէր անցներ . իր առ  
Աստուած ունեցած պարտականու-  
թիւնները յայտնի կիմանար բոլոր ի-  
րեն ըրած բարերարութիւններուն հա-  
մար . ինքը միշտ իր ընկերներուն  
մարդասիրութիւնը սիրով կըպահէր .  
ու իր տկարութիւնը ու մեղանչական  
ըլլալը՝ յայտնի զգալով՝ չի կընաց ա-  
նոնց աղաչանքին դէմ կենալ :

**Աս** աղաչանքը անոր սրտին բոլոր  
բարի զգացումները արթնցուց : Իր  
մտքին առջին բերաւ իր հօրը քաղցը  
յիշատակութիւնները : Աստուած-  
պաշտութիւնը առաւել ջերմաբար իր  
սրտին մէջը փըռընկեցաւ , որ ինքը  
զինքը չի կընաց զսպել ու սկսեց լալ :

Կըկարծըվի թէ իսկոյն իր եղբայր-  
ները կանչել տրւաւ . ինչու որ կը-  
վի թէ անոնք ինքը տեսնալու դացին ,

ու ծռեցան՝ ինչպէս որ առաջ ըրեր  
էին, ու երկրապութիւն ըրին անոր :  
Ու ըսին ահա մենք քու ծառաներդ  
ենք . ու չովսէփ անոնց ըսաւ մի՛ վախ-  
նաք . ինչու որ իս Աստուծոյ տեղն է՞ք  
մի զբէր . ըսել կուղէր որ՝ ես ալ ձե-  
զի պէս մէկ մարդ մըն եմ : Ինչու համար  
ասանկ ահով ու դողով իմ առջևս  
կայներէք . միայն Աստուած է որ ձեր  
գործքերը պիտի դատէ . դուք միայն  
անոր պիտի տաք ձեր ըրածներուն  
համարը , անոր դէմ էր որ դուք մե-  
ղանչեցիք : Հիմայ ինքը ինքնիդ անոր  
առջևը խոնարհեցուցէք . ու խորին  
ապաշխարանքով իրմէն թողութիւնը  
խնդրեցէք : Իմ կողմանէս բոլոր ձեր  
վախները թող դադարին :

Դուք ինձի դէմ չարութիւն խոր-  
հեցաք . բայց Աստուած ինձի համար  
աղէկութիւն խորհեցաւ . ինչպէս ալ  
աս օրա եղաւ , որ շատ մարդիկ ողջ  
պահվեցան : Անոր համար հիմայ մի՛  
վախնաք . ես ձեզ ու ձեր զաւկըները

պիտի կերակրեմ . ու ի՞նքը անոնք կը միխթարէր ու մարդասիրաբար անոնց հետ կըխօսէր :

Ի՞նչ քաջալերութիւն մը եղած պիտի ըլլայ աս անոնց սրտին , թէ որ անոնք ասանկ զգացումներ ունեցած ըլլային , որ պարտական էին ունենալ . արդեօք աս մարդասիրութիւնները ի՞նչպէս իրենց սրտին մէջ պիտի տպաւորվէր :

Աս միջոցին անոնք որչափ պարտական էին իրենց եղբօրը շնորհակալութիւն ընելու իր աղնիւ ու համեստ վարքին համար . ու մանաւանդ Աստուծոյ իր երկայնմտութեանը ու համբերութեանը համար : Ինչու որ ան Աստուծոյ բարեշնորհ նախախնամութեանը կարդաղրութիւնն էր , որ անոնց չար խորհուրդները խափանեց . ու անոնցմէ այսչափ աղէկութիւն առաջ բերել տըւաւ Յովսէփին որն որ այնչափ ատեր էին , ու նաև իրենց հօրը , ու իրենց անդամ , ու իրենց ըն-

տանեացը : Խմսիրական գաւկըներս ,  
արդեօք դուք ալ ասոնց նման միջոց  
ներու մէջ գտնըված էք մի . արդեօք  
ուրիշի մը գէշութիւն ընելէն ետքը  
խղճմտանքնիդ ձեզ յանդիմանած է  
մի . ու Աստուծմէ վախցած էք մի .  
որ գուցէ մէկ կերպով մը ձեզի պիտի  
պատժեր ձեր ըրած յանցանքին հա-  
մար :

**Հ**աւանական է որ աս կերպ բաներ  
ձեզմէ մէկ քանիներուն պատահած է .  
ու թէ որ անանկ է նէ , արդեօք ձեզի  
մէկ պարտականութիւն մը սեպելով՝  
ձեր ըրած յանցանքը իսկոյն խոստովա-  
նած էք մի , ու ան ձեր բարկացուցած  
մարդն ալ ձեզի թողութիւն տըւած է  
մի :

**Ի**նքընքնիդ Աստուծոյ առջել հը-  
նազանդեցուցած դպացի՞ք մի իրեն  
գէմ գործած մեղքերնուդ համար . ին-  
չու որ երբոր ձեր ընկելներուն գէշու-  
թիւն ընէք , Աստուծոյ պատուիրանք-  
ները աւրած՝ ու իր իշխանութիւնը ա-  
նարդած կըլլաք : Ինքը կարդիլէ ձեզ

գէշութիւն ընելէն , ու կուզէ որ միշտ  
աղէկութիւն ընէք : Ինքը ձեզի կը-  
պատուիրէ որ դուք ձեր ընկերները  
ձեր անձին պէս սիրէք . ու նաև դին-  
քըն ալ՝ բոլոր ձեր հոգիովը կարո-  
ղութիւնովը ու միտքովը սիրէք :

**Ա**րդեօք ճշմարիտ տրտմութիւն մը  
դպացած էք մի ձեր ընկերին դէշու-  
թիւն ընելնուղ համար . ու բոլորով  
սրտիւ անկէ թողութիւն խնդրած էք  
մի . միտքերնուղ մէջը դրած էք մի որ  
անոր հետ եղածին պէս վարվիք :

**Ա**րդեօք Աստուծոյ շնորհակալ ե-  
ղած էք մի ինքը ձեղ նոյն պատիժէն  
մէկ զի սլահելուն համար . որուն որ  
դուք արդարապէս արժանի էիք , ու  
նաև ան մարդոցը գէշութիւն ըրած-  
նուղ դէմ՝ ինքը ձեր յանցանքին թո-  
ղութիւն տալուն ու բարեկամութիւն  
ցուցընելուն համար :

**Ա**րդեօք միտքերնուղ մէջը հաս-  
տատած էք մի , որ Աստուծոյ շնորհ-  
քովը ու Քրիստոսի Հիսուսի օղնու-

Թեամբը կը կին ասանել զէշ բաներ  
 չընէք, ու բոլոր մեղքերուն դէմ դը-  
 նէք : Օձէ որ հիմայ քիչ մը կայնիք  
 ու մտմտաք զգուշութեամբ ու աս վե-  
 րի հարցումները ինքինքնելնուդ  
 հարցունէք, կարծեմ թէ ձեր սրտին  
 ինչ վեճակի մէջ ըլլալուն վրայօք  
 քիչ մը բան պիտի սորվիք : Դուք շատ  
 աղէկ դիտէք որ հովսէփին եղքայր-  
 ները ինչպէս պարտական էին իրենց  
 ըրած գէշութեանը վրայ զղ ջալու :  
 Վրդեօք դուք ալ ինչպէս որ պէտք էր  
 նէ ըրած է՞ք մի : Օսող ձեր խիղճը  
 խօսի : « Օձէ որ սիրտելնիդ ձեղ դա-  
 տապարտէ նէ միտքելնիդ բերէք թէ  
 Վստուած ձեր սրտերէն մեծ է ու բո-  
 լոր բաները գիտէ » : Ե՞ն որ իր մեղ-  
 քերը կը ծածկէ, անոր յաջողութիւն  
 չի կայ, բայց ով որ կը խոստովանի ու  
 կրհեռանայ անոնցմէ, ողորմութիւն  
 պիտի դտնայ :

## Գ. Ա. ՈՒ Խ. Լ. Վ.

Ք յ ա վ ս է կ ի ն ն ա հ ո ւ տ ա ռ ն ո ւ մ ա ր ե ն ա ս ո ւ լ ո ւ ք . Ք յ ա վ ս է կ ի ն ի ր է ր դ ա յ ր ն ե լ լ ո ւ լ ե ր դ ա յ ր ն ե լ լ ո ւ լ ի ր է ր մ ա ր ե ն ա ս ո ւ լ ո ւ ք . Ք յ ա վ ս է կ ի ն ի ր է ր դ ա յ ր ն ե լ լ ո ւ լ ե ր դ ա յ ր ն ե լ լ ո ւ լ ի ր է ր մ ա ր ե ն ա ս ո ւ լ ո ւ ք . Ք յ ա վ ս է կ ի ն ի ր է ր դ ա յ ր ն ե լ լ ո ւ լ ե ր դ ա յ ր ն ե լ լ ո ւ լ ի ր է ր մ ա ր ե ն ա ս ո ւ լ ո ւ ք . Ք յ ա վ ս է կ ի ն ի ր է ր դ ա յ ր ն ե լ լ ո ւ լ ե ր դ ա յ ր ն ե լ լ ո ւ լ ի ր է ր մ ա ր ե ն ա ս ո ւ լ ո ւ ք . Ք յ ա վ ս է կ ի ն ի ր է ր դ ա յ ր ն ե լ լ ո ւ լ ե ր դ ա յ ր ն ե լ լ ո ւ լ ի ր է ր մ ա ր ե ն ա ս ո ւ լ ո ւ ք . Ք յ ա վ ս է կ ի ն ի ր է ր դ ա յ ր ն ե լ լ ո ւ լ ե ր դ ա յ ր ն ե լ լ ո ւ լ ի ր է ր մ ա ր ե ն ա ս ո ւ լ ո ւ ք . Ք յ ա վ ս է կ ի ն ի ր է ր դ ա յ ր ն ե լ լ ո ւ լ ե ր դ ա յ ր ն ե լ լ ո ւ լ ի ր է ր մ ա ր ե ն ա ս ո ւ լ ո ւ ք . Ք յ ա վ ս է կ ի ն ի ր է ր դ ա յ ր ն ե լ լ ո ւ լ ե ր դ ա յ ր ն ե լ լ ո ւ լ ի ր է ր մ ա ր ե ն ա ս ո ւ լ ո ւ ք :

**Յ**ովսէփին եղբայրները կըկին Վեսեմ իրենց ընտանիքներուն զարձան , ուր տեղ որ կըրնակէին , շատ կաճէին ու կըբազմանային . ու դործքերնուն մէջը շատ յաջողակ էին , Եւզիպտոսի Թագաւորին պաշտպանութեանը ու իրենց մարդասէր ու խնամակալ եղբօրը հոգաբարձութեան տակը ըլլալով :

Իրաւոնք ունինք հաւատուու որ ան ժամանակը Փարաւոն ու իրմէն ե-

տեւ յաջորդաբար եկող թագաւորները հովանական վատ կըսիրէին . ու նաև Նզիպտոսին վրայ կառավարութեան պաշտօնին մէջը ըլլալով՝ քաղցրութեամբ ու արդարութեամբ կիշխէր ժողովուրդին վրայ , ու բոլոր ազգին հաճելի էր :

Ինքը այսչափ ապրեցաւ որ Եփրեմին ու Աանասէին դաւկըները տեսաւ ու շատ հոգ կըտանէր անոնց կրթութեանը համար , ու նաև հետերնին շատ սիրով կըվարվէր :

Ա երջապէս իր մարմնոյն ծերութիւնը իր մահվան մօտենալը իրեն յիշել տըւաւ . իր տկարութիւնը օր ըստ օրէ կըշատնար . ինքը իր եղքայրները չորս կողմը ժողվեց ու իր մահվան մօտենալը անոնց ըսաւ , ու ան Աստուծոյ խոստմունքներուն վրայօք անոնց հետ խօսեցաւ , որ իրենց հարերուն իրենց՝ ու իրենց դաւկըներուն համար ըրեր էր :

“ Աստուած ձեզի այցելու պիտի ըլ-

լայ” ըստ ինքը . ու ձեզ աս երկրէս  
պիտի հանէ , ու ան երկիրը պիտի  
տանի . որ երդումով խոստացէր էր  
Եղբահամին Խահակին ու Հակոբին :

Ինքը գիտէր թէ՞ որչափ հարկաւոր  
էր Խարայելացւոց որ Քանան դառ  
նալը ամենևին միտքերնուն չի հանէին  
իրը իրենց ակնկալութիւններուն ամ  
մենէն երևելին սեպելով :

Չենէ անոնք պիտի կարծէին որ  
Եգիպտոս իրենց մշտնջենաւոր ու սեպ  
հական բնակարանը պիտի ըլլար . ու  
ան տեղի բնակիչներուն հետը խառ  
նրվելով , ու կռապաշտական սովորու  
թեանց մէջ իյնալով՝ Ճշմարիտ Վո  
տուծոյն երկրագութիւն ընելը պի  
տի մոռնային :

Կաև Հովսէփի իր եղբայրներէն եր  
դում մը առաւ , ինչպէս որ Հակոբ  
իր հայրը իրմէն առեր էր որ իրեն  
մարմինը հետերնին Քանանու երկի  
րը տանին . երբոր հոն դառնալու ըլ  
լան :

**Չենք գիտեր թէ՝ արդեօք ուրիշ  
ի՞նչ կանոններ կամ խորհուրդներ տը-  
ւաւ անոնց իր վերջին մեռնելու վայր-  
կեաններուն մէջը : Ինքը շուտով իր  
խօսքը կտրեց ու մեռաւ, որ ան ժա-  
մանակը հարիւր տասը տարու էր :**

**Անոր մարմինը համեմներով պա-  
տեցին ու սնտուկի մը մէջ պահեցին .  
մինչև որ Խարայելացիները անկէ ե-  
լան . ու ան ատենը անիկա հետերնին  
· քանան տարին . ու Սիւքէմին մէջ  
թաղեցին , ուր տեղ որ հակոբ և  
մովքին տղոցմէն ծախու առեր էր , ու  
նոյն տեղը ժառանգութեան համար  
հովսէփին տղոցը տըւեր էր :**

**Անտարակոյս հովսէփ մասնաւոր  
մէկ զիտաւորութիւն մը ունէր աս  
կերպով կարգադրելուն , որ իր մար-  
մինը Խղիպտոսի մէջ պահվի , մինչև  
որ Խարայելացիները քանան իրենց  
հօրը երկիրը դառնալու ըլլային : Ա-  
նոնք անոր ոսկոլները շատ մեծ յար-  
դութեամբ պիտի բռնէին . անոր մար-**

մինը պահած տեղելնին շատ անդամ  
իրենք՝ իրենց զաւկըները՝ ու իրենց  
զաւկըներուն զաւկըները պիտի եր-  
թային ու տեսնային : Ինչու որ՝ զբե-  
թէ Հովսէփին մեռնելէն հարիւր յի-  
սուն տարիէն ետեւ էր, որ Հակոբին  
զաւկըները Վովսէսի ձեռքովը Եղիպ-  
տուէն ելան, ու Յանան դացին :

**Ա**ս տեղը անոնց շատ սիրելի ու  
Առւրը տեղ մը պիտի ըլլար, ու  
Հովսէփին ու անոր հօրը քաղցր յի-  
շատակութիւնները միշտ անոնց մոքին  
մէջը արթուն պիտի պահել տար :

**Ա**մէն ժամանակ մխարելնին պիտի  
ձգէր Եղիպտոսի մէջ իրենց օտարա-  
կան ըլլալը . ու Շատուծոյ մէկ առա-  
ւել աղէկ երկիր մը անոնց տալը, որ  
ինքը խոստացեր էր . ու իրենց երեւ-  
լի պարտականութիւնը, որ Շատուծոյ  
նախախնամութեանը պատրաստելու  
ճամբովը Հովսէփին մարմինը հետեր-  
նին տանին :

**Կ**աև ան երեւլի ժամանակը միտ-

Քերնին պիտի բերէին երբոր ՀՅՈՒՏԵՎ  
յատկապէս առ պաշտօնը կատարվէ  
լու համար իր եղբայրներուն պատ-  
ռւիրեր էր :

Իր մեռնելու վայրկեաններուն մէջն  
էր, որ բոլորը ամենակարօղին առջեր  
մէկ երևելի երդումով մը խոստացան  
որ իր հրամանները հաւատարմու-  
թեամբ պիտի կատարվին :

ԹԱԿԱՓԵՄ ՀՅՈՒՏԵՎ ինքը մեռած էր,  
սակայն կրկին անոնց հետ պիտի խօ-  
սէր, ու տարվէ տարի իր խրատական  
ձայնը պիտի լսվէր թէ, Վ.ստուած ձե-  
ղի այցելու պիտի ըլլայ, ու աս երկ-  
րէն ձեզ պիտի հանէ, ու ան երկիրը  
տանի որ Վ.քը ահամին, Խսահակին ու  
Հակոբին խոստացեր էր : “ Իրաւցընէ  
Վ.ստուած ձեղի այցելու ըլլայ ու դուք  
ալ իմ սոկորներա ասկէ պիտի տա-  
նիք ” :

ԻՆՉԱՓԵՍ դարմանալի են Վ.ստուածոյ  
ճամբանները, որ իր նախախնամու-  
թեամբը բոլոր իր իմաստուն ու սրբա-  
լզան խորհուրդները կըկատարէ :

Աստուած Հովհաննեսի բոլոր իր  
 կեանքին մէջը՝ ան իր սեպհական ժո-  
 ղովուրդը սովէն ապրեցնելու մէկ  
 գործիք մը ըրաւ, որ նոյն ժողովուրդը  
 ճշմարիտ Աստուածոյն զիտութիւնը ու  
 երկրապատկութիւնը պիտի սկահէին . ու  
 նոյն ժողովուրդէն ետքի տարիներուն  
 մէջը առաւել զօրաւոր մէկ աղատիչ  
 մը պիտի ելլէր : Հիսուս աշխարհի  
 Փրկիչը : Աստուած Հովհաննեսին մահը<sup>1</sup>  
 խարայելացիներուն հաւատքը՝ իրենց  
 հարերուն եղած խոստմունքներուն մէ-  
 ջը զօրացունելու պատճառ մը ըրաւ .  
 ու ան երկիրը դառնալու բաղձանքը  
 իրենց մէջը ողջ պահել տըվաւ, ուր  
 տեղ որ մէկ սեպհական ազգ մը պիտի  
 ըլլային, ուրկէ Քրիստոս պիտի ծը-  
 նէր՝ ու չարչարանք քաշէր ու մեռ-  
 նէր . ու անկէ փրկութեան աւետաւոր  
 լուրերը պիտի քարոզվէր բոլոր ետ-  
 քի բնակիչներուն :

Ան զարմանալի երազները՝ որ Հովհ-  
 անի իր մանկութեան ժամանակը տե-

սեր էր, որոնք Վատուծոյ դօրութեամբ  
ըլ անոր մտքին վրայ յառաջ եկած  
էին քիչ մը օղնութիւն ըրին հովա-  
սէփին որ նախախնամութեան զարմա-  
նալի գործքերը կատարէ :

Ինքը կիմանար որ՝ մէկ հարկաւոր  
պաշտօն մը պիտի ունենար ընելու .  
թէպէտ անոր ինչ ըլլալը չէր կընար  
ըսէր :

Աս բաները անշուշտ հովէփին  
միտքը բանալու ու ան զերազոյն վի-  
ճակին հասցընելու պատճառ կըլլային  
որուն մէջը ինքը պիտի դրվէր :

Կաեւ իր երազներուն կատարվին  
ալ Վատուծոյ վրայ ունեցած հաւատ-  
քը դօրացուցած պիտի ըլլայ :

Անզամ մը տեսաւ որ եղբայրները  
իր առջեւը եկան ու իրեն երկրպագու-  
թիւն ըրին, իր վեհափառութիւնը ու  
իրենց նուաստութիւնը խոստանալով :  
Ուրիշ անզամ մ'ալ անանկ ընծաներ  
ընդունեց իր հօրմէն . որ կըցուցունէ-  
ին թէ հակոր ու իր ընտանիքը յար-

մար դատեր էին նոյն յարգութեամբը  
ինքը պատուելու , որ իր բոլոր իշխա-  
նութեանը ու պատռոյն արժանի էր :

Աս ընծաները տըւած ժամանակնին  
եղբայրները կըկին ծռեցան իր առ-  
ջեր , ու երկրպագութիւն ըրին իրեն .  
ու երբոր իր հօրը ինչ վիճակի մէջ  
ըլլալուն վրայօք հարցումներ ըլլու ,  
անանկ մէկ պատասխան մը տըւին ա-  
նոր , որ իրենց հայրը իրը հովակին  
ծառան ըրին : « Ծռեցան կրկին եր-  
կրպագութիւն ըրին իրը թէ աս ա-  
նունալը » ու ասանկ խոնարհութիւն ը-  
նելովնին կուղէին իրեն ցուցընել « ո՞ք  
բոլոր իրենց ընտանիքը աս խոնարհու-  
թիւնը և զիպտոաի կառավարին հա-  
մար ունեին :

Ա երջապէս իր հայրը իր եղբայր-  
ները ու անոնց ընտանիքները ան տէ-  
րութեանը մէջը նատած ժամանակը  
տեսան , որուն վրայ ինքը կառավար  
էր :

Անշուշտ անոնք իր տէրութեան

տակը հպատակներ էին, ու իր բարութիւնովը կըկերակը ըլվէին՝ ու իր իշխանութեամբը կըպաշտանվէին :

Իրաւցընէ իր եղքայրներուն փունջերը իր փունջին առջեր ծուեցան երկրագութիւն ըրին ու արեգակը լուսինը ու տամնըմէկ աստղերը իրեն խոնարհութիւն ըրին :

### ԴԱՍԻ ԽՈ. 13:

Ճանաչեն մարդուն : Աստիճայ վըսայ առնեցած իր պարագար հաւատութը : Աստիճան բուը ճշմարդու գելուսպանութեան հիմը առ է : Աստիճան իսրադացուղը Աստիճայ վըսայ առ հաւատութը առնի՞ մի :

**Ա**ստուած ինչպէս որ տեսանք շատ մեծ գործքեր ուներ Յովսէփին ընել տալու . ու երբոր անոնք կատար վեցան, ինքը իր հաւատարիմ ծառան իրեն առաւ : Ան անշուշտ կըհաւատանք որ Աբրահամին Խաչակին,

Յակոբին, ու բոլոր Տերոջը փրկած ներուն քովն է :

Ու քանի որ իր սակորները ան իւրենց հօրը խոստացված երկրին մէջը պահված են, իր հոգին ան երկնային քանանու երկրին երջանկութիւնը ու փառքը յաւիտենական հանգստութեամբ կրվայելէ :

Իմ սիրելի զաւկըներս միտվընիդ ան երկնային ժառանգութեանը շտկելու ու ձեր յոյսը անոր վրայ հաստատելու համար էր, որ ես աս հովսէփին պատմութիւնը գրելու այնչափ ջանացի : Ուստի իմ գործս աւարտելէն առաջ՝ կուղեմ ձեղ խորհիլ Վասուծոյ տալու շնորհքովը, թէ որչափ առաւել ձեղի հարկաւոր է պատրաստ գտնըվիլ, որ երբոր աշխարհըին վրայէն ձեր աշխատութիւնները լմբնցունելու ըլլաք, երկնքին յաւիտենական հանգստութեանը մէջ մտնաք, ու յաւիտեանս յաւիտենից Տերոջը քովըն ըլլաք :

Քանի որ Յովսէփին ուկորները Եւ զիալտոսի մէջ էին, իր աղքականներուն ցանկութիւնները բորբոքել տը վին ան իրենց հօրը երկիրը դառնալու : Ասանկ ալ Յովսէփին վարքին յիշատակութիւնը ձեր սրտին մէջը մէկ գօրաւոր բաղձանք մը յառաջ բերէ անոր եղած տեղը՝ ան երկնաւոր երկիրը երթալու, որուն Քանան շատ անյարմար ու անկատար նմանութիւն մը ունէր :

Քիչ մըն ալ Յովսէփին վարքին երևելի յատկութիւններուն վրայօք մտմտանք, որ շատ արժան է մեղի անոր նմաննելու ու նայինը թէ արդեօք նոյն վարքէն մենք ալ ունի՞նք մի :

Յովսէփ շատ գօրաւոր հաւատը մը ունէր Աստուծոյ վրայ . ինքը Աստուծ մարմնաւոր աչվըներովը չէր տեսէր . բայց անոր էութիւնը կըհաւատար, ու զիտէր որ անիկա անհուն գօրութիւն, իմաստութիւն, արդարութիւն, բարութիւն ու ճշմարտութիւն ունեցող մէկ Լակ մըն էր :

Յովսէփ կըհաւատար որ՝ Վատուած զանաղան ժամանակ Վըրահամին , Խսահակին , ու Հակոբին հետ խօսեր էր . ու իր հայրը իրեն ինչ որ սորվեցուցեր էր նէ ան խօսածնելնուն վրայօք ճշմարիտ էր , ու անոնց բոլորն ալ անշուշտ պիտի կատարվէին :

Ինքը կըհաւատար որ բոլոր իր խորհուրդները , զգացումները , ու վարքը Վատուածոյ համար պիտի ըլլան : Վասնկ ալ հանդերձեալ կեանքին մէջը Վատուած անոնք միայն երկինքը պիտի ընդունէ , որոնք զինքը կըսիրեն , ու իրեն կըհնաղանդին . ու մեղաւորները իր առջեւէն յաւիտեան պիտի վռնուէ : Կարելիէ Հովսէփ քիչ մը տեղեկութիւն ուներ Ք.Ծիստոսի վրայօք , ու անոր դալստեանը կըսպասէր իրքեւ իր Փրկիչը ու յոյօը սեպելով :

Ինչու որ Վըրահամ Յետուի Ք.Ծիստոսի օրը տեսաւ ու ուրախացաւ .

ու չի տարակուսվիր որ Աքրահամաս  
գիտութիւնը իր տղոցն ալ չի սորվեցուց , ու անոնք ալ իրենց տղոցը . ու  
աս կերպով Հակոբ ու իր ընտանիքը  
տեղեակ էին աս զիտութեանը վրայօք :

**Պ**ողոս առաքեալին Խբրայեցւոց  
զրած Թուղթին ժաերլորդ զլխուն  
մէջը պիտի զտնանք՝ որ Հովսէփի ան  
մարդոցը հետ մէկ տեղ սեպվեցաւ ,  
որոնք որ ընտիր էին Աստուծոյ վրայ  
ունեցած զօրաւոր հաւատքներնուն  
համար . ու անոր խոստումները հաս-  
տատ բունելնուն համար :

**Կ**ըսվի թէ հաւատքով Հովսէփի իր  
մեռնելու ժամանակը Խարայէլի զաւ-  
կըներուն ելլալը ըստաւ , ու իր ոսկոր-  
ներուն համար պատուիրեց :

**Ա**ս ասանկ ըլլալուն պատճառը ան  
էր որ ինքը մէկ անշարժ վստահու-  
թիւն մը ունէր Աստուծոյ խոստմանը  
վրայ . որ Խարայէլացիները կրկին  
քանան պիտի դառնային ու ան զը-  
ւարճալի երկիրը բուն իրենց երկրին  
պէս պիտի վայելէին :

Բայց ինչպէս որ ասանկ մէկ վստա  
հութիւն մը ունէր Աստուծոյ ան Իս-  
րայէլացւոց ըրած խոստմանը վրայ՝  
ու կըհաւատար անշուշտ անոնց կա-  
տարվելուն, անանկ ալ նոյն ապահո-  
վութիւնը ունէր բոլոր Աստուծոյ  
խոստմունքներուն ու ըսածներուն վր-  
այ, ու կըհաւատար որ անոնց բոլորն  
ալ պիտի կատարվին :

Յովսէփին վարքին, խորհուրդնե-  
րուն, զգացումներուն, ու բնաւորու-  
թեանը մէջը ինչ աղէկ բան որ կար-  
ձմարիտ ու ուղիղ, և Աստուծոյ  
կամքին ալ հաւասար անոնց բո-  
լորն ալ աս կենդանի ու զօրա-  
ւոր հաւատքէն առաջ եկած էր : Ա-  
նոր հաւատքը ան ամուր ու ծանր քա-  
րերուն կընմանի, որ հողին մէջը խո-  
րունկ ու հաստատ կըթաղվին . ու ա-  
նոնց վրայ տունը կըշինվի ու կըկայնի :

Աս բանը ճարտարապետները շատ  
աղէկ գիտեն . ու թէ որ ուղեն մէկ  
տուն մը հաստատ կանգնեցնել՝ անոր

Հիմը շատ հաստատ ու ամուլք կրշի  
նեն : Աստուծոյ վրայ հաւատք ունե-  
նալը վարքին բոլոր ճշմարիտ դերա-  
դանցութեանը հիմն է : Աւանց ասոր  
կրնայ ըլլար որ աղէկութեան նշոյլ  
մը կամ թէ զրսըլանց վարքի մը  
յատկութիւն երևայ . բայց ճշմարիտ  
դգացումներ չե կրնար ըլլալ սրտին  
մէջը :

Մինչեւ որ մէկ տղայ մը չե հաւա-  
տայ թէ իր հայրը բարի ու աղէկ  
ծնողը մըն է , և իր ընտանիքը ա-  
ղէկ կրկառավարէ , ու անոնք աղէկ ու  
երջանիկ ընելու համար ամեն բան  
կուղէ ընել , և թէ անոր պատուէր-  
ները արդար են , սովառնալիքները  
'ի զործ պիտի զրվին ու խոստում-  
ները պիտի կատարվին . ու մինչեւ որ  
ասանի մէկ մեծ վստահութիւն մը չու-  
նենայ իր ծնողքին վրայ՝ ճշմարիտ սէր  
ու հնագանդութիւն մը չե պիտի ունե-  
նայ :

Թէպէտ կրնայ զրսըլանց անանի բա-

ներ ընել , որ սիրոյ ու հնագանդութեան արտաքին երևոյթ մը ունենայ . սակայն սրտին մէջը անոնց համեմատ զգացումներ չե պիտի կըէ , ու մէկ հնագանդ ու սիրելի զաւկի մըն աւ վարք չե պիտի ունենայ :

Կմանապէս մինչեւ որ դուք աւ օտվէփին պէս ճշմարիտ ու զօրաւոր հաւատք մը չունենաք Եստուծոյ ձեր երկնաւոր Հօրը վրայ՝ դուք աւ ճշմարիտ սէր ու հնագանդութիւն մը չէք կընար ունենալ իրեն . ուղիղ խոր հուրդներ , զգացումներ , ու բարի վարք չէք կընար ունենալ . ճշմարիա վարքի մը աղնուութիւն չէք կընար ձեռք ձգել , ու չէք կընար աւ պատրաստվիլ երկինքը երթալու երբոր մասնելու ըլլաք :

Երդեօք աս հաւատքը Եստուծոյ վրայ ունի՞ք մի , ու Եստուածաշունչին մէջի բոլոր ձեզի սորմեցուցածներուն , բոլոր իր պատուիրանքներուն , խոստումներուն , ու սպառնալիքներուն կըհաւատաք մի :

Թէ որ Հովսեփի՝ Աստուծոյ ան  
 խռատմունքին միայն հաւատալու ըլլար,  
 այսինքն Խարայելացւոց Քանան դառ  
 նալուն՝ ան ատենը աս բանը ամենենին  
 կարող չի պիտի ըլլար ընելու, ու  
 ճշմարտապէս բարի մէկ մարդ մը ըլ-  
 լալու, ու ան երկնաւոր Քանանը եր-  
 թալու համար պատրաստըլելու։ Թէ  
 որ դուք ալ բոլոր Աստուծոյ Աստուա-  
 ծաշունչին մէջի սորվեցուցածներուն  
 հաւատալու ըլլաք՝ անատենը աս ալ  
 պիտի հաւատաք թէ մինչև որ ճշմարիտ  
 ապաշխարութիւն չընէք ձեր մեղքե-  
 րուն վրայ, ու Տէր Հօխուս Քրիստոսին  
 ապաւինելու չըլլաք, ու ձեր հաւատ-  
 քին ճշմարիտ ըլլալը չի ցուցընէք  
 Աստուծոյ պատուիրանքներուն հընա-  
 դանդելով, չէք կընար փրկրվիլ։

Արդեօք աս ճշմարտութիւններուն  
 ուղեղ սրտով կըհաւատաք մի . անոնք  
 միտքերնիդ բերելով՝ ի դործ կըդնէք  
 մի :

## Գ. Լ. Ա Խ Խ Օ . Լ. Զ . :

Ք ա լ ւ է հ ի ն՝ ի ր հ օ ր ը ց ո ւ ց ո ւ ց ո ւ ծ ։ Ե ր և ս կ ա լ ւ է ի ն յ ա ս տ ո ւ թ ե ն ե ն ե ւ ։ Ե ւ է ո ր ճ շ մ ո ւ ր ի ս ո ւ հ ա ս տ ո ւ ր ո ւ ն ը լ ո ւ ն ։ Ե ւ ո ւ ծ ո ւ յ ա յ գ ը լ ո ւ յ ա յ ։ Ա ն է ն ո ւ լ ո ւ ն ո ւ լ ո ւ ն ո ւ լ ո ւ ն ։ Ա ր դ ե օ ս ի ա ր դ ա յ ո ւ ն ը է շ ն լ ո ւ է ս ի ւ լ ո ւ ն ։ Ե ր ծ ա ն ո ւ յ ա յ ը հ ե ս ։ Ք ա լ ւ է հ ի ն՝ ի ր ե ղ բ ա յ ը լ ո ւ ն ։ Ա ն ո ւ ն ո ւ ն ո ւ ն ո ւ ն ։ Ե ր ծ ա ն ո ւ յ ա յ ։ Ա ր դ ե օ ս ի ա ր դ ա յ ո ւ ն ը է շ ն լ ո ւ է ս ի ւ լ ո ւ ն ։ Ե ր ծ ա ն ո ւ յ ա յ ։ Ա ր դ ե օ ս ի ա ր դ ա յ ո ւ ն ը է շ ն լ ո ւ է ս ի ւ լ ո ւ ն ։

Ք ո վ ս է փ ի ն ։ Ա ս տ ո ւ ծ ո յ վ ր ա յ հ ա ւ ա տ ք  
ո ւ ն ե ն ա լ ո ւ ն մ է կ ս լ ո ւ լ ո ւ ն ա լ ։ ի ր  
ծ ն ո ղ ա ց ը վ ր ա յ ո ւ ն ե ց ա ծ զ ա ր մ ա ն ա լ ի  
ս է լ ը ո ւ պ ա ր տ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն ն է ր ։ Ա ս  
ա լ ի ր վ ա ր ք ի ն մ է կ ո ւ ր ի շ գ ե ր ա ղ ա ն ց  
ա ր դ ի ւ ն ը ն է ր ։

Ե ս շ ա տ տ ղ ա ք զ ի տ ե մ ո ր մ է կ  
ք ա ղ ը լ ր ո ւ ս ի ր ե լ ի ը ն ա ւ ո ր ո ւ թ ի ւ ն մ ը  
ո ւ ն ի ն , ո ւ շ ա տ ս է լ ո ւ հ ն ա ղ ա ն դ ո ւ  
թ ի ւ ն կ ը ց ո ւ ց ո ւ ն ե ն ի ր ե ն ց ծ ն ո ղ ա ց ը ,  
ս ա կ ա յ ն ք ա լ ս է փ ի ն ո ւ ն ե ց ա ծ հ ա ւ ա տ ։

քին պէս Աստուծոյ վրայ հաւատք մը  
չունին : Եայց արդեօք աս բանը ամէն  
ժամանակ՝ ու նաև իրենց ծնողքը Աս-  
տուծոյ բարեկամները սեպելով մի  
կընեն, (ինչպէս որ Հակոբ Աստու-  
ծոյ մէկ բարեկամն էր) . երբոր Աս-  
տուծոյ պատուէրները իրենց կրաօր-  
վեցընեն, ու անոնց հնազանդեցընելու  
կը ջանան : Ո՞՛չ . աս տեղ շատ մեծ  
տարբերութիւն մը կայ :

**Ճ**ատ ծնողքներ կան որ իրենք Աս-  
տուծոյ վրայ կենդանի հաւատք՝ ու  
Քրիստոսի վրայ հաստատ յոյշ չու-  
նին . և անանկ կապրին ու շարժմունք-  
ներ կընեն, որ զրեթէ ամենելին եր-  
կինք ու դժոխք չի կայ . ու անանկ կը-  
խորհին որ իրը թէ աս աշխարհքն է  
միայն իրենց տունը . ու իրենց տղաքն  
ալ իրենց ըրածին ու զգացածին պէս  
կըվարժեն :

**Հ**իմայ դարմանալի բան մը չէ որ  
ասանկ տղաքները աս կերպ ծնողքնե-  
րը կըսիրեն . երբեմն ալ շատ սիրելի  
ու հնազանդ կըլլան անոնց :

Թօէպէտ աս անանկ բան մըն է , որ  
շատ քիչ կըպատահի . բայց ծնողք-  
ները թող հակորին պէս ըլլան . թող  
անոնք Աստուծմէ վախնան ու անոր  
հնաղանդին , ու ջանան իրենց տղաքը  
Աստուծոյ վախովը վարժելու :

Հնատենք իրենց տղաքները ճշմա-  
րիտ ու հաստատուն սէր ու հնաղան-  
դութիւն մը չի պիտի ունենան իրենց  
ծնողացը , մինչեւ որ իրենք ալ հով-  
սէփին պէս Աստուծոյ վրայ զօրաւոր  
ու հաստատ հաւատք մը չունենան :  
Տղոցը երևելի պարտականութիւնն է  
իրենց ծնողքը սիրելու , ու անոնց հը-  
նաղանդելու , իրենց քովը չեղած  
ժամանակն ալ իրենց քովը եղածի  
պէս . ինչպէս որ մեծ բանելու մէջ՝  
անանկ ալ պատիկ բանելու մէջ .  
ինչպէս որ բերկլրալի ու զուարճալի  
բանելու մէջ , անանկ ալ վշտի ու  
նեղութեան մէջ . ինչպէս որ աս  
կեանքին վերաբերեալ բանելուն

մէջ . անանկ ալ հանդերձեալ կեանքին վերաբերեալ բաներուն մէջ :

Կաև իրենց ծնողացը վրայ ունեցած սիրոյն ու հնազանդութեանը մէջ ալ պէտք է որ մշտատե մնան , ու ասոնք իրենց բնութեանը մէջ պէտք է միշտ հաստատուն ըլլայ , ու մինչև կեանքերնուն վերջը տեէ :

Ծնողքները պէտք է որ իրենց տղոցը ասանկ սորվեցընեն՝ թէ ամէն ժամանակ ու որևէիցէ բանի մէջ թէ յաջողութեան մէջ , թէ ճախորդութեան , թէ առողջութեան մէջ , թէ հիւանդութեան , ու մանաւանդ ծերութեան ժամանակի եղած թուլութեանը ու տկարութեանը մէջ պարտին ջանալ իրենց ծնողքը հանգիստ ու երջանիկ ընելու :

Հիմայ թէ որ աս ծնողքները Աստուծոյ վրայ Ճշմարիտ սէր ունենային . արդեօք որչափ պիտի բաղձային իրենց տղաքն ալ Աստուծոյ ու Փրկիչին բարեկամները ընելու . ու որչափ ողոր-

մելի պիտի ըլլային անոնք անզղ ջու-  
թեան ու մեղքի մէջ տեսնալու :

**Զեր** զգացումները ու վարքերը իմ  
բաածներուս հետ բաղդատեցէք ու ը-  
սէք ինծի թէ անտնց բոլորն ալ ճշմա-  
րիտ չե՞ն մի . այո՛ ճշմարիտ են . Ու  
դուք ալ ճշմարտապէս սիրելի ու հը-  
նազանդ տղաքներ չէք կրնար ըլլաւ ,  
ան ճշմարիտ սէրը ձեր ծնողացը վրայ  
չէք կրնար ունենաւ , ու ձեր ծնողա-  
ցը վրայ ունեցած պարտականու-  
թիւններնիդ չէք կրնար կատարեւ ,  
մինչև որ Եստուծոյ վրայ Յովսէփին  
ունեցած հաւատքին պէս հաւատք մը  
չունենաք :

**Ճնողըններնիդ** սիրելը ու անոնց հը-  
նազանդիլը , Եստուծոյ ու Քրիս-  
տոսի վրայ ձեր ունեցած հաւատքին  
առաջ կուգայ . ու շարունակ պար-  
տիք աղօթք ընեւ , որ ձեր հաւատքը  
շատնայ . և Յովսէփին հաւատքին  
պէս հաստատ ու զօրաւոր հաւատք մը  
ըլլայ , ու ձեզ ալ առաւեւ սիրելի

ու հնազանդ լնել տայ անոնց՝ որոնք  
որ ձեղի համար այնչափ աշխատած  
են :

Ու թէ որ ձեղմէ ոմանք՝ իմ սիրելի  
զաւկըներս, անհնաղանդութիւն ըրած  
էք նէ ձեր ծնողացը, որ կարելի է ը-  
րած էք, մտմուացէք աս տեսակ վար-  
քին մեծ չարութեանը վրայօք :

Աս բանը ոչ թէ միայն մարդոց  
աչքին անարդ ու անհաճոյ կերեայ,  
հապա Աստուծոյ աչքին ալ առաւել  
առելի կերեայ : Իրաւցընէ աս բանը  
Աստուծոյ պատուիրանքներուն մէկը  
աւրել է : Ու որ նոյն մեղքին մէջը  
մնացվե ու չապաշխարփի . ան ժամա-  
կը Աստուծոյ բարկութիւնները ձեր  
վրայ պիտի գայ :

Աս բանը յայտնի կրցուցընէ որ  
պուք Աստուծոյ վրայ ճշմարիտ հա-  
ւատք՝ ու կատարեալ սէր չունիք ու  
իր կամքը կատարելու չէք բաղձար :

Արդեօք աս վեճակին մէջը մընա-  
լու կըհամարձակիք մի :

Յովսէփինն Աստուծոյ վրայ ունեցած  
հաւատքը ուրիշ զարմանալի պտուղ  
մը առաջ բերել տրվաւ իր բնաւո  
րութեանը մէջ . այսինքն բարեգութ  
ու քաղցր դպացումներ իր եղբայրնե  
ներուն վրայ , ու անոնց համար զանա  
զան աղէկութիւններ ընելու իղձ մը  
որոնք իրեն այնչափ դէշութիւններ բ  
ըեր էին : Ուրիշ բան չէ , հասկա մի  
այն Աստուծոյ ու Փրկչին վրայ աս  
տեսակ ճշմարիտ հաւատք ունենալին  
է , որ մեղ Աստուծաշունչին մէջը  
զրված Աստուծոյ ու Քրիստոսի վար  
քին վերաբերեալ բոլոր բաներուն  
կըհաւատացընէ :

Աս նոյն հաւատքն է որ մեղ կա  
ռաջնորդէ Աստուծած սիրելու , ու ա  
նոր պէս սուրբ ըլլալու բաղձանք մը  
ունենալու :

Միայն աս տեսակ հաւատքն է՝ որ  
կընայ մեր սրտին մէջը մեր ընկերնե  
րը սիրելու համար մէկ ճշմարիտ սէր  
մը յառաջ բերել տալ :

Ու թէ որ մենք մեր ընկելները անկեղծութեամբ սիրելու ըլլանք , ու անոնց աղէկութեանը համար ջանանք որ անոնք աս աշխարհիս մէջը ու զալու աշխարքին մէջը հանգիստ ըլլան , ան ժամանակը մեր անկեղծութեամբ Աստուած սիրելնուս մէկ յայտնի վկայութիւն մը կընանք ունենալ :

Արդեօք աս մասին դուք ալ Յովսէփին պէս է՞ք մի . դուք ալ ձեր եղբայրներուն ու քուրերուն վրայ նոյն զգացումը ունի՞ք մի . ինչպէս որ Յովսէփի իր եղբայրներուն վրայ ունէր :

Արդեօք բոլոր ձեր զօրութեանը մէջ եղած աղէկութիւնը անոնց ընելու կը ջանանք մի . ու անոնց հողիներուն աղէկութիւն ընելու կաշխատիք մի :

Արդեօք մարդասիրաբար անոնք կըխրատէ՞ք մի երբոր անոնց գէշութիւն ընելը տեսնալու ըլլաք , ու դուք ձեղ մէկ բարի օրինակ մը կընէ՞ք մի անոնց ձեր խօսակցութեանը ու վար-

քին մէջ : Ու աղօթք կընէ՞ք մի որ կա-  
րօդ ըլլաք աս բանը ընելու :

Արդեօք անոնց համար աղօթք կը-  
նէ՞ք մի , որ Վատուած իր սուրբ հոգին  
անոնց տայ՝ ու անոնք Վրիստոսի հե-  
տեղներ ընէ : Վրդեօք համբերու-  
թիւն ու խոնարհութիւն կընէ՞ք մի եր-  
բոր ձեզ բարկացընելու ու նեղացընե-  
լու բան մը բաեն , կամ ընելու ըլլան :

Արդեօք ոխ կամ վրեժխնդրութիւն  
կրդգա՞ք մի անոնց դէմ . արդեօք ա-  
նոնց թողութիւն կուտա՞ք մի . ու չա-  
րին փոխարէն բարին կըհատուցանէ՞ք  
մի . ու Վատուծոյ կաղաչէ՞ք մի , որ ա-  
նոնց յանցանքին ներում շնորհէ ու ա-  
նոնց առաւել բարի վարք ու զբացում-  
ներ տայ : Օձէ որ աս տեսակ վարք ու  
զգացումներ չունենաք ձեր եղբայր-  
ներուն ու քուրերուն վրայ , ան ժա-  
մանակը յայտնի կերեայ որ ձեր ըն-  
կերներուն , ու Վատուծոյ վրայ աւ  
ճշմարիս սէր չունիք , ու նաև բոլորո-  
վին տարրերէք չունեփէն : ու բոլոր

սուրբելին, որոնց հետ չպահեփ հիմայ այնքանի երջանիկ է Վատուած սիրելով, ու իրեն ծառայութիւն ընելով :

Ու թէ որ դուք ալ ձեր առջե վիճուկին մշջը մնալու ըլլոք, ամենեին արժանի չի պիտի րլաք ան աշխարհքը երթալու, ուր տեղ որ սէր, խաղաղութիւն ու ուրախութիւն կայ :

Ան աշխարհքը մէկը չի կրնար երթալ, քանի որ անոր մեղքերուն Վ.ր.րիստոսի արիւնովը թողութիւն եղած չէ նէ . ու Վ.րիստոս ինքը ըստւ . թէ որ դուք ուրիշներուն թողութիւն չի տաք դուք ալ Վ.ստուծմէ, թողութեան յոյս չէր կրնար ունենալ :

“Թէ որ մէկ մարդ մը ըսելու ըլլայ թէ ևս Վ.ստուծ կըսիրեմ, ու իր եղացը կատէ, ան ստախօս է . ինչու որ ան որ իր եղացը կըտեսնայ ու չի սիրեր նէ, ի՞նչպէս Վ.ստուծ կրնայ սիրել, որ ինքը չէ տեսած” : “Դունքու Տէր Վ.ստուծդղ ըոլոք քու ոլլր-

տովդէ հոգիովդէ , զօրութիւնովդէ , միտքովդէ , ու քու ընկերդ քու անձիղ պէս սիրէ” :

### Տ Ե Ա Խ Խ Յ Ո Ւ Յ Հ :

Ճշական համար առաջնորդութիւնը կը ողովածունը  
իտարարութիւն մը ըստ : Անոր օրինակինեւը : Վր-  
բանը Աստուծոյ կը այս համար առաջնորդութիւն  
յահանգու գուց : Արդեօք իտրդացազը առ համա-  
րական լինեւը առնի՞ մի :

**Յ**ովսէփ շատ քաջ ու զօրաւոր հա-  
ւատք մը ունէր Աստուծոյ վրայ .  
ինքը կը հաւատասար որ Աստուծոյ աջքը  
ամեն ժամանակ իր վրայ էր . ու աս-  
քանը իրեն մէկ մեծ հաւատարմութիւն  
մը սլատճառեց՝ ան մարդոցը սլաշտօն-  
ները կատարելու որոնք որ զինքը բըռ-  
ներ էին :

Ինքը ինչ վիճակի մէջ որ դրվէր ,  
աս իր վարքին յատկութիւնը կը ցու-  
ցընէր :

**Յովսէփի** իր մէկ քանի եղբայրնեւ  
լուն դէշ վարքելոը իր հօրը զրուցե-  
լը՝ իրեն մէկ սլարտականութիւն մը  
կըսէպէր, չէր վախնար աս սլարտա-  
կանութիւնը կատարելու :

Ինքը հաւատարմութեամբ իր հօրը  
հնագանդեցաւ . առաջ Աիւքէմ ու  
ետքը Վաթայիմերթալու՝ իր եղբայր-  
ները տեսնալու համար . որ թէպէտ  
անշուշտ սլատձառ ունէր անոնց վրէժ-  
խնդրութիւնէն վախնալու :

**Յովսէփի** անանկ հաւատարմու-  
թեամբ Գետափիրեսին տանը մէջ ծա-  
ռայութիւն կընէր, որ Գետափիրէս  
ինքը բոլոր իր տանը վերաբերեալ  
սլաշտօնները անոր յանձնեց :

Ինքը երբոր մէկ բանտարդեալ մըն  
էր, ան ժամանակը անգամ հաւատար-  
մութեամբ բանտին տիրոջը կանոնները  
ու հրամանները կըկատարէր . ու ամեն  
բանի մէջ ու իր վարքը միօրինակ  
էր . ասոր համար միւս բանտարդեալ-  
ներուն հոգը անոր ձեռքը տըւին . ու

բոլոր բանտին կառավարութիւնը ա-  
նոր յանձնըլեցաւ : Անտարակոյս ա-  
դժուար վիճակին մէջն ալ՝ որ ամեւ-  
նուն էղողմանէ, խօսք առնող ու տրւողը  
ինքն էր, իր պարտականութիւնները  
կատարելու համար՝ նոյն հաւատար-  
մութիւնը կըցուցընէր :

Քոլոր աս բաները՝ իր հաստատուն  
ու ազնիւ բնաւորութիւնները կըհաս-  
տատէին . ու մեծ հաւատարմութեամբ  
ու յաջողութեամբ ուրիշ առաւել-  
ծանը ալաշոններ կատարելու կը-  
պատրաստէին :

Անտարակոյս փարաւոն չողսէփին  
վարքին վրայօք լտած էր Պիտափիքէ-  
սին քովը բանտին մէջը եղած ժամա-  
նակը . ու զիտէր որ ասանկ մէկ մար-  
դու մը հաւատարմութիւն կընայ ըլ-  
լուկիր :

Փարաւոն չողսէփիը մինչեւ իր ա-  
թուին մօտ բարձրըցուց, ու անիկա-  
նգիալտափի վրայ կառավալոր ըրաւ : Ան-  
ծանը ու դժուարին վիճակին մէջը՝ ու

ան փորձանաւոր պարագաներուն մէջը  
տեսաք որ ի՞նչ հաւատարմութեամբ  
իր պաշտօնը կըկատարէր : Ի՞նչ ճըշ-  
մարտութիւնով թագաւորին բոլոր  
ուղածները առաջ կըտանէր՝ Ազիակ-  
տացւոց ազատութեանը համար . ու  
ի՞նչ հաւատարմութեամբ բոլոր իր  
հօրը ու եղբայրներուն ըրած խոս-  
տումները կըկատարէր : Վրդարև  
Յովսէփ միշտ Վստուծոյ կընայէր՝ իր  
իր Սուրբ Հոգին ընդունելու համար ,  
որ ինքը ասանկ հաւատարիմ ըլլայ :  
Ինքը զիտէր որ ամեն բարի խորհուրդ  
ու զգացում ու բաղձանք Վստուծմէ,  
կուգայ : Ծոլոր ինչ վիճակի մէջ որ  
կըդտնըվէր , ինքը Վստուծոյ իմաս-  
տութեանը շնորհըն ու զօրութեանը  
կարօտ ըլլալը զիտէր :

Ինքը Վստուծոյ վրայ Ճշմարիտ հա-  
ւատք ունենալուն համար՝ միշտ աղօթ-  
քի հետ էր :

Կայեցէք ի՞նչ է մէկ Ճշմարիտ  
բարի մարդ մը ըլլալը : Վսանկ մէկ

մարդ մը ինչպէս որ Վատուծոյ վերա-  
բերեալ պաշտօնները ուղղութեամբ  
կրկատարէ , անանկ ալ իր ընկերնե-  
րուն վերաբերեալ պարտականու-  
թիւնները բոլորը հաւատարմու-  
թեամբ կրկատարէ : Վասնկ մէկ մարդ  
մը ինչպէս որ սկզբի քանի մը մէջ  
հաւատարիմ կըլլայ անանկ ալ մեծին  
մէջ . իր ընկերներուն ացքէն հեռու-  
եղած առենը իրենց քովը եղածի  
պէս : Ինչպէս որ յաջողութեան մէջ ,  
անանկ ալ ձախորդութեան մէջ : Ին-  
տոր որ անիրաւութեան ու բունու-  
թեան մէջ հաւատարիմ կըլլայ , ա-  
նանկ ալ հաճութիւն ու արժանի հա-  
տումը ընդունելուն մէջ :

**Վ**ասնկ էր չչովսէփին հաւատար-  
մութիւնը : Վրդեօք ձեր հաւատար-  
մութիւնն ալ ասոր պէս է ձեր ծնո-  
ղացը , ձեր վարժապետներուն , ձեր  
վարպետներուն , ու բոլոր ձեր խօս-  
տացած մարդիկներուն , ու ան մար-  
դոցը՝ որոնց պաշտօնները պիտի

կատարէք : Եռանց ասանել մէկ հաւատարմութեան մը ձեր վարքերը ամեն բանի մէջ՝ մեծ ըլլայ կամ թէ պղտիկ շատ անկատար պիտի ըլլայ ձեր ընկերներուն կարծիքին մէջը անդամ :

Ան ժամանակը անոնց հաւատարմութիւնը ընդունելէն պիտի արգելվիք ու մէկ հարկաւոր զործ մըն աւձեղի չի պիտի յանձնըլի :

Ու կարելի է շատ դժուարութիւն պիտի գտնաք, ձեռք զարկած բաներնիք յառաջացունելու :

Բայց ամենէն գեշը աս պիտի ըլլայ որ ձեր խիղճը ձեղ պիտի դատապարտէ : Ուրիշներուն գեշութիւն ընելնիդ պիտի իմանաք . ու ինչպէս որ կուզէիք թէ անոնք ձեղի ընկենն, դուք անոնց անանել չընելնուդ համար անոնց հաւատարմութեանը ու պատռոյն չի պիտի արժանանաք :

Նաև Եսուծոյ շնորհքները պիտի կորսընցունէք . ամեն ժամանակ ու

ամեն տեղ անհաւասարիմ մարդիկնեւ-  
ըը ինքը կըտեսնայ , ու իր զիտողու-  
թենէն չեք կրնար փախչիլ :

Աստուծոյ համար տալու էք բո-  
լոր ձեր ընկերներուն վերաբերեալ  
պարտականութիւնը չի կատարելնուդ  
համար : Եղօթք ըրէք , ու ջանացէք  
որ աս տեսակ յանցանքէն ու յիմա-  
րութիւնէն հեռու սկահվիք : Եղաչե-  
ցէք որ Եստուծոյ վրայ ճշմարիտ հա-  
ւատք ունենաք , ու անոր աչքը միշտ  
ձեր վրայ ըլլալուն համար խորունկ ու  
անփոփոխ զգացում մը ունենաք . ու  
հաւատարիմ ըլլալու համար իրմէն ա-  
րիութիւն ու ղօրութիւն խնդրեցէք ,  
որ կարօղ ըլլաք ձեր ընկերներուն ը-  
րած խոստումներնիդ տեղը տանելու :

Ո ասն զի իր ուղածը աս է , որ դուք  
ձեր սերը ասանկ ցուցընէք , ու ձեր  
հնաղանդութիւնն ալ իր պատուի-  
րանքներուն :

## ԳԼՈՒԽ. 13:

Քաղաքակին կողյաւթեան բեմ դահլուսն ա-  
րշաւթեանը : Առ ազիտաւթեանը Արտօնածոյ վըսոյ  
հաւատոք անենաուկն յաստաջ գուլը : Արբա-  
ցակն նոյն ժողոյաւթեանելը պատահելը . ա-  
նան էնչուկն յասովաւթեան պարաւթեան առանելը  
իւրուլը : Քաղաքակին՝ Արտօնածոյ վըսոյ անեցոն  
յոյսը , անասր կամոցը հնապանութիւնը : Ա-  
սանց՝ Արտօնածոյ վըսոյ ճշմարիտ հաւատոք ա-  
նենաուկն յաստաջ գուլը : Արդեօք կարտացողը  
այսը անհնապանութեանը անէ՞ ի՞ :

**Յովսէփին** պատահած զիալուածին  
մեջը տեսանք՝ որ իր Աստուծոյ վը-  
սայ ունեցած հաւատոքը զինքը որչափ  
կարողացուց ան մեծ մեղքին դէմ զնե-  
լու ու յաղթելու :

Իր ան ժամանակի ըրածէն պատ-  
ճառ ունինք հաւատալու թէ իր Աս-  
տուծոյ պատուիրանքներուն վըսայ ու-  
նեցած ուժը , ու անոր դէմ մեղանչե-  
լու վախը , երբու ան մեծ փորձու-

Թիւնը իրեն պատահեցաւ , իր բնութեանը երկելի մեկ նշանն էր :

Անուարակոյս հովվսէփին աս տեսակ շատ փորձութիւններ պատահած էր . դէշ ու կռապաշտ մարդոց մէջ բնակելով , ու իր կեանքին գլխաւոր մասը թաղաւորներու ու շատ հարուստ ու պատվաւոր մարդոց հետ անցունելով . հաւանական է որ իրեն զուարժութեան ստիպել ու մեղքի հրաւիրել եղած պիտի ըլլայ , որ ինքը Վատուծոյ սիրուն ու ծաւայութենէ բաժնըվի :

Իր բոլոր վարքը՝ ինչպէս որ իր պատմութեանը մէջը կերևայ , մանաւանդ անոր վերջին մասին մէջը , կրցուցընէ թէ ինքը շատ փորձութիւններու դէմ զբած պիտի ըլլայ . ու իր սիրտը ու բոլորովին ինքըզինքը իր հարերուն Վատուծոյն յանձնած պիտի ըլլայ :

Փորձութիւնները միայն հարուստի կամ դօրսաւոր մարդոց մէջ չեն պատա-

հիք, հասկա ընդհանուր կրլայ . ոչ  
վեճակը ու ոչ ալ հասակը անկէ ա-  
ղատ կրնայ ըլլար :

**Չեղի** ալ երբեմն փորձութիւններ  
կրպատահին : Ամսնք ձեր ընկերներէն  
կրհրաւիրեն որ հետերնին տեղ եր-  
թաք կամ անանկ բաներ ընէք, որ զի-  
տէք թէ անոնք զէշ բաներ են, կամ  
թէ անանկ զմայլեցուցիչ բաներ կր-  
բերվի առջևնիդ, որոնց հետեւիլը ու  
միաբանիլը Վատուած մուցընելու, ու  
ձեր անոր վերաբերեալ պարտակա-  
նութիւնը միտքէ հանելու պատճառ  
կրլան :

**Նիմայ** երբոր ասանկ վեճակներու  
մէջ իյնալու ըլլաք արդեօք ի՞նչպէս  
կրլայ ձեր վարքը . արդեօք հաճու-  
թիւն մի՞ կուտաք աս փորձութիւննե-  
րուն . կամ թէ չովսէվին պէս զէմ  
կրղնէք անոնց ու կըյալթէք :

**Ո'բչափ** հաճութիւն տալու ըլլաք  
անոնց, այնչափ ձեր զէմ զնելուն զօ-  
րութիւնը կըբինայ . բայց որչափ

յաղթելու բլաք, այնչափ զիւրին  
կըլայ վերջի գալու ամէն մէկ ջանքը  
ու յաղթութիւնը :

Փորձութեան դէմ դնելու ու անիկա  
յաղթելու համար՝ Յովսէփին ունեցածին պէս մէկ զօրաւոր հաւատք մը պարտիք ունենալ Վ.ստուծոյ վրայ :

Ասանկ պիտի զդաք թէ ինքը միշտ ձեր քովն է, ու բոլոր ինչ որ կըսէք ու կընէք ինքը կըտեսնայ . ու ձեր ներքին խորհուրդները կըքննէ :

Պարտիք գիտնալ թէ շատ մեծ գէշութիւն ու յիմարութիւն է ասանկ մէկ բարի ու արդար էակի մը դէմ անիրաւութիւն ընելը, որուն տհաճութիւնը շատ աղէտալի ու ամենալըշուաւ գէշութիւններուն մէկն է . ու իր հաճութիւնը միայն մէկ ձշմարխուերջանկութիւն մըն է :

Երբոր ան փորձութիւնը Յովսէփին պատահեցաւ իր բարեպաշտ զըրուցվածքը աս էր : Աս ինչպէս աս մեծ մեղքը ու գէշութիւնը Վ.ստուծոյ

դէմ կընամ ընել : Ենանկ ալ դուք  
սլարտիք աս խօսքը ըսել երբոր փոր-  
ձութեան հանդիպելու ըլլաք :

Առանց ասոր ու առանց Աստուծոյ  
վրայ Ճշմարիտ հաւատք ունենալու,  
ուրկից որ նոյն խօսքը յառաջ կու-  
գայ . աս գէշ նենդաւոր աշխարհին  
մէջը միշտ վտանդնելու մէջ պիտի  
ըլլաք . ու թէպէտ անոնցմէ շատ չէք  
վախնար սակայն աս աշխարհիս ու  
հանդերձեալ աշխարհին մէջը ձեր  
կործանմանը պատճառ կըլլան : Քը-  
րիստոսի գացէք . իրեն ապաւինեցէք  
իրեն անունովը այլաչեցէք որ ինքը  
վերէն իր զօրութիւնը ձեղի խրկէ . որ  
կարող ըլլաք փորձութեան դէմ զնե-  
լու , ու ձեր հոգիներուն թշնամինե-  
րոն յաղթելու՝ նոյն զօրութիւնովը :

Թէ՛ որ աս բանը ընելու դանցա-  
ռութիւն ընէք մէկ փորձութիւնը  
միւսին ետեէն պիտի հաճիք կատա-  
րելու . մինչեւ որ մեղքին գերի ըլլաք

առանց մէկ յոյս մը ունենալու անոր սոսկալի զերութենէն փախչելու համար :

Յովսէփին բնաւորութեանը ուրիշ մէկ յատկութիւնն աւ Աստուծոյ վրայ ունեցած ապաւինութեանը զգացումը ու անոր կամացը հնազանդութիւնն էր :

Աս աւ բոլոր միւս իր աղնիւ բնաւորութեանը յատկութիւններուն պլատուղներուն պէս՝ Աստուծոյ վրայ հաւատք ունենալէն յառաջ եկաւ :

Աս հաւատքը՝ իրէն մէկ խորին ու մշտատե զգացում մը ունենալու պատճառ եղաւ Աստուծոյ նախախնամութեանը վրայ, որ բոլոր բաներու վրայ կրտիրէ, ինտոր որ մեծին՝ անանկ աւ պղտիկին :

Կըհաւատար որ ինքը միշտ Աստուծոյ աս նախախնամութեանը խընամքին ու կառավարութեանը տակն էր, ու առանց անոր առաջնորդութեանը ու պաշտպանութեանը ինքիրմէն բան մը չէր կընար ընել :

Աս Վատուծոյ վրայ ունեցած աղաւինութեան զգացումը , Յօվսէփին մտքին մէջը Վատուծոյ կամացը հնագանդութիւն մը յառաջ բերել տը վաւ :

Ինքը կըհաւատար որ Վատուծ իւրեն ինչ որ ըրաւ նէ արդարութեամբ էր , ինչու որ իրեն համար յարմար դատեր էր . ու մենք կըտեսնանք որ Յօվսէփ մէկ համբերող ու անտրըտունջ հողի մը ուներ երբոր փորձանաւոր ու թշուառ վիճակներու մէջ ինկաւ :

Արդեօք դուք ալ Վատուծոյ վրայ աս ապաւինութիւնը ու անոր կամացը աս հնապանդութիւնը ունի՞ք մի : Ո՞չ . որչափ հակամիտեալ էք դուք ձեր զօրութեանը ապաւինելու , ու ամեն բան ձեր կամբին սկս ընելու :

Դուք կըտեք թէ՝ աս բաեր կամ նաբանը կընամ ըներ . ևս զիսոեմ որ կըրնամ : Ես չեմ վախնար որ մէկ ամօթալից ու գէշ սովորութեան մը մէջ-

կվյնամ : Աւրեմն որչափ անգամ ձեր  
կամքը ձեր ծնողացը ու ուրիշներուն  
կամքին դէմ եղած պիտի ըլլայ . որ  
Վստուած ձեղի հրամայած է անոնց  
հնագանդելու ու աս կերպով և ու-  
րիշ զանագան կերպերով Վստուծոյ  
կամքին դէմ դրած պիտի ըլլաք :

Նաև որչափ անգամ բարկութեան  
ու նեղութեան ու տրտունջի մը ոգի՝  
ու ձեր ծնողացը ու բարեկամներուն  
ձեր աղէկութեան համար խորհած  
բաներուն դէմ դժոխութիւն մը՝ ու  
Վստուծոյ նախախնամութեանը ձեղի  
ըրած բաներուն դէմ ահաճութիւն մը  
ցուցըցած պիտի ըլլաք :

Արդեօք շատ անգամ պատահած  
չէ՞ն մի , ու ասոնց բոլորն աւ չի՞ մի  
ցուցընէր թէ՝ դուք մըչափ կարօտ էք  
ձեղ Վստուծոյ աւջին խոնարհեցունե-  
լու , ու ապաշխարութիւն ընելու բո-  
լոր ասոնց , ու միւս մեղքերուն վրայ ,  
ու Տէր Յիսուս Քրիստոսին ապաւի-  
նելու թողութեան համար , ու Ե-

տուծոյ ընդունելի ըլլալու համար .  
ու ջերմեռանդ սրտիւ աղօթք ընելու  
հոգւոյն սրբոյ համար , որ ձեզ ա-  
ռաջնորդէ Աստուծոյ ապաւինելու ու  
իրեն կամացը բոլորովին հնագանդե-  
լու :

---

### Գ. Լ. Ա. Խ. Ա. Խ.

Ըստէ չին իսուսումհաւընենը : Անոր զիայ-  
ստիւնները . Բարի հարդոց մշշ եղած իս-  
ուսումհաւընենը Աստուծոյ զըստ հաստատունե-  
նալուն յատար իստաց , արդեօս իսրայելոց  
առ իսուսումհաւընենը ունի մի , առանց առոք  
Քրիստոսի հետ հաղորդունեն չէ , իրար ա-  
նենալ :

**Խ**ոնարհութիւնը Յովսէփին բնաւո-  
րութեանը մէկ յատկութիւնն էր ,  
կարծեմ թէ դիտողութեան արժանի  
մէկ բան մըն է ան : Կարելի է միւս  
բաներուն պէս այնչափ զարմանալի  
մէկ բան մը չէ . սակայն կերեայ թէ  
իր խոնարհութիւնը շատ էր :

Թէ որ անանկ հպարտ մէկը ըլլաւ-  
լու ըլլար ու ինքը զինքը հպարտացը-  
նելու մէկ դիտաւորութիւն մը ունե-  
նար , գլետափրէսին տանը մէջի բո-  
լոր պաշտօններուն վրայ վերակացու  
եղած ատենը , շատ առիթներ կար  
ասանկ զգացումներ իր սրտին մէջը  
ոտք հանելու :

Ու թէ որ ինքը իր մեծութեամբը  
հպարտանալու ըլլար , անհնար էր  
որ Աստուծոյ վրայ ասանկ մէկ հա-  
ւատք մը ունենար , ու անոր դէմա-  
սանկ մեղք դործելու վախ մը ու ան-  
զօրաւոր փորձութեանը յաղթելու դօ-  
րութիւն մը :

Աստուած հպարտներուն հակառակ  
է , բայց խոնարհներուն շնորհք կու-  
տայ . թէ որ Հովսէփ խոնարհ չը-  
լար նէ , արդեօք աս շնորհքը իրեն  
կըտրվէ՞ր մի : Աս բաներուն մէջը շատ  
առիթներ կար իր հպարտութիւնը  
շարժելու , երբոր ինքը Փարաւոնին  
առջելը բերվեցաւ . թէ որ ինքը լնդ-

Հանրապէս ու սովորաբար խոնարհ  
մէկը ըլլալու ըլլար :

Չատ խմաստուն Ազիապտօցիներ՝  
որոնք որ թագաւորին ու ժողովրդոցը  
քով շատ յարգի էին, ոչինչ տեղը  
ջանացին անոր երազները մեկնելու .  
բայց վերջը Հովսէփ պատանին  
խրկըվեցաւ անոնք մեկնելու, ու աւ  
դաչեցին իրեն՝ որ աս բանը ընէ ին-  
չու որ ան խմաստուն մարդիկները  
խոստովանեցան, որ ան բանը իրենց  
գիտութենէն շատ հեռու էր :

Փարաւոն Հովսէփին հետ անանկ  
մէկ կերպով մը խօսեցաւ որ իբր թէ  
իր երազները մեկնելու զօրութիւնը  
միայն ան ունէր . բայց թէ որ Հովսէփ  
աս զօրութիւնը Կատուճմէ ընդունեցի  
ըսելուն տեղը, խոստովանէր թէ իր  
բուն կարողութենէն յառաջ եկած  
էր, ան ժամանակը գիտէր որ Փարա-  
ւոն ու բոլոր իր խմաստուն ու պատ-  
ուաւոր մարդիկները պիտի զարմանայ-  
ին, ու յարգէին թէ աս մարդկային

էութենէն տարբեր մէկ մարդ մըն է :

ինչ սաստիկ փորձութիւն մը պիտի ըլլար աս, թէ որ չովսէփ ճշմարտութիւնը ծածկեր . ու ըսեր թէ աս զօրութիւնը իղմէ է :

Ան ժամանակը Յովսէփին հաւատքը շատ զօրաւոր ու հաստատ էր . զիտէր որ բոլոր ան երազները մեկնելուն զիտութիւնը վերէն էր եկած : Ու մէկ յարմար պարկեշտութիւնով մը ու ճշմարիտ խոնարհութիւնով մը զրուցեց ատ իմ բանա չէ . Վատուած փարաւոնին խաղաղութեան պատասխան մը պիտի տայ :

Իր հետեւեալ բարձր տառիճանին մէջը երբոր Ազիպտոսի վրայ կառավար եղաւ, ու բոլոր իր հօրը ու եղբայրներուն հետ վարված ատենը՝ մէկ պարձենալու ու հպարտութեան նշան մը ամենեւին վրան չէր տեսնըլեր :

Վասոր նելհակը մէկ մարդասէր ու ներողամիտ ողի մը ունէր . ու իր ծեր հօրը շատ սէր ու պատիւ կըցուցընէր

ու իր մեծութիւնը միշտ Վատուծոյ  
նախախնամութենէն առաջ եկած կը-  
սեալէր, ու զարմանալի խօսքերով իր  
եղբայրներուն վախը կըբարեխառնէ.  
երբոր. իր արդար վրէծինդրութենէն  
կըդողային : (Ո՞ի վախնաք, ինչու որ  
ես Վատուծոյ ահղն եմ մի) բոլոր աս-  
բաները յայտնի կըցուցընեն թէ՝ ինքը  
իր բնաւորութեանը մէջ ճշմարիտ  
խոնարհութիւն մը ունեցած պիտի  
ըլլայ : Ըոլոր խոնարհ ու բարի մարդ-  
կանց բնաւորութիւնն ալ ասոր պէս  
է, թէ և ինչ կերպ ըլլայ իրենց հա-  
րլատութիւնը կամ գիտութիւնը աս-  
տիճանը կամ պատիւը :

Իրենք հովսէփին պէս զիտեն թէ  
շատ տգէտ են թէ և ուրիշները իրենք  
իմաստուն կարծեն, իրենց ինչպէս  
անկատար ու մեղաւոր ըլլանին զի-  
տեն թէ և ուրիշները իրենք սիրով ու  
պատուալ յարգելու ըլլան :

Վատուծոյ վրայ ունեցած հաւատք-  
նին իրենց կառաջնորդէ ան էակին

նայելու որն որ ամբիծ մաքրութեամբ  
ու անարատ սըրութեամբ լեցուն է .  
ու ինքը զինքնին անոր առջեւ կը խո-  
նարհեցունեն :

Ու երբոր իրենց չոլա կողմի եղող  
ընկերներուն վրայ նայելու ըլլան , ու  
տեսնան անանկ մէկը որ Վստուած չի  
սիրէր ու իրեն ծառայութիւն չընէր .  
ինքը զինքներնուն կըհարցունեն թէ  
ով է ան որ մեզ անոնցմէ կըտարբե-  
րէ :

Անոնք գիտեն որ իրենք բնականա-  
բար ուրիշներէն աղէկ չեն , ու թէ որ  
մէկ տարբերութիւն մըն ալ կայ նէ ,  
անիկա Վստուածոյ շնորհքը ըրած պիտի  
ըլլայ :

Ու նաև իրենց ընկերներուն հետ  
խօսակցութիւն ընելով մէկ հեղ ու  
հանդարտ ոգի մը պիտի ցուցընեն .  
միտքերնին բերելով թէ “խոնար-  
հութիւնը պատիւէն առաջ է” . ու  
նաև “երանի հոգւով աղքատներուն ,  
ինչու որ անոնցն է երկինքին արթայ-  
ութիւնը” :

Արդեօք դուք ալ ան հողւով աղ  
քատներուն կարդին մէջն էք մի . ու  
նաև դուք ձեղ Վատուծոյ առջին ճըշ  
մարտապէս կըխոնարհեցունէք մի ձեր  
մեծ անարժանութեանը համար , որ  
դուք իրեն դէմ այնչափ մեղք կըդոր  
ծէք , ու ինքը այնչափ քիչ կամ կա  
րելի է ամեննեին չէք սիրէր ու իրեն  
չէք ծառայէր :

Արդեօք ինչպէս ընկերութիւն կը-  
նէք ձեր չորս կողմի եղողներուն հետ ,  
ու անոնց հետ ինչպէս կըվարվիք :

Արդեօք հպարտութիւն մը կըզ-  
գա՞ք մի ձեր դէմքին ու հանգերձին  
վրայ . ձեր լնտանիքին կամ որ և իցէ  
սուսցուածքներուն վրայ . կամ թէ ձեր  
կեանքին մէջի ակնկալութիւններուն  
վրայ . կամ զուցէ բարի վարք ու զգա-  
ցումներ ունենալուն համար :

Արդեօք ուրիշներուն հետ ի՞նչպէս  
կըվարվիք տմարդութեամբ ու անհո-  
գութեամբ մի . տմբարտաւանու-  
թեամբ ու նախատինքով մի .

**Ա**րդեօք պատիւէ ինկած ու ան-  
պիտան մէկը տեսնալու բլւաք նէ . ա-  
նիկա մարդու տեղ չի դնելիք կը նէք  
մի :

**Ա**ս խնդիրները ձեր առջեր կը ը-  
նեմ որ մէկ մը ձեր անցեալ վարքին  
վրայ նայիք , ու մէկ մ' ալ հիմակվան  
ունեցած խորհուրդներնուդ վրայ նայ-  
իք , ու տեսնաք թէ՝ արդեօք խոնար-  
հութեան ճշմարիտ ոգի մը ձեռք բե-  
րած էք մի :

**Ա**ռանց աս տեսակ խոնարհութեան  
մը զուք հիմառ ՚Ք.քիատոսի ու իր  
փրկութեանը հետ հաղորդութիւն մը  
չէք կրնար ունենալ . ինչու որ ՚Ք.քիս-  
տոս ինքը սրտով խոնարհ ու հեղ-  
եք . ու բոլոր իրեն հետեւողներն ալ  
պարտին անանկ ըլլալ :

**Թ**մէ որ ՚Ք.քիատոս ինքը զինքը չի խո-  
նարհեցունէք , ու չուզէք ան իր երկ-  
նային փառքերը ձգել , ու թշնամի-  
ներուն նախատանացը յանցնառու-  
բլւալով՝ կեանք չի վարէք աշխար-

Հիս վրայ , ու խաչին վրայ մեռնելու  
ըլլար ան ժամանակը մեր վիճակը ին-  
տո՞ր պիտի ըլլար :

**ՎԵՆՔ** անյոյս պիտի մեռնեինք մեր  
մեղքին մէջը ու պիտի կորաբվէինք ,  
թէ որ Փրկիչը ինքը լզնքը չի խոնար-  
հեցունէր մեղ մեղքէն ու դժոխքէն  
փրկելու համար :

**Ա**սանկ ալ մենք խոնարհ ըլլալու  
չէ՞նք մի . մանաւանդ որ խեղձ ու  
թշուառ մեղաւոր ենք . ու մենք մեղ  
խոնարհեցունելու ու միշտ խոնարհու-  
թեան մէջ պահելու պարտականու-  
թիւն ունինք :

**Ուրեմն** կրկին հպարտ ու ամբար-  
տաւան պիտի ըլլանք մի : **ՎԵՆՔ** ի՞նչ  
ենք կամ ի՞նչ ունինք հպարտանալու :

## ԳԼՈՒԽԸ . 10 :

Քարենքին ընդհանուր բարեւեր ընտառ-  
քանին ըլ սանենաց : Առ բանին Արքա-  
ծոյ վրայ հաւատաւ սանենացն յասաց գուլը :  
Կարտացողը շատ իւրակա աղէիսնին իւնայ  
ընել : Արդեօս ինը ապէիսնին ընել-  
իլը ըլ սանէ՞ մի . սա իղը է գործ իւրա-  
նէ՞ մի : Ուր աւու որ տառնի իղը ս վար չէ  
իսյ , հան աւու շատ մողը ս շնոր իսյ : Տա-  
լը էնչո՞ք Քարենքին պատրաստնեանը մող աւ-  
տան , պատրաստնեաւ հաւատաւը որ ինը ամեն բանի  
մոց բարեւելու մոն եւ :

\* աւատքը սիրով կըսաջողվի . այս-  
ինքն , Աստուծոյ վրայ Ճշմարիտ  
հաւատք մը ունենալը , մարդուն սըր-  
տին մեջը մեկ իղձ մը յառաջ կըքե-  
րէ , ուրիշներուն աղէկութիւն ընե-  
լու . ու անոր խօսակցութիւնը ու  
վարքը ան իղձին հետ համեմատ կըւ-  
լայ :

Ասանկ էր Քովսէփին հաւատքը . ու  
իր սրուին մեջը իր ընկերներուն վրայ

բարեբարութեան ոգի մը ու անոնց  
աղէկութեանը համար աշխատելու  
ջանք մը առաջ բերել տրվաւ :

**Մենք** չենք տեսնար որ հովսէփ  
միայն իր փառքը էվելցունելու հա-  
մար, յատուկ խորհուրդներ ուներ իր  
մտքին **մէջը** :

**Հոլոր** իր կեանքին **մէջը** իր փառ-  
քը ու իշխանութիւնը Վատուծոյ նա-  
խախնամութեամբը իրեն եկաւ, ու  
ոչ թէ իրեն խնդրելովը : Են ընդհա-  
նուր պատիւը՝ որով թաղաւորը ու բո-  
լու ազգը բռներ էին, իր ազնիւ ու  
բարեսիրոտ բնաւորութիւնը կըցուցը-  
նէ :

**Թէ** որ ասանկ չըլլար՝ Փարաւոն  
այնչափ մարդասիրաբար չի պիտի ըն-  
դունէր հովսէփին մարդիկը ու հակո-  
բին թաղմանը հանդէսին **մէջն** ալ  
այնչափ դարմանալի պատիւ չի պիտի  
ցուցընէր : Վաոր նման մէկ աղնիւ ու  
բարեբար կառավարէ մը՝ ի զատ ու  
բիշ մէկը չէր կընար ասանկ սիրոյ ու

պատւոյ նշաններ ընդունիլ անտնկ մէկ  
զօրաւոր թաղաւորէ մը ու իր անթիւ  
ժողովուրդներէն :

Աս ուրիշներուն աղէկութիւն ընե-  
լու իղձը ու ջանքը , դուք ձեզի պար-  
տիք մէկ մեծ պարտաւորութիւն մը սե-  
սլել : Արդեօք որչափ անդամ . քանի  
որ ձեր եղբայրներուն քուրերուն ու  
ընկերներուն քովն էք , կրնաք անոնց  
անանկ բաներ ըսել կամ անանկ քաղց-  
րիկ կերպով բաներ ընել , որ անոնք  
առաւել աղէկ ու երջանիկ ընելու  
պատճառ պիտի ըլլան :

Արդեօք չի կայ անանկ խեղճ՝ մար-  
դիկներ ձեր զբացիններուն մէջը , ո-  
րոնց ձեր ծնողքները կամ բարեկամնե-  
րը կուղեն քիչ մը բան տալ որ դուք  
անոնց տանիք . ու աս կերպով դուք  
ձեզի սովորութիւն պիտի ընէք . ձեր  
մանկութեան հասակին մէջը չքաւոր-  
ներուն օդնութիւն ընելու :

Արդեօք բաւական մեծցած չէ՞ք մի  
որ դուք ձեր աշխատութեամբը քիչ

մը բան վաստըկիք , ու նոյն վաստըկածնիդ զանազան օգտակար բաներու համար տաք :

Արդեօք ասանկ մէկ բաղձանք մը ունիք մի ուրիշներուն աղէկութիւն ընելու . թէ որ ունիք նէ , ես մեծապէս կուրախանամ , ու աղօթք կընեմ որ ան ձեր սրտին մէջը էվելնայ , ու ձեր մէջը մէկ սովորութիւն մը ըլլայ . ու ձեղ առաւել ան երկինքի բնակլիչներուն նմանցընէ , ու նաև ձեղ պատրաստել տայ յաւիտեան անոնց հետ սուբր ու երջանիկ ըլլալու : Բայց միտքերնիդ ըլլայ որ եթէ ասանկ մէկ ճշմարիտ իղձ մը ունիք նէ . նոյն իղձը ինքիրենը գործքով պիտի յատնըվի ըստածներնուդ կամ ըստածներնուդ մէջը :

Բայց թէ որ ուրիշները առաւել աղէկ ու երջանիկ ընելու համար բան մը չէք ըսեր կամ ըներ նէ , ան ժամանակը յայտնի է , որ դուք անոնց համար բարեբարութեան դդացումներ չունիք :

Որովհետեւ ինտոր որ մէկ ծառ մը  
բարի պտուղ կըքերէ . կամ մէկ ա-  
նարատ աղքիւրէ մը մաքուր ջուր կը-  
վաղէ , անանկ ալ բարեսէր զգացում-  
ներ ունեցող մարդը միշտ ինքը զինքը  
ուրիշներուն աղէկութեանը համար  
կըդնէ :

Դուք ալ արդեօք ասանկ բարեսէր  
զգացումներ ունիք մի . արդեօք ձեր  
քովը եղողները աղէկ ու երջանիկ ընե-  
լու իղձ ունիք մի , արդեօք անոնց ան-  
մահ հոգիները երջանկացնելու կը-  
բաղձա՞ք մի :

Ո՞չ իմ սիրելի տղաքներս . թէ որ  
ասանկ մէկ իղձ մը չունիք նէ , շատ  
մեծ յանցանքի մը ու վտանգի մը վի-  
ճակի մէջ եք :

Աստուած սէր է : Ինքը կատար-  
եալ բարերար է : Ինքը կուրախանայ  
աղէկութիւն ընելու . ու անդադար ա-  
ղէկութիւն կընէ :

Յիսուս Քրիստոս կատարեալ բա-  
րերար է . մտմտացէք ան բաներուն

Վրայ՝ որոնք որ ինքը ըրաւ, ու կրից՝  
ձեզ ու ուրիշները յաւիտեան երջաւ  
նիկ ընելու համար, միայն թէ իրեն  
ապաւինեցէք, ու իր ամենօրհնեալ  
օրինակին նմանեցէք:

Երկինքին բնակիչներուն բոլորն  
ալ կատարեալ բարերար են. անոնք  
կուրախտնան Վատուած սիրելու ու ա-  
նոր ծառայութիւն ընելու, իրենց չորս  
կողմի եղողներուն սրբութիւնը ու եր-  
ջանկութիւնը էվելցունելով, ու Վա-  
տուծոյ բարերարութեանը ու գթու-  
թեանը պատուիրանքները՝ ի զործ  
դնելով:

Արդեօք դուք ալ ասանկ դպա-  
ցումներ չունի՞ք մի: Ուրիշները աղէկ  
ու երջանիկ ընելու համար չէ՞ք մի  
ջանար: Միայն դուք ձեզի համար մի՞  
կըխորհիք թէ ինչ կերպով դուք ձեզ  
դուարձացնէք. դուք կուղէք որ ձեր  
ծնողքները ու բարեկամները միայն  
ձեզի ձեռնտու ըլլան ձեր երջանկու-  
թեանը համար. բայց դուք անոնցը

Եւք նայիր : Ասոնք ձեր անձնասէր  
ու մեղաւոր ըլլալը չե՞ն մի ցուցըներ :  
Աւրեմն Աստուած ի՞նչպէս առանց  
տհաճութեան կրնայ ձեր վրայ նայիլ .  
ի՞նչպէս ձեզ երկինքը կրնայ ընդու<sup>նել</sup>,  
մինչև որ մէկ մեծ փոփոխութիւն մը չըլլայ ձեր դպացումներուն  
ու վարքին մէջը նէ :

Դուք աս փոփոխութեանը շատ կա-  
րոտ էք որ ձեր հիմակվան անձնասէր  
զգացումներուն ու վարքերուն տեղը ,  
Աստուած՝ ու ձեր ընկերները ճշմար-  
տապէս սիրէք :

Սակայն մինչև որ աս երկու բանը  
չընէք . ո՞չ ասանկ փոփոխութիւններ  
կրնայ ըլլար , ո՞չ ալ կրնաք սկսել  
ուղիղ զգացումներ ունենալ ու բա-  
րեգործութիւն ընել , այսինքն մինչև  
որ ձեր անձնասիրութեանը ու մեղ-  
քերնուդ համար բոլորով սրտիւ չի  
տրտմիք . ու տէր չիսուս Վ. բիատոսին  
չապաւինիք որ ձեզ բոլոր մեղքեր-  
նուդ ազատէ :

Աս է բարեպաշտութեան սկիզբը ,  
 հիմա պիտի սկաէք մի խոնարհու-  
 թեամբ ձեր մեղանչականութիւնը Վ.ս-  
 տուծոյ խոստովանիլ , ու փրկութեան  
 համար Քրիստոսի ապաւինիլ . ու  
 հոգւոյն սրբոյ համար աղօթք ընել ,  
 որ ձեր հոգիներուն վրայ թափվի . որ  
 աս կերպով մէկ մեծ փոփոխութիւն  
 մը ըլլայ ձեր հոգիներուն մէջը , մե-  
 ղանչականութենէն սրբութեան փոխ-  
 վելու : Ու նաև միայն ձեր երջանկու-  
 թեանը համար ունեցած անձնասիրու-  
 թիւնը մէկ զի ձզելու ու Վ.ստուծոյ  
 ու փրկիչին վրայ եռանդագին սէր մը  
 ունենալու հետևելու , ու մէկ զօրաւոր  
 իղձ մը ունենալու ձեր սրտին մէջը ,  
 որ բոլոր ձեր կարողութեան մէջ ե-  
 զած ջանքը ուրիշներուն աղէկութեա-  
 նը ու երջանկութեանը համար ընէք :



